ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ




ԵՐԵՎԱՆ – 2013

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՐՄԻՆԱՐԱՆ.......................................................................... 5

ԲԱԺԻՆ I. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ............................................................... 8

1.ԵՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.............................................8

*1.1. ԵՊՀ որակի ապահովման ռազմավարությունը՝ ըստ ԵՊՀ 2010-2014 թթ.զարգացման ռազմավարական ծրագրի.....................................................9*

*1.2. ԵՊՀ որակի ապահովման հայեցակարգը.....................................................11*

*1.3. ԵՊՀ Որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը.....................................31*

*1.4. ԵՊՀ Գիտական խորհրդի Որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգը.....................................................35*

2.ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ.....................................................38

*2.1. ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկը.....................................39*

*2.2. Առկա ուսուցմամբ կրեդիտային համակարգով բակալավրի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը.....................................109*

*2.3. Առկա ուսուցմամբ կրեդիտային համակարգով մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը.....................................118*

*2.4 .Հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը.....................................124*

*2.5. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը.....................................132*

*2.6. ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգը.....................................138*

*2.7. ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը.....................................161*

3.ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.............182

*3.1. ԵՊՀ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգը.....................................183*

*3.2. ԵՊՀ ուսանողի գնահատման ուղեցույցը* ......................................................................... *197*

*3.3. ԵՊՀ-ում ուսանողների գնահատման վերաբերյալ հարցման կանոնակարգ* .*219*

4.ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ........................................................................................................ 222

*4.1 ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգը* ......................................... *222*

*4.2. ԵՊՀ դասախոսների տարբերակված հավելավճարի կարգը* ................................... *231*

*4.3. ԵՊՀ դասախոսական կազմի տարեկան գործունեության գնահատման ղեկավար ձեռնարկը* ........................................................................................................ *236*

*4.4. Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը* ........................................................................................ *295*

*4.5. Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի իրականացման կանոնակարգը* ............................................. *303*

5. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ...................................................... 310

*5.1. Ուսումնառության ռեսուրսները, գնահատումը և բարելավման ռազմավարությունը* ........................................................................................................ *311*

*5.2. Ուսանողների աջակցության ծառայություններ, գնահատումը և բարելավման ռազմավարությունը* ........................................................................................................ *322*

6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՇԱՀԵԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ........................................................................................................ 337

*6.1. ԵՊՀ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը* ........................................................................ *338*

*6.2. ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգը* ............................................................. *341*

*6.3. ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերի որակի առցանց կառավարման համակարգը և ռեսուրս շտեմարանը* ...................................................................... *343*

7. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ.......357

*7.1. ԵՊՀ ինքնագնահատման ուղեցույցը*.......358

ԲԱԺԻՆ II. ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ.......417

*1. Ինստիտուցիոնալ հավատարմագրման պետական չափանիշները*.......418

*2. Ծրագրային հավատարմագրման պետական չափանաիշները*.......427

*3. Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման կարգը*.......432

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.......440

*Հավելված 1. ԵՊՀ-ում ուսանողների գնահատման վերաբերյալ դասախոսների և ուսանողների հարցման հարցաթերթ*.......441

*Հավելված 2. ԵՊՀ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման հարցաթերթ*.......447

*Հավելված 3. ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման*.......448

*Հավելված 4. Ուսումնառության ռեսուրսների գնահատման հարցաթերթ*.......450

*Հավելված 5. Ուսանողների աջակցության ծառայությունների գնահատման հարցաթերթ*.......466

# ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՐՄԻՆԱՐԱՆ

- **Գնահատում** - բուհի կամ կրթական ծրագրի որակի համակարգված վերլուծության գործընթաց, որը հանգում է բուհի կամ ծրագրի վերաբերյալ եզրակացությունների և/կամ երաշխավորությունների:
- **Ինքնագնահատում** – փաստական տվյալների համակարգված հավաքման, ուսանողների և շրջանավարտների հարցումների, դասախոսների և ուսանողների հետ քննարկումների գործընթաց, որի արդյունքներն ամփոփվում են ինքնագնահատման զեկույցում:
- **Փորձագիտական գնահատում** – բուհի կամ կրթական ծրագրի որակի և արդյունավետության, կադրային-ռեսուրսային ապահովվածության վերաբերյալ արտաքին փորձագետների կողմից իրականացվող գնահատման գործընթաց:
- **Ծրագրի մշակման արտոնում** - գործընթաց, որի արդյունքում ուսումնական ստորաբաժանումը ստանում է բուհի պաշտոնական համաձայնությունը՝ ըստ ներկայացրած հայտի նոր կրթական ծրագրի մշակման համար:
- **Ծրագրի հաստատում** - գործընթաց, որով բուհը գնահատում է նոր կրթական ծրագրի մշակման որակը և ուսումնական ստորաբաժանման կարողությունը՝ ծրագիրը սահմանված չափորոշիչներին համապատասխան իրականացնելու համար:
- **Ծրագրի մշտադիտարկում (մոնիթորինգ)** - գործընթաց, որը դիտարկում է ծրագրի արդյունավետությունը՝ սահմանված նպատակներին և ակնկալվող կրթական վերջնարդյունքներին հասնելու տեսանկյունից և բացահայտում է ուսման որակի հետ կապված խնդիրները՝ բարելավող անհրաժեշտ միջոցառումների իրականացման և լավագույն փորձի տարածման համար:
- **Ծրագրի պարբերական վերանայում** - գործընթաց, որով բուհը գնահատում է ծրագրի չափորոշիչների ու նպատակների ձեռքբերումը և փաստական մատուցման որակը՝ նրա իրականացման լրիվ ցիկլի արդյունքներով և որոշում ընդունում ծրագրի շարունակման նպատակահարմարության կամ ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
- **Չափորոշիչ** – սահմանված պահանջներ և պայմաններ, որոնց հիման վրա պետք է գնահատվի և ձեռք բերվի բուհի կամ կրթական ծրագրի անհրաժեշտ որակը՝ հավատարմագրվելու կամ լիցենզավորվելու համար:

- **Չափանիշներ** – մակարդակի էտալոնային կողմնորոշիչներ, որոնք բնութագրում են որոշակի խնդիրների և/կամ չափորոշչի իրագործման աստիճանը:
- **Որակավորման նկարագրիչներ** – ձևակերպումներ, որոնք սահմանում են որակավորումների վերջնարդյունքները բարձրագույն կրթության համապատասխան մակարդակներում և բնութագրում են դրանց միջև հիմնական տարբերությունները:
- **Կրթական չափորոշիչներ** – պահանջներ գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի ու չափի վերաբերյալ, որոնք տվյալ ծրագրի շրջանակներում պահանջվում են ուսանողից՝ հայցվող որակավորման շնորհման համար:
- **Կրթական ծրագրի պրոֆիլ** – ծրագրի իրականացման արդյունքում շնորհվող որակավորման տարբերիչ հայտանիշների նկարագրություն՝ հիմնված նրա առանձնահատուկ նպատակների վրա, որը ցույց է տալիս, թե ինչպես է տվյալ որակավորումը հարաբերվում որակավորումների ընդունված շրջանակին և աշխատանքային միջավայրին:
- **Որակ** – բազմակողմ կատեգորիա, որն առնչվում է ինստիտուցիոնալ առաքելության ու նպատակներին, ինչպես նաև ընդունված չափորոշիչներին՝ տվյալ բուհի, ծրագրի կամ դասընթացի շրջանակներում: Կախված օգտագործման նպատակից՝ տարբերում են որակի տարբեր սահմանումներ՝ «որակը որպես գերազանցություն», «որակը որպես համապատասխանություն նպատակին», «որակը որպես բարելավում» և այլն:
- **Որակի ապահովում** - բուհի կամ կրթական ծրագրի որակի գնահատման, վերահսկման, պահպանման և բարելավման շարունակական գործընթաց:
- **Որակի աուդիտ** – որակի գնահատման գործընթաց, որի միջոցով իրավասու արտաքին մարմինը ստուգում է բուհի կամ կրթական ծրագրի որակի ապահովման ներքին ընթացակարգերի առկայությունը, համարժեքությունը նպատակներին և դրանց փաստական իրականացումը:
- **Որակի ներքին ապահովման համակարգ** – կառավարման համակարգ, որով բուհը սահմանված ընթացակարգերի և մեխանիզմների օգնությամբ իրագործում է իր որակի ապահովման քաղաքականությունն ու խնդիրները:
- **Որակի բարելավում** – որակի կառավարման միջոցով որակի շարունակական բարձրացման գործընթաց:
- **Որակի փորձաքննություն** – բուհի կամ կրթական ծրագրի որակի արտաքին գնահատման (ուսումնասիրման) փաստական գործընթաց:

- **Որակի կառավարում** - որակի բարելավման նպատակով բուհի կամ կրթական ծրագրի մակարդակում կանոնավոր իրականացվող միջոցառումների համակցություն:
- **Որակի վերահսկում** – բուհի կամ կրթական ծրագրի որակի ստուգման ներքին կամ արտաքին գործընթաց:
- **Որակի քաղաքականություն** – որակի ապահովման ասպարեզում բուհի ընդհանուր մտադրություններն ու սկզբունքները պաշտոնապես արտահայտող ձևակերպում:
- **Որակի մշակույթ** - որակի համընդունելի և ինտեգրացված սկզբունքների համակարգ, որը բնորոշ է բուհի կազմակերպական մշակույթին կամ կառավարման համակարգին:
- **Որակի ապահովման Եվրոպական ստանդարտներ և ուղենիշներ** – Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից մշակված և 2005թ. Բերգենի գագաթաժողովում ընդունված համաեվրոպական պաշտոնական փաստաթուղթ, որը ներառում է համապատասխան չափորոշիչներ և ուղենիշներ՝ բուհերում որակի ներքին ու արտաքին ապահովման, ինչպես նաև որակի ապահովման գործակալությունների համար:
- **Հավատարմագրում** - գործընթաց, որով պետական (կամ հասարակական) լիազոր մարմինը գնահատում է բուհի կամ կրթական ծրագրի որակը՝ նախանշված նվազագույն չափանիշներին կամ չափորոշիչներին դրանց համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու համար: Այն բաղկացած է երեք իրարահաջորդ փուլերից՝ ինքնագնահատում և համապատասխան զեկույցի կազմում, փորձագետների ստուգայց և գնահատում, գնահատման զեկույցի կազմում:

# ԲԱԺԻՆ I. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

## 1. ԵՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## 1.1. ԵՊՀ որակի ապահովման ռազմավարությունը՝ ըստ ԵՊՀ 2010-2014 թթ.զարգացման ռազմավարական ծրագրի

Խնդիր I. բ) Ներդնել որակի ներքին հավաստման համակարգ՝ եվրոպական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

***Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.***

1. Ստեղծել Համալսարանի որակի ներքին հավաստման (ապահովման) համակարգի նոր հայեցակարգ՝ որակի շարունակական բարելավման ռազմավարության, համապատասխան ընթացակարգերի, կազմակերպական կառուցվածքի ընդգրկմամբ և կառավարման կառույցների ու կառուցվածքային միավորների պարտականությունների և գործառույթների սահմանմամբ:
2. Մշակել Համալսարանի գործունեության հիմնական ոլորտների ինքնագնահատման չափանիշները՝ հիմք ընդունելով միջազգային հավատարմագրող կազմակերպությունների և ՄԿՈԱԱԿ-ի[1] որդեգրած հավատարմագրման ստանդարտները:
3. Նախաձեռնել և իրականացնել Համալսարանի կրթական գործունեության ինքնագնահատման (ինքնաուսումնասիրման) գործընթաց՝ համապատասխան զեկույցի հրապարակմամբ, որը հիմք կծառայի ինչպես որակի արտաքին հավաստման (հավատարմագրման) գործընթացների իրականացման, այնպես էլ կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակման համար: Նախապատրաստել Համալսարանը որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին:
4. Մշակել և ներդնել ուսուցման ելքային արդյունքների վրա հիմնված նոր կրթական չափորոշիչներ բակալավրի և մագիստրոսի աստիճանների հիմնական ծրագրերի (որակավորումների) համար՝ հիմք ընդունելով որակավորումների եվրոպական հենքը և տարբեր առարկայական ոլորտների համար լայնորեն կիրառվող միջազգային «համադրության եզրերի բնորոշումները»:
5. Ստեղծել ներքին չափանիշներ և ընթացակարգեր՝ ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային-ռեսուրսային ապահովվածության գնահատման, ուսումնական ծրագրերի արտոնման, մշակման, հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման համար:
6. Ստեղծել և հրապարակել չափանիշներ, կանոնակարգեր և ընթացակարգեր՝ ուսանողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման համար՝ ներառյալ վերանայման և բողոքարկման մեխանիզմները, և ապահովել դրանց հրապարակայնությունն ու հետևողական կիրառումը:

[1] Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն:

7. Ստեղծել և հրապարակել մեխանիզմներ և չափանիշներ դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների գնահատման համար։
8. Մշակել կրթական ծրագրերի և ուսումնական գործընթացի արդյունավետ կառավարման համար պահանջվող ներքին տեղեկատվության լրակազմը:
9. Ապահովել որակի ներքին գնահատման չափանիշների և ինքնագնահատման գործընթացի ու համապատասխան զեկույցի թափանցիկությունը և հրապարա-կայնությունը Համալսարանի ներքին և արտաքին շահեկիցների համար, ուսանողների մասնակցությունը և հետադարձ կապը որակի գնահատման գործընթացներում:

## 1.2. ԵՊՀ որակի ապահովման հայեցակարգը

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) 2010-2014թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը սահմանել է այն հիմնական ուղղությունները, որոնց հետևելու է Համալսարանը երկարաժամկետ հեռանկարում՝ իր առաքելությունը և հիմնական ռազմավարական նպատակներն իրականացնելու համար՝ տրամադրելով որակյալ կրթություն, բարձրորակ հետազոտություններ և որակյալ հանրային ծառայություններ: Այդ ռազմավարական նպատակներին հասնելու բանալին արդյունավետ և գործուն որակի ապահովման (ՈԱ) համակարգի ստեղծումն է, որը խարսխված է բարձրորակ կրթության, գիտական հետազոտությունների, ինչպես նաև ենթակառուցվածքների ու օժանդակ ծառայությունների վրա և ուղղված է Համալսարանի ու երկրի կարիքներին:

Համաձայն Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների՝ բուհի որակի ներքին ապահովման համակարգը պետք է պարունակի հետևյալ 7 հիմնական կառուցամասերը.

- որակի ապահովման ռազմավարություն, քաղաքականություն և համապատասխան ընթացակարգեր ու չափորոշիչներ,
- ծրագրերի և որակավորումների հաստատման, ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման պաշտոնական ընթացակարգեր,
- ուսանողների գնահատման հետևողականորեն կիրառվող և հրապարակված չափանիշներ, կանոնակարգեր և ընթացակարգեր,
- դասախոսական կազմի կարողությունների գնահատման թափանցիկ մեխանիզմներ և չափանիշներ,
- կրթական ծրագրերի պահանջներին համարժեք ուսումնական և այլ աջակցող ռեսուրսներ,
- ուսումնական գործընթացի արդյունավետ կառավարման համար պատշաճ տեղեկատվության հավաքում, վերլուծում և օգտագործում,
- ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ մշտապես նորացվող, անաչառ և օբյեկտիվ տեղեկատվության պարբերաբար հրապարակում:

ԵՊՀ ՈԱ համակարգի առաքելությունն է նպաստել Համալսարանի գործունեության հիմնական ոլորտներում (կրթություն, գիտություն և հանրային ծառայություններ) վստահության ամրապնդմանը և հավաստել, որ Համալսարանի շնորհած որակավորման աստիճանների որակն ու գործող չափորոշիչները պահպանվում, շարունակաբար բարելավվում և արդյունավետ կերպով կառավարվում են:

ԵՊՀ ՈԱ ընդհանուր քաղաքականությունն իրականացվում է Համալսարանի տեսլականի, առաքելության և հիմնական արժեքների համատեքստում: Այն հիմնված է որակի բարձր չափանիշների ձեռքբերման և պահպանման սկզբունքի վրա:

ԵՊՀ ՈԱ քաղաքականությունը կոչված է աջակցելու Համալսարանին՝ իր առաքելությունն ու ռազմավարական նպատակներն արդյունավետ կերպով իրականացնելու համար:

## 1.ՈՐԱԿԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

ԵՊՀ ՈԱ համակարգում որակի հասկացությունը ենթադրում է «նպատակին համապատասխանություն» և «նպատակի համարժեքություն» սկզբունքների համատեղ կիրառումը: Այսինքն՝ ԵՊՀ-ն, նրա կառույցներն ու գործընթացները որակյալ են, եթե համապատասխանում են սահմանված նպատակին: Մյուս կողմից, բուն նպատակները պետք է լինեն հիմնավորված և համարժեք բարձրագույն կրթության խնդիրներին:

Որակը որպես «նպատակին համապատասխանության» սկզբունք ընդգծում է համընդունելի չափանիշներին բավարարելու կամ համապատասխանելու անհրաժեշտությունը: Այստեղ ուշադրության կենտրոնում Համալսարանի կամ ծրագրի մակարդակում գործընթացների արդյունավետությունն է, որոնք ուղղված են սահմանված նպատակների իրականացմանը: ԵՊՀ առաքելությունը, նպատակներն ու խնդիրները որակի ապահովման «նպատակին համապատասխանության» մոդելի հիմնական ուղղորդիչներն են, քանի որ սահմանում են արդյունքների պլանավորման, մշտադիտարկման (մոնիթորինգի) և չափման շրջանակը: Դրանք նաև նպաստում են շահեկիցների՝ գործատուների, տնտեսության, կառավարության, ուսանողների և ծնողների հետ կապին:

Հետևաբար, ԵՊՀ ՈԱ համակարգում որակի չափանիշներ են ինչպես «նպատակին համապատասխանությունը» (այսինքն՝ սահմանված նպատակին հասնելու երաշխիքը), այնպես էլ՝ «նպատակի համարժեքությունը» (այսինքն՝ ընտրված նպատակի պատշաճությունը, տեղին լինելը, շահեկիցների ակնկալիքների և պահանջների հաշվի առնելը): Վերջինս կարող է ապահովվել միջազգային կրթական չափորոշիչների և աշխատաշուկայի հետ սերտ կապի պայմաններում:

## ԵՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ստորև ներկայացված են ԵՊՀ ՈԱ քաղաքականության հիմքում դրված հիմնարար սկզբունքները:

Սկզբունք 1. **Համակարգային մոտեցում**. Համալսարանի գործունեության բոլոր ոլորտները՝ ուսումնական, գիտահետազոտական և վարչական, ենթակա են գնահատման և հաշվետվողականության:

Սկզբունք 2. **Կենտրոնացված կանոնակարգում.** ՈԱ գործընթացների համար գործում են միասնական կանոնակարգային և ընթացակարգային հենք ու գնահատման չափանիշներ, որոնց հետևում են ուսումնական բոլոր ստորաբաժանումները: Այստեղ հիմնական համակարգող դերը վերապահված է Գիտական խորհրդին (ԳԽ), որն իրականացնում է համապատասխան աշխատանքների պլանավորումը, կանոնակարգային/չափորոշիչ փաստաթղթերի և ընթացակարգերի հաստատումը, ՈԱ նախատեսված գործընթացների վերահսկողությունը և արդյունքների քննարկումը: Այս խնդիրների իրականացման համար ԵՊՀ-ն ստեղծել է ԳԽ ՈԱ մշտական հանձնաժողով և ՈԱ վարչական կառույց՝ ՈԱ կենտրոն:

Սկզբունք 3. **Գործընթացների ապակենտրոնացված իրականացում.** Առանձին առարկայական ոլորտներում կրթական չափորոշիչների և ծրագրերի ՈԱ գործընթացների համար պատասխանատու են ֆակուլտետներն ու ամբիոնները (կենտրոնները): ՈԱ ապակենտրոնացված գործընթացների համապատասխանությունը ԵՊՀ միասնական չափանիշներին ապահովվում է կանոնակարգային և ընթացակարգային միասնական հենքի, ՈԱ կենտրոնի ու ԵՊՀ ԳԽ և ֆակուլտետների գիտական խորհուրդների ՈԱ մշտական հանձնաժողովների միջոցով:

Սկզբունք 4. **Ինքնագնահատում.** ԵՊՀ գործունեությունը գնահատվում է համաձայն սահմանված նպատակների իրականացման աստիճանի: ՈԱ ընդունված մոդելը ենթադրում է բոլոր գործընթացների պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման շրջափուլային իրագործում:

Սկզբունք 5. **Բարելավում.** ԵՊՀ ՈԱ համակարգը միտված է համալսարանում որակի շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը: Ինքնագնահատումը և ուսանողների, շրջանավարտների ու գործատուների հարցումները դիտարկվում են որպես որակի շարունակական բարելավման կարևոր գործիքներ:

Սկզբունք 6. **Հենանշումների (բենչմարկների) և վկայությունների վրա հիմնված մոտեցում**. ԵՊՀ-ն գնահատում է իր ձեռքբերումները համապատասխան ազգային և միջազգային հենանիշների նկատմամբ: ԵՊՀ ՈԱ մեթոդները հիմնված են ապացույցների/վկայությունների վրա, որտեղ վերջնարդյունքներն ու շահեկիցների (այդ թվում՝ ուսանողների, դասախոսների, գործատուների և լայն հանրության) հետադարձ կապով ստացված տեղեկատվությունը հիմք է հանդիսանում

վերլուծությունների և եզրակացությունների համար, որոնց հիման վրա պլանավոր-վում են համապատասխան բարելավող միջոցառումները:

Սկզբունք 7. **Անձնակազմի ընդլայնված մասնակցություն.** ԵՊՀ-ն խրախուսում է դասախոսական և վարչական կազմերի ընդլայնված մասնակցությունը և խթանում անհատական նախաձեռնությունները ՈԱ և բարելավման գործընթացներում:

Սկզբունք 8. **Ուսանողների և արտաքին գնահատողների ներգրավում.** Ուսանողների, շրջանավարտների և գործատուների լիարժեք մասնակցությունը ՈԱ գործընթաց-ներում համակարգի արդյունավետության հիմնական երաշխիքներից է, որը նաև Եվրոպական չափորոշիչների պահանջն է: Նախատեսված են տարբեր ոլորտներում նրանց մասնակցության հետևյալ ձևերը`

- դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ,
- ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներ,
- շրջանավարտներից գործատուների բավարարվածության հարցումներ,
- ինքնագնահատում բուհի, ֆակուլտետի և կրթական ծրագրի մակարդակում:

Սկզբունք 9. **Փոխկապվածություն ՈԱ ներքին և արտաքին գործընթացների միջև**. Որակի ներքին ապահովումը արտաքին գնահատման հիմքն է և կառուցվում է վերջինիս չափանիշների և ընթացակարգերի հաշվառմամբ: Ըստ այդմ, ԵՊՀ ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնագնահատումները ՈԱ ներքին և արտաքին գործընթացների հիմնական փոխկապակցող օղակներն են:

## ԵՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՊՀ ՈԱ համակարգի հիմնական նպատակներն են`

- երաշխավորել բարձր չափանիշների պահպանումը ԵՊՀ գործունեության բոլոր հիմնական ոլորտներում,
- ստեղծել կանոնակարգային և կազմակերպական հենք` ԵՊՀ-ի և նրա կրթա-կան ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար, հաստատել կապ որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև,
- խթանել կրթության որակի շարունակական բարելավումը և որակի մշակույթի զարգացումը Համալսարանում,
- հնարավորություն տալ ԵՊՀ-ին հավաստելու ինքն իրեն, իր շահեկիցներին և արտաքին գնահատողներին, որ ՈԱ որդեգրած քաղաքականությունը, համակարգը և գործընթացներն արդյունավետ են գործում,

– ապահովել կրթության որակի վերաբերյալ ԵՊՀ հաշվետվողականությունը ուսանողների, գործատուների, հիմնադրի (Կառավարության) և ֆինանսավորող այլ կազմակերպությունների առջև,
– օժանդակել ազգային, տարածաշրջանային և միջազգային ՈԱ գործակալությունների և համալսարանների հետ կապերի ամրապնդմանը:

Սահմանված նպատակներից բխում են ԵՊՀ ՈԱ համակարգի հետևյալ խնդիրները՝

– համակարգված գործընթացների միջոցով աջակցել կրթական չափորոշիչների պահպանմանը, կրթական ծրագրերի ՈԱ-ը և շարունակական բարելավմանը,
– ստեղծել պայմաններ՝ կրթական ծրագրերի որակի ինքնագնահատումը և արտաքին գնահատումն ու հավատարմագրումը իրականացնելու համար,
– ՈԱ համար նախատեսել հաշվետվողականության ընթացակարգեր և նախաձեռնել համապատասխան գործընթացներ,
– ապահովել ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում ուսանողների և շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը,
– ձևավորել անհրաժեշտ նախադրյալներ և խթանող մեխանիզմներ տրամադրվող կրթության որակի շարունակական բարելավման համար,
– ապահովել, որ ԵՊՀ կրթական ծրագրերի որակը բավարարի բոլոր շահեկիցների ակնկալիքները, իսկ ԵՊՀ շրջանավարտները ձեռք բերեն գիտելիքներ և հմտություններ, որոնք պահանջարկված են աշխատաշուկայում:

## ԵՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՈԱ քաղաքականությունը սահմանում է ԵՊՀ սկզբունքային մոտեցումները ՈԱ հիմնահարցերի և դրանց իրագործման ուղիների վերաբերյալ: Քաղաքականության իրականացման գործընթացը պահանջում է որոշակի ընթացակարգային ուղղորդում, որը մի կողմից՝ մանրամասն տեղեկատվություն է ապահովում այն միջոցների վերաբերյալ, որոնցով իրականացվում է քաղաքականությունը, իսկ մյուս կողմից՝ կարգաբերում և կոնկրետ գործողությունների է վերածում այդ միջոցները:

ՈԱ քաղաքականության միջոցով ԵՊՀ-ն ստեղծում է ՈԱ մի այնպիսի համակարգ, որը հստակ սահմանում է ՈԱ ինստիտուցիոնալ գործընթացների իրականացման սկզբունքները, ուղենիշները, ՈԱ համակարգի կառուցվածքը և ընթացակարգերը:

ԵՊՀ որակի ապահովման քաղաքականության նպատակն է ներդնել ՈԱ պաշտոնական, թափանցիկ և վստահելի համակարգ՝ հիմնված գործունեության արդյունքների և կիրառվող գործընթացների ներքին և արտաքին գնահատման վրա:

ԵՊՀ որակի ապահովման քաղաքականության խնդիրներն են.

- տրամադրել որակի ներքին ապահովման գործընթացների և ընթացակարգերի մշակման և իրականացման ուղենիշներ,
- տրամադրել որակի ներքին չափորոշիչների և չափանիշների սահմանման ուղենիշներ՝ համահունչ ընդունված եվրոպական պահանջներին,
- նպաստել որակի շարունակական բարելավման մշակույթի հաստատմանը և հետագա զարգացմանը Համալսարանում,
- օգնել բացահայտելու ԵՊՀ ուժեղ և հատուկ ուշադրության արժանի ոլորտները՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով շարունակական բարելավում ապահովելու համար,
- ներդաշնակեցնել որակի ապահովման տարբեր ոլորտները և գործընթացները Համալսարանում,
- ամրապնդել ՈԱ կենտրոնի դերակատարությունը որակի կառավարման և բարձրացման հարցերում,
- նպաստել ԵՊՀ առաքելության իրականացմանը՝ նրա ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան,
- պարբերական վերանայումների միջոցով շարունակաբար բարելավել ՈԱ համակարգը, կատարելագործել և արդիականացնել ՈԱ գործառույթները, ընթացակարգերը, չափանիշները և դրանց հետ առնչվող պաշտոնական փաստաթղթերը, երաշխավորել ՈԱ քաղաքականության և ռազմավարության համապատասխանությունը ԵՊՀ առաքելությանը, ռազմավարական նպատակներին և խնդիրներին:

## ԵՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

ԵՊՀ ՈԱ համակարգում ներառված գործընթացները, մեխանիզմները, չափորոշիչներն ու ընթացակարգերը պետք է հնարավորություն ընձեռեն գնահատելու հետևյալ ոլորտների որակը:

Ոլորտ 1. **Կրթական ծրագրեր և դասընթացներ.** Կրթական ծրագրերի և դասընթացների մշակման և իրականացման որակը գնահատվում է համապատասխան ուղեցույցների և ընթացակարգերի միջոցով: ԵՊՀ կրթական ծրագրերի իրականացման որակն ու սահմանված նպատակներին համապատասխանությունը իրականացվում են ԵՊՀ ԳԽ-ի կողմից հաստատված «ԵՊՀ Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման» կարգերով: Կրթական ծրագրի մշտադիտարկման առաջնային նպատակը ծրագրի իրականացման որակի և ռեսուրսների օգտագործման գնահատումն է, իսկ պարբերական վերանայման նպատակը՝ Համալսարանի առաքելության ու ռազմավարական նպատակների իրագործմանը և որակավորումների ճանաչմանը նպաստելն է:

Ծրագրի վերանայումը ներառում է ինչպես քանակական, այնպես էլ որակական վերլուծություն: Քանակական վերլուծությունը ենթադրում է ծրագրին առնչվող թվային տվյալների հավաքում և վերլուծում: Այդ տվյալները ներկայացվում են ինքնագնահատման զեկույցում: Որակական վերլուծությունը ներառում է երկու մաս՝ ինքնավերլուծություն, որը կատարվում է ծրագիրն իրականացնող կառույցի կողմից և գնահատում՝ արտաքին փորձագիտական խմբի կողմից:

Ոլորտ 2. **Դասախոսական կազմ.** Դասախոսական կազմի որակի գնահատումը ներառում է որակավորումների, գիտական աշխատանքի և շարունակական մասնագիտական զարգացման վերաբերյալ չափանիշները: Որակավորման, գիտական աշխատանքի և շարունակական մասնագիտական զարգացման գործընթացներում ներգրավվածության վերաբերյալ նվազագույն չափանիշները սահմանվում են ուսումնական ստորաբաժանումների (ֆակուլտետներ, ամբիոններ, կենտրոններ) կողմից: Դասախոսական կազմին ներկայացվող պահանջները/չափանիշները մշակելիս հաշվի են առնվում ԵՊՀ դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման ու առաջքաշման կարգերը և ընթացակարգերը:

Ոլորտ 3. **Դասավանդում և ուսումնառություն.** Դասավանդման և ուսումնառության որակի գնահատումը ներառում է հետևյալը.

- արդյունավետ գործիքների կիրառում, օրինակ՝ ամբիոնի վարիչի կողմից իրականացվող դասալսումները,
- ուսանողների կողմից դասընթացների և դասավանդման գնահատումը,
- դասավանդման պորտֆոլիոներ և գործընկեր դասախոսների գնահատումը,
- դասավանդման որակը գնահատելիս հաշվի են առնվում դասախոսների դասավանդմանը վերաբերող անհատական հանձնարարականների կատարողականը, նշանակումների և առաջքաշումների ընթացակարգերը և այլն,
- դասախոսների որակավորման բարձրացման և մասնագիտական վերապատրաստման բաժինները և ՈԱ կենտրոնը դասավանդման բարելավման գործընթացում ունեն խորհրդատվական և աջակցող դերակատարություն՝ դասախոսների շարունակական մասնագիտական զարգացման և դասավանդման կատարելագործման ծրագրերի իրականացման, դասավանդման ոլորտում գերազանցության մրցանակների տրամադրման միջոցով:

Ոլորտ 4. **Ուսանողների գնահատումը.** Ուսանողների ինչպես ընթացիկ (միջանկյալ), այնպես էլ եզրափակիչ գնահատման ՈԱ մեխանիզմների առկայություն: Արտաքին գնահատողների բացակայության պայմաններում, ամբիոնները պետք է մշակեն ուսանողների թափանցիկ գնահատման մեխանիզմներ, որոնք համահունչ են ուսանողների գնահատման ԵՊՀ ուղենիշներին: Դրանք առնվազն պետք է պարունակեն գնահատման հստակ չափանիշներ ու չափորոշիչներ և աջակցող ընթացակարգեր, որոնք ապահովում են ուսանողների գնահատման արժանահավատությունը և գնահատականների նշանակման հուսալիությունը:

Ոլորտ 5. **Օժանդակ ծառայություններ.** Ուսանողներին, ֆակուլտետներին, ամբիոններին և կենտրոններին մատուցվող օժանդակ ծառայությունների որակի գնահատումը, այդ թվում՝ նաև հաշվառման համակարգը, ներառված են ՈԱ համակարգում:

Ոլորտ 6. **Ռեսուրսներ և ենթակառուցվածքներ.** Ռեսուրսների և ենթակառուցվածքների որակի գնահատումը ներառում է լսարանների, գրադարանի, ընթերցասրահների, տեղեկատվական հաղորդակցման միջոցների, ուսումնական լաբորատորիաների ու համապատասխան սարքավորումների առկայության ու համարժեքության չափումները:

Ոլորտ 7. **Գիտահետազոտական գործունեություն.** ԵՊՀ գիտահետազոտական գործունեության որակի գնահատումն ընդգրկում է հետևյալ ոլորտները.

- ԵՊՀ գիտահետազոտական գործունեության կառավարումը, երկարաժամկետ ռազմավարությունն ու կարճաժամկետ ծրագրերը, որոնք արտահայտում են գիտահետազոտական ոլորտում ԵՊՀ հետաքրքրություններն ու հավակնությունները,
- գիտահետազոտական գործունեության միջազգայնացման մակարդակը,
- ԵՊՀ ֆակուլտետների, ամբիոնների, հետազոտական կենտրոնների և խմբերի գիտահետազոտական ներուժը,
- ԵՊՀ ստորաբաժանումների գիտահետազոտական ենթակառուցվածքների համապատասխանությունն արդի պահանջներին,
- միջազգային և տեղական հետազոտական դրամաշնորհների ֆինանսավորման ծավալներն ըստ առանձին ստորաբաժանումների,
- գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները,
- հետազոտությունների արդյունքների ապրանքայնացման հնարավորությունները,
- գիտական հրատարակությունները:

Ոլորտ 8. **Հանրային ներգրավում.** Համալսարանի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը նպաստելու համար ԵՊՀ-ն պետք է հնարավորինս աջակցի հասարակության մտավոր, կրթական, գիտական և մշակութային առաջընթացին: Հանրային ծառայությունների որակի գնահատումը ներառում է.

- հասարակության հետ կապերի գնահատումը՝ օպերատիվ լրատվությունը, հրատարակվող նյութերը, տեղեկատվության տարածման ձևերը և միջոցները, PR գործունեության նպատակայնությունը, ԵՊՀ-ի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունները, ԵՊՀ-ի ներգրավումը հանրային կարիքներին ուղղված ծրագրերում և այլն,

- հարատև ուսումնառության համակարգը՝ շարունակական կրթության և վերապատրաստման դասընթացները, ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների, դասախոսների, հանրային ծառայողների և լայն հանրության կրթությունը ԵՊՀ-ում շարունակելու հնարավորությունները և այլն,
- ԵՊՀ ներգրավվածությունը պետական և հասարակական կառույցների գործունեությունում:

## ԵՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԵՊՀ ՈԱ համակարգում ներգրավված հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները և նրանց միջև պատասխանատվությունների բաշխումը հետևյալն է:

<u>ԵՊՀ գիտական խորհուրդը.</u>

- հաստատում է ՈԱ քաղաքականությունը և ՈԱ ռազմավարությունը, ԵՊՀ տարեկան հաշվետվության շրջանակներում քննարկում է ՈԱ գործընթացների արդյունքները և առաջադրում բարելավման միջոցառումներ,
- իրականացնում է ՈԱ գործընթացների արդյունքների և ԳԽ ՈԱ մշտական հանձնաժողովի եզրակացությունների քննարկումն ու հաստատումը:

<u>ԵՊՀ ռեկտորը.</u>

- ղեկավարում է ԵՊՀ ՈԱ քաղաքականության և ՈԱ ռազմավարության մշակման աշխատանքները, ուղղորդում դրանց իրականացումը, ապահովում ՈԱ համակարգի ներդաշնակ գործառությունը, ինտեգրումը և փոխգործակցությունը ԵՊՀ կառավարման այլ մարմինների հետ,
- կառավարում է ԵՊՀ ինքնազնահատման գործընթացը:

<u>Պրոռեկտորները.</u>

- իրականացնում են ՈԱ համակարգի օպերատիվ կառավարումն ու վերահսկումը,
- ապահովում են ներգրավված հիմնական կառույցների միջև գործառական կապերն ու փոխգործակցությունը, մասնավորապես՝ ֆակուլտետների, ՈԱ կենտրոնի, ուսումնամեթոդական վարչության և առնչվող այլ ստորաբաժանումների միջև,
- կազմակերպում են ԵՊՀ ինքնազնահատման գործընթացը, ինքնազնահատման զեկույցի պատրաստումը և հաջորդող գործողությունների պլանավորումն ու վերահսկումը:

ԳԽ ՈԱ մշտական հանձնաժողովը.

- հանդես է գալիս որպես փորձագիտական և վերահսկողական մարմին, որը գնահատում է ՈԱ ընթացակարգերի և չափանիշների համապատասխանությունն ընդունված չափորոշիչներին,
- նախապատրաստում և ԳԽ հաստատմանն է ներկայացնում ՈԱ վերաբերյալ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը, նոր և վերանայված կրթական ծրագրերի փաստաթղթային փաթեթները,
- ԳԽ հաստատմանն է երաշխավորում ՈԱ և գնահատման ընթացակարգերը, կրթական ծրագրերի չափորոշիչներն ու ուսումնական պլանները, ՈԱ-ն առնչվող կանոնակարգային և նորմատիվային այլ փաստաթղթեր:

ԵՊՀ ՈԱ կենտրոնը.

- ապահովում է կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողությունը և ստուգում դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին,
- համակարգում և վերահսկում է ուսումնական ստորաբաժանումներում կրթական ծրագրերի ՈԱ գործառույթների և ընթացակարգերի իրականացումը,
- պատրաստում է ՈԱ ընթացակարգեր կրթական ծրագրերի մշակման, հաստատման, ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման համար, հետևում և աջակցում է դրանց իրականացմանը ԵՊՀ ստորաբաժանումներում,
- կազմակերպում է կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացները՝ ՈԱ ընթացակարգերին համապատասխան,
- պատասխանատու է դասավանդման և ուսումնառության որակի գնահատման գործիքակազմի (ուսանողական հարցումներ) մշակման համար,
- պատասխանատու է դասավանդման և ուսումնառության որակի գնահատմանն առնչվող գործընթացների համակարգման և իրականացման համար,
- գնահատում է դասախոսական կազմի ուսումնամեթոդական գործունեությունը և դրա արդյունավետությունը:

ԵՊՀ ֆակուլտետները.

- պատասխանատու են ֆակուլտետի մակարդակով ՈԱ և վերահսկման բոլոր գործառույթների կազմակերպման և իրականացման համար,
- կազմակերպում են ֆակուլտետի կրթական ծրագրերի մշակման, իրականացման, ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) ու պարբերական վերանայման գործընթացները՝ ՈԱ ընթացակարգերին համապատասխան,
- ապահովում են անհրաժեշտ ռեսուրսներ (դասախոսական կազմ, լաբորատոր սարքավորումներ, ուսումնական գրականություն և այլն) և ուսումնառության

օժանդակության այլ միջոցներ կրթական ծրագրերի հաջող իրականացման համար՝ ծրագրերի պահանջներին համապատասխան,

- կազմակերպում են ֆակուլտետի կրթական ծրագրերի ինքնագնահատումը և համապատասխան զեկույցի կազմումը՝ ծրագրերի տարեկան մշտադիտարկման (մոնիթորինգի), պարբերական վերանայման և ծրագրային հավատարմագրման գործընթացների շրջանակներում,
- ապահովում և վերահսկում են ֆակուլտետում գիտահետազոտական գործունեության որակը:
- Ֆակուլտետների գիտական խորհուրդների ՈԱ հանձնաժողովները.
- վերահսկում են ֆակուլտետներում կրթական ծրագրերի մշակման, վերանայման և դրանց ՈԱ գործընթացների իրականացումը,
- վերահսկում են կրթական ծրագրերի պատշաճ ռեսուրսային և մեթոդական ապահովվածությունը,
- պատասխանատու են ֆակուլտետում ուսուցման ՈԱ և ներքին վերահսկման, ինչպես նաև Համալսարանի մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման հսկողության համար:

Ուսանողները.

- ընդգրկված են ուսման որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով դասավանդման, ուսումնառության և գնահատման արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներին և շրջանավարտների բավարարվածության հարցումներին,
- ընդգրկված են ԵՊՀ և ֆակուլտետների ԳԽ-ներում, ԵՊՀ ԳԽ-ի և ֆակուլտետների ԳԽ-ների ՈԱ մշտական հանձնաժողովներում,
- մասնակցում են ԵՊՀ ՈԱ գործընթացներին՝ որպես ուսանողական ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն և այլն) ներկայացուցիչներ,
- համաձայն սահմանված ընթացակարգի մասնակցում են ԵՊՀ ինքնագնահատման գործընթացներին և համապատասխան զեկույցի պատրաստմանը՝որպես ինքնագնահատման աշխատանքային խմբի անդամներ:

Արտաքին փորձագետները, ՄԿ ՈԱԱԿ[2]-ը, շրջանավարտները և գործատուները.

- կատարում են ԵՊՀ գործունեության, ՈԱ համակարգի և կրթական ծրագրերի արտաքին փորձաքննություն՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների շրջանակներում,

[2] Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն:

- ընդգրկված են շրջանավարտների ավարտական ամփոփիչ ատեստավորման (ավարտական ամփոփիչ քննության և ավարտական աշխատանքի պաշտպանության) հանձնաժողովներում,
- ԵՊՀ նախաձեռնությամբ կարող են մասնակցել ուսանողների ընթացիկ և կիսամյակային գնահատման գործընթացներին,
- մասնակցում են ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներին,
- մասնակցում են ԵՊՀ շրջանավարտներից գործատուների բավարարվածության հարցումներին:

Նկ. 1-ում պատկերված է ԵՊՀ ՈԱ համակարգի կազմակերպական սխեման: Այն ցույց է տալիս համակարգում ներգրավված հիմնական միավորների և կառույցների հիերարխիկ կապը:



Ռեկտոր
Պրոռեկտորներ
ԵՊՀ ԳԽ
Որակի ապահովման կենտրոն
ԳԽ Որակի ապահովման հանձնա-ժողով
ՀՀ ՄԿ ՈԱԱԿ
ՈԱ ֆակուլտետային հանձնաժողովներ
Ուսանողներ
Ֆակուլտետներ
Փորձագետներ, գործատուներ, շրջանավարտներ

Նկ. 1. ԵՊՀ ՈԱ համակարգի կազմակերպական սխեման

# 1. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

1. ԵՊՀ ՈԱ ընթացակարգերը նպատակ ունեն պլանավորելու և կոնկրետ գործողությունների վերածելու ՈԱ քաղաքականությունից բխող գործընթացները և ուղղորդելու դրանց իրականացման ընթացքը:
2. Ստորև ներկայացված են ԵՊՀ ՈԱ հիմնական գործընթացներն ու ընթացակարգերն ըստ առանձին ոլորտների:

<u>Սահմանված կրթական չափորոշիչների պահպանում.</u>

- կրթական չափորոշիչները համապատասխանում են տվյալ մակարդակի որակավորմանը, որը սահմանված է Որակավորումների ազգային շրջանակով և/կամ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակով,
- կրթական չափորոշիչները բավարարում են համապատասխան պետական, մասնագիտական, օրենսդրական մարմինների և նմանատիպ այլ հաստատությունների պահանջներին,
- կրթական չափորոշիչները պարբերաբար վերանայվում են՝ նրանց արդիականությունն ու համապատասխանությունն ապահովելու նպատակով,
- կրթական չափորոշիչների մշակման, մշտադիտարկման կամ վերանայման ընթացքում օգտագործվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անկախ փորձագետների հետադարձ կապը:

<u>Կրթական ծրագրերի ՈԱ.</u>

- կրթական ծրագրերն ունեն հստակ սահմանված և հրապարակված նպատակ, ակնկալվող կրթական վերջնարդյունքներ և դասավանդման, ուսումնառության ու գնահատման ընտրված մեթոդներ, որոնք նպաստում են ուսանողների կողմից այդ վերջնարդյունքների ձեռքբերմանը,
- ծրագրերի ՈԱ-ը հիմնվում է ծրագրերի պլանավորման, մշակման արտոնման (նախնական հաստատման), անհրաժեշտ փաստաթղթավորման, ծրագրի առաջարկի փորձաքննության, պաշտոնական հաստատման, տարեկան մշտադիտարկման (մոնիթորինգի), պարբերական գնահատման և վերանայման ընթացակարգերի և ուսանողների ու շրջանավարտների հետադարձ կապի մեխանիզմների վրա,

– ուսանողները ներգրավված են ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման գործընթացներում (ուսանողների կիսամյակային հարցումներ և բավարարվածության ամենամյա հարցումներ, որոնք գնահատում են ծրագրերի և դասընթացների բովանդակությունը, ուսուցման մեթոդաբանությունը և ծրագրերի իրականացման որակը):
– ծրագրերի որակի գնահատման ժամանակ հաշվի են առնվում արտաքին գնահատողների կարծիքները,
– ՌԱ գործընթացներն առավել կենտրոնանում են այն ծրագրերի վրա, որտեղ հնարավոր է որակի անկման վտանգ (նոր բացված կամ շարունակաբար ցածր ցուցանիշներ ունեցող ծրագրեր):

<u>Ուսանողների գնահատում.</u>

- դասընթացի և առանձին ուսումնական մոդուլի յուրացման արդյունքների գնահատում (ընթացիկ և եզրափակիչ քննություններ),
- ծրագրի կրթական վերջնարդյունքների գնահատում (ավարտական ամփոփիչ ատեստավորում, որը ներառում է ամփոփիչ քննությունները և ավարտական աշխատանքի պաշտպանությունը),
- ուսանողների գնահատման գործընթացի վերաբերյալ ամենամյա ուսանողական հարցումներ՝ կիրառվող չափանիշների, ձևերի ու մեթոդների արդյունավետության գնահատման նպատակով,
- ուսանողների գնահատման գործընթացի վերաբերյալ դասախոսական կազմի պարբերական հարցումներ՝ կիրառվող չափանիշների, ձևերի ու մեթոդների արդյունավետության գնահատման նպատակով:

<u>Դասախոսական կազմի ՌԱ.</u>

- դասախոսական կազմի գործունեության արդյունավետության բազմաչափ գնահատում, որը ներառում է՝ ուսանողների կողմից դասախոսի գնահատումը (դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ), անմիջական ղեկավարի (ամբիոնի վարիչի) և գործընկեր-դասախոսների կողմից դասախոսի գնահատումը, ինչպես նաև դասախոսի ինքնագնահատումը,
- վերոնշյալ գնահատումների հիման վրա դասախոսների որակավորման բարձրացում և մասնագիտական վերապատրաստում,

- դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման, տարակարգային առաջքաշման և նյութական խրախուսման (մասնավորապես՝ դասախոսների տարբերակված հավելավճարների նշանակման) ընթացակարգեր։

Ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների ՈԱ.

- կրթական ծրագրի պահանջներին՝ ուսումնառության ռեսուրսների որակական և քանակական բնութագրերի համապատասխանության գնահատում,
- ուսանողների կրթական և անհատական կարիքների բացահայտում և գնահատում,
- ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների որակի գնահատում ուսանողների բավարարվածության վերաբերյալ ամենամյա հարցումների միջոցով, որոնք գնահատում են գրադարանի և ընթերցասրահների, համակարգչային սրահների աշխատանքը և համացանցի մատչելիությունը, լսարանների և ուսումնական լաբորատորիաների կահավորանքը, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի աշխատանքը, խորհրդատվական այլ ծառայությունների արդյունավետությունը,
- ուսումնական ստորաբաժանումներին տրամադրվող օժանդակ ծառայությունների որակի գնահատում՝ դասախոսական կազմի եռամյա պարբերականությամբ իրականացվող հարցումների միջոցով, որոնք գնահատում են համալսարանի ենթակառուցվածքներն ու դրանց կառավարումը, գրադարանի, ընթերցասրահների ու համակարգչային սրահների աշխատանքը և համացանցի մատչելիությունը, լսարանների և ուսումնական լաբորատորիաների կահավորանքը և այլն։

Գիտահետազոտական գործունեության գնահատում.

- հետազոտական մուտքերն ըստ աղբյուրների,
- միջազգային հետազոտական մուտքերի հաշվեկշիռն ընդհանուր հետազոտական բյուջեում,
- մեկ մասնակցին ընկնող հետազոտական ֆոնդը,
- հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը/ հաշվեկշիռը,
- հաստիքային գիտաշխատողների թիվը/հարաբերակցությունը հիմնական դասախոսների թվին,

- հիմնական դասախոս/ասպիրանտ քանակական հարաբերակցությունը,
- պաշտպանած ատենախոսությունների քանակը,
- ասպիրանտների ներգրավվածությունը հետազոտական նախագծե-րում/հաշվեկշիռը,
- գիտական հրատարակությունների թիվը, ազդեցության գործակից-ները/հարաբերակցությունը դասախոսների թվին:

<u>Հանրային ներգրավման գնահատում.</u>

- ԵՊՀ-ի վերաբերյալ հրատարակվող նյութերի քանակը և ծավալը,
- ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածման օպերատիվությունը,
- ԵՊՀ-ի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության ար-դյունքները,
- հանրային կարիքներին ուղղված ծրագրերի քանակը, որտեղ ընդգրկված է ԵՊՀ-ն,
- շարունակական կրթության և վերապատրաստման դասընթացների/ծրագ-րերի քանակը և բազմազանությունը,
- այդ դասընթացներում/ծրագրերում ընդգրկված ունկնդիրների թիվը/հաշ-վեկշիռն ընդհանուր ուսանողական համակազմում:

## 2. ԵՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

3. ԵՊՀ ՈԱ փաստաթղթային ապահովումը և տեղեկատվական համակարգը ներառում են՝

ՈԱ ձեռնարկը (ուղեցույցը), որը պարունակում է.

- ՈԱ համակարգի ընդհանուր նկարագրությունը և կազմակերպական կա-ռուցվածքը,
- ՈԱ քաղաքականության նպատակները, խնդիրները և ռազմավարության հիմնադրույթները,

- ՈԱ սկզբունքները, գործառույթները, ընթացակարգերը և պատասխանատվությունների բաշխումը կառավարման տարբեր մակարդակների ու ստորաբաժանումների միջև,
- ՈԱ համար պատասխանատու օղակների կապը և փոխազդեցությունը ԵՊՀ կառավարման այլ մարմինների հետ,
- ՈԱ հիմնական գործընթացների համառոտ նկարագրությունը և որակի գնահատման սահմանված ընթացակարգերի փաթեթը,
- կանոնակարգեր և մեթոդական նյութեր՝ ՈԱ առանձին գործընթացների իրականացման վերաբերյալ,
- ԵՊՀ կրթական չափորոշիչների ձևակերպումները,
- ՈԱ համակարգի կիրարկման համար անհրաժեշտ այլ նյութեր:

ՈԱ/հավատարմագրման վիրտուալ (առցանց) ռեսուրսային շտեմարանը, որն ընդգրկում է.

- ԵՊՀ ՈԱ համակարգին առնչվող բոլոր պաշտոնական փաստաթղթերը՝ ՈԱ հայեցակարգ, ՈԱ ձեռնարկ, կրթական ծրագրերի, դասախոսական կազմի, ուսանողների գնահատման և ուսումնառության ռեսուրսների որակի ու գնահատման հետ կապված փաստաթղթերը,
- ՈԱ գործընթացների իրականացման արդյունքների վերաբերյալ բոլոր հաշվետվությունները և զեկույցները,
- ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման համար պատրաստված ինքնագնահատման վերլուծական զեկույցները և հարակից փաստաթղթերը,
- տարբեր հարցումների և այլ միջոցառումների ձևաթերթերն ու արձանագրությունները,
- համակարգի տեղեկատվական ապահովմանը վերաբերող այլ նյութեր ու փաստաթղթեր:

## 3. ՈՐԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

4. Որակի շարունակական բարելավման ռազմավարությունը ԵՊՀ ՈԱ քաղաքականության կարևորագույն բաղադրիչն է, որը կոչված է ապահովելու կրթական գործընթացների որակի շարունակական և կայուն բարելավումը՝ ուսանողների և աշխատաշուկայի փոփոխվող պահանջմունքներին և կարիքներին համահունչ: Դրա հիմնական նպատակն է ստեղծել և գործադրել աջակցող մեխանիզմներ՝ ԵՊՀ բոլոր մակարդակներում կրթության որակի կայուն և

շարունակական բարձրացման համար, ինչպես նաև նախադրյալներ՝ որակի մշակույթի անշեղ զարգացման նպատակով:

5. ԵՊՀ-ն որակի շարունակական բարձրացման իր ռազմավարությունն իրականացնելիս ելնում է հետևյալ սկզբունքներից.
   - ՌԱ գործընթացները կանոնակարգված են, մշտադիտարկվում և պարբերաբար վերանայվում են,
   - ՌԱ գործընթացները հիմնվում են որակի մշտադիտարկման (մոնիթորինգի) զեկույցների, ուսանողների, շրջանավարտների և գործատուների հետադարձ կապի և շրջանավարտների զբաղվածության վիճակագրական տվյալների վրա:

6. ԵՊՀ որակի շարունակական բարձրացման մեխանիզմը հիմնված է շրջափուլային մի գործընթացի վրա, որը բաղկացած է հետևյալ չորս հիմնական փուլերից՝
   1. Պլանավորում. սահմանվում են հիմնական խնդիրները և չափելի ակնկալվող վերջնարդյունքները:
   2. Իրականացում. կատարվում են ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը նպատակաուղղված բոլոր անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները:
   3. Գնահատում. ստուգվում և չափվում են փաստացի ստացված արդյունքները սպասվածի համեմատությամբ
   4. Բարելավում. մշակվում և պլանավորվում են լրացուցիչ միջոցառումներ՝ բացթողումները և թերացումները շտկելու և նախանշված վերջնարդյունքներն իրականացման հաջորդ փուլում ձեռք բերելու համար:

## 1.3. ԵՊՀ Որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը

**Ընդհանուր դրույթներ**

Որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակը համալսարանում որակի ներքին ապահովման մեխանիզմների գործադրումը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումն է:

Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրության համապատասխան՝ ԵՊՀ կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:

Կենտրոնը սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների լուծման նպատակով համագործակցում է ԵՊՀ այլ կառուցվածքային ստորաբաժանումների և արտահամալսարանական տարբեր կազմակերպությունների հետ՝ սահմանված կարգի համաձայն:

Կենտրոնն ունի ԵՊՀ խորհրդանշանով ձևաթուղթ (պաշտոնաթուղթ) և կնիք:

Կենտրոնի գործունեությունը ֆինանսավորվում է ԵՊՀ միջոցներից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և ԵՊՀ կանոնադրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացնում է ԵՊՀ գիտական խորհուրդը՝ ԵՊՀ ռեկտորի ներկայացմամբ:

**Կենտրոնի խնդիրներն ու գործառույթները**

Կենտրոնի խնդիրներն են.

- ԵՊՀ որակի ապահովման (ՈԱ) քաղաքականության և ռազմավարության մշակում և պարբերական վերանայում, վարչական աջակցություն բոլոր մակարդակներում՝ դրանց իրագործմանը:
- Որակի միասնական չափանիշների պահպանում, ՈԱ գործընթացների ներդաշնակեցում և իրականացում ԵՊՀ գործունեության բոլոր հիմնական ոլորտներում:
- Կրթության որակի համար ԵՊՀ հաշվետվողականության ապահովում ներքին (ուսանողներ, դասախոսական և վարչական կազմ) և արտաքին (դիմորդներ, շրջանավարտներ, գործատուներ, պետություն և հասարակություն) շահեկիցների առջև:
- Կանոնակարգային և կազմակերպական հենքի ստեղծում և վարչական օժանդակություն՝ համալսարանի և նրա կրթական ծրագրերի որակի

արտաքին գնահատման և հավատարմագրման համար, որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև կապի ապահովում:
- Ազգային, տարածաշրջանային և միջազգային ՈԱ գործակալությունների և համալսարանների ՈԱ կենտրոնների հետ կապերի հաստատում և ամրապնդում:

Կենտրոնի գործառույթներն են.

Կենտրոնը՝

- մշակում, իրականացնում և մշտապես բարելավում է որակի ներքին ապահովման գործընթացները, զեկուցում դրանց արդյունքների մասին, սահմանում է որակի ներքին չափանիշներ և չափորոշիչներ՝ ընդունված եվրոպական պահանջներին համահունչ,
- մշակում է ԵՊՀ ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը,
- համակարգում, վերահսկում և վարչական աջակցություն է տրամադրում ՈԱ գործընթացների իրականացմանը ԵՊՀ բոլոր ստորաբաժանումներում,
- ապահովում է ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում ուսանողների, շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը,
- կազմակերպում է ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնագնահատման գործընթացը, համապատասխան զեկույցի պատրաստումը և հաջորդող գործողությունների պլանավորումն ու վերահսկումը,
- համակարգում է համալսարանի ստորաբաժանումների աշխատանքը հավատարմագրող մարմինների փորձագիտական այցերի ժամանակ,
- համագործակցում է ՀՀ մասնագիտական կրթության Որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի հետ,
- ապահովում է կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողությունը և ստուգում դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին,
- պատրաստում է ՈԱ ընթացակարգեր կրթական ծրագրերի մշակման, հաստատման, ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման համար, համակարգում և աջակցում է դրանց իրականացմանը ԵՊՀ բոլոր ստորաբաժանումներում,
- կազմակերպում է կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացները՝ ՈԱ ընթացակարգերին համապատասխան, ստուգում է նոր և վերանայված կրթական ծրագրերի փաստաթղթային փաթեթները,

- համակարգում է ԵՊՀ կրթական ծրագրերի որակի ինքնագնահատումը և օժանդակում դրանց արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին,
- մշակում և իրականացնում է դասավանդման, ուսումնառության և ուսանողնե-րի գնահատման ՈԱ գործիքակազմը (հարցումներ, ֆոկուս-խմբեր և այլն) և ընթացակարգերը,
- համագործակցում է ԵՊՀ գիտական խորհրդի և ֆակուլտետների գիտական խորհուրդների ՈԱ մշտական հանձնաժողովների հետ և աջակցում նրանց աշ-խատանքներին:

**Կենտրոնի կառուցվածքը և կառավարումը**

Կենտրոնի աշխատանքների ընդհանուր համակարգումը ԵՊՀ ռեկտորի համապա-տասխան հրամանով վերապահվում է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

Կենտրոնը ղեկավարում է կենտրոնի տնօրենը, որին նշանակում և պաշտոնից ազա-տում է ԵՊՀ ռեկտորը:

Կենտրոնի հաստիքացուցակը սահմանում և դրա մեջ փոփոխություններ է կա-տարում ԵՊՀ ռեկտորը:

Կենտրոնի տնօրենը՝

- պլանավորում, կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է Կենտրոնի ընթացիկ գործունեությունը, համաձայն ԵՊՀ կանոնադրության մասնակ
- ցում ԵՊՀ ռեկտորատի աշխատանքներին,
- ԵՊՀ ռեկտորատում և գիտական խորհրդում հանդես է գալիս համա-պատասխան հաշվետվություններով, զեկույցներով և հաղորդումներով,
- ապահովում է Կենտրոնի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանից բխող հիմնախնդիրները, աշխատողներին տալիս համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում է այլ ստորաբաժանումների հետ Կենտրոնի փոխգործակցությունը,
- ստորագրում է Կենտրոնի անունից պատրաստվող փաստաթղթերը, կատա-րում նշագրումներ, Կենտրոնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ և այլ գրություններ ու փաստաթղթեր,
- Կենտրոնի առջև դրված խնդիրների լուծման հետ կապված՝ կարող է հրավիրել խորհրդակցություններ, ըստ անհրաժեշտության՝ ԵՊՀ ռեկտորին կամ Կենտ-րոնի գործունեությունը համակարգող պրոռեկտորին ներկայացնում է համապատասխան զեկույց և առաջարկություններ Կենտրոնի գործունեու-

թյանն առնչվող ԵՊՀ համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարվող աշխատանքների վերաբերյալ,

- ԵՊՀ ռեկտորին կամ Կենտրոնի գործունեությունը համակարգող պրոռեկտորին ներկայացնում է առաջարկություններ Կենտրոնի աշխատակիցներին սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու, ատեստավորելու և վերապատրաստելու վերաբերյալ,
- ներկայացնում է Կենտրոնը արտաքին շփումներում, Կենտրոնի աշխատանքները կազմակերպելու նպատակով հանդիպում տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, նախապատրաստում և ստորագրում համապատասխան համագործակցությանն առնչվող փաստաթղթեր՝ դրանց մասին պարբերաբար զեկուցելով և համաձայնեցնելով Կենտրոնի գործունեությունը համակարգող պրոռեկտորի հետ,
- կազմակերպում և հսկում է Կենտրոնում տարվող գործավարությունը, ինչպես նաև կատարում Կենտրոնի խնդիրների լուծման հետ կապված այլ աշխատանքներ,
- պատասխանատվություն է կրում Կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների որակի և Կենտրոնի առջև դրված խնդիրների հնարավորինս պատշաճ և արդյունավետ լուծման համար։

## 1.4. ԵՊՀ Գիտական խորհրդի Որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգը

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ Երևանի պետական համալսարանի որակի ապահովման մշտական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵՊՀ կանոնադրությանը, ԵՊՀ ներքին իրավական ակտերին և սույն աշխատակարգին համապատասխան:

2. Հանձնաժողովի գործունեության նպատակն իր կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանց վերաբերյալ գիտական խորհրդին առաջարկությունների ներկայացումն է:

3. Հանձնաժողովն իր ոլորտին վերաբերող հարցերը քննարկում է ԵՊՀ գիտական խորհրդի և/կամ ռեկտորի հանձնարարությամբ:

4. Հանձնաժողովի գործունեության ժամկետի և կազմի հաստատումը, ինչպես նաև դրանց փոփոխություններն իրականացվում է ԵՊՀ գիտական խորհրդի կողմից:

### II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Հանձնաժողովի գործառույթներն են.

1) մշակել ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը ենթակա որակի ներքին և արտաքին ապահովման ոլորտի իրավական ակտերի նախագծերը,

2) տալ ԵՊՀ որակի ներքին ապահովման ոլորտին առնչվող չափորոշիչների, գործընթացների և/կամ ընթացակարգերի կիրարկման, նոր և վերանայված կրթական ծրագրերի հաստատման վերաբերյալ երաշխավորություններ և առաջարկներ,

3) համագործակցել ԵՊՀ որակի ապահովման այլ կառույցների ու խմբերի հետ,

4) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և ԵՊՀ ներքին իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

## III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Հանձնաժողովի առաջին նիստը հրավիրում է ռեկտորը, որի ընթացքում ընտրվում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի հաջորդ նիստերը հրավիրում է հանձնաժողովի նախագահը:

7. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հանձնաժողովում որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք:

8. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է նրա կողմից նշանակված հանձնաժողովի անդամը:

9. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվող օրակարգով:

## IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

10. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը,

2) համակարգում է հանձնաժողովի որոշումների ընդունման գործընթացը,

3) առանձին հարցերի քննարկման նպատակով հրավիրում է համապատասխան մասնագետների և փորձագետների,

4) ԵՊՀ գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված նախագծերը,

5) իրականացնում է ԵՊՀ ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

## V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

11. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովում բարձրացված հարցերի վերաբերյալ քննարկում-ներին,

2) հանձնաժողովում անցկացված քննարկումների հիման վրա քվեարկությունների միջոցով մասնակցում է որոշումների ընդունմանը,

3) հանձնաժողովի որոշմամբ ԵՊՀ գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված նախագծերը,

4) իրականացնում է ԵՊՀ ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ։

12. Հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ հանձնաժողովի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել ԵՊՀ գիտական խորհրդի նիստում։

# 2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

## 2.1. ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկը

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ղեկավար ձեռնարկի նպատակն է ԵՊՀ դասախոսական կազմին և կրթական ծրագրերի մշակման աշխատանքային խմբերին ծանոթացնել Համալսարանի կրթական ծրագրերին ներկայացվող հիմնական պահանջներին և տրամադրել դրանց իրագործման գործնական ցուցումներ: Ձեռնարկում ներկայացվում են ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման հիմնադրույթները և այն չափանիշները, որոնցով պետք է առաջնորդվեն կրթական ծրագրերի մշակման աշխատանքային խմբերը՝ ծրագրի նախագծման և մշակման փուլերում: ԵՊՀ բոլոր ուսումնական ստորաբաժանումներն իրենց կրթական ծրագրերը նախագծելիս և մշակելիս պետք է առաջնորդվեն սույն ղեկավար ձեռնարկի պահանջներով:

Կրթական ծրագրերի մեթոդաբանորեն ճիշտ կառուցումը էապես դյուրացնում է ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը ուսանողների կողմից և հետագայում նպաստում ծրագրի հաստատման, մոնիթորինգի (մշտադիտարկման) և վերանայման գործընթացների հաջող իրականացմանը: Կրթական ծրագրերի պատշաճ մշակումը կարևոր է նաև հասարակության (աշխատաշուկայի) և ուսանողների պահանջմունքներին դրանց համապատասխանությունն ապահովելու տեսանկյունից:

Նոր կրթական ծրագրի նախագծումը և մշակումը պետք է հիմնվի հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- ծրագիրը պետք է ունենա հստակ սահմանված նպատակ և ակնկալվող կրթական վերջնարդյունքներ,
- ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ցանկը պետք է բավարարի առկա ծրագրային կողմնորոշիչների (այդ թվում՝ համապատասխան առարկայական կողմնորոշիչներ[3]) և չափորոշիչների պահանջները, ինչպես նաև բարձրագույն կրթության որակավորումների եվրոպական և/կամ ազգային շրջանակների, մասնագիտական, օրենսդիր և ոլորտը կարգավորող մարմինների/կառույցների ու գործատուների պահանջները,
- ծրագրի շրջանավարտների համար պետք է որոշված և նկարագրված լինեն նրանց ապագա կարիերայի հնարավորությունները,
- պետք է որոշված և նկարագրված լինեն այն ձևերը և միջոցները, որոնց օգնությամբ ձևավորվելու և գնահատվելու են ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքները,

[3] Առարկայական կողմնորոշիչներն ընդհանուր տեսքով ձևակերպված նվազագույն կրթական պահանջներ են՝ տվյալ առարկայական ոլորտում և կրթական մակարդակում որակավորումներ շնորհելու համար, և բուհերի համար կարևորագույն աղբյուր են հանդիսանում կոնկրետ առարկայական ոլորտում նոր կրթական ծրագրեր նախագծելիս և մշակելիս:

- ծրագիրն իրականացնելու համար պետք է բացահայտված լինեն անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսները:

Կրթական ծրագրի մշակումը ենթադրում է տալ հետևյալ երեք կարևորագույն խնդիրների լուծումը.

1. Ի՞նչ պետք է սովորեն ուսանողները (կրթական վերջնարդյունքները):
2. Ինչպե՞ս նրանք պետք է այն սովորեն (դասավանդման և ուսումնառության մեթոդները):
3. Ինչպե՞ս պարզել ուսումնառության արդյունքները ձեռք են բերվել, թե՞ ոչ (գնահատման ձևերը):

Ծրագրի պատշաճ մշակումը պահանջում է, որ ծրագրի այս երեք բաղկացուցիչները տրամաբանորեն և համակարգված կերպով շաղկապվեն:

## ԲԱԺԻՆ I. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Կրթական ծրագրի մշակումը սկսվում է ծրագրի նպատակների սահմանումից, որին հաջորդում է ծրագրի կրթական վերջնարդյունքների ձևակերպումը: Այնուհետև որոշվում են գնահատման այն ձևերը, որոնք հնարավորություն կտան ուսանողներին դրսևորելու ձեռք բերած կրթական վերջնարդյունքները, ապա համարժեք կերպով չափելու դրանք: Հաջորդ քայլը՝ ուսանողների համար առավել արդյունավետ ուսումնառության և դասավանդման մեթոդների ընտրությունն է:

Հետևաբար, պատշաճ կրթական ծրագիր կազմելու տեսանկյունից վճռորոշ նշանակություն ունի ծրագրի կառուցման հետևյալ երեք հանգուցային տարրերի փոխհամաձայնեցվածությունը.

1. ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքները,
2. ուսումնառության և դասավանդման մեթոդները, որոնք նախատեսված են ուսանողի կողմից այդ վերջնարդյունքները հաջողությամբ ձեռք բերելու համար,
3. գնահատումը, որը որոշում է ուսանողի կողմից այդ վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը:

Ծրագրի մշակման գործընթացում այս երեք տարրերը պետք է դիտարկել համատեղ, այսինքն՝ ընտրված ուսումնառության և դասավանդման ձևերը պետք է կապակցվեն ծրագրի կրթական վերջնարդյունքների հետ և որոշվեն այնպես, որ առավելագույնս օժանդակեն ուսանողի կողմից այդ վերջնարդյունքների ձեռքբերմանը: Միաժամանակ, յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի ձեռքբերումը պետք է գնահատվի այնպիսի մեթոդներով, որոնք ուսանողին հնարավորություն կտան լավագույնս դրսևորելու դրանք:

Միաժամանակ, ինչպես արդեն նշվեց, ծրագրի կրթական վերջնարդյունքների ցանկը որոշելիս հարկավոր է հաշվի առնել նաև տվյալ առարկայական ոլորտի ծրագրային կողմնորոշիչների կամ չափորոշիչների, բարձրագույն կրթության որակավորումների (ազգային կամ եվրոպական) շրջանակի, ինչպես նաև համապատասխան մասնագիտական կազմակերպությունների (ընկերակցությունների և գործատուների, եթե այդպիսիք կան) պահանջները:

## 1. Արդյունահեն կրթական ծրագրի նախագծման և մշակման սկզբունքները

Յուրաքանչյուր կրթական ծրագրի մշակման հիմքում պետք է դրվի ծրագրի (որակավորման) պրոֆիլը: Ծրագրի պրոֆիլը աշխատաշուկայում շրջանավարտի ապագա զբաղվածության ընդհանուր նկարագիրն է, որն արտահայտում է հասարակության ներկայիս պահանջմունքները: Գործնականում հասարակության պահանջմունքների արտահայտողներ են հանդիսանում ինչպես ուսանողներն ու ակադեմիական հանրությունը, այնպես էլ արտաքին շահագրգիռ կողմերը՝ գործատուները, շրջանավարտները և մասնագիտական հանրությունը: Դրանցից յուրաքանչյուրն իր ներդրումն ունի ծրագրի կողմից ձևավորվող ընդհանրական և բուն մասնագիտական կոմպետենցիաների կազմի սահմանման մեջ:

Ծրագրի պրոֆիլը սահմանում է վերջինիս նպատակներն ու խնդիրները, որոնք առավել հստակ կարելի է ձևակերպել ակնկալվող կրթական վերջնարդյունքների տեսքով: Ծրագրի պրոֆիլի հետ շաղկապվում են նաև ուսումնական պլանի կառուցվածքը և բովանդակությունը, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները:

Կրթական ծրագրի նախագծումը պետք է հիմնվի ուսումնառության յուրաքանչյուր շրջափուլի (բակալավր/մագիստրոս) կրթական վերջնարդյունքների նկարագրման, ինչպես նաև ECTS կրեդիտներով արտահայտված ուսումնական աշխատածավալի որոշման վրա: Կրթական ծրագիրը ներկայացնում է մի յուրահատուկ «*շերտավոր կարկանդակ*», որտեղ յուրաքանչյուր «*շերտ*» և ամեն մի «*կտոր*» ամուր կապակցված է մյուսի հետ թե՛ ուղղահայաց, թե՛ հորիզոնական կերպով (տե՛ս նկար 1): Դա նշանակում է, որ առանձին դասընթացի կամ մոդուլի ուսումնասիրման ընթացքում ձեռք բերված արդյունքները նպաստում են ծրագրի ընդհանուր վերջնարդյունքների ձեռք բերմանը՝ սերտ կապի մեջ լինելով ծրագրի այլ ուսումնական միավորների կրթական վերջնարդյունքների հետ: Հետևաբար, կրթական ծրագիրը ոչ թե պատահականորեն ընտրված դասընթացների հավաքակազմ է, այլ փոխկապակցված մի համալիր, որի նախագծման համար պահանջվում է միասնական մոտեցում: Դա վերաբերում է ոչ միայն ծրագրի միջուկը կազմող (պրոֆիլային) դասընթացներին և մոդուլներին, այլ նաև ոչ հիմնական (ոչ պրոֆիլային) և կամընտրական դասընթացներին, որոնք պետք է նպաստեն ինչպես

ծրագրի ընդհանրական, այնպես էլ բուն մասնագիտական վերջնարդյունքների ձևավորմանը:




**Նկար 1**. Կրթական ծրագրի միավորների փոխկապակցվածությունը:

Բովանդակային տեսանկյունից կրթական ծրագիրը սահմանում է, թե ի՞նչ պետք է ուսուցանվի և յուրացվի ուսանողի կողմից, որպեսզի ապահովվի ուսանողի պատրաստվածությունը ապագա մասնագիտական գործունեությանը: Բացի այդ, կրթական ծրագիրը սահմանում է նաև ուսումնական գործընթացի կազմակերպումը, ինչպես նաև այն ժամաքանակը, որն անհրաժեշտ է ուսանողին ծրագրի բովանդակությունը յուրացնելու համար, տալիս է ծրագրում ներառված առանձին ուսումնական միավորների յուրացման տևողությունը և հաջորդականությունը:

Կրթական ծրագիրը մի շարք փաստաթղթերի փաթեթ է, որը ներառում է.

- աշխատանքային ուսումնական ծրագիրը (ուսումնական պլանը),
- դասընթացների և այլ ուսումնական մոդուլների ծրագրերը,
- միջանկյալ և եզրափակիչ գնահատման/ատեստավորման ձևերը և չափանիշները:

## 2. Ծրագրի (ուսումնական մոդուլի) նպատակների սահմանումը

Ծրագրի (կամ ուսումնական մոդուլի[4]) նպատակներն ընդհանուր կերպով նկարագրում են այն մասնագիտական որակները, որոնք ձեռք են բերում ծրագրին (ուսումնական մոդուլին) մասնակցող ուսանողները: Այդ նպատակների ձևակերպումը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

- բոլոր կրթական ծրագրերը և ուսումնական մոդուլները պետք է ունենան հստակ ձևակերպված նպատակներ,

[4] Այս կետում տրված երաշխավորությունները հավասարապես վերաբերում են նաև ուսումնական մոդուլի/դասընթացի նպատակների սահմանմանը:

- դրանք պետք է լինեն հակիրճ և ձևակերպվեն ուսանողին հասկանալի լեզվով,
- նպատակները պետք է մատնանշեն այն մասնագիտական կարողությունները, որոնք ձեռք են բերում ծրագրին (կամ դասընթացին) մասնակցած ուսանողները,
- ծրագրի նպատակները շատ ընդհանուր կերպով պետք է արտահայտեն ծրագրի բաղկացուցիչ դասընթացների/ուսումնական մոդուլների նպատակները:

Սովորաբար, 5 կամ 6 նպատակների թվարկումը միանգամայն բավարար է ծրագրի ընդհանուր դրույթները և բնութագրական առանձնահատկությունները ներկայացնելու համար: Ցանկալի է նպատակների ձևակերպումը սկսել հետևյալ ելակետային բառերով.

«*Ծրագիրը նպատակ ունի ...*»,

որին առանձին կետերով հետևում է կոնկրետ նպատակների թվարկումը, որը կարող է սկսվել հետևյալ բայերով. օրինակ՝ *զարգացնել, ապահովել, օժանդակել, տեղեկացնել, ծանոթացնել, ձևավորել, նախապատրաստել, տրամադրել, խթանել, աջակցել և այլն*:

Որպես օրինակ, ստորև ներկայացվում են ԵՊՀ մի շարք մասնագիտությունների բակալավրի և մագիստրոսի ծրագրերի նպատակների թվարկումը:

**Օրինակ 1.** «Տեղեկատվական համակարգեր» մագիստրոսի ծրագիր

| Ծրագրի նպատակները |
|---|
| Ծրագիրը նպատակ ունի պատրաստելու արդյունաբերության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմանը և ներդրմանը պատրաստ մասնագետներ, որոնք ունակ կլինեն.<br>1. վերլուծել և համակարգել տվյալ բիզնես ոլորտին առնչվող տեղեկատվական տվյալները,<br>2. ներդնել տեղեկատվական համակարգեր բիզնես միջավայրում՝ արդյունավետ աշխատանք ապահովելու նպատակով,<br>3. կազմակերպել և ուղղորդել բիզնես կողմնորոշվածություն ունեցող տեղեկատվական համակարգերի մշակման գործընթացը,<br>4. կայացնել որոշումներ և կատարել կանխատեսումներ տեղեկատվության ոչ լիարժեք առկայության պայմաններում: |

**Օրինակ 2.** «Կիրառական կենսաբանություն» մագիստրոսի ծրագիր

| Ծրագրի նպատակները |
|---|
| Ծրագիրը նպատակ ունի պատրաստելու մոլեկուլային կենսաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառում հիմնարար գիտելիքներով և հմտություններով օժտված մասնագետներ, որոնք ունակ կլինեն.<br>1. Վերլուծել և համակարգել բժշկական, գյուղատնտեսական, սննդի և շրջակա միջավայրի պահպանության կենսատեխնոլոգիաների ոլորտներին առնչվող տեղեկատվական տվյալները,<br>2. Կիրառել արդի կենսաբանության յուրահատուկ հետազոտական մեթոդները մարդու, կենդանիների և բույսերի հիվանդությունների ախտորոշման, սննդի և պարենի անվտանգության, շրջակա միջավայրի մոնիթորինգի լաբորատորիաներում,<br>3. Նախագծել և իրականացնել տարբեր կենսաարտադրական գործընթացների արդյունավետության բարձրացմանը և որակի ապահովմանն ուղղված ծրագրեր,<br>4. Կիրառել միջառարկայական գիտելիքներն ակադեմիական, կլինիկական և արդյունաբերական ոլորտներում, ներառյալ՝ բժշկական, դեղագործական, գյուղատնտեսական և սննդի արտադրության ոլորտները,<br>5. Ձևակերպել, մշակել և զարգացնել հետազոտական ծրագիր, ինչպես նաև արդյունավետ աշխատել և՛ որպես խմբի անդամ, և՛ որպես խմբի ղեկավար: |

**Օրինակ 3.** «Կենսաինֆորմատիկա» բակալվրի ծրագիր

| Ծրագրի նպատակները |
|---|
| Ծրագիրը նպատակ ունի պատրաստելու կենսաինֆորմատիկայի բնագավառում միջառարկայական գիտելիքներով և հմտություններով օժտված մասնագետներ, որոնք ունակ կլինեն.<br>1. Կատարել գիտաարդյունաբերական բնագավառներում տարբեր հետազոտությունների արդյունքների և կենսաարտադրական գործընթացների արդյունավետության վիճակագրական վերլուծություն,<br>2. Կիրառել տեսական և կիրառական մաթեմատիկայի գի- |

տելիքները կենսաբանական համակարգերի մոդելավոր-
ման, տեղեկատվությունների որոնման, տվյալների բազաների ստեղծման, պահպանման և օգտագործման նպատակով,

3. Ծրագրավորման տարբեր լեզուների միջոցով մշակել և կիրառել կենսաբանական համակարգերի մոդելավորման ծրագրային փաթեթներ,
4. Կիրառել միջառարկայական գիտելիքներն արդի կենսատեխնոլոգիական արտադրություններում, ներառյալ բժշկական, դեղագործական և գյուղատնտեսական բնագավառները:

**Օրինակ 4.** «Հայոց լեզու և գրականություն» բակալվրի ծրագիր

| Ծրագրի նպատակները |
| --- |
| Ծրագիրը նպատակ ունի պատրաստելու բանասիրության բնագավառում միջառարկայական գիտելիքներով և հմտություններով օժտված մասնագետներ, որոնք ունակ կլինեն.<br>1. Համադրելու տեսական և կիրառական լեզվաբանության և գրականագիտության գիտելիքները բանասիրական ուսումնասիրություններ կատարելու, դասավանդելու, խմբագրական աշխատանքներ կատարելու համար,<br>2. Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր, մանկավարժական աշխատանք իրականացնելիս,<br>3. Աշխատելու գիտական և մանկավարժական բնագավառներում և կատարելու տարբեր հետազոտությունների արդյունքների վերլուծություն: |

## 3. Ծրագրի կրթական վերջնարդյունքների ձևակերպումը

Ծրագրի կրթական վերջնարդյունքների ցանկի որոշումը սերտորեն շաղկապված է ծրագրի նպատակների (որակավորման պրոֆիլի) ձևակերպման հետ: Հաջորդ խնդիրը, որն առաջանում է ծրագրի հիմնական նպատակները հայտագրելուց հետո՝ վերջինիս կրթական վերջնարդյունքների ձևակերպումն է: Առաջնային հարցն այս ուղղությամբ հետևյալն է. ինչպե՞ս ձևակերպել կրթական վերջնարդյունքներն ըստ

շրջափուլերի՝ բակալավրի և մագիստրոսի աստիճանների: Առաջարկվում է կրթական վերջնարդյունքների ձևակերպման վայրընթաց մոտեցումը՝ երկրորդ շրջափուլի (մագիստրոսի) ծրագիր - առաջին շրջափուլի (բակալավրի) ծրագիր – ներծրագրային մակարդակներ կամ տարիներ – մոդուլներ/առանձին դասընթացներ: Այն ներկայացված է նկար 2-ում բերված սխեմայում:

Կրթական վերջնարդյունքները ծրագիրը մշակողների կողմից պլանավորվող այն ակնկալիքներն են, որոնք նկարագրում են թե ծրագրի ավարտին հատկապես ի՛նչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա կատարել սովորողը: Դրանք կարող են վերաբերել ինչպես ամբողջական ծրագրին, այնպես էլ առանձին դասընթացին կամ ուսումնական մոդուլին:

Ուստի, վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրի մշակման մոտեցումը հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչ է ակնկալվում ուսանողից, ինչպես է նա դրսևորելու իր սովորածը, և ինչ չափանիշներով է նա գնահատվելու: Հետևաբար, կրթական վերջնարդյունքները պետք է լինեն իրատեսական և չափելի:




**Նկար 2.** Ուսումնական ծրագրի նպատակների և կրթական վերջնարդյունքների սահմանման հաջորդականությունն ըստ շրջափուլերի

Կրթական վերջնարդյունքները պետք է ձևակեպվեն այնպես, որ հասկանալի լինեն բոլոր ուսանողներն, իսկ ուսանողների կողմից նրանց ձեռքբերումը հնարավոր լինի գնահատել:

Կրթական վերջնարդյունքների մի մասն առնչվում է ուսումնառության մասնագիտական ոլորտին, իսկ մյուս մասն ընդհանուր է տվյալ որակավորման ցանկացած ծրագրի համար: Ըստ այդմ տարբերակում են կրթական վերջնարդյունքների երկու հավաքակազմ՝ բուն մասնագիտական, որոնք հանգուցային են տվյալ որակավորման համար և սերտորեն առնչվում են առարկայական ասպարեզի հատուկ իմացությանը, և ընդհանրական, որոնք ընդհանուր են բոլոր ակադեմիական որակավորումների

համար: Հարկ է նշել, որ որոշակի կարողություններ, ինչպես, օրինակ, սովորելու, վերլուծելու և սինթեզելու կարողությունները և այլն, ընդհանուր են բոլոր կամ գրեթե բոլոր ակադեմիական որակավորումների համար և ձեռք են բերում կարևոր նշանակություն, քանի որ հենց դրանք են այս կամ այն կրթական ծրագրի շրջանավարտների համար ապահովում կարիերայի և աշխատանքի անցնելու ավելի լայն հնարավորություններ:

Ստորև ներկայացվում է ընդհանրական կրթական վերջնարդյունքների մի կազմ, որը կարող է օգտակար լինել տարբեր մասնագիտություններով բակալավրի և մագիստրոսի ծրագրերի կրթական վերջնարդյունքները սահմանելիս: Դրանք են.

- վերլուծել և սինթեզել,
- կազմակերպել և պլանավորել,
- տարբեր ոլորտներում հենքային գիտելիքներ ունենալ,
- մասնագիտական գիտելիքի հիմունքներին տիրապետել,
- մայրենի լեզվով գրավոր և բանավոր հաղորդակցվել,
- օտար լեզվի իմացություն,
- համակարգչով աշխատել,
- տեղեկատվության կառավարում (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու կարողություն),
- բարդ խնդիրներ լուծել,
- որոշումներ կայացնել,
- քննադատություն և ինքնաքննադատություն,
- թիմային աշխատանք,
- միջդիսցիպլինար թիմում աշխատել,
- այլ ոլորտների մասնագետների հետ շփվել,
- միջազգային միջավայրում աշխատել,
- գիտելիքները գործնականում կիրառել,
- հետազոտություններ կատարել,
- սովորել,
- նոր իրադրություններին հարմարվել,
- նոր գաղափարներ առաջ քաշել,
- ղեկավարել,

– ինքնուրույն աշխատել,

– նախագծեր մշակել և կառավարել,

– նախաձեռնողականություն և ձեռներեցություն:

Միևնույն ժամանակ, առաջին և երկրորդ շրջափուլերի համար նախատեսված ընդհանրական կրթական վերջնարդյունքները պետք է հստակորեն տարանջատվեն: Այսպես, առաջարկվում է տարբեր առարկայական ոլորտների համար ընդհանուր հետևյալ կրթական վերջնարդյունքներն առաջին և երկրորդ շրջափուլերի կրթական ծրագրերի համար.

Բակալավրի ծրագրի համար՝

– մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն դրսևորելու,

– յուրացված գիտելիքը տրամաբանորեն և հետևողականորեն ներկայացնելու,

– նոր տեղեկատվությունը համապատասխան համատեքստում ընկալելու և մեկնաբանելու,

– մասնագիտության ընդհանուր կառուցվածքի և ենթադիսցիպլինների միջև կապի ըմբռնում/իմացություն ցուցաբերելու,

– քննադատական վերլուծության և տեսությունների զարգացման մեթոդները հասկանալու և օգտագործելու,

– առարկայի մեթոդները և տեխնոլոգիաները ճիշտ օգտագործելու,

– տվյալ առարկայական ոլորտում հետազոտությունների արդյունքները գնահատելու,

– գիտական տեսությունների ստուգման փորձարարական և դիտարկիչ միջոցների արդյունքները հասկանալու:

Առաջին շրջափուլի ավարտը հանդիսանում է երկրորդ շրջափուլի մուտքային պահանջ: Այստեղ շրջանավարտները պետք է ունակ լինեն կատարելու նաև ինքնուրույն (կիրառական) հետազոտություն: Ուստի մագիստրոսի ծրագրի շրջանավարտները պետք է.

– հմտորեն տիրապետեն առարկայական ոլորտին, այսինքն՝ իմանան հետազոտության նորագույն մեթոդները և տեխնոլոգիաները, գիտենան նորագույն տեսությունները և դրանց մեկնաբանությունները,

– քննադատորեն հետևեն և իմաստավորեն տվյալ ոլորտում տեսության և պրակտիկայի զարգացումը,

– տիրապետեն անկախ հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,

– ունակ լինեն ուրույն ներդրում կատարել տվյալ առարկայական ոլորտում (օրինակ, ատենախոսական աշխատանքի շրջանակներում),

– ցուցաբերեն ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում,

– հմտորեն տիրապետեն տվյալ մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

Նշված ոչ բոլոր կրթական վերջնարդյունքներն են հավասարապես կարևոր մասնագիտական տարբեր ասպարեզների համար, սակայն դրանք ընդհանուր հենք են հանդիսանում կոնկրետ մասնագիտական ոլորտում պահանջվող կրթական վերջնարդյունքների ցանկն ու կառուցվածքը որոշելու համար: Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ ընդհանրական վերջնարդյունքները, որպես կանոն, դիտարկվում են կոնկրետ առարկայական ոլորտների շրջանակում, ինչի հետևանքով կրթական պրակտիկայում ընդհանրական և բուն մասնագիտական վերջնարդյունքներն այդքան էլ հստակ չեն տարանջատվում: Բացի այդ, յուրաքանչյուր ընդհանրական վերջնարդյունքների համար պետք է տարբերել այն առարկայական ոլորտները, որոնցում տվյալ վերջնարդյունքը համարվում է կարևոր կամ նույնիսկ հիմնորոշ, և այն ոլորտները, որոնց համար տվյալ ընդհանրական վերջնարդյունքի և առարկայի կապն ավելի թույլ է արտահայտված: Կրթական ծրագրում ընդհանրական վերջնարդյունքների զարգացումը կարող է իրականանալ երկու հիմնական եղանակով: Առաջինը նախատեսում է կրթական ծրագրի շրջանակներում ընդհանրական վերջնարդյունքների առնվազն մեկ մասի զարգացմանն ուղղված առանձին դասընթացների/ կրթական մոդուլների առկայություն՝ ինչպես, օրինակ, կառավարման, հաղորդակցման, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետման կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացները: Երկրորդ եղանակը ենթադրում է որոշակի ընդհանրական վերջնարդյունքների զարգացմանն ուղղված առանձին տարրերի (առաջադրանքների, ինքնուրույն կամ խմբային աշխատանքների և այլն) ներառում ծրագրի հիմնական (մասնագիտական) կառուցամասի դասընթացներում/ուսումնական մոդուլներում:

Ընդհանրական կրթական վերջնարդյունքների կառուցվածքի և կազմի որոշման համար որպես պահանջների հիմք, վերը բերված ցանկից զատ, կարող են ծառայել նաև Հարատև ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակը և Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակը:

Բուն մասնագիտական կրթական վերջնարդյունքներն, ինչպես արդեն նշվեց, որոշվում են՝ ելնելով կրթական ծրագրի նպատակներից (մասնագիտության որակավորման պրոֆիլից): Այդ հարցում, բացի վերոնշյալ որակավորումների շրջանակներից, օգտակար կարող են լինել նաև բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը, տարբեր առարկայական կողմնորոշիչներ (կամ կրթական

չափորոշիչներ), աշխատաշուկայի ներկայացուցիչների, մասնագիտական և ակադեմիական հանրության երաշխավորությունները, և այլն:

ԵՊՀ մագիստրոսի ծրագրերի կրթական վերջնարդյունքների կազմը որոշելիս առաջին հերթին պետք է առաջնորդվել մագիստրոսի որակավորմանը ներկայացվող պահանջներով, համաձայն որոնց մագիստրոսի որակավորում է շնորհվում այն ուսանողներին, ովքեր.

- ընդլայնել և խորացրել են բակալավրի աստիճանում ձեռք բերած գիտելիքներն ու իմացությունը, ինչը հնարավորություն է տալիս գաղափարների մշակման և/կամ կիրառման մեջ ինքնատիպության դրսևորման,
- կարող են կիրառել իրենց գիտելիքներն ու խնդիրներ լուծելու ունակությունները նոր կամ անծանոթ միջավայրերում, ինչպես իրենց մասնագիտական, այնպես էլ հարակից և միջառարկայական բնագավառներում,
- ունակ են համադրելու գիտելիքները և լուծելու բարդ խնդիրներ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում, եզրահանգումներ անելու՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը,
- կարող են մասնագետներին և ոչ մասնագետներին հստակ ներկայացնել իրենց դիտողություններն ու եզրահանգումները՝ գիտականորեն փաստարկված և տրամաբանական հիմնավորումներով,
- կարող են արդյունավետ աշխատել մասնագիտական աշխատանքային կամ հետազոտական խմբի կազմում,
- ունեն սովորելու բավարար ունակություններ՝ ուսումն ինքնուրույնաբար շարունակելու համար:

Համապատասխանաբար, ԵՊՀ բակալավրի ծրագրերի կրթական վերջնարդյունքների կազմը որոշելիս հարկավոր է առաջնորդվել բակալավրի որակավորմանը ներկայացվող պահանջներով, համաձայն որոնց բակալավրի որակավորում է շնորհվում այն ուսանողներին, ովքեր.

- ցուցաբերել են ընդհանուր կրթության վրա կառուցված այնպիսի կարողություններ և հմտություններ, որոնք ներառում են տվյալ բնագավառի իմացության կարևորագույն ասպեկտները,
- իրենց կարողությունները և հմտությունները կարող են կիրառել այնպես, որ դրսևորեն մասնագիտական մոտեցում աշխատանքի նկատմամբ և տվյալ բնագավառում խնդիրներ լուծելու կամ տեսակետներ պաշտպանելու և մեկնաբանելու ունակություններ,
- ունակ կլինեն հավաքելու և մեկնաբանելու համապատասխան տվյալներ (սովորաբար ուսումնառության իր բնագավառում)՝սոցիալ-տնտեսական,

գիտական և էթիկական խնդիրներն արտացոլող դատողություններ անելու համար,

– կարող են ներկայացնել տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ և լուծումներ՝ մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը,

– զարգացրել են ուսումնառության այնպիսի կարողություններ, որոնք անհրաժեշտ են հաջորդ կրթական փուլում ուսումը ինքնուրույնության ավելի բարձր աստիճանով շարունակելու համար:

Ծրագրի կրթական վերջնարդյունքները պետք է ձևակերպվեն ըստ հետևյալ դասակարգումների.

- մասնագիտական գիտելիք և իմացություն,
- գործնական մասնագիտական կարողություններ,
- ընդհանրական (փոխանցելի) կարողություններ:

Ընդ որում, առաջին դասակարգման (մասնագիտական տեսական գիտելիքներ) կրթական վերջնարդյունքների ձևակերպումը նախընտրելի է սկսել այսպես.

*«Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը. »,* այնուհետև հարկավոր է բայով սկսվող նախադասությամբ թվարկել տեսական գիտելիքների այն կազմը, որն ականկալվում է, որ ուսանողը ձեռք կբերի ծրագրի ավարտին:

Հաջորդ երկու դասակարգումների կրթական վերջնարդյունքների ձևակերպումը առաջարկվում է սկսել այսպես ՝

*«Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի. »*, այնուհետև բայով սկսվող նախադասությամբ պետք է թվարկել գործնական կարողությունների (մասնագիտական և ընդհանրական) կազմը, որն ուսանողը ձեռք կբերի ծրագրի ավարտին:

Օրինակ, ծրագրի մակարդակում կրթական վերջնարդյունքների նկարագրությունը կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայով (օրինակը բերվում է տնտեսագիտական ուղղության կրթական ծրագրի համար):

**Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն.**

*Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը* ՝

Ա1. կունենա բիզնես ոլորտին առնչվող մանրամասն գիտելիք առարկաների լայն շարքի և բիզնեսի կառավարման ընդհանուր գործառույթներում դրանց կապակցման եղանակների մասին,

Ա2. լավ կտիրապետի մաթեմատիկական վիճակագրությանը և դրանց կիրառմանը բիզնեսի բնագավառում, և այլն:

**Բ. Գործնական մասնագիտական կարողություններ.**

*Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝*

Բ1. վերլուծելու բիզնեսի խնդիրները և առաջարկելու համարժեք լուծումներ,

Բ2. տեխնիկական և վարչական բնույթի որոշումներ կայացնելու արտադրական կառույցների սպասարկման և կառավարման ոլորտում,

Բ3. ուսումնասիրելու կառավարման մեջ առաջացած խնդիրները և տալ համարժեք լուծումներ,

Բ4. գնահատելու առկա ռեսուրսները՝ բիզնես կառավարման նոր զարգացումներին համապատասխան, և այլն:

**Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ.**

*Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝*

Գ1. գնահատելու ազգային և գլոբալ կայուն զարգացման անհրաժեշտությունը,

Գ2. աշխատելու ինքնուրույն,

Գ3. արդյունավետ աշխատելու թիմում,

Գ4. պատասխանատվություն ստանձնելու իր որոշումների համար և այլն:

Ծրագրի կրթական վերջնարդյունքների քանակը պետք պահել ողջամիտ սահմաններում: Որպես կանոն, 15-25 (ներառյալ 5-6 ընդհանրական կարողություն-ները) կրթական վերջնարդյունքների սահմանումը բավարար է ծրագրի հիմնական բնութագրերն արտահայտելու համար:

Որպես օրինակ, ստորև ներկայացվում են ԵՊՀ երկու մասնագիտությունների բակալավրի և մագիստրոսի ծրագրերի կրթական վերջնարդյունքների լրակազմը:

**Օրինակ 1.** «*Տեղեկատվական համակարգեր*» մագիստրոսի ծրագիր

| **Ծրագրի կրթական վերջնարդյունքները** |
|---|
| **Ա. Մասնագիտական տեսական գիտելիքներ**<br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը.<br>Ա1. կտիրապետի ալգորիթմների, տվյալների մոդելների և հաշվողա-կան համակարգերի վերլուծության և նախագծման տեսական հի-մունքներին, |

| |
|---|
| Ա2. կտիրապետի տվյալների պահպանման և պաշտպանվածության հիմնարար սկզբունքներին,<br><br>Ա3. ծանոթ կլինի բաշխված միջավայրերում պրոցեսների նախագծման և իրականացման սկզբունքներին,<br><br>Ա4. կտիրապետի հեռահաղորդակցությանը և Web-տեխնոլոգիաներին,<br><br>Ա5. կունենա տնտեսագիտական մոդելների, ֆինանսական գործառնությունների և էլեկտրոնային բիզնեսի իմացություն,<br><br>Ա6. կտիրապետի բիզնես կողմնորոշվածություն ունեցող ծրագրային համակարգերի կառուցման մեթոդաբանությանը,<br><br>Ա7. ծանոթ կլինի տեղեկատվական համակարգերի օգտագործմանը և կառուցմանն առնչվող իրավական և էթիկական նորմերին: |
| **Բ. Մասնագիտական գործնական կարողություններ**<br><br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.<br><br>Բ1. ընտրել կամ կառուցել արդյունավետ ալգորիթմներ կամ տվյալների պահպանման մոդելներ,<br><br>Բ2. ստեղծել դինամիկ Web էջեր, մասնակցել տվյալների բազաների և ցանցային կիրառությունների ստեղծման աշխատանքներին,<br><br>Բ3. օգտագործել տարատեսակ մարքեթինգային ռազմավարություններ, ֆինանսական գործիքներ և գործարարական գործընթացներ,<br><br>Բ4. առաջարկներ  անել տրված ոլորտի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ,<br><br>Բ5. կառուցել նոր կիրառություններ տրված բիզնես ոլորտում օգտագործվող տեղեկատվական համակարգերի համար,<br><br>Բ6. դրսևորել աշխատանքի բարձր արդյունավետություն՝ հանդես գալով և որպես թիմի ղեկավար, և որպես թիմի անդամ: |
| **Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**<br><br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.<br><br>Գ1. օգտվել տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար,<br><br>Գ2. վերլուծել փաստերը և անել հետևություններ,<br><br>Գ3. ստեղծագործաբար կիրառել ունեցած գիտելիքները և առաջ քաշել նորերը,<br><br>Գ4. արդյունավետ կերպով պլանավորել ժամանակն ու այլ ռեսուրսները,<br><br>Գ5. պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը: |

Օրինակ 2. «*Կենսաինֆորմատիկա*» բակալավրի ծրագիր

| Ծրագրի կրթական վերջնարդյունքները |
| --- |
| **Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն**<br><br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը.<br><br>Ա1. ծանոթ կլինի ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքներին և հայեցակարգերին, բնապահպանական գլոբալ և լոկալ հիմնախնդիրներին,<br><br>Ա2. կտիրապետի բարձրագույն մաթեմատիկայի հիմնական գիտելիքներին, վիճակագրության և մաթեմատիկական մոդելավորման մեթոդներին,<br><br>Ա3. կտիրապետի տեղեկատվական տեխնոլոգիաներին, ծրագրավորման հիմնարար սկզբունքներին և հիմնական լեզուներին,<br><br>Ա4. ծանոթ կլինի կենսահամակարգերի կառուցվածքաֆունկցիոնալ ուսումնասիրություններում համակարգչային տարաբնույթ ծրագրերի կիրառության առանձնահատկություններին,<br><br>Ա5. կիմանա կենսաբանական համակարգերի կազմավորվածության և գործունեության հիմնարար սկզբունքները, բջիջներում ընթացող կենսասինթեզի և կատաբոլիզմի ուսումնասիրման ժամանակակից մեթոդոլոգիական մոտեցումները: |
| **Բ. Գործնական մասնագիտական կարողություններ**<br><br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.<br><br>Բ1. կիրառել տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդները,<br><br>Բ2. օգտագործել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները կենսաբանության տարբեր բնագավառներում,<br><br>Բ3. իրականացնել կենսաբանական պարզագույն գործընթացների համակարգչային մոդելավորում,<br><br>Բ4. Մշակել և օգտագործել ոչ բարդ տարաբնույթ փաթեթներ,<br><br>Բ5. ծավալել ինքնուրույն մասնագիտական գործունեություն, ինչպես նաև որոշակի ղեկավարության ներքո իրականացնել հետազոտական աշխատանքներ ակադեմիական, կլինիկական և արդյունաբերական ոլորտներում: |
| **Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**<br><br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.<br><br>Գ1. աշխատել թիմում,<br><br>Գ2. կիրառել գիտելիքները պրակտիկայում, ձևակերպել խնդիրներ և լուծել,<br><br>Գ3. տարբեր աղբյուրներից հայթայթել տեղեկատվություն և վերլուծել, |

Գ4. բանավոր և գրավոր հաղորդակցվել մասնագիտական հանրու-
թյան հետ,

Գ5. մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկ-
ված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսքը,

Գ6. պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:

Ուսանողի կողմից ծրագրի կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը, ի տարբերություն ուսումնական մոդուլի/դասընթացի կրթական վերջնարդյունքների, հնարավոր չէ չափել ուղղակի մեթոդներով: Այն չափվում է անուղղակի մեթոդներով՝ ծրագրի բաղկացուցիչ ուսումնական մոդուլների (դասընթացների) կրթական վերջնարդյունքների գնահատման միջոցով: Հետևաբար, քանի որ ծրագրի կրթական վերջնարդյունքներն ուղղակի և միարժեք կերպով հնարավոր չէ գնահատել, ուստի դրանք տարրալուծվում են ուսումնական մոդուլների (դասընթացների) մեջ և արտահայտվում դրանց կրթական վերջնարդյունքներով:

4. Դասընթացի (ուսումնական մոդուլի) կրթական վերջնարդյունքների ձևակերպումը

Ուսումնական մոդուլի (դասընթացի) կրթական վերջնարդյունքները պետք է ուսանողներին տեղեկատվություն տան, թե նրանք ինչ պետք է իմանան, հասկանան և կարողանան անել դասընթացի ավարտին և մատնանշեն թե հատկապես ինչը պետք է գնահատվի: Դրանք նկարագրում են, թե ի՛նչ պետք է կարողանա անել ուսանողը ուսումնական մոդուլը հաջողությամբ ավարտելիս՝ դրսևորելու համար իր գիտելիքը, իմացությունը, կարողությունները և/կամ հմտությունները: Ուստի ուսումնական մոդուլի կրթական վերջնարդյունքները տարբերվում են ամբողջական ծրագրի կրթական վերջնարդյունքներից. դրանք ձևակերպվում են այնպես, որ պարզորոշ ցույց տան, թե ուսանողները հատկապես ինչպե՛ս պետք է դրսևորեն իրենց իմանալը, հասկանալը և կարողանալը:

Դասընթացի կրթական վերջնարդյունքները միտված են ուսումնառության, այլ ոչ թե դասավանդման ընթացքին, ուստի դրանք սահմանում են ոչ թե այն, թե ի՛նչ կարող է մատուցել դասախոսը, այլ այն, թե ինչ պատք է սովորի ուսանողը: Այդ վերջնարդյունքները պլանավորելիս և ձևակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ դրանք բոլորը պետք է գնահատելի լինեն: Պետք է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, թե ինչպե՛ս է ուսումնական մոդուլի կրթական վերջնարդյունքներն ինտեգրված ամբողջական ծրագրի վերջնարդյունքներին:

Դասընթացի/ուսումնական մոդուլի կրթական վերջնարդյունքները պետք է ձևակերպվեն ըստ հետևյալ դասակարգումների.

- մասնագիտական տեսական գիտելիքներ,
- մասնագիտական գործնական կարողություններ,
- ընդհանրական (փոխանցելի) գործնական կարողություններ:

Առանձին դասընթացի/ուսումնական մոդուլի կրթական վերջնարդյունքների նկարագրումն սկսվում է հետևյալ ձևակերպմամբ՝ «*Դասընթացի/ուսումնական մոդուլի հաջող ավարտին ուսանողը...* »: Այս ձևակերպմանը այնուհետև պետք է հաջորդի գործողության բայը, որը պետք է նկարագրի, թե ուսանողները ինչպես են դրսևորում այն, ինչ նրանք սովորել են և ինչի արդյունքում ձեռք են բերել համապատասխան գիտելիքը կամ կարողությունը: Հնարավորինս պետք է խուսափել *իմանալ, տեղյակ լինել, հասկանալ, ըմբռնել* և նմանատիպ այլ բայերից, քանի որ դրանք ցուցաբերելու եղանակներն անորոշ են: Այնինչ, և՛ ուսանողները, և՛ դասախոսները պետք է կարողանան հեշտությամբ պարզել՝ արդյո՞ք այդ վերջնարդյունքները ձեռք են բերվել (և ինչ չափով), թե՞ ոչ: Փոխարենը, նախընտրելի է նկարագրել, թե ուսանողները հատկապես ինչպես պետք է դրսևորեն ձեռքբերված գիտելիքը, իմացությունը, կարողությունները և/կամ հմտությունները: Երբ կրթական վերջնարդյունքները ձևակերպելիս օգտագործվում են վերոնշյալ բայերը, ապա հնարավոր չի

լինում հստակ պատկերացում կազմել ձեռք բերած կրթական վերջնարդյունքները դրսևորելու եղանակների մասին:

Իմացության տարբեր ոլորտները (մակարդակները) նկարագրելու համար կարող են օգտագործվել տարբեր բայեր: Օրինակ, ներածական որևէ դասընթացի համար, որի նպատակն է նյութի հենքային իմացության ձեռք բերումը՝ (գիտելիք և/կամ իմացություն) կրթական վերջնարդյունքներն ուսանողներից կարող են պահանջել կարողանալ *վերարտադրել, բնորոշել, վերհիշել, թվարկել, նկարագրել, բացատրել* կամ *քննարկել*: Ավելի առաջանցիկ մոդուլի համար, որի նպատակն է նյութի համակողմանի իմացության հիման վրա որոշակի կարողությունների զարգացումը, կրթական վերջնարդյունքները ուսանողներից կարող են պահանջել *ձևակերպելու, գործնականում իրականացնելու, գնահատելու, կարծիք հայտնելու, համադրելու, հաշվարկելու* կամ *նախագծելու* կարողություններ:

Ստորև ներկայացված են ուսումնական մոդուլի/դասընթացի կրթական վերջնարդյունքների ձևակերպման մի քանի օրինակներ (օրինակները բերվում են տարբեր առարկայական ոլորտներից):

*Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝*

- բացատրել հաշվապահական հաշվառման տեղեկատվության դերը կազմակերպություններում,
- սահմանել մարքեթինգի առցանց արդյունավետ ռազմավարություններ և ներդնել դրանք մարքեթինգի պլանում,
- սահմանել և քննադատորեն գնահատել ձեռնարկությունների առկա ռազմավարական հնարավորությունները,
- վերլուծել կառավարման հանգուցային խնդիրները կոնկրետ արտադրության կամ ընկերության դեպքում և առաջարկել իրավիճակը բարելավելու կազմակերպական մոտեցումներ,
- աշխատել սպառողական խնդիրների վերլուծության նպատակով ձևավորված թիմում,
- նախագծել ինտերակտիվ կայք ուսանողների օգտագործման համար,
- գնահատել կլինիկական միջամտության հետևանքները կոնկրետ դեպքերում,
- ուրվագծել ուսումնական պլանի մշակման սեփական մոտեցում,
- սահմանել ուսումնառության և դասավանդման մեթոդների այն բազմազանությունը, որը կարող է արդյունավետորեն գործածվել բարձրագույն կրթության ոլորտում,
- վերլուծել ուսուցման այն տեսությունները, որոնք հիմնավորում են դասավանդման ընտրված մոտեցումները,

– զարգացնել ինքնուղղորդվող ուսումնառության արդյունավետ և գործուն կարողություններ:

Կրթական վերջնարդյունքների դասակարգման և ստորադասման ամենաընդունված ձևերից մեկը Բլումի տաքսոնոմիան[5] է, որի յուրաքանչյուր մակարդակի նկարագրման համար առաջարկվող բայերի ցանկը ներկայացվում է ստորև.

| | Մակարդակ | **Իմացության ձևերը** | **Համապատասխան բայերը** (ցանկն ամբողջական չէ) |
|---|---|---|---|
| Գիտելիք և իմացություն | 1 | **Գիտելիք** (որոշակի փաստերի/տվյալների հիշողություն) | *Արտահայտել, գիտակցել, ընտրել, վերարտադրել, չափել, որոշել, թվարկել, անվանել, վերհիշել, գրանցել, պնդել և այլն:* |
| | 2 | **Իմացություն** (փաստերի/տվյալների համակարգման ունակություն՝ իմաստը հասկանալու նպատակով) | *Որոշել, սահմանել, ներկայացնել, ձևակերպել, բացատրել, հակադրել, նկարագրել, քննարկել, ճանաչել, հիմնավորել, ընտրել, մատնանշել, լուսաբանել, դասակարգել և այլն:* |
| Կարողություններ | 3 | **Կիրառություն** (առաջադրանքի կամ խնդրի համատեքստում գիտելիքի/իմացության օգտագործում) | *Կանխատեսել, ընտրել, գնահատել, գտնել, ցուցադրել, օգտագործել, կառուցել, հաշվարկել, կիրառել, ցուցաբերել, լուսաբանել, գործնականում իրականացնել, սովորեցնել, կատարել և այլն:* |
| | 4 | **Վերլուծություն** (տեղեկատվությունը բաղկացուցիչ մասերի կամ իմաստների բաժանելու ունակություն՝ մասերի փոխհարաբերությունը կամ նշանակությունները հասկանալու նպատակով) | *Համեմատել, տարբերակել, համադրել/հակադրել, տրոհել/մասերի բաժանել, վերլուծել, հաշվարկել, փորձարկել, բացահայտել, տարանջատել, լուծել և այլն:* |
| | 5 | **Սինթեզ/համադրություն** (տեղեկատվությունը կամ փաստերը նորովի համատեղելու ունակություն՝ խնդրի կամ հիմնախնդրի ավելի լավ կամ համակողմանի | *Միավորել/միացնել, ի մի բերել, փաստարկել, հարաբերել/կապ հաստատել, ամփոփել, կազմակերպել/համակարգել, եզրակացնել/եզրահանգել, նախագծել, առաջարկել, վերաձևակերպել, քննարկել, ստանալ/դուրս բերել, մեկնաբանել, ընդ-* |

[5] Ուսումնառության գործընթացում իմացության մակարդակների դասակարգման եղանակ է (տաքսոնոմիա՝ նշանակում է դասակարգում), որը մշակել է ամերիկացի գիտնական Բենիամին Բլումը: Իմացության ձևերի այս հիերարխիկ դասակարգումն ունի 6 մակարդակներ՝ ըստ աճող բարդության (տե՛ս աղյուսակը)՝ սկսած փաստերի պարզ հիշողությունից՝ ստորին մակարդակում, մինչև գնահատումը՝ ամենաբարձրում:

| | | | |
|---|---|---|---|
| | | ընկալման նպատակով) | *հանրացնել և այլն:* |
| | 6 | **Գնահատում/արժևորում** (առկա տեղեկատվու-թյան հիման վրա եզրա-հանգումներ անելու և դրանք գնահատելու ունակություն) | *Արժևորել, օժանդակել/աջակցել, հակադրել/համադրել, ընտրել, քննադատել, որոշել, համեմատել, գնահատել, եզրահանգել, հետևու-թյուններ անել, ենթադրել, պաշտ-պանել և այլն:* |

Շատ կարևոր է, որ կրթական վերջնարդյունքները լինեն չափելի և գնահատելի: Դրա համար անհրաժեշտ է, որ դրանց ձեռքբերման հանգամանքը լինի ակնառու՝ համապատասխան գնահատման չափանիշի հետ ուղղակի կապ ապահովելու միջոցով: Հետևաբար, կարևոր է, որ կրթական վերջնարդյունքները ձևակերպվեն այնպես, որ ապահովեն դրանց ձեռքբերման ակներևության առավելագույն աստիճան:

Ստորև տրվում են ուսումնական մոդուլի/դասընթացի կրթական վերջնար-դյունքները ձևակերպելու որոշ ուղենիշային ցուցումներ.

- գրել ապառնի ժամանակով,
- կրթական վերջնարդյունքների թիվը պահել հեշտ կառավարելի սահ-մաններում, յուրաքանչյուր ուսումնական մոդուլի/դասընթացի համար սահմանել 4-6 կրթական վերջնարդյունք,
- լինել իրատեսական՝ նկատի ունենալով նախորդ գիտելիքը, առկա ժամա-նակը և ուսումնառության հնարավորությունները,
- խուսափել չափից ավելի ընդարձակ կամ փոքրածավալ կրթական վերջնարդյունքների ձևակերպումներից,
- չգործածել *իմանալ, հասկանալ, սովորել* կամ նմանատիպ այլ բայեր, քանզի դրանք անորոշ են և կարիք ունեն լրացուցիչ մեկնաբանության,
- լինել հնարավորինս հակիրճ,
- գրել ուսանողին մատչելի լեզվով, կիրառել նրա համար առավել ընկալելի խոսք,
- համոզվել, որ կրթական վերջնարդյունքները չափելի և գնահատելի են:

Որպես օրինակ, ստորև ներկայացվում են ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի ծրագրերի մի քանի դասընթացների/ուսումնական մոդուլների նպատակները և կրթական վերջնարդյունքները:

**Օրինակ 1.** «Հայոց եզվի պատմություն-1»

| |
|---|
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի պատմության, լեզվի ծագման վերաբերյալ եղած տեսությունները, հայերենի հնչունային, բառային համակարգերի պատմական զարգացումը: |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>▪ Հայերենի ծագման վերաբերյալ եղած տեսությունների, հնչյունական և բառապաշարային համակարգերի պատմական զարգացման վերաբերյալ:<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>▪ Հասկանալ ժամանակակից հայերենի լեզվական տարբեր իրողությունների զարգացումը, պարզաբանել լեզվական շատ իրողությունների ծագումնաբանությունը:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>▪ կատարել հետազոտական աշխատանք տեսական խնդիրների շուրջ: |

**Օրինակ 2.** «Իրավաբանական գրագրություն»

| |
|---|
| Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել իրավական հետազոտություններ կատարելու և դրանց արդյունքում գրագետ ու արդյունավետ իրավավերլուծական տեքստեր կազմելու հմտություններ: |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>▪ իրավավերլուծական ռազմավարությունների մասին,<br>▪ իրավավերլուծական համակարգերի, և առաջին հերթին՝ IRAC համակարգի մասին,<br>▪ իրավական ակտերի շտեմարանների, այդ թվում՝ HUDOC համակարգի մասին,<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>▪ կազմել կառուցվածքային, իրավաբանական և լեզվական առումներով գրագետ իրավավերլուծական տեքստեր IRAC համակարգով,<br>▪ կիրառել հանրաճանաչ, այդ թվում՝ ՀՀ բարձրագույն դատական ատյանների կողմից կիրառվող իրավավերլուծական և մեկնաբանողական հնարքներ,<br>▪ իրականացնել համակարգված իրավական հետազոտություն,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>▪ օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ |

| |
|---|
| ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ,<br>▪ վերլուծել փաստեր, կատարել հետևություններ,<br>▪ ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները: |

**Օրինակ 3.** «Ատոմ-ֆոտոն քվանտային գործառույթներ»

| |
|---|
| Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել քվանտացված լույսի հետ և ատոմների փոխազդեցության հիմնական օրինաչափություններին, որոնք առկա են քվանտային երևույթներում: |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>• ֆիզիկական համակարգերի կազմավորվածության և էվոլյուցիայի սկզբունքների մասին,<br>• կոհերենտ լուսային ճառագայթման դաշտում, ներառյալ քվանտացված, և ատոմում ընթացող պրոցեսների մասին:<br><br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• կիրառել քվանտային մեխանիկայի և դասական էլեկտրադինամիկայի ապարատը լուսային դաշտի ազդեցության տակ ատոմում ընթացող պրոցեսների նկարագրման համար,<br>• հասկանալ և վերլուծել լուսային դաշտի ազդեցությունը ատոմի ծանրության կենտրոնի շարժման վրա, դրա հետևանքով ատոմի սառեցման և տաքացման հնարավորությունները:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• ընկալել մասնագիտական նոր գաղափարներ և աջակցել դրանց տարածմանը,<br>• մոդելավորել մասնագիտության խնդիրները տեսական և մաթեմատիկական ֆիզիկայի մեթոդներով: |

**Օրինակ 4.** «Շրջակա միջավայրով պայմանավորված առողջություն»

| |
|---|
| Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին շրջակա միջավայրի վիճակով պայմանավորված առողջությանն առնչվող կարևորագույն խնդիրներին, միջավայրի գործոնների ազդեցությանո առողջության վրա: |

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

*Գիտելիք և իմացություն*

- շրջակա միջավայրի աղտոտմամբ պայմանավորված առողջության վրա ազդեցության բացասական հետևանքների մասին,
- առողջության համար ռիսկի գնահատման հիմնական մեթոդների և փուլերի վերաբերյալ,
- միջավայրի վիճակով պայմանավորված հիվանդությունների և դրանց կանխման ուղղությամբ իրականացվող գործողությունների մասին:

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- օտագործել գործնական հանձնարարականները շրջակա միջավայրի բացասական ազդեցությունների հետևանքները նվազեցնելու կամ կանխարգելելու համար,
- կիրառել ձեռք բերված գիտելիքները շրջակա միջավայրի հետ կապված առողջությանը վերաբերող կարևորագույն խնդիրների լուծման գործողություններում,
- կիրառել ռիսկի գնահատման մեթոդները և նպաստել դրանց ներդրմանը հանրային առողջապահության քաղաքականության մշակման գործընթացում:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- կիրառել ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում,
- աշխատել թիմում և լուծել առաջադրված խնդիրները:

**Օրինակ 5.** «Կրիմինալոգիա»

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել հանցագործությունների առանձին տեսակների կրիմինալոգիական առանձնահատկություններին, պատճառներին ու պայմաններին, հանցավորության նկատմամբ վերահսկողությանը և հանցագործությունների առանձին տեսակների կանխմանն ուղղված միջոցառումներին:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

*Գիտելիք և իմացություն*

- հանցավորության՝ որպես սոցիալական երևույթի օրինաչափությունների վերաբերյալ,
- հանցավորության և հանցագործությունների առանձին տեսակների կանխման միջոցառումների մասին:

*Ունակ կլինի.*

- ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
  - գնահատել հանցավորության վիճակը, կառուցվածքը, զարգացման միտումները,
  - բացահայտել հանցավորության և հանցավոր վարքագծի պատճառներն ու պայմանները,
  - վերլուծել հանցավորության կանխման միջոցառումները,
  - առաջարկներ անել հանցագործությունների առանձին տեսակների կանխման միջոցառումներ մշակելու վերաբերյալ:
- ✓ *(ընդհանրական կարողություններ)*
  - վերլուծել փաստեր, կատարել հետևություններ,
  - ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները:

Ուսումնական մոդուլի/դասընթացի կրթական վերջնարդյունքների գործադրումը պետք է բավարարի հետևյալ պահանջները.

1. Դրանք պետք է ձևակերպվեն նվազագույն շեմային մակարդակում:
2. Ուսանողի կողմից դրանց ձեռքբերումը պետք է գնահատվի:
3. Անցողիկ գնահատական ստանալու համար ուսանողը պետք է յուրացնի ուսումնական մոդուլի համար սահմանված բոլոր կրթական վերջնարդյունքները:

## 5. Կրթական ծրագրի կառուցվածքի որոշումը

Բովանդակությունը հանդիսանում է կրթական ծրագրի կարևորագույն կողմը: Պարզելու համար, թե ինչպիսի՞ն պետք է լինի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը, որպեսզի դրա շրջանակներում ձևավորվեն ծրագրի շրջա

նավարտների համար նախանշված կրթական վերջնարդյունքները, անհրաժեշտ է լուծել ծրագրի բաղկացուցիչ ուսումնական միավորների փոխկապակցվածության և դրանց ներդաշնակեցման բարդ խնդիրը:

Բովանդակային առումով կրթական ծրագիրը կարող է բաժանվել 3 հիմնական կառուցամասերի. *ընդհանուր կրթության*, *հիմնական կրթության* և *լրացուցիչ կրթության*:

1. *Ընդհանուր կրթության* կառուցամասում առանձնացվում են երեք բաղադրիչներ.

– *հիմնարար.* այն բաղկացած է դասընթացներից, առանց որոնց հնարավոր չէ *հիմնական կրթության* կառուցամասի դասընթացների ուսումնասիրումը,

– *հումանիտար-սոցիալտնտեսական*, որը ձևավորում է շրջանավարտի հումանիտար, ընդհանուր մշակութային, սոցիալ-անձնային և հաղորդակցման կարողությունները,

– *կազմակերպատնտեսագիտական*, որը ձևավորում է շրջանավարտի համակարգային, կազմակերպչական-կառավարչական և տնտեսագիտական կարողությունները:

2. *Հիմնական կրթության* կառուցամաս, որը ներառում է երկու բաղադրիչ.

– *հիմնական մասնագիտական*՝ բաղկացած դասընթացներից, որոնք կազմում են հիմնական կրթական ծրագրի միջուկը և ձևավորում են շրջանավարտի ընդհանուր մասնագիտական (հենքային) և հատուկ մասնագիտական ուղղվածության կոմպետենցիաները,

– *ընդհանրական կամ փոխանցելի*, որն ապահովում է գիտելիքների փոխանցումը հարակից մասնագիտական ոլորտներ:

3. *Լրացուցիչ կրթության* կառուցամաս, որը ներառում է ոչ պարտադիր ֆակուլտատիվ և/կամ կամընտրական (էլեկտիվ) դասընթացների կազմը:

Կրթական ծրագրի նախագծման առաջին փուլում ծրագրի կառուցվածքի և բովանդակության մշակման համար կարող է ընտրվել ուսումնական դասընթացների խմբավորման ցանկացած տարբերակ, որն ապահովում է դրանց ամբողջական ցանկը:

## 6. Ծրագրի բովանդակության ձևավորումը ուսումնական պլանի քարտեզի օգնությամբ

Կրթական ծրագրի նպատակներին և վերջնարդյունքներին համապատասխան ծրագրի բովանդակություն ստանալու համար հարկավոր է կառուցել և լրացնել ստորև ներկայացված համապատասխանության մատրիցան (տե՛ս նկար 3), որտեղ ուղղահայաց սյունակներում դասավորված են ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքները (բուն մասնագիտական և ընդհանրական), որոնք պետք է ձևավորվեն տվյալ շրջափուլի (բակալավրի, մագիստրոսի) կրթական ծրագրի շրջանակներում, իսկ հորիզոնական տողերում՝ այն դասընթացները, ուսումնական մոդուլները (ուսուցման գործնական ձևերը և այլն), որոնք կազմում են ծրագրի բովանդակությունը:

| Դասընթաց/ ուսումնական մոդուլ | Ծրագրի կրթական վերջնարդյունքներ | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա1 | Ա2 | Ա3 | Ա4 | Բ1 | Բ2 | Բ3 | Բ4 | Բ5 | Գ1 | Գ2 | Գ3 |
| Ուս. մոդուլ 1 | | + | | | | | | | + | | + | |
| Ուս. մոդուլ 2 | | | + | | + | | + | | | | | |
| Ուս. մոդուլ 3 | + | + | | + | | | | | | + | | + |
| Ուս. մոդուլ 4 | | | | | | + | | + | | | | |
| ………... | | | + | | | | | | + | | + | + |
| Ուս. մոդուլ n | | | | | + | | | | | + | | |

**Նկար 3.** Ծրագրի կրթական վերջնարդյուքների և բովանդակության համապատասխանության գնահատումը:

Այս փուլում ծրագիրը մշակող աշխատանքային խմբի գործողությունները պետք է բևեռվի կրթական ծրագրի բովանդակության ձևավորմանը՝ նրանում այնպիսի ուսումնական դասընթացների և ուսուցման գործնական ձևերի ներառմանը, որոնք կնպաստեն ծրագրի կրթական վերջնարդյունքների ձևավորմանը: Այսինքն, ծրագրի բոլոր կրթական վերջնարդյունքների համար պետք է որոշվեն և ընտրվեն այնպիսի դասընթացներ և ուսուցման գործնական ձևեր, որոնք կապահովեն ծրագրի կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը ուսանողների կողմից:

ԵՊՀ կրթական ծրագրերի ուսումնական պլանը ներկայացվում է ուսումնական պլանի քարտեզի միջոցով (*հավելված 1*): Այն կարևոր փաստաթուղթ է, որն ակնառու կերպով ցույց է տալիս, թե ինչպես (ինչ ուսումնական մոդուլների օգնությամբ) է ծրագրի ուսումնական պլանը ապահովում ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը և ինչպես են վերջիններս շաղկապված ծրագրի բաղկացուցիչ ուսումնական մոդուլների հետ:

Ուսումնական պլանի քարտեզի ԵՊՀ ձևաթերթը ներկայացված է *հավելված 1*–ում բերված ծրագրի մասնագրի 12-րդ կետում, որտեղ ուղղահայաց սյունակներում դասավորված են ծրագրի շրջանակներում ձևավորվող կրթական վերջնարդյունքները (ըստ համապատասխան դասակարգման), իսկ հորիզոնական տողերում՝ այն ուսումնական մոդուլները, որոնք պետք է նպաստեն դրանց ձևավորմանը: Յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի և այն ձևավորող կարևորագույն ուսումնական մոդուլ(ներ)ի (որոնցում գնահատվում է այդ վերջնարդյունքների ձեռքբերումը) հատման վանդակում դրվում է «+» կամ «X» նշանը՝ դրանք շաղկապելով միմյանց հետ:

Լրացված քարտեզը պատկերավոր կերպով ցույց է տալիս կրթական վերջնարդյունքների և ուսումնական մոդուլների միջև կապերի առկայությունը ծրագրում, այսինքն՝ այն ուսումնական մոդուլները, որոնք ապահովում են որոշակի կրթական վերջնարդյունքի ձևավորումը (քարտեզի ուղղահայաց սյունակները) և կոնկրետ ուսումնական մոդուլի շրջանակներում ձևավորվող կրթական վերջնարդյունք(ներ)ի բաղադրամասերը (քարտեզի հորիզոնական տողերը): Հետևաբար, ծրագրում յուրաքանչյուր դասընթաց կամ ուսումնական մոդուլ պետք է դիտարկվի ոչ թե որպես առանձին ինքնուրույն միավոր, այլ որպես կրթական ծրագրի օրգանական բաղադրամաս:

Ուսումնական պլանի քարտեզում նշվում է նաև այն ուսումնական տարին, որի ավարտին տվյալ կրթական վերջնարդյունքը ձեռք է բերվում ծրագրում ընդգրկված բոլոր ուսանողների կողմից:

Կրթական ծրագրի մշակման գործընթացն ավարտվում է, երբ ծրագրի բոլոր պլանավորված վերջնարդյունքների ձեռքբերման համար արդեն որոշված են համապատասխան դասընթացներ և ուսուցման գործնական ձևեր: Դրան արդեն պետք է հաջորդի դասընթացների ներքին կառուցվածքի, թեմաների և բովանդակության ձևավորումը՝ ըստ դասընթացի մակարդակում սահմանված կրթական վերջնարդյունքների:

## 7. Դասավանդման և ուսումնառության համարժեք մեթոդների ընտրությունը

Կրթական վերջնարդյունքների հիման վրա ծրագրերի մշակման և իրականացման հիմնորոշ բաղադրիչներից է դասավանդման և ուսումնառության համարժեք մոտեցումների և մեթոդների ընտրությունը: Հարկ է նշել, որ համադրելի կրթական վերջնարդյունքների կարելի է հասնել դասավանդման և ուսումնառության տարբեր ձևերի, մեթոդների, տեխնոլոգիաների և ձևաչափերի կիրառմամբ: Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների ընտրության արդյունավետության գնահատումը կրթական ծրագրում պետք է կատարվի այն դիտանկյունից, թե որքանով են դրանք նպաստում ակնկալվող կրթական

վերջնարդյունքների ձեռքբերմանը ուսանողների կողմից: Իսկ ակնկալվող կրթական վերջնարդյունքներն ուսանողների կողմից հաջողությամբ ձեռք բերելու համար հարկավոր է դիտարկել, թե ուսումնառության ինչպիսի ձևեր է պետք ընտրել: Ընտրված ուսումնառության ձևերից կբխեն նաև դասավանդման այն մեթոդները, որոնք առավելագույնս կնպաստեն և կօժանդակեն դրանց հաջող իրականացմանը: Դասավանդման դերը պետք է լինի ուսանողների համար լիարժեք հնարավորությունների ստեղծումը, որպեսզի նրանք հաջողությամբ ձեռք բերեն ակնկալվող գիտելիքները, կարողությունները և հմտությունները և յուրացնեն դրանք:

Ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է.

- Լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքներով ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից:
- Հաշվի առնեն ուսանողների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակները և լինեն բազմաձև:
- Խրախուսեն ուսանողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ՝ որտեղ դա պետք է:

Ներկայումս բուհերն օգտագործում են դասավանդման ամենատարբեր ձևեր, մեթոդներ և տեխնոլոգիաներ: Դրանց մոտավոր ցանկն ընդգրկում է ոչ միայն դասախոսություններ, գործնական ու սեմինար պարապմունքներ, լաբորատոր աշխատանքներ, այլև՝ խորհրդատվություններ, հետազոտական սեմինարներ, խնդիրների լուծումներ որոնելու աշխատաշրջաններ, վարպետ-դասեր, պրակտիկաներ և դաշտային աշխատանքներ, խմբային նախագծային աշխատանք, ներգրավում հետազոտական աշխատանքներում, աշխատանքային իրավիճակների նմանակումներ, ինտերակտիվ հեռավար ուսուցում և այլն:

Սրանք բոլորը, սակայն, ներկայացնում են ընդամենը ուսուցման տարատեսակներ (պարապմունքի ձևեր), քանի որ դրանց գործնական կիրառությունը կարող է տարբեր լինել ոչ միայն տարբեր դասախոսների, այլ նաև միևնույն դասախոսի պրակտիկայում՝ ելնելով պարապմունքի նպատակից և ակնկալվող կրթական արդյունքներից: Այսպիսով, դասավանդման և ոչ մի եղանակի անվանում, ինքնըստինքյան, ամբողջովին չի արտացոլում այն, ինչ իրականում անում է դասախոսը լսարանում:

Որպեսզի հասկանալի լինի, թե դասավանդման փաստացի ի՞նչ մեթոդներ են օգտագործվում, թերևս պետք է խնդիրը քննարկել ուսումնառության եղանակների տեսանկյունից՝ դիտարկելով ծրագրի շրջանակներում ուսանողների հիմնական կրթական գործողությունները: Ինչպես և դասավանդման մեթոդների պարագայում, միևնույն անվանումն ունեցող կրթական գործողությունները հաճախ խիստ տարբեր են լինում: Դասախոսություններին և ուսուցման այլ ձևերին մասնակցելուց, դասա-

գրքերից և ուսումնական գրականությունից օգտվելուց զատ, լայնորեն կիրառվում են ուսումնառության բազմապիսի այլ եղանակներ՝ դասավանդման և ուսումնառության փոխներդաշնակեցումն ապահովելու նպատակով: Որպես օրինակ կարելի է ներկայացնել առարկային առնչվող նյութերի որոնումը գրադարանում և համացանցում, հոդվածների ընթերցումը, գրավոր աշխատանքների կատարումը, խնդիրների առաջադրումը և լուծումը, ինքնուրույն (հետազոտական) աշխատանքը, գործնական կամ լաբորատոր աշխատանքի հմտությունների զարգացումը, էսսեների, վերլուծությունների և հաշվետվությունների պատրաստումը, զեկույցների, լսարանային ցուցադրությունների և ավարտական աշխատանքների պատրաստումը և ներկայացումը (այդ թվում՝ թիմային կատարմամբ), դասընկերների աշխատանքի կառուցողական քննադատությունը և այլն:

Կրթական ծրագրի մասնագրի համապատասխան բաժինը (տե՛ս *հավելված 1-ի 10-րդ կետը*) պետք է պարզորոշ կերպով ցույց տա, թե ինչպես են դասավանդման և ուսումնառության ընտրված մեթոդները օժանդակելու ուսանողներին՝ ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու համար: Մասնագրում ներկայացված յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի (կամ դրանց խմբի) համար պետք է ներկայացվեն դասավանդման և ուսումնառության համապատասխան մեթոդները: Ընդ որում, բավարար չէ միայն արձանագրել, որ տվյալ վերջնարդյունքը ձեռք է բերվում «… *դասախոսությունների, սեմինար կամ գործնական պարապմունքների և այլնի միջոցով …* », առանց պարզորոշ կերպով ցույց տալու, թե ինչպես է դրանցից յուրաքանչյուրը նպաստելու ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձևավորմանը ուսանողի մոտ: Օրինակ, եթե դասավանդման համար ընտրված են դասախոսությունները, ապա այդ հանգամանքը պետք է կոնկրետացվի և հնարավորինս ճշգրտվի: Բավարար չէ նշել, որ «*Առարկայական ծրագրի յուրացման համար հիմնականում օգտագործվելու են դասախոսությունները*»: Նախընտրելի է մարամասնել, որ «*Առարկայական ծրագրի հիմնական մասը յուրացվելու է դասախոսի կողմից հանձնարարվող գրականության ընթերցմամբ՝ օգտագործելով դասախոսությունները հաձնարարվող նյութի հիմնական աղբյուրները լրացնելու, ուսանողներին անհասկանալի դրույթները բացահայտելու և պարզաբանելու, ինչպես նաև նրանց քննադատական մտածողությունը զարգացնելու համար …*»:

Դասավանդման և ուսումնառության համարժեք մեթոդների ընտրության երկու օրինակ, որոնք դիտարկված են որոշակի կրթական վերջնարդյունքի արդյունավետ կերպով ձևավորման տեսանկյունից, ներկայացված են 9-րդ բաժնում:

## 8. Գնահատման ձևերի և մեթոդների ընտրությունը

Ուսանողների կողմից ծրագրով սահմանված կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու և դրսևորելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև գնահատման համարժեք ձևերի և մեթոդների ընտրությունը: Գնահատումը պետք է դիտարկել ոչ միայն որպես դասավանդման և ուսումնառության ժամանակաշրջանի արդյունքների ամփոփում, այլ նաև որպես այդ գործընթացների հիմնական ուղղորդող բաղադրիչ, որն անմիջականորեն կապված է կրթական վերջնարդյունքների հետ: Պրակտիկայում կիրառվում է գնահատման ձևերի և մեթոդների լայն շրջանակ՝ թեստեր, բանավոր և գրավոր քննություններ, լսարանային ցուցադրություններ, զեկույցներ, տվյալների վերլուծության արդյունքներ/նյութերի ամփոփում, էսսեներ, կուրսային աշխատանքների գնահատում, ավարտական աշխատանքների/ատենախոսությունների պաշտպանություն և այլն:

Կիրառվում են ուսանողների գիտելիքների գնահատման երկու հիմնական ձևեր՝ այսպես կոչված *ձևավորող*, որը նախատեսված է ուսումնառության միջանկյալ փուլերում ուսանողների գնահատման և գործընթացի բարելավման համար հետադարձ կապ ապահովելու համար, և *եզրափակիչ*, որը նախատեսված է ուսումնական մոդուլի ավարտին ուսանողների գնահատման և ուսանողի կողմից ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի չափման համար: Գնահատման *ձևավորող* տեսակը ներառում է հետադարձ կապի որոշակի մեխանիզմներ, քանի որ ուսանողներին և դասախոսին հնարավորություն է ընձեռում դեռևս ուսուցման փուլում տեղեկատվություն ստանալ ընթացիկ կատարողականի վերաբերյալ: Ուսանողներն այս դեպքում լսում են նաև դասախոսի մեկնաբանությունները թերացումների և դրանք վերացնելու գործնական միջոցների վերաբերյալ: Բնական է, որ ցանկացած կրթական ծրագրի կամ դրա այս կամ այն հատվածի շրջանակներում առաջանում է նաև *եզրափակիչ* գնահատման անհրաժեշտություն: Հաճախ գնահատման այդ երկու տեսակները զուգակցվում են և այդ դեպքում գնահատականն արտահայտում է ուսանողի աշխատանքի ամբողջական (ամփոփիչ) արդյունքը, իսկ դասախոսից ստացվող հետադարձ կապն ապահովում է գնահատման *ձևավորող* բաղադրիչը: Ավանդաբար, սակայն, հիմնականում գործածվում են *եզրափակիչ* գնահատման ձևերը, և ուսանողները ստանում են միայն գնահատականը, բայց ոչ գնահատման արդյունքների վերաբերյալ դասախոսի կարծիքը կամ խորհուրդը: Եթե քննության արդյունքներով կազմակերպվում է սեմինար-քննարկում, ապա այդ դեպքում միայն կարելի է խոսել գնահատման *ձևավորող* բաղադրիչի մասին[6]:

[6] Ձևավորող և եզրափակիչ գնահատումների նշանակությունը և սկզբունքային տարբերությունը կարելի է պատկերավոր կերպով ներկայացնել կենցաղից վերցված հետևյալ հատկանշական օրինակով: Այսպես, երբ խոհարարը դեռևս պատրաստման փուլում համտեսում է իր իսկ պատրաստած ճաշատեսակը, նա անում է այդ՝ պատրաստման գործընթացը ճիշտ իրականացնելու նպատակով, իսկ երբ հյուրերն են համտեսում այդ նույն ճաշատեսակը՝ բնականաբար նրանք գնահատում են պատրաստման գործընթացի վերջնական արդյունքը՝ ճաշատեսակը:

**Օրինակ 1.** Դիտարկենք հետևյալ կրթական վերջնարդյունքի ձեռքբերման գնահատումը.

*Վերջնարդյունք.* «Ուսումնական մոդուլի հաջող ավարտին ուսանողը կկարողանա իր փորձարարական աշխատանքի արդյունքները ներկայացնել լսարանին»:

*Գնահատում.* Թե ինչ մակարդակով է ուսանողը հասել այս կրթական վերջնարդյունքին՝ կարող է պարզվել, եթե համապատասխան չափանիշներով կատարվի բանավոր զեկույցի գնահատում:

**Օրինակ 2.** Նույն եղանակով դիտարկենք հետևյալ կրթական վերջնարդյունքի ձեռքբերման գնահատումը.

*Վերջնարդյունք.* «Ուսումնական մոդուլի հաջող ավարտին ուսանողը կկարողանան վերլուծել դասընթացին առնչվող գիտական գրականությունը»:

*Գնահատում.* Թե որքանով է ուսանողին հաջողվել է կատարել այն, կարող է պարզ դառնալ միայն գնահատման համարժեք մեթոդով, օրինակ, բազմակի պատասխաններով թեստը այս պարագայում չի կարող կիրառելի լինել ուսանողի վերլուծական հմտությունները գնահատելու համար: Այս դեպքում գնահատման առարկա պետք է հանդիսանա ուսանողի կողմից պատրաստված գրականության տեսության վերլուծական զեկույցը:

Քանի որ կրթական վերջնարդյունքները սահմանում են դասընթացը կամ ուսումնական մոդուլը յուրացնելու համար ուսանողից ակնկալվող նվազագույն պահանջները, ուսը ձեռք բերված վերջնարդյունքների փաստացի մակարդակը կարելի է չափել միայն գնահատման համապատասխան մեթոդներով և ճիշտ ընտրված գնահատման չափանիշների օգնությամբ (9-րդ բաժնում ներկայացված են համապատասխան օրինակներ):

Հետևաբար, պատշաճ մշակված դասընթացը կամ կրթական մոդուլը պետք է ապահովի կրթական վերջնարդյունքների և գնահատման մեթոդների համապատասխանությունը: Վերևում ներկայացված 1-ին օրինակի պարագայում (որն առնչվում է բանավոր զեկույցի ներկայացմանը), ակներևաբար գնահատման ենթակա պետք է լինի փաստացի կատարված լսարանային ցուցադրությունը: Դա պահանջում է գնահատման այնպիսի մեթոդների կիառում, որոնք ուսանողներին հնարավորություն կտան լավագույնս դրսևորելու ձեռք բերած կրթական վերջնարդյունքների մակարդակը:

Այսպիսով, ուսումնական մոդուլը/դասընթացը մշակելիս անհրաժեշտ է նախնառաջ սահմանել վերջինիս նպատակը և ձևակերպել կրթական վերջնարդյունքները: Երբ կրթական վերջնարդյունքներն արդեն ձևակերպված են, հնարավոր է

արդեն սահմանել համապատասխան գնահատման չափանիշներ, որոնք օգտագործվելու են ուսանողի կրթական ձեռքբերումների մակարդակը չափելու համար: Այնուհետև պետք է ընտրել գնահատման այնպիսի ձևեր և մեթոդներ, որոնք ուսանողին հնարավորություն կտան լավագույնս դրսևորելու ձեքբերած կրթական արդյունքները: Հաջորդ քայլով պետք է ընտրել ուսումնառության և դասավանդման համապատասխան ձևեր և մեթոդներ, որոնք ուսանողին հնարավորություն կտան ձեռք բերելու դասընթացով/կրթական մոդուլով ակնկալվող կրթական վերջնարդյունքները, այնուհետև անցնել ուսումնական մոդուլի/դասընթացի բովանդակության կազմելուն:

Ուսումնական մոդուլի/դասընթացի մշակման վերը նկարագրված ընթացակարգը ներկայացված է նկար 3-ում:




**Նկար 3.** Ուսումնական մոդուլի մշակման ընթացակարգը:

## 9. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության գործնական օրինակներ

Դիտարկենք որոշակի կրթական վերջնարդյունքին համարժեք դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության եկու գործնական օրինակներ:

<u>Օրինակ 1.</u> Վերլուծելու և սինթեզելու ունակության ձևավորում.

Այս ունակությունը, որպես կանոն, բավական տարողունակ է: Այն կարող է ներառել, օրինակ, հարցը կամ հետազոտության խնդիրը ճիշտ սահմանելու, նկարագրելու և եզրահանգումներ կատարելու, ինչպես նաև երաշխավորություններ ձևակերպելու կարողություններ: Ըստ էության, այն ուսանողին թույլ է տալիս հասկանալ և գնահատել այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է հավաքագրել, մեկնաբանել և մշակել՝ հիմնական գաղափարները բացահայտելու նպատակով: Վերլուծելու համար անհրաժեշտ է տրամաբանական մտածողություն և գիտելիքի համապատասխան ոլորտի հիմնական հասկացակազմի իմացություն: Որպես կանոն, տվյալ ունակության զարգացումն ապահովվում է ոչ թե ծրագրում հատուկ նախատեսված դասընթացի կամ ուսումնական մոդուլի միջոցով, այլ ինտեգրված է ծրագրի առանձին ուսումնական միավորների մեջ (չնայած, որոշ դեպքերում դրա համար կարող են նախատեսված լինել նաև հատուկ դասընթացներ կամ մոդուլներ, ինչպես, օրինակ, ֆորմալ տրամաբանության կամ գիտական ճանաչողության տրամաբանության դասընթացները):

Հարցման արդյունքները վկայում են, որ ուսանողները մեծ նշանակություն են տալիս այդ ունակությանը, քանի որ վերջինս թույլ է տալիս համակցել տեսությունն ու պրակտիկան, քննադատորեն գնահատել աշխատանքի և հետազոտության արդյունքները և այլընտրանքային ուղիներ որոնելու համար համապատասխան գործիքներ օգտագործել: Ըստ ուսանողների՝ տվյալ կարողությունը հույժ կարևոր է իրենց ապագա մասնագիտական առաջխաղացման համար:

Վերլուծելու և սինթեզելու ունակությունը նկարագրելու համար սովորաբար օգտագործվում են տարբեր ձևակերպումներ՝ մեկնաբանել, առանձնացնել առանցքային գաղափարները,

հասկանալ, գնահատել, մշակել և կազմակերպել տեղեկատվությունը, քննադատորեն գնահատել, համակցել տեսությունն ու պրակտիկան, տեղադրել համատեքստում, օբյեկտիվորեն դիտարկել, հետազոտել, ձևակերպել՝ ոչ միայն վերարտադրել, կիրառել, նկարագրել, հետևություններ անել, մտածել, համեմատել, ընտրել, տարբերել, հակադրել, դասակարգել, եզրակացնել, փաստարկել, կապեր հաստատել, ամփոփել, տրամաբանել, ռացիոնալ կերպով մտածել, նկատի առնել, դիտարկել, կանխատեսել, ապահովել, լուծել և այլն:

Ուսանողները զարգացնում են վերլուծելու և սինթեզելու ունակությունները հետևյալ եղանակներով.

- հասկացության կամ կոնցեպցիայի հիմնական գաղափարների ձևակերպման միջոցով՝ ակադեմիական և մասնագիտական նեղ թեմաների շրջանակներում նյութեր ընթերցելու, հետազոտություններ կատարելու, քննարկելու և «ուղեղային գրոհների» աշխատաշրջանների արդյունքում,
- ինքնուրույն մեկնաբանելու, գնահատելու, տարբերություններ դնելու և դասակարգումներ կառուցելու, ինչպես նաև բանավեճերի ընթացքում գիտելիքի փոխանակման և գրավոր աշխատանքների միջոցով,
- սեփական և այլոց ոչ հիմնավորված պնդումները վեր հանելու և կասկածի առնելու միջոցով,
- արդիական կոնցեպցիաների միջև կապեր հայտնաբերելու միջոցով,
- տեղեկատվության քանակական գնահատման օգնությամբ,
- համապատասխան տեսության և տրված նյութի համադրման միջոցով,
- որոշակի ոլորտում նոր եզրահանգումներ կատարելու օգնությամբ,
- կոնկրետ իրադարձություններ և/կամ խնդիրներ՝ ավելի լայն համատեքստեր տեղափոխելու միջոցով,
- ապացույցների և/կամ հակափաստարկների որոնման միջոցով:

Տվյալ ունակության ձևավորման աստիճանի գնահատման ձևերը կախված են դասավանդման և ուսումնառության համապատասխան մեթոդներից: Դրանք կարող են լինել քննարկումների, հարցադրումների, դիտարկումների, հաշվետվություններ կազմելու, գործնական աշխատանքում ակտիվ մասնակցության, էսսեների, գրավոր աշխատանքների, նախագծերի, քննությունների, ավարտական աշխատանքների/ատենախոսությունների պաշտպանության միջոցով:

**Օրինակ 2.** Հետազոտական հմտությունների զարգացում.

Հետազոտություն կատարելու կարողությունը կարևորագույն նշանակություն ունի կրթության թե՛ առաջին (բակալավրիատ), թե՛ առավել ևս երկրորդ (մագիստրատուրա) շրջափուլերի համար: Այդ կարողության կարող է իրականացվել ինչպես դասախոսի օժանդակությամբ կամ համատեղ, այնպես էլ ինքնուրույն՝ նախագծի (աշխատանքի) հետ կապված առաջադրանքներ կատարելով:

Մի շարք մասնագիտություններում, ինչպես, օրինակ, կրթության մասնագետների կամ բուժաշխատողների պատրաստման ոլորտում նախատեսվում են կոնկրետ դասընթացներ, որոնք ուղղված են հետազոտություններ կատարելու կարողության զարգացմանը (հիմնականում, կրթական երկրորդ շրջափուլում): Դրանք հաճախ կազմակերպվում են նաև իրական միջավայրում՝ բուժական կամ կրթական հաստատություններում:

Դասախոսները տեսական և գործնական պարապմունքներ են անցկացնում հետազոտությունների կատարման մեթոդների վերաբերյալ, մշակում ուսումնական առաջադրանքներ, որոնք վերաբերում են որակական և քանակական տեղեկատվություն հավաքագրելու և վերլուծելու տարբեր ձևերին, ապահովում են ուսանողներին բիբլիոգրաֆիկ տեղեկատվությամբ և անհրաժեշտ փաստաթղթերով, ինչպես նաև մղում ուսանողներին լրացուցիչ գրականություն և նյութեր որոնելու:

Ուսանողները, բացի պարապմունքներին հաճախելուց, կատարում են հետազոտական աշխատանքներ, ուսումնասիրում համապատասխան գրականությունը և փաստաթղթերը, հավաքագրում և վերլուծում տվյալները, ներկայացնում դասախոսին և քննարկում նրա հետ ընթացիկ հետազոտական աշխատանքը,

համակուրսեցիներին են տրամադրում նրանց աշխատանքների վերաբերյալ իրենց մեկնաբանությունները և քննադատական կարծիքները (ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր), պահանջվող ծավալի աշխատանքներ գրում և այլն:

Հաշվի առնելով կատարվող առաջադրանքների տեսակները, ինչպես նաև դասախոսի և ուսանողի պարբերական շփումը, կարելի է սերտ կապ նկատել դասախոսի կողմից ուսանողի կատարած աշխատանքի գնահատման և ուսանողի՝ սեփական առաջընթացի գիտակցման միջև: Նախ, գնահատումը հիմնված է լինում ինչպես հետազոտությունների կատարման ընթացքի (օրինակ՝ հանձնած գրավոր աշխատանքի որակի և խմբերում առաջադրանքների կատարմանը մասնակցելու ակտիվության), այնպես էլ՝ վերջնական արդյունքի որակի վրա (հետազոտության ինքնատիպությունը, ուսանողի ունակությունը՝ ներկայացնելու առաջ քաշված թեզի ճշմարտացիության փաստական վկայություններ, տրամաբանության հստակությունն ու անկողմնակալությունը, շարադրանքի տրամաբանական ամբողջականությունը և հետազոտվող առարկայի նկատմամբ անաչառ վերաբերմունքը, նյութի ներկայացման պարզությունը և այլն): Երկրորդ, հետազոտության ստացված արդյունքների վերաբերյալ թե՛ դասախոսների և թե՛ համակուրսեցիների կողմից նույնպես իրականացվում է պարբերական հետադարձ կապ:

## 10. ECTS կեդիտների հատկացումը դասընթացին (ուսումնական) մոդուլին

Այժմ դիտարկենք կրթական վերջնարդյունքների և կրեդիտներով արտահայտված ուսումնական բեռնվածության փոխադարձ կապը: ECTS համակարգում կրեդիտները և կրթական վերջնարդյունքները փոխկապակցված են. եթե կրթական վերջնարդյունքներն արտացոլում են ուսումնառության բովանդակությունը, ապա կրեդիտները ցույց են տալիս ուսումնառության ծավալը: Սովորողին կրեդիտ շնորհվում է այն դեպքում, երբ նա ձեռք է բերում պլանավորված կրթական վերջնարդյունքները: Միևնույն ժամանակ, կրթական վերջնարդյունքների կազմը գործնականում սահմանափակված է ծրագրի մաս կազմող ուսումնական մոդուլին հատկացված կրեդիտների քանակով: Հետևաբար, կրթական վերջնարդյունքները և կրեդիտները պետք է որոշակիորեն փոխհավասարակշռված լինեն:

Նախանշված կրթական վերջնարդյունքներին հասնելու համար միջին (ընդունակությունների առումով) վիճակագրական ուսանողից պահանջվող ժամանակը որոշվում է ոչ միայն ուսուցանվող նյութի ծավալով, այլ նաև այն համատեքստով, որի շրջանակներում կատարվում է ուսուցումը: Թե որքա՛ն ժամանակ կպահանջվի միջին սովորողից ակնկալվող կրթական վերջնարդյունքներին հասնելու համար, կախված է բուհի առանձնահատկություններից, այնտեղ ձևավորված կրթական ավանդույթներից, դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդներից, կրթական ծրագրի համակարգվածությունից, ուսումնական գործընթացի կազմակերպման որակից, ինչպես նաև ուսանողի ընդունակություններից, աշխատասիրությունից և նախնական գիտելիքների մակարդակից: Այլ խոսքով, միևնույն կրթական վերջնարդյունքներին հասնելու համար պահանջվող ժամաքանակը (որով և որոշվում է կրեդիտների քանակը) կարող է փոփոխվել՝ պայմանավորված այն միջավայրով, որտեղ ընթանում է ուսուցումը:

Հետևաբար, ECTS կրեդիտներով արտահայտված ուսումնական բեռնվածության որոշման համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ կարևոր գործոնները.

- կազմակերպված է արդյոք դասավանդումը մեծ խմբերով, թե ավելի անհատականացված ձևերով, քանի որ դասավանդման արդյունքների վրա կարող է ազդել նաև խմբում ուսանողների քանակը, մասնավորապես, գործնական պարապմունքների դեպքում,
- ուսումնական պարապմունքները, որոնց ուսանողը պետք է մասնակցի, դասախոսություննե՞ր են, սեմինարնե՞ր, թե՞ գործնական պարապմունքներ կամ լաբորատոր աշխատանքներ և այլն,
- էական նշանակություն կարող է ունենալ նաև գնահատման ձևը, կրթական ծրագրի կառուցվածքը և համակարգվածությունը, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման որակը և դասավանդման ժամանակակից միջոցների առկայությունը (օրինակ, տեխնոլոգիապես հագեցած լսարանների օգտագործումը և այլն):

Ուսումնական մոդուլի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձևակերպումից հետո պետք է որոշել, թե որքան ժամանակ կպահանջվի դրանց յուրաքանչյուրի ձեռքբերման համար: Հաշվարկները պետք է հիմնվեն այն բանի գնահատման վրա, թե որոշակի ժամանակահատվածում ի՛նչ կարող է անել միջին վիճակագրական ուսանողը: Այս պարագայում կրեդիտները հնարավորություն են տալիս սահմանափակումներ դնել դասընթացում նախատեսվող կրթական գործողությունների աշխատածավալի վրա:

Այսօր բուհական պրակտիկայում լայն տարածում են գտել ուսումնական մոդուլին կրեդիտների հատկացման երկու սխալ մոտեցումներ: Լսարանային ժամերի հիման վրա կրեդիտների հատկացման դեպքում դրանք պարզապես բաշխվում են (ի

տարբերություն հատկացման) ծրագրի դասընթացների միջև՝ ուսումնական պլանում դրանց համար հատկացված լսարանային ժամերի քանակին համապատասխան: Այստեղ ենթադրվում է, որ լսարանային ժամերի քանակը հիմնականում արտացոլում է տվյալ դասընթացի յուրացման համար ուսանողից պահանջվող ուսումնական բեռնվածքը: Սակայն, գործնականում, միշտ չէ, որ դա այդպես է, քանի որ լսարանային աշխատանքի միևնույն ժամաքանակը կարող է ուսանողից պահանջել տարբեր ծավալի ինքնուրույն աշխատանք և հանգեցնել տարբեր ուսումնական բեռնվածքների: Հետևաբար, լսարանային (կոնտակտային) ժամերի և դասընթացին հատկացվող կրեդիտների քանակի միջև միարժեք կապ չկա: Օրինակ, մեկժամյա դասախոսությունը կարող է պահանջել ուսանողի 3 ժամ ինքնուրույն աշխատանք, այն դեպքում, երբ երկժամյա սեմինարը կարող է ներառել մեկշաբաթյա նախապատրաստական աշխատանք: Հետևաբար, ուսանողի ուսումնական բեռնվածության վրա հիմնված կրեդիտային համակարգը, ինչպիսին ECTS-ն է, պայմանավորված չէ միայն լսարանային ժամերով: Մեկ այլ դեպքում հատկացված կրեդիտների քանակը պայմանավորվում է այս կամ այն դասընթացի կարևորությամբ: Դժվար է ընդունել, որ այս կամ այն դասընթացի բարդությունը կամ կարևորությունն ինքնին կարող են հիմք հանդիսանալ հատկացվող կրեդիտների քանակի որոշման համար: Իրականում, հատկացվող կրեդիտների քանակը կախված է միայն այն աշխատաժամանակից, որն անհրաժեշտ է ուսանողին դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու համար: ECTS կրեդիտն արտահայտում է միայն ժամաքանակով չափվող ուսումնական բեռնվածությունը, իսկ դասընթացի բարդությունը, կարևորությունը, մակարդակը կամ այն վարող դասախոսի համբավը որևէ դեր չպետք է խաղան կրեդիտների հատկացման գործընթացում: Օրինակ, ներածական բնույթի դասընթացն ուսանողից կարող է պահանջել ինքնուրույն աշխատանքի ավելի մեծ ծավալ, քան ավելի բարձր մակարդակում մատուցվող մեկ այլ մասնագիտական դասընթաց: Միակ ճիշտ մեկնակետն այս հարցում կրթական ծրագրում ընդգրկված միջին վիճակագրական ուսանողից պահանջվող ժամաքանակն է, որն անհրաժեշտ է դասընթացի նյութը հաջողությամբ յուրացնելու (սահմանված կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու) համար:

Կրեդիտներով արտահայտված ուսումնական բեռնվածության իրատեսական հաշվարկը բազմաքայլ խնդիր է, որի համար պրակտիկայում կիրառում են տարբեր մոտեցումներ: Ուսումնական բեռնվածության հաշվարկման համար կարևոր են հետևյալ գործոնները.

– դասընթացի լսարանային ժամերի քանակը,
– ինքնուրույն աշխատանքի ժամաքանակը:

Ուսանողի ինքնուրույն աշխատանքն իր հերթին կարող է ներառել հետևյալ կրթական գործողությունները.

– ուսումնական նյութերի որոնում և ձեռքբերում,

– նյութի ընթերցում և ուսումնասիրում,

– ինքնուրույն աշխատանքի պատրաստում,

– աշխատանք լաբորատորիայում,

– նախապատրաստում քննությանը, և այլն:

Կրեդիտներով արտահայտված ուսումնական բեռնվածության հաշվարկի համար դասախոսը պետք է կարողանա որոշել դասընթացում ուսումնասիրվող յուրաքանչյուր թեմայի համար ուսանողից պահանջվող կրթական գործողությունները և դրանց մոտավոր աշխատածավալները: Այստեղ առանձնապես կարևոր է դասախոսական աշխատանքի փորձը: Օգտակար կարող է լինել նաև ուսանողների անկետավորումը, ինչը հնարավորություն է տալիս պարբերաբար ստուգել, արդյո՞ք ուսանողները կարողանում են տրամադրված ժամաքանակներում կատարել իրենց ուսումնական բեռնվածքը, թե ոչ:

Այսպիսով, ուսումնական մոդուլի (դասընթացի) բեռնվածությունը որոշվում է այն խնդիրների ընդհանուր ցանկով, որն ուսանողը պետք է կատարի դասընթացի շրջանակներում: Այդ խնդիրները կամ համապատասխան կրթական գործողություն-ները սահմանվում են հաշվի առնելով ակնկալվող կրթական վերջնարդյունքները և դրանց հասնելու համար ուսանողից պահանջվող աշխատաժամանակը (բեռնվածու-թյունը):

Առաջարկվում է ուսումնական բեռնվածության հաշվարկման հետևյալ մեթոդաբանությունը, որը հիմնված է մի շարք քայլերի հաջորդական իրականացման վրա.

1. Կրթական ծրագրի բովանդակությունը կազմող ուսումնական մոդուլների (դասընթացների) կազմի սահմանում (տես 6-րդ կետը):
2. Յուրաքանչյուր ուսումնական մոդուլի շրջանակներում նախատեսվող կրթա-կան գործողությունների պլանավորում և դրանց կատարման համար ուսանողին անհրաժեշտ աշխատաժամանակի որոշում:
3. Որոշված աշխատաժամանակի (ուսումնական բեռնվածության) ստուգում և ճշգրտում ուսանողական հարցումների (անկետավորման) օգնությամբ:
4. Բոլոր ուսումնական մոդուլների ճշգրտված աշխատածավալների արտա-հայտում կրեդիտներով՝ հաշվարկված ժամաքանակը բաժանելով 30-ի: Մոդուլներին հատկացված կրեդիտների հանրագումարը համեմատվում է

տվյալ կրթական մակարդակի համար սահմանված բեռնվածության հետ (240 կրեդիտ բակալավրի և 120 կրեդիտ՝ մագիստրոսի ծրագրերի համար):

5. Բեռնվածությունների ճշգրտման գործընթացն ավարտվում է, եթե ուսումնական մոդուլների հանրագումարային կրեդիտների քանակը մոտ է տվյալ ծրագրի համար սահմանված կրեդիտային բեռնվածությանը, այսինքն՝ երբ ծրագրի ուսումնական բեռնվածությունն իրատեսական է:
6. Հակառակ պարագայում կամ վերանայվում է ուսումնական մոդուլների կրթական վերջնարդյունքների ցանկը (այս դեպքում գործողությունների հետագա ընթացքը վերսկսվում է 2-րդ քայլից) կամ փոփոխվում է ուսումնական մոդուլների կազմը (այս դեպքում գործողությունների հետագա ընթացքը վերսկսվում է 1-ին քայլից):

Վերոնշյալ քայլերի կատարման ընթացակարգը ներկայացված է նկար 4-ում:




**Նկար 4.** Ուսումնական մոդուլների բեռնվածությունների որոշման և կրեդիտների հատկացման քայլերի ընթացակարգը:

Նկարագրված գործընթացում հիմնական դերը պատկանում է դասախոսին, որը հաշվարկում է յուրաքանչյուր դասընթացով (ուսումնական մոդուլով) նախանշված կրթական գործողությունների կատարման համար պահանջվող ժամաքանակը: Այդ ժամաքանակով արտահայտված ընդհանուր բեռնվածությունը հիմք է հանդիսանում դասընթացին հատկացվող կրեդիտների քանակի որոշման համար: Այդ աշխատանքը կատարելու համար, դասախոսական կազմին օգնելու նպատակով, մշակվել է կրթական մոդուլի (դասընթացի) պլանավորման ձևաթերթ (տե'ս *աղյուսակ 1*), որը լրացվում է դասախոսի կողմից: Այն պարունակում է դասընթացի վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը, սահմանված կրթական վերջնարդյունքները, որոնք ուսանողները պետք է ձեռք բերեն դասընթացի ավարտին և դրանց հասնելու համար պլանավորված կրթական գործողությունների ցանկը, ինչպես նաև գնահատման ձևերը:

Ուսումնական մոդուլի (դասընթացի) բեռնվածությունը պայմանավորված է ակնկալվող կրթական վերջնարդյունքներին հասնելու համար ուսանողի կրթական գործողությունների բնույթով և քանակով: Այդ բեռնվածքը չափվում է ժամաքանակով (աշխատանքային ժամերով, օրինակ՝ 5 կրեդիտ ծավալով ուսումնական մոդուլը են-թադրում է միջին ուսանողի մոտավորապես 150 ժամ աշխատանք): Յուրաքանչյուր մոդուլ (դասընթաց) պահանջում է որոշակի կրթական գործողություններ, որոնց կազմը որոշվում է՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները.

- Ուսուցման մեթոդները (դասավանդման եղանակները). դասախոսություն, գործնական պարապմունք, լաբորատոր աշխատանք, սեմինար կամ գիտական սեմինար, կոնսուլտացիաների անցկացում, արտադրական կամ ուսումնական պրակտիկա, դաշտային աշխատանք, հետազոտություն, նախագծային աշխատանք և այլն:

**Աղյուսակ 1.** Ուսումնական մոդուլի պլանավորման և ուսանողից պահանջվող աշխատաժամանակի հաշվարկման **դասախոսի** ձևաթերթ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈԴՈՒԼԻ
ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ
*(լրացվում է դասախոսի կողմից)*

<table>
<tr><td colspan="4">Կրթական ծրագրի անվանումը՝</td></tr>
<tr><td colspan="4">Ուսումնական մոդուլի անվանումը՝</td></tr>
<tr><td colspan="4">Ուսումնական մոդուլի տեսակը՝ մասնագիտական / լրացական / ընտրովի</td></tr>
<tr><td colspan="4">Ուսումնական մոդուլի մակարդակը՝ բակալավրի / մագիստրոսի /</td></tr>
<tr><td colspan="4">Նախապայմանները՝</td></tr>
<tr><td colspan="4">ECTS կրեդիտների քանակը՝ 5 ECTS (ուսանողի միջին աշխատաժամանակը՝</td></tr>
<tr><td>Ձևավորվող կրթական վերջնարդյունքները</td><td>Կրթական գործողությունները</td><td>Ուսանողի հաշվարկային աշխատաժամանակը (ժամ)</td><td>Գնահատումը</td></tr>
<tr><td>Կրթական արդյունք-1</td><td>Կրթ. գործողություն-1.1</td><td>8,5</td><td rowspan="5">Գրավոր աշխատանքի ներկայացում<br><br>30%</td></tr>
<tr><td></td><td>Կրթ. գործողություն-1.2</td><td>12,5</td></tr>
<tr><td></td><td>Կրթ. գործողություն-1.3</td><td>6,5</td></tr>
<tr><td></td><td>Կրթ. գործողություն-1.4</td><td>14,0</td></tr>
<tr><td></td><td>Կրթ. գործողություն-1.5</td><td>11,5</td></tr>
<tr><td>Կրթական արդյունք-2</td><td>Կրթ. գործողություն-2.1</td><td>3,5</td><td rowspan="4">Բանավոր լսարանային զեկույց<br><br>20%</td></tr>
<tr><td></td><td>Կրթ. գործողություն-2.2</td><td>15,5</td></tr>
<tr><td></td><td>Կրթ. գործողություն-2.3</td><td>6,0</td></tr>
<tr><td></td><td>Կրթ. գործողություն-2.4</td><td>9,5</td></tr>
<tr><td>Կրթական արդյունք-n</td><td>Կրթ. գործողություն-n.1</td><td>12,5</td><td rowspan="5">Գրավոր քննություն<br><br>50%</td></tr>
<tr><td></td><td>Կրթ. գործողություն-n.2</td><td>4,0</td></tr>
<tr><td></td><td>Կրթ. գործողություն-n.3</td><td>5,5</td></tr>
<tr><td></td><td>…</td><td>…</td></tr>
<tr><td></td><td>…</td><td>…</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td></td><td>150</td><td>100%</td></tr>
</table>

– Ուսումնառության մեթոդները (ուսանողի կրթական գործողությունները). հաճախում դասապարապմունքներին, առաջադրանքների կատարում, տնային աշխատանքների պատրաստում, ինքնուրույն աշխատանք կամ հետազոտություն, գրականության ընթերցում, տեղեկատվության հայթայթում գրադարաններում կամ համացանցում, լսարանային ցուցադրությունների պատրաստում և այլն:

– Գնահատման ձևերը. բանավոր կամ գրավոր քննություն, բանավոր զեկույց, թեսթ, էսսե կամ գրավոր աշխատանք, ավարտական աշխատանք, հաշվետվություն պրակտիկայի կամ դաշտային աշխատանքի վերաբերյալ, ընթացիկ գնահատում և այլն:

Առաջին փուլում դասախոսը որոշում է այն ժամաքանակը, որն անհրաժեշտ է ուսանողին ուսումնական մոդուլի (դասընթացի) շրջանակներում նախատեսված կրթական գործողությունները կատարելու համար: Ժամաքանակով չափված ուսումնական բեռնվածությունն այնուհետև վեր է ածվում կրեդիտների՝ բաժանելով այն 30-ի վրա և կլորացնելով մինչև ամենամոտ ամբողջ թիվը (օրինակ՝ 160ժամ/30=5,33 ≈5կրեդիտ):

Հաջորդ փուլում կատարվում է արդեն հաշվարկված ուսումնական բեռնվածության ճշգրտում, որն իրականացվում է ուսանողների անկետավորման (հարցման) միջոցով՝ պարապմունքների ընթացքում կամ դասընթացի ավարտից հետո: Դասըթնացի (ուսումնական մոդուլի) բեռնվածության ճշգրտման անկետայի ձևաթերթը, որը լրացվում է ուսանողի կողմից ներկայացված է *աղյուսակ 2*-ում: Այն նախատեսված է ուսումնական մոդուլի յուրացման վրա ծախսված փաստացի ժամաքանակը ուսանողի կողմից նշելու համար, ինչը հնարավորություն է տալիս ստուգելու արդյոք հաշվարկային բեռնվածությունը իրականում համընկնում է փաստացիի հետ, թե՝ ոչ: Ուսանողները ստանում են ձևաթերթը, որտեղ դասախոսի կողմից լրացված չէ միայն հաշվարկային բեռնվածքը, լրացնում են այն և վերադարձնում դասախոսին: Այս ձևաթերթի օգտագործման շնորհիվ նրանք նաև իրազեկվում են դասընթացի (ուսումնական մոդուլի) պլանավորված կրթական վերջնարդյունքների կազմի և կրթական գործողությունների մասին:

Դասընթացին հատկացված կրեդիտների (ուսումնական բեռնվածքի) և կրթական գործողությունների ճշգրտում կպահանջվի բոլոր այն դեպքերում, երբ ուսանողների անկետավորման արդյունքները կբացահայտեն, որ հաշվարկային ուսումնական բեռնվածքը չի համապատասխանում ուսանողների փաստացի միջին «*անկետային*» բեռնվածքին: Վերջինս կարող է պահանջել նաև ծրագրի դասընթացների (ուսումնական մոդուլների) ցանկի և/կամ կրթական վերջնարդյունքների վերանայում՝ պահպանելով տվյալ կրթական ծրագրի համար սահմանված կրեդիտների ընդհանուր քանակը (240 բակալավրի և 120՝ մագիստրոսի ծրագրերի համար):

**Աղյուսակ 2.** Ուսումնական մոդուլի բեռնվածության (աշխատաժամանակի) ճշգրտման **ուսանողի** ձևաթերթ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈԴՈՒԼԻ
ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՃՇԳՐՏՄԱՆ
ՁԵՎԱԹԵՐԹ
*(լրացվում է ուսանողի կողմից)*

| Կրթական ծրագրի անվանումը՝ | | | |
|---|---|---|---|
| Ուսումնական մոդուլի անվանումը՝ | | | |
| Ուսումնական մոդուլի տեսակը՝ *մասնագիտական / լրացական / ընտրովի* | | | |
| Ուսումնական մոդուլի մակարդակը՝ *բակալավրի / մագիստրոսի /* | | | |
| Նախապայմանները՝ | | | |
| ECTS կրեդիտների քանակը՝ *5 ECTS (ուսանողի միջին աշխատաժամանակը՝* | | | |
| Ձևավորվող կրթական վերջնարդյունքները | Կրթական գործողությունները | Ուսանողի հաշվարկային աշխատաժամանակը *(ժամ)* | Գնահատումը |
| Կրթական արդյունք-1 | *Կրթ. գործողություն-1.1* | *12,5* | *Գրավոր աշխատանքի ներկայացում 30%* |
| | *Կրթ. գործողություն-1.2* | *15,5* | |
| | *Կրթ. գործողություն-1.3* | *7,5* | |
| | *Կրթ. գործողություն-1.4* | *16,0* | |
| | *Կրթ. գործողություն-1.5* | *13,5* | |
| Կրթական արդյունք-2 | *Կրթ. գործողություն-2.1* | *5,5* | *Բանավոր լսարանային զեկույց 20%* |
| | *Կրթ. գործողություն-2.2* | *16,0* | |
| | *Կրթ. գործողություն-2.3* | *7,5* | |
| | *Կրթ. գործողություն-2.4* | *12,0* | |
| Կրթական արդյունք-n | *Կրթ. գործողություն-n.1* | *15,5* | *Գրավոր քննություն 50%* |
| | *Կրթ. գործողություն-n.2* | *6,0* | |
| | *Կրթ. գործողություն-n.3* | *7,5* | |
| | ... | ... | |
| | ... | ... | |
| **Ընդամենը** | | ***180*** | ***100%*** |

## 11. Կրթական ծրագրի կապը աշխատաշուկայի հետ

Կրթական ծրագիրը պետք է իր շրջանավարտներին պատրաստի հաջող աշխատանքային կարիերայի և ուսումը հաջորդ կրթական մակարդակում շարունակելու համար։ Այդ նպատակով հարկավոր է, որ պարզորոշ ներկայացվի ծրագրի կապը աշխատաշուկայի և/կամ հնարավոր գործատուների հետ,

ուսումնական պլանի մշակմանը գործատուների ներգրավման հանգամանքը, արտադրությունից հրավիրված մասնագետների ներգրավումը դասավանդման գործընթացում, ծրագրի կապը մասնագիտական կառույցների հետ, արտադրական պրակտիկայի հնարավորությունները, ապագա աշխատանքին անմիջականորեն առնչվող մասնագիտական կարողությունների ուսուցումը, դասավանդող կազմի պրակտիկ մասնագիտական գործունեությունը և այլն: Այն կրթական ծրագրերում, որոնք չունեն նեղ մասնագիտական ուղղվածություն, անհրաժեշտ է ապագա ուսանողներին ծանոթացնել ծրագրի շրջանավարտների մասնագիտական գործունեության մի քանի բնորոշ օրինակների հետ:

Եթե կրթական ծրագիրը նախատեսում է արտադրական պրակտիկա(ներ), ապա պետք է տրամադրվի համապատասխան տեղեկատվություն դրանց բնույթի և շնորհվող որակավորման մեջ ունեցած դերի, ինչպես նաև պրակտիկայի ընթացքում տրամադրվող օժանդակության մասին:

## 12. Ծրագրային կողմնորոշիչների օգտագործումը

Կրթական ծրագրերը պետք է համապատասխանեն արտաքին (միջազգային, եվրոպական, տեղական) և ներքին (բուհական, ֆակուլտետային) ծրագրային չափորոշիչներին և/կամ կողմնորոշիչներին, բովանդակային առումով համահունչ լինեն նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին, որպեսզի նպաստեն նաև ուսանողների շարժունությանը և միջազգայնացմանը: Այդ հանգամանքը պետք է արտացոլվի կրթական ծրագրի մասնագրում (տե՛ս *հավելված 1*-ի 16-րդ և 17-րդ կետերը):

Ծրագրերի նախագծման և մշակման համար որպես արտաքին կողմնորոշիչներ կարող են ծառայել հետևյալ պաշտոնական աղբյուրները.

- ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի պահանջները:
- Բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչները:
- Հարատև ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակը:
- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակը (դուբլինյան նկարագրիչները):
- ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը:
- Համապատասխան մասնագիտական կազմակերպությունների, կառույցների, ընկերակցությունների, օրենսդիր և ոլորտը կարգավորող մարմինների պահանջները և ցուցումները (եթե այդպիսիք կան):

- Վերազգային մակարդակում սահմանված առարկայական կողմնորոշիչները (ինչպես, օրինակ, տարբեր առարկայական ոլորտների համար սահմանված բրիտանական ծրագրային հենանիշերը/բենչմարկները):
- ՀՀ-ում մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշները:
- Արտասահմանյան առաջավոր համալսարանների համանման կրթական ծրագրերը և առնչվող այլ փաստաթղթեր:

Կրթական ծրագրերի մշակման համար որպես ներքին կողմնորոշիչներ կարող են հանդես գալ հետևյալ փաստաթղթերը.

- ԵՊՀ կրթական ծրագրերին և դրանց իրականացմանն առնչվող կարգերը (օրինակ, ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող չափորոշիչ փաստաթղթերը, կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերը և այլն):
- ԵՊՀ 2010-2014թթ. զարգացման ռազմավարական ծրագրի համապատասխան դրույթները:
- Կոնկրետ կրթական ծրագրին առնչվող պաշտոնական այլ փաստաթղթեր:

## ԲԱԺԻՆ 2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՓԱԹԵԹԸ

### 13. Կրթական ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)

Կրթական ծրագրի մասնագիրը ծրագրի նպատակների, ակնկալվող կրթական վերջնարդյունքների, բովանդակության, ընտրված դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերի և մեթոդների ամփոփ նկարագրությունն է: Այն նախատեսված է ուսանողների, դասախոսական կազմի, արտաքին գնահատող մարմինների և այլ շահեկիցների համար:

ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի բոլոր կրթական ծրագրերը պետք է ունենան մասնագիր, որի ձևաթերթը ներկայացված է *հավելված 1*–ում: Ծրագրի մասնագիրը կազմում է համապատասխան ծրագրի մշակման աշխատանքային խումբը, որը պետք է հաստատվի ԵՊՀ Որակի ապահովման կենտրոնի կողմից:

ԵՊՀ կրթական ծրագրերի մասնագիրը պարունակում է.

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը,
2. Բուհը,
3. Մասնագիտական կամ այլ իրավասու մարմնի կողմից ծրագրի հավատարմագրված լինելու հանգամանքը,
4. Շնորհվող որակավորումը,
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին,
6. Ուսումնառության լեզուն,
7. Ուսուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար),
8. Ծրագրի ընդունելության չափանիշները,
9. Ծրագրի նպատակները,
10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները (տեսական գիտելիքներ, գործնական կարողություններ և հմտություններ), կիրառվող դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները և ձևերը,
11. Ծրագրի կառուցվածքը, կրթական մոդուլներն ըստ ուստարիների և կիսամյակների (ներառյալ պրակտիկաները և ավարտական ատեստավորման ձևերը), կրեդիտները և առաջադիմության պահանջները,
12. Ուսումնական պլանի քարտեզը, որը շաղկապում է ծրագրի կրթական վերջնարդյունքները պլանի բաղկացուցիչ ուսումնական մոդուլների հետ, և նշում այն ուստարին, որի ավարտին այդ վերջնարդյունքները պետք է ձեռք բերվեն բոլոր ուսանողների կողմից,

13. Տեղեկատվություն գնահատման կարգի և չափանիշների վերաբերյալ,
14. Ապագա կարիերայի հնարավորությունները,
15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը,
16. Համապատասխան կրթական չափորոշիչները կամ առարկայական կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագրի վերջնարդյունքները սահմանելիս,
17. Ծրագրային արտաքին և ներքին այլ կողմնորոշիչներ, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս,
18. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ:

Կրթական ծրագրի մասնագիրն օգտագործվում է որպես տեղեկատվության աղբյուր՝

- ուսանողների և դիմորդների համար, ովքեր ցանկանում են հասկանալ ծրագրի էությունը և հիմնական նպատակները,
- գործատուների, փորձագետների և արտաքին գնահատողների համար՝ ծրագրի միջոցով ձևավորվող մասնագիտական և ընդհանրական կարողություններին ու հմտություններին ծանոթանալու համար,
- մասնագիտական և կամ ոլորտը կարգավորող իրավասու մարմինների համար, որոնք հավատարմագրում են բարձրագույն կրթության ծրագրերը կամ արտոնում են մասնագիտական գործունեությունը,
- ծրագրերը հաստատող ներքին կառույցների համար՝ հավաստիանալու, որ ծրագրի նպատակները և ակնկալվող կրթական վերջնարդյունքները հստակ սահմանված են, իրատեսական և դրսևորելի,
- ծրագրի որակի ներքին փորձաքննության, ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման համար,
- ուսանողներից և շրջանավարտներից ստացվող հետադարձ կապի օգնությամբ գնահատելու՝ թե ծրագիրը որքանով էր ապահովում սահմանված կրթական վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերումը:

### 14. Դասընթացների (ուսումնական մոդուլների) նկարագրիչները

ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ներառված դասընթացները (ուսումնական մոդուլները) դասընթացների տեղեկագրքում ներկայացվում են հետևյալ նկարագրիչներով.

1. Ուսումնական մոդուլի թվանիշը,
2. Ուսումնական մոդուլի անվանումը,
3. Մոդուլին հատկացված կրեդիտների քանակը,
4. Շաբաթական ժամերի ընդհանուր քանակը,
5. Ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի (դասախոսություն, գործնական, լաբորատոր և այլն),
6. Կայացման կիսամյակը (աշնանային/գարնանային),
7. Գնահատման ձևը (քննություն, ստուգարք),
8. Ուսումնական մոդուլի նպատակը,
9. Կրթական վերջնարդյունքները (մասնագիտական տեսական գիտելիքներ և գործնական կարողություններ, ընդհանրական/փոխանցելի կարողություններ),
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը (ըստ հիմնական թեմաների),
11. Գնահատման կիրառվող մեթոդներն ու չափանիշները,
12. Հիմնական գրականության ցանկը (3÷5 անուն՝ վերջին 15 տարիների հրատարակության)։

Ուսումնական մոդուլի նկարագրիչների ներկայացման ձևաթերթը տրված է *հավելված 2-ում*։

## ԲԱԺԻՆ 3. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ցանկացած կրթական ծրագրի հաջող իրականացման նախապայմանը անհրաժեշտ ուսումնական միջավայրի առկայությունն է, որի որակն անմիջականորեն ազդում է ծրագրի որակի վրա: Կրթական ծրագրի նպատակներն իրականացնելու համար այն պետք է ապահովված լինի անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմերով: Կրթական միջավայրը ներառում է նաև ուսումնական ենթակառուցվածքները, ուսումնական և հետազոտական գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան: Այս բոլորը ենթակա են անընդհատ հաշվառման և կատարելագործման:

Ստորև ներկայացվում է կրթական ծրագիրը հաջողությամբ իրականացնելու համար անհարժեշտ ուսումնառության հիմնական ռեսուրսների ցանկը:

- Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ - ծրագիրը պետք է ապահովված լինի համապատասխան մասնագիտական և մանկավարժական որակներ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմերով՝ այն իրականացնելու և գնահատելու համար: Ընդ որում, դասախոսները պետք է գիտակ լինեն ոչ միայն ծրագրի իրենց մասնաբաժնին, այլև ամբողջ ծրագրին՝ ուսանողների ուսուցումը համատեքստին համահունչ իրականացնելու համար: Կրթական ծրագրի համար պետք է սահմանված լինեն դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:
- Ուսումնամեթոդական նյութեր - ծրագրում ներառված դասընթացների անցկացման համար անհրաժեշտ հիմնական դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի ցանկը պետք է նկարագրված լինի: Ծրագիրը պետք է տրամադրի դրանք ուսանողներին: Այս ամենը պետք է լրացվի լրացուցիչ ուսումնական նյութերով՝ ինչպիսիք են ամսագրերը (տպագիր և էլեկտրոնային), զանազան մուլտիմեդիա փաթեթները և այլն: ԵՊՀ գրադարանը այս ռեսուրսների հայթայթման և տեղակայման հիմնական կառույցն է, սակայն կարող են օգտագործվել նաև լրացուցիչ ռեսուրսներ, ինչպեսիք են համացանցը, ֆակուլտետների ու ամբիոնների գրադարանները:
- Տեխնիկական միջոցներ – ներառում է տեղեկատվության տեխնիկական միջոցները, տեսաձայնային սարքավորումները, լաբորատոր սարքավորումները, տեսապաստառները և այլն:
- Ուսումնական տարածքներ - ծրագրի իրականացման բոլոր փուլերում ուսանողներին պետք է հատկացվեն համարժեք ուսումնական տա-

ռածքներ՝ լսարաններ, լաբորատորիաներ, ընթերցասրահներ, մասնա-գիտացված դասասենյակներ և այլն:

- <u>Պրակտիկաների կազմակերպումը</u> – պրակտիկաները ծրագրով սահմանված մասնագիտական մի շարք կարևոր կարողությունների ձևավորման և հմտությունների զարգացման կարևորագույն ծրագրային բաղադրիչն է և պետք է իրականացվի պատշաճ մակարդակով: Պրակտի-կաները նույնպես պետք է ունենան հստակ սահմանված նպատակ և կրթական վերջնարդյունքներ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բուդաղյան Ա.Ս., Կարաբեկյան Ս.Բ. Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում. Մեթոդական ուղեցույց: Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, Թայմթուպրինթ, Երևան, 2010: 110 էջ:
2. Robert M. Diamond. Designing and Assessing Courses and Curricula. A Practical Guide (3-rd edition). Jossey-Bass, San Francisco, 2008. 487 pages.
3. Judith G. O’Brein, Barbara J. Millis, Margaret W. Cohen. The Course Syllabus. A Learning-Centered Approach (2-nd edition). Jossey-Bass, San Francisco, 2008. 132 pages.
4. Declan Kennedy. Writing and Using Learning Outcomes. A Practical Guide. University College Cork, Ireland, 2007. 100 pages.
5. Brian Bowe, Marian Fitzmaurice. Guide to Writing Learning Outcomes. Learning and Teaching Centre. Dublin Institute of Technology. Dublin. 13pages.
6. Writing and Assessing Course-Level Student Learning Outcomes. Office of Planning and Assessment. Texas Tech University. 45 pages.

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## <u>Հավելված 1.</u> Կրթական ծրագրի մասնագրի ձևաթերթը

*[Ծրագրի անվանումը]*

# Ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)

| | |
|---|---|
| 1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը | |
| 2. Բուհը | Երևանի պետական համալսարան |
| 3. Ծրագիրը հավատարմագրված է | – |
| 4. Շնորհվող որակավորումը | Բակալավրի աստիճան |
| 5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին | 2010/11 |
| 6. Ուսումնառության լեզուն | Հայերեն |
| 7. Ուսուցման ձևը | Առկա |

| 8. Ծրագրի ընդունելության չափանիշները |
|---|
| |

| 9. Ծրագրի նպատակները |
|---|
| Ծրագիրը նպատակ ունի …<br>•<br>•<br>• |

| |
|---|
| • <br> • |

| 10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները | |
|---|---|
| **Ա. Մասնագիտական տեսական գիտելիքներ**<br><br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը կունենա գիտելիք և իմացություն…: | **Դասավանդման/ուսումնառության մեթոդները**<br><br>Ուսանողները ձեռք են բերում գիտելիք և իմացություն …… միջոցով:<br><br>**Գնահատման մեթոդները**<br><br>Ուսանողների տեսական գիտելիքների մակարդակը գնահատվում է …. միջոցով: |
| **Բ. Մասնագիտական գործնական կարողություններ**<br><br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի. | **Դասավանդման/ուսումնառության մեթոդները**<br><br>Ուսանողները ձեռք են բերում գործնական կարողություններ … միջոցով:<br><br>**Գնահատման մեթոդները**<br><br>Ուսանողների գործնական կարողությունները գնահատվում են … միջոցով: |
| **Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**<br><br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի. | **Դասավանդման/ուսումնառության մեթոդները**<br><br>Ուսանողները ձեռք են բերում ընդհանրական կարողություններ … միջոցով:<br><br>**Գնահատման մեթոդները**<br><br>Ուսանողների ընդհանրական կարողություն-ները գնահատվում են … միջոցով: |

| 11. Ծրագրի կառուցվածքը |
|---|
| 11.1. Ծրագրի ընդհանուր կառուցվածքի նկարագրությունը |

<table>
<tr><td colspan="3"></td></tr>
<tr><td colspan="3">11.2. Ուստարիներ և ուսումնական մոդուլներ</td></tr>
<tr><td colspan="3">1-ին ուստարի</td></tr>
<tr><td>ՊԱՐՏԱԴԻՐ</td><td>ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ</td><td>ԱՌԱՋԱԴԻՄՈՒ-ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ</td></tr>
<tr><td>Ուսանողները պետք է անցնեն բոլոր հետևյալ մոդուլները.</td><td>Ուսանողները պետք է նաև ընտրեն առնվազն XX մոդուլ հետևյալ ցանկից.</td><td></td></tr>
<tr><td colspan="3">2-րդ ուստարի</td></tr>
<tr><td>ՊԱՐՏԱԴԻՐ</td><td>ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ</td><td>ԱՌԱՋԱԴԻՄՈՒ-ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ</td></tr>
<tr><td>Ուսանողները պետք է անցնեն բոլոր հետևյալ մոդուլները.</td><td>Ուսանողները պետք է նաև ընտրեն առնվազն XX մոդուլ հետևյալ ցանկից.</td><td></td></tr>
<tr><td colspan="3">3-րդ ուստարի</td></tr>
</table>

| ՊԱՐՏԱԴԻՐ | ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ | ԱՌԱՋԱԴԻՄՈՒ-<br>ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ |
|---|---|---|
| Ուսանողները պետք է անցնեն բոլոր հետևյալ մոդուլները. | Ուսանողները պետք է նաև ընտրեն առնվազն XX մոդուլ հետևյալ ցանկից. | |

| *4-րդ ուստարի* | | |
|---|---|---|
| ՊԱՐՏԱԴԻՐ | ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ | ԱՌԱՋԱԴԻՄՈՒ-ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ |
| Ուսանողները պետք է անցնեն բոլոր հետևյալ մոդուլները. | Ուսանողները պետք է նաև ընտրեն առնվազն XX մոդուլ հետևյալ ցանկից. | |

| **11. 2. Պրակտիկայի հնարավորությունները և պայմանները** |
|---|
| |

| *11.3. Ավարտական ատեստավորումներ* | |
|---|---|
| *Ուստարի* | *Անվանումը* |
| | |
| | |

| **12. Ուսումնական պլանի քարտեզը** |
|---|
| Կցված է |

| **13. Տեղեկատվություն գնահատման կարգի վերաբերյալ** |
|---|
| |

| **14. Ապագա կարիերայի հնարավորությունները** |
|---|
| |

| |
|---|
| |

| 15. Ուսումնառության  օժանդակության ռեսուրսներ և ձևեր (եթե կան) |
|---|
| |

| 16. Համապատասխան կրթական չափորոշիչները կամ առարկայական կողմնորոշիչ(ներ)ը | |
|---|---|

| 17. Ծրագրային այլ կողմնորոշիչներ |
|---|
| |

| 18. Լրացուցիչ տեղեկատվություն |
|---|
| |

Պետք է նկատի ունենալ, որ ծրագրի մասնագիրը ամփոփում է ծրագրի հիմնական առանձնահատկությունների համառոտ  նկարագրությունը և այն կրթական վերջնարդյունքները, որոնք ենթադրվում է, որ ձեռք կբերի միջին

բնութագրական ուսանողը, եթե նա լիարժեք կերպով օգտվի ծրագրի ընձեռած ուսումնառության հնարավորություններից։ Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել ԵՊՀ դասընթացների տեղեկագրքում։

[*Ծրագրի անվանումը*] ուսումնական պլանի քարտեզը

Այս բաժինը կապ է հաստատում ծրագրի կրթական վերջնարդյունքների և այն ուսումնական մոդուլների միջև, որտեղ դրանք ձևավորվում և գնահատվում են և սահմանում է այն ուստարին, որի ավարտին կոնկրետ կրթական վերջնարդյունքը պետք է ձեռք բերվի ծրագրում ընդգրկված բոլոր ուսանողների կողմից:

## Ծրագրի կրթական վերջնարդյունքները

| Ա. Մասնագիտական տեսական գիտելիքներ | | Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ | |
|---|---|---|---|
| Ա1 | | Գ1 | |
| Ա2 | | Գ2 | |
| Ա3 | | Գ3 | |
| Ա4 | | Գ4 | |
| Ա5 | | Գ5 | |
| Ա6 | | Գ6 | |
| Ա7 | | Գ7 | |
| Ա8 | | Գ8 | |
| Ա9 | | Գ9 | |
| Բ. Մասնագիտական գործնական կարողություններ | | | |
| Բ1 | | | |
| Բ2 | | | |
| Բ3 | | | |
| Բ4 | | | |
| Բ5 | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Բ6 | | | |
| Բ7 | | | |
| Բ8 | | | |
| Բ9 | | | |

| Ծրագրի կրթական վերջնարդյունքները | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա1 | Ա2 | Ա3 | Ա4 | Ա5 | Ա6 | Ա7 | Ա8 | Ա9 | Բ1 | Բ2 | Բ3 | Բ4 | Բ5 | Բ6 | Բ7 | Բ8 | Բ9 | Գ1 | Գ2 | Գ3 | Գ4 | Գ5 | Գ6 | Գ7 | Գ8 |
| Ուստարին, որի ավարտին կրթական վերջնարդյունքը ձեռք է բերվում բոլոր ուսանողների կողմից: | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| Ուսումնական մոդուլի անվանումը | Մոդուլի թվանիշը | Ծրագրի կրթական վերջնարդյունքները | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ա1 | Ա2 | Ա3 | Ա4 | Ա5 | Ա6 | Ա7 | Ա8 | Ա9 | Բ1 | Բ2 | Բ3 | Բ4 | Բ5 | Բ6 | Բ7 | Բ8 | Բ9 | Գ1 | Գ2 | Գ3 | Գ4 | Գ5 | Գ6 | Գ7 | Գ8 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

# Ուսումնական մոդուլի նկարագրիչները

| | | |
|---|---|---|
| **1.** Թվանիշը | **2.** Ուսումնական մոդուլի անվանումը | **3.** Կրեդիտների քանակը |
| **4.** Շաբաթական ժամերի ընդհանուր քանակը | **5.** Ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի (դասախոսություն/գործնական/լաբորատոր և այլն) | |
| **6.**Կայացման կիսամյակը | **7.** Գնահատման ձևը | |
| **8.** Ուսումնական մոդուլի նպատակը | | |
| **9.** Կրթական վերջնարդյունքները<br><br>9.1.Մասնագիտական տեսական գիտելիքներ<br><br>9.2. Մասնագիտական գործնական կարողություններ<br><br>9.3. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ | | |
| **10.** Համառոտ բովանդակությունը | | |

| |
|---|
| |
| **11.** Գնահատման մեթոդները և չափանիշները |
| **12.** Հիմնական գրականության ցանկը<br><br>1.<br>2.<br>3.<br>4.<br>5. |

## 2.2. Առկա ուսուցմամբ կրեդիտային համակարգով բակալավրի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը

## Ա.

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԵՊՀ-ում բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ բարձրագույն կրթության համակարգի՝ բարձրագույն կրթության եվրոպական տարածքում ընդգրկվելու և բարձրագույն կրթության կազմակերպման եվրոպական չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակադրությամբ, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի պահանջներով և դրանից բխող՝ ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2006 թ. հունիսի 1-ին հաստատված Երևանի պետական համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման ժամանակացույցով, որը նախատեսում է 2008/2009 ուստարում բակալավրի կրթական ծրագրում անցնել ուսման կազմակերպման կրեդիտային համակարգի:

Բակալավրի ծրագիրը ներառում է հինգ հիմնական կրթամաս՝ *ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական*, *ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական դասընթացներ,* ինչպես նաև *կրթական այլ մոդուլներ*:

Ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը ծրագրում ըստ ուսումնական տարիների սահմանափակվում է հետևյալ չափաքանակներով՝

| 1-ին տարի | 2-րդ տարի | 3-րդ տարի | 4-րդ տարի |
|---|---|---|---|
| **30 ժամ*** | **28 ժամ*** | **26 ժամ** | **24 ժամ** |

** Առանց ֆիզդաստիարակության ժամերի հաշվառման*

1. Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողությունը, որից 16-ը հատկացվում է տեսական ուսուցման, իսկ 4-ը՝ քննաշրջանի համար: Կիսամյակի ուսումնական բեռնվածքը (աշխատածավալը) համապատասխանում է 30 կրեդիտի[7]: Ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը պետք է համապատասխանի 240 կրեդիտի:
2. Ծրագրի բաղկացուցիչ դասընթացների աշխատածավալը հաշվարկվում է՝ ելնելով հետևյալ սկզբունքից՝

[7] Ինչպես և մագիստրոսի գործող կրթական ծրագրում, մեկ կրեդիտի ժամային համարժեքը 30 ժամ է:

| Մոդուլ-դասընթաց | | | |
|---|---|---|---|
| **Լսարանային պարապմունքներ** | | | **Ինքնուրույն աշխատանք** |
| ***ժամ*** | ***պարապմունքի ձևը*** | | ***ժամ*** |
| 1 | դասախոսություն | + | 1 – 2[8] |
| 1 | սեմինար/գործնական | + | 0.75 – 1[9] |
| 1 | լաբորատոր | + | 0.5 |

Ինչպես երևում է աղյուսակից, մեկ առանձին մոդուլ-դասընթացի լրիվ աշխատածավալը, որը գոյանում է դասընթացի *լսարանային* և *ինքնուրույն* աշխատանքի ժամաքանակների գումարից, հաշվարկվում է երկու փուլով. նախ որոշվում է *լսարանային* պարապմունքի ձևով և դասավանդման մեթոդով պայմանավորված՝ ուսանողից պահանջվող ինքնուրույն աշխատանքի ծավալը, այնուհետև *լսարանային* և *ինքնուրույն* աշխատանքի ժամաքանակների հանրագումարից ստացվում է դասընթացի շաբաթական լրիվ աշխատածավալը: Դասընթացին հատկացվող կրեդիտների քանակը ստացվում է՝ շաբաթական լրիվ բեռնվածությունը բազմապատկելով 16 շաբաթի և ստացված գումարը 30 ժամի բաժանելով: Հետևապես՝ դասընթացի կրեդիտատարությունը (աշխատատարությունը) անմիջականորեն կախված է վերջինիս համար նախատեսած պարապմունքների ձևից, դասավանդման եղանակներից (մեթոդներից) և դասընթացի բովանդակային առանձնահատկություններից, այսինքն՝ նույն լսարանային ժամաքանակի պարագայում տարբեր մոդուլ-դասընթացներ կարող են ունենալ տարբեր աշխատատարություն, հետևաբար՝ նաև հատկացվող կրեդիտների տարբեր քանակ:

Ըստ այդմ, երաշխավորվում են դասընթացների կրեդիտատարության հաշվարկի ստորև տրվող տիպային մոդելները: Դիտարկենք դրանք հաջորդաբար (ա) *1 ժամ դասախոսություն + 2 ժամ ինքնուրույն աշխատանք* և *1 ժամ գործնական/սեմինար պարապմունք + 1 ժամ ինքնուրույն աշխատանք* (ինքնուրույն աշխատանքին տրվող առավելագույն չափաքանակ) և (բ) *1 ժամ դասախոսություն + 1 ժամ ինքնուրույն աշխատանք* և *1 ժամ գործնական/սեմինար պարապմունք + 0,75 ժամ ինքնուրույն աշխատանք* (ինքնուրույն աշխատանքին տրվող նվազագույն չափաքանակ) հաշվարկային տարբերակներով:

[8] Պահանջվող ինքնուրույն աշխատանքի կոնկրետ չափը որոշում է դասընթացը կազմակերպող ամբիոնը՝ ելնելով դասընթացով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար ուսանողից պահանջվող ուսումնական աշխատանքի ծավալից:

[9] Նույնը:

**Ա. Ինքնուրույն աշխատանքի առավելագույն չափաքանակով հաշվարկի դեպքեր**

(շաբաթական 4 լսարանային ժամով ընթացող դասընթացներ)

| | Շաբաթական բեռնվածությունը | | | | | | Կիսամ.բեռն. | Կրեդիտներ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դսխ. | Գործն. | Լաբ. | Լսարան. | Ինքնուր. | Լրիվ | Ժամեր | Ճշգրիտ | Ամբողջ |
| *ա* | 2 | 1 | 1 | *4* | *5,5* | *9,5* | 152 | 5,067 | **5** |
| *բ* | 3 | 1 | 0 | *4* | *7* | *11* | 176 | 5,867 | **6** |
| *գ* | 4 | 0 | 0 | *4* | *8* | *12* | 192 | 6,400 | **6** |
| *դ* | 0 | 4 | 0 | *4* | *4* | *8* | 128 | 4,267 | **4** |
| *ե* | 2 | 0 | 2 | *4* | *5* | *9* | 144 | 4,800 | **5** |
| *զ* | 1 | 1 | 2 | *4* | *4* | *8* | 128 | 4,267 | **4** |
| *է* | 0 | 2 | 2 | *4* | *3* | *7* | 112 | 3.733 | **4** |
| *ը* | 2 | 2 | 0 | *4* | *6* | *10* | 160 | 5.333 | **5** |
| *թ* | 0 | 0 | 4 | *4* | *2* | *6* | 96 | 3.200 | **3** |
| *ժ* | 3 | 0 | 1 | *4* | *6.5* | *10.5* | 168 | 5.600 | **6** |

**Բ. Ինքնուրույն աշխատանքի նվազագույն չափաքանակով հաշվարկի դեպքեր**

(շաբաթական 4 լսարանային ժամով ընթացող դասընթացներ)

| | Շաբաթական բեռնվածությունը | | | | | | Կիսամ.բեռն. | Կրեդիտներ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դսխ. | Գործն. | Լաբ. | Լսարան. | Ինքնուր. | Լրիվ | Ժամեր | Ճշգրիտ | Ամբողջ |
| *ա* | 2 | 1 | 1 | *4* | *3.25* | *7.25* | 116 | 3.867 | **4** |
| *բ* | 3 | 1 | 0 | *4* | *3.75* | *7.75* | 124 | 4.133 | **4** |
| *գ* | 4 | 0 | 0 | *4* | *4* | *8* | 128 | 4.267 | **4** |
| *դ* | 0 | 4 | 0 | *4* | *3* | *7* | 112 | 3.733 | **4** |
| *ե* | 2 | 0 | 2 | *4* | *3* | *7* | 112 | 3.733 | **4** |
| *զ* | 1 | 1 | 2 | *4* | *2.75* | *6.75* | 108 | 3.600 | **4** |
| *է* | 0 | 2 | 2 | *4* | *2.5* | *6.5* | 104 | 3.467 | **3** |
| *ը* | 2 | 2 | 0 | *4* | *3.5* | *7.5* | 120 | 4.000 | **4** |
| *թ* | 0 | 0 | 4 | *4* | *2* | *6* | 96 | 3.200 | **3** |
| *ժ* | 3 | 0 | 1 | *4* | *3.5* | *7.5* | 120 | 4.000 | **4** |

Ինչպես կարելի է նկատել, ինքնուրույն աշխատանքին հատկացվող ժամաքանակի չափն էապես անդրադառնում է միևնույն լսարանային բեռնվածությունն ունեցող դասընթացների կրեդիտատարության վրա: Այսպես, ինքնուրույն աշխատանքի ծավալը առավելագույն չափաքանակով հաշվարկելու դեպքում շաբաթական 4 ժամ լսարանային բեռնվածություն ունեցող դասընթացների աշխատածավալը տատանվում է 3-6 կրեդիտ (աղյուսակ Ա.), մինչդեռ նվազագույն չափաքանակով հաշվարկելու դեպքում դասընթացների աշխատածավալների տատանումներն ավելի փոքր են՝ 3-4 կրեդիտ (աղյուսակ Բ.): Բացի վերը բերված հաշվարկային տարբերակներից հնարավոր են նաև միջանկյալ դեպքեր, օր.՝ *1 ժամ դասախոսություն + 1,5 ժամ ինքնուրույն աշխատանք և 1 ժամ սեմինար + 0,9 ժամ ինքնուրույն աշախատանք* և այլն:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ լսարանային մեկ ժամին հատկացվող ինքնուրույն ժամաքանակի որոշումն ամենևին էլ կամայական գործողություն չէ. այն պետք է հիմնավորված լինի համապատասխան լսարանային դասաժամի բովանդակությամբ պայմանավորվող՝ ուսանողին հանձնարարվող աշխատանքի ծավալով (ուսումնական գործողություններով), ինչը պարտադիր կերպով արտացոլվում է դասընթացի առարկայական ծրագրում: Ուսանողի կիսամյակային ուսումնական բեռնվածքը ուսումնական ծրագրում (պլանում) որոշելիս պետք է հաշվի առնել նաև կրեդիտների և շաբաթական լսարանային ժամերի վերը բերված չափաքանակների սահմանափակումները (տե՛ս կետեր 3 և 4):

Բ.

## ԿՐԹԱՄԱՍԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱՄԱՍ

Ծրագրի *ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական* (ՀՍՏ) կրթամասը ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ *պարտադիր* և *կամընտրական*: Դրանց առկայությունը ծրագրում նպատակաուղղված է համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

**1.1. ՀՍՏ պարտադիր դասընթացներ**

ՀՍՏ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները՝

| *Մոդուլ-դասընթաց* | *Կրեդիտ* | *Լսարանային ժամ (դ/գ/լ)*[10] | *Կիսամյակ* |
|---|---|---|---|
| *Հայոց լեզու և գրականություն-1* | *2* | *32 (8/24/0)* | *1* |
| *Հայոց լեզու և գրականություն-2* | *2* | *32 (8/24/0)* | *2* |
| *Ռուսաց լեզու-1* | *4* | *64 (0/64/0)* | *1* |
| *Ռուսաց լեզու-2* | *4* | *64 (0/64/0)* | *2* |
| *Օտար լեզու-1*[11] | *4* | *64 (0/64/0)* | *1* |
| *Օտար լեզու-2* | *4* | *64 (0/64/0)* | *2* |
| *Լրացուցիչ լեզվական դասընթաց (Ռուսաց լեզու-3 կամ Օտար լեզու-3)* | *4* | *64 (0/64/0)* | *3* |
| *Հայոց պատմության հիմնահարցեր-1* | *2* | *32 (24/8/0)* | *1* |
| *Հայոց պատմության հիմնահարցեր-2* | *2* | *32 (24/8/0)* | *2* |
| *Փիլիսոփայության հիմունքներ* | *4* | *64 (48/16/0)* | *3 կամ 4* |
| *Ֆիզդաստիարակություն* | *–* | *128 (0/128/0)* | *1,2,3,4* |

**1.2. ՀՍՏ կամընտրական դասընթացներ**

ՀՍՏ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը՝

| *Մոդուլ-դասընթաց* | *Կրեդիտ* | *Լսարանային ժամ (դ/գ/լ)* | *Կիսամյակ* |
|---|---|---|---|
| *Տնտեսագիտություն* | 2 | *32 (32/0/0)* | 4 |

[10] Այսուհետև՝ *դ* – դասախոսություն, *գ* – գործնական կամ սեմինար պարապմունք, *լ* – լաբորատոր աշխատանք:
[11] Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն:

| | | | |
|---|---|---|---|
| *Քաղաքագիտություն* | | | |
| *Իրավագիտություն* | | | |
| *Մշակութաբանություն* | 2 | *32 (32/0/0)* | 3 |
| *Կրոնների պատմություն* | | | |

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱՄԱՍ

Ծրագրի *ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական* (ԸՄԲ) կրթամասը նույնպես ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ *պարտադիր* և *կամընտրական*։

**1.1. ԸՄԲ պարտադիր դասընթացներ**

ԸՄԲ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները՝

| *Մոդուլ-դասընթաց* | *Կրեդիտ* | *Լսարանային ժամ (դ/գ/լ)* | *Կիսամյակ* |
|---|---|---|---|
| Համակարգչից օգտվելու հմտություններ | *2* | *32 (8/24/0)* | *1 կամ 2* |
| Քաղաքացիական պաշտպանություն | *2* | *32 (24/8/0)* | *5 կամ 6* |
| Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն | *2* | *32 (8/24/0)* | |
| Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ | 2 | *32 (32/0/0)* | 1 կամ 2 |

**1.2. ԸՄԲ կամընտրական դասընթացներ**

ԸՄԲ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը՝

| *Մոդուլ-դասընթաց* | *Կրեդիտ* | *Լսարանային ժամ (դ/գ/լ)* | *Կիսամյակ* |
|---|---|---|---|
| *Մաթեմատիկայի հիմունքներ* | 2 | *32 (32/0/0)* | 1 կամ 2 |
| *Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաները* | | | |

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Ընդհանուր մասնագիտական (ԸՄԴ) կրթամասը նպատակաուղղված է ընտրված մասնագիտությամբ պատրաստությունն իրականացնելու գործառույթի կատարմանը: Նրա բովանդակության, դասընթացների կազմի և դրանց կրեդիտատարության որոշումը գտնվում է մասնագիտական պատրաստությունն իրականացնող ֆակուլտետների և ամբիոնների իրավասության շրջանակներում՝ սահմանափակվելով միայն կրթական ծրագրի վերը բերված համահամալսարանական նորմերով (տե՛ս մաս Ա):

**3.1.** ՀԱՏՈՒԿ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Հատուկ մասնագիտական (ՀՄԴ) կրթամասի առկայությունը ծրագրում պայմանավորված է ընտրված մասնագիտության այս կամ այն ոլորտի խնդիրներում մասնագիտացված պատրաստում իրականացնելու նպատակով, որի անհրաժեշտությունը կարող է առաջանալ՝ բխելով կոնկրետ կրթական ծրագրի առջև դրված նպատակներից և խնդիրներից: Այս կրթամասը, հետևաբար, լրացական դեր է խաղում ծրագրի նպատակների առումով և որոշակի մասնագիտացման անհրաժեշտության բացակայության պարագայում կարող է ծրագրում չառանձնացվել: Ծրագրում ներկայացված լինելու պարագայում ՀՄԴ կրթամասով նախատեսվող ուսումնական աշխատածավալը չպետք է գերազանցի 24 կրեդիտը: Այն դեպքում, երբ կոնկրետ կրթական ծրագիրը ՀՄԴ կրթամաս չի նախատեսում, ծրագրի ԸՄԴ հատվածում նախընտրելի է ընդգրկել մինչև 12 կրեդիտ աշխատածավալով կամընտրական դասընթացների փաթեթ:

***

Ծրագրի մասնագիտական հատվածում անհրաժեշտ է նախատեսել 2-ական կրեդիտ աշխատածավալով կուրսային 2 աշխատանքների կատարում, որոնց արդյունքների ստուգումը իրականացվում է տարբերակված գնահատման եղանակով (թվանշանով): Մասնագիտական կրթամասի (ԸՄԴ և ՀՄԴ) մոդուլ-դասընթացների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 35-ը:

**4.** ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՄՈԴՈՒԼՆԵՐ

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները՝

| *Մոդուլ* | *Կրեդիտ* | *Կիսամյակ* |
|---|---|---|
| *Պրակտիկա*[12] | 4 | 5-7 |
| *Պետական մասնագիտական քննություն* | 4 | 8 |

[12] Ուսումնական ծրագիրը պետք է պարունակի 4-շաբաթյա պրակտիկայի առնվազն 1 մոդուլ, որի աշխատածավալը գնահատվում է 4 կրեդիտ: Ծրագիրը կարող է նախատեսել նաև պրակտիկայի այլ ձևեր, որոնց իրականացման կիսամյակը և կրեդիտատարությունը (շաբաթները) որոշում է մասնագիտացնող ֆակուլտետը՝ ելնելով 1 շաբաթ = 1 կրեդիտ համամասնությունից:

| | | |
|---|---|---|
| *Ավարտական աշխատանք* | 12 | 8 |

Հարկ է նշել, որ ի տարբերություն ավանդական ուսումնական պլանների՝ կրթական այս բաղադրիչների աշխատածավալները հաշվարկվում են ծրագրի ընդհանուր աշխատածավալում:

***

Բակալավրի կրթական ծրագրի կազմակերպման, ինչպես նաև ուսանողների գիտելիքների գնահատմանն առնչվող խնդիրները կարգավորվում են համապատասխան կարգերով:

## 2.3. Առկա ուսուցմամբ կրեդիտային համակարգով մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը

1. Ընդհանուր դրույթներ

2. ԵՊՀ-ում մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ բարձրագույն կրթության համակարգի՝ բարձրագույն կրթության եվրոպական տարածքում ընդգրկվելու և բարձրագույն կրթության կազմակերպման եվրոպական չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակադրությամբ, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի պահանջներով և դրանից բխող՝ ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2006 թ. հունիսի 1-ին հաստատված «Երևանի պետական համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման ժամանակացույցով», որը նախատեսում է 2007/2008 ուս.տարում իրականացնել անցում դեպի մագիստրոսական կրթության կազմակերպում՝ կրեդիտային համակարգի հենքի վրա:

3. ԵՊՀ-ում մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ներկայացվող կառուցվածքի հիմքում դրված է երկու առանցքային գաղափար՝ ա) կրթական ծրագրի կատարման ողջ ընթացքում մագիստրանտի գիտական ղեկավարի դերակատարության շեշտակի բարձրացումը՝ մագիստրանտի ուսումնական խորհրդատուի գործառույթների ընդգրկմամբ, բ) մագիստրանտների կողմից ուսումնական և հետազոտական ծրագրերի ձևավորման և կատարման խնդրում ինքնուրույնության աստիճանի ավելացումը:

4. Կառուցվածքի հիմքում ընկած է ուսանողի շաբաթական ընդհանուր բեռնվածության 45-ժամյա տևողության ամրագրումը, իսկ ուսումնական մեկ կրեդիտի ժամային համարժեքը հաշվարկվում է 1 կրեդիտ = 30 ժամ համամասնությամբ, ինչն արտացոլում է ԵՊՀ-ում փաստացի ձևավորված իրողությունը և Բոլոնիայի գործընթացում ընդգրկված մի շարք երկրներում դրսևորվող միտումը: Տարբերվելով հանդերձ մինչև օրս գործող 1 կրեդիտ = 36 ժամ հարաբերակցությունից (որը հիմնված է ուսումնական 54-ժամյա շաբաթի վրա)՝ ներկայացվող հաշվարկը պահպանում է մեկ ուսումնական շաբաթվա կրեդիտատարության չափը (հմմտ. 54ժ/36ժ=1,5 կրեդիտ ավանդական համակարգում և 45ժ/30ժ=1,5 կրեդիտ ներկայացվող համակարգում):

5. Մագիստրոսի պատրաստման ծրագրի կառուցվածքում նախատեսվում է երկու հիմնական հատված՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատաձևերը ներկայացված են մագիստրոսի կրթական ծրագ-

րի իրականացման նորմատիվ ժամկետների շրջանակներում տեղավորվող կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական հատվածների ծավալների հետևյալ համամասնությամբ (%)՝

| | 1-ին կիսամյակ | 2-րդ կիսամյակ | 3-րդ կիսամյակ | 4-րդ կիսամյակ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| Ուսումնական | **90** | **80** | **70** | **0** | **60** |
| Հետազոտական | **10** | **20** | **30** | **100** | **40** |

6. Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողությունը, դրանից 16-ը հատկացվում է տեսական ուսուցման և պրակտիկաների, իսկ 4-ը՝ քննաշրջանի: Ծրագրի առաջին երեք կիսամյակների սկզբում մեկ շաբաթ հատկացվում է մագիստրանտի անհատական ուսումնական ծրագրի ձևավորմանը (տե՛ս կետեր 3.1.1.1., 3.2.1.1, 3.3.1.1.):

7. Ծրագրի ուսումնական հատվածի ընդհանուր ժամաքանակը ծրագրի ամբողջական աշխատատարության (120 կրեդիտ) ժամային արտահայտման (3600 ժամ) ուսումնական հատվածի կրեդիտատար մասին հատկացված տոկոսաչափն է՝ 3600*60%=2160: Դասընթացի լրիվ ժամանակատարությունը ծրագրի ուսումնական հատվածի ընդհանուր ժամաքանակի բաշխումն է դասընթացների քանակով (2160 ժամ / 24 դասընթաց = 90 ժամ): Ծրագրի ուսումնական հատվածի յուրաքանչյուր դասընթացի լսարանային մասը կազմում է նվազագույնը 32 ժամ: Դասընթացին հատկացվող ինքնուրույն աշխատանքի ժամաքանակը դրանով իսկ սահմանվում է 58 ժամ՝ որպես դասընթացի լրիվ ժամանակատարության (90 ժամ) և լսարանային արտահայտման (32 ժամ) տարբերություն: Շաբաթական 2 լսարանային ժամ բեռնվածքով դասընթացի կրեդիտատարությունն այդպիսով կազմում է 3 կրեդիտ, իսկ 4 ժամ բեռնվածք ունեցող դասընթացի դեպքում դասընթացը կապահովի 6 կրեդիտ:

8. Կրեդիտը դասընթացով կամ առանձին ատեստավորում ունեցող կրթական այլ մոդուլով (գիտահետազոտական աշխատանք, կուրսային աշխատանք, պրակտիկա) նախանշված ուսանողից պահանջվող ուսումնական բեռնվածության չափման պայմանական միավոր է: Մեկ մոդուլը համապատասխանում է մեկ կիսամյակ տևողությամբ դասընթացի կամ դասընթացի կիսամյակային այնպիսի հատվածի, որը կարող է ինքնուրույն կերպով ատեստավորվել: Ըստ այդմ կարող են տարբերվել մեկ կամ երկու ու ավելի մոդուլներից բաղկացած դասընթացներ, որոնք ուսումնական պլանում ներկայացվում են առանձին տողերով:

## 2. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

### 1. Ուսումնական հատված

2.1.0. Ծրագրի ուսումնական հատվածի կառուցվածքը պայմանավորվում է հետևյալ բաղադրիչների առկայությամբ՝ ***Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ, Լրացական դասընթացներ, Մասնագիտացված պատրաստման դասընթացներ***: Առաջին երկուսը սպասարկում են ընդհանուր մասնագիտական հենքի ապահովման կամ համալրման խնդիրները, երրորդը կազմում է մագիստրոսի կրթական ծրագրի բովանդակային էությունը։

2.1.1. ***Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ***

Ընդհանուր և մասնագիտական դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է մագիստրանտների մոտ մասնագիտական խորացված տեսական գիտելիքների և տեղեկատվական–տեխնոլոգիական ունակությունների ապահովմանը։ Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ *Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում* և *Մասնագիտության արդիական խնդիրները*: Առանձին դեպքերում մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, *Մասնագիտացված պատրաստման դասընթացների* բաղադրիչին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է ընդհանուր և մասնագիտական այլ դասընթացների ընդգրկում։ Որպես այդպիսին առաջարկվում է, օրինակ, *Մասնագիտական կրթության կազմակերպումը բարձրագույն դպրոցում* դասընթացը։

2.1.2. ***Լրացական դասընթացներ***

Բաղադրիչն ուղղված է նախորդ կրթական աստիճանի պահանջներն անհրաժեշտության դեպքում լրացնելուն (մասնագիտության փոփոխության դեպքում կամ օտար լեզուների իմացության ոլորտում)։ Նկատի ունենալով թողարկվող մասնագետների՝ կրթական և հետազոտական ծառայությունների միջազգային շուկայում ազատ տեղաշարժն ու պահանջվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, որպես պարտադիր լրացական դասընթաց ծրագրում ընդգրկված է անգլերենը։ Մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, գիտական ղեկավարի երաշխավորությամբ մագիստրանտի անհատական ուսումնական պլանում որպես լրացական դասընթաց կարող է ներառվել նաև օտար այլ լեզու։ Լրացական դասընթացները կրեդիտատար չեն։ Բաղադրիչը յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրում նախատեսում է մինչև 3 լրացական դասընթացի առկայություն։

2.1.3. ***Մասնագիտացված պատրաստման դասընթացներ***

2.1.3.0. Մասնագիտացված պատրաստման դասընթացների բաղադրիչը ծրագրի ներկայացվող կառուցվածքում տրոհվում է երեք հիմնական կառուցատարրերի, որոնցից

յուրաքանչյուրն ուղղված է լուծելու կրթական ծրագրի նպատակից բխող երեք փոխկապակցված խնդիր՝ ա) տիտղոսային ծրագրի հենքային խնդրացանկով պատրաստման ապահովումը, բ) մագիստրոսական թեզի թեմայով պայմանավորված հատուկ խնդրացանկով պատրաստման ապահովումը, գ) մասնագիտության շրջանակներում միջդիսցիպլինար կապերի ձևավորման ապահովումը։

2.1.3.1. **Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ։** Մագիստրոսական ծրագրի դասընթացների պարտադիր խմբաքանակն է, որն ապահովում է ծրագրի տիտղոսը (անվանումը) և որակավորման կառուցվածքը։ Ընդգրկում է 8-ից 16 տարբեր կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթացներ։

2.1.3.2. **Տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացներ։** Մագիստրոսական ծրագրի դասընթացների կամընտրական ցանկն է։ Դասընթացներն ընտրվում են գիտական ղեկավարի հետ համատեղ՝ 2-րդ կիսամյակում մեկ դասընթաց՝ առաջարկվող երկու 3 կրեդիտատար դասընթացներից, 3-րդ կիսամյակում՝ երկու 3 կրեդիտատար դասընթաց առաջարկվող չորսից կամ մեկ 6 կրեդիտատար դասընթաց առաջարկվող երկուսից։

2.1.3.3. **Հարակից ծրագրերի ընտրովի դասընթացներ։** Համապատասխան դասընթացներն ընտրվում են հարակից ծրագրերի տիտղոսային ցանկերից՝ 2-րդ կիսամյակում երկու 3 կրեդիտատար կամ մեկ 6 կրեդիտատար դասընթաց, 3-րդ կիսամյակում՝ մեկ 3 կրեդիտատար դասընթաց։

**2. <u>Հետազոտական հատված</u>**

2.2.0. Ծրագրի հետազոտական հատվածի կառուցվածքը պայմանավորվում է հետևյալ բաղադրիչների առկայությամբ՝ ***Գիտական ղեկավարի սեմինար, Գիտահետազոտական աշխատանք, Գիտահետազոտական պրակտիկա, Գիտամանկավարժական պրակտիկա, Մագիստրոսական թեզի պաշտպանություն։***

2.2.1. Գիտական ղեկավարի սեմինարը գիտական ղեկավարի կողմից իր ղեկավարած մագիստրանտների հետ վարվող սեմինարների շարք է, որի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում է գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու կուլտուրան։

2.2.2. Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը պայմանավորվում է ծրագրի համապատասխան կիսամյակում նախատեսվող ուսումնակազմակերպական քայլերով (տե՛ս. կետ 3)։

2.2.3. Գիտահետազոտական պրակտիկան կազմակերպվում է չորրորդ կիսամյակում գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով։ Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում։

2.2.4. Գիտամանկավարժական պրակտիկան կազմակերպվում է չորրորդ կիսամյակում գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Նախատեսում է բակալավրիատում սեմինարների և գործնական պարապմունքների անցկացում, կուրսային աշխատանքների գրախոսում:

2.2.5. Մագիստրոսական թեզի պաշտպանությունը մագիստրոսական թեզի պատրաստման եզրափակիչ փուլն է, որի բովանդակությունը պայմանավորվում է չորրորդ կիսամյակի վերջին 8 շաբաթում իրականացվող ընթացակարգով և ավարտվում թեզի պաշտպանությամբ (տե՛ս. կետեր 3.2.2.3-3.2.2.6):

## 3. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**1.** Ծրագրի իրականացման ***առաջին*** տարում՝ 1-ին և 2-րդ կիսամյակներում ապահովվում է տարբերացված գիտական մասնագիտացման ուղղությամբ հիմնարար պատրաստումը:

3.1.1. 1-ին կիսամյակն ընդգրկում է հետևյալ ուսումնակազմակերպական փուլերը.

3.1.1.1. Ընտրված ծրագրի ընդհանուր ղեկավարի հետ գիտական ղեկավար նշանակելու վերաբերյալ խորհրդատվություններ:

3.1.1.2. Ամբիոնի կամ (սահմանային/միջամբիոնային) մագիստրոսական ծրագրերի դեպքում) միջամբիոնային հանձնախմբի կողմից մագիստրանտի գիտական ղեկավարի հաստատում:

3.1.1.3. Գիտական ղեկավարի հետ մագիստրոսական թեզի թեմայի ընտրության վերաբերյալ խորհրդատվությունների անցկացում, մագիստրանտի անհատական աշխատանքային մատյանի կազմում:

3.1.1.4. Մագիստրանտի կողմից կիսամյակի անհատական ուսումնական պլանի կատարում:

3.1.1.5. Մագիստրանտի թեզի թեմայի հաստատում:

3.1.2. 2-րդ կիսամյակը նախատեսում է.

3.1.2.1. Մագիստրանտի կողմից գիտական ղեկավարի հետ համատեղ կիսամյակի անհատական ուսումնական պլանի կազմում:

3.1.2.2. Մագիստրանտի կողմից կիսամյակի անհատական ուսումնական պլանի կատարում:

3.1.2.3. Մագիստրանտի կողմից գիտական ղեկավարի հետ համաձայնեցված հիմնավորված ատենախոսական առաջարկի պատրաստում և ներկայացում ամբիոնում կամ միջամբիոնային հանձնախմբում քննարկման և հաստատման համար: Ատենախոսական առաջարկը պետք է պարունակի խնդրի առաջադրումն ու սահմանումը, հե-

տազոտական մեթոդների և գիտական ապարատի (գրականության ցանկի) նկարագրումը, հավանական լուծումները:

2. Ուսուցման ***երկրորդ*** տարում եզրափակվում է մագիստրանտի տեսական խորացված պատրաստումը, կատարվում է գիտական հետազոտությունը, մագիստրոսական թեզի շարադրումն ու պաշտպանությունը:

3.2.1. Այդ տարվա 1-ին կիսամյակն ընդգրկում է.

3.2.1.1. Մագիստրանտի կողմից գիտական ղեկավարի հետ համատեղ կիսամյակի անհատական ուսումնական պլանի կազմում:

3.2.1.2. Մագիստրանտի կողմից կիսամյակի անհատական ուսումնական պլանի կատարում:

3.2.1.3. Գիտական հետազոտություն (նյութի հավաքագրում, վերլուծում ու համակարգում, տեսական ամփոփումներ)

3.2.2. Երկրորդ կիսամյակում նախատեսվում է.

3.2.2.1. Գիտական ղեկավարի հետ համատեղ գիտահետազոտական պրակտիկայի ծրագրի կազմում և կատարում:

3.2.2.2. Գիտական ղեկավարի հետ համատեղ գիտամանկավարժական պրակտիկայի ծրագրի կազմում և կատարում:

3.2.2.3. Մագիստրոսական թեզի շարադրում:

3.2.2.4. Թեզի ներկայացում ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) քննարկմանը: Թեզը ներկայացվում է պաշտպանությունից 8 շաբաթ առաջ և քննարկվում ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) կողմից երկշաբաթյա ժամկետում:

3.2.2.5. Ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) կողմից էական դիտողությունների առկայության դեպքում մագիստրոսի աստիճանը հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում վերամշակել թեզը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Լրացուցիչ քննարկման արդյունքում դրական եզրակացության դեպքում թեզը ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) կողմից երաշխավորվում է պաշտպանության և տրվում պաշտոնական ընդդիմախոսին, որը ոչ ուշ, քան պաշտպանությունից մեկ շաբաթ առաջ մագիստրանտին է ներկայացնում իր գրավոր կարծիքը թեզի վերաբերյալ:

3.2.2.6. Մագիստրոսական թեզի պաշտպանություն Պետական որակավորման հանձնաժողովի նիստում:

## 2.4 .Հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը

1. <u>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ</u>

3. *«ԵՊՀ-ում հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը»* մեթոդական փաստաթուղթը սահմանում է համապատասխան ծրագրի կառուցվածքը, բովանդակությունը, աշխատածավալներն ըստ կրթամասերի և ուսումնական աշխատանքի ձևերի, ծրագրի դասընթացների և կրթական այլ մոդուլների կազմն ու աշխատածավալները՝ արտահայտված ECTS կրեդիտներով, դրանց իրացման ժամկետները և այլն:
4. Բակալավրի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասերից՝ ընդհանուր կրթական (պատրաստականության) և մասնագիտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված ուսումնական բեռնվածությունները, արտահայտված կրեդիտներով, ըստ ուսումնական կիսամյակների բերված են ստորև.

**Աղյուսակ 1. Բակալավրի պատրաստման կրթական ծրագրի կառուցամասերի աշխատածավալները**

| Կիսամյակ | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր կրթության կառուցամաս, *կրեդիտ* | 18 | 12 | 10 | 2 | 4 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **46** |
| Մասնագիտական կրթության կառուցամաս, *կրեդիտ* | 6 | 12 | 14 | 22 | 20 | 24 | 24 | 24 | 24 | 24 | **194** |
| **Ընդամենը,** ***կրեդիտ*** | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | **240** |

5. Հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման ծրագրի տևողությունը 5 տարի (10 կիսամյակ) է: Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողությունը, որից 4 շաբաթը հատկացվում է տեսական ուսուցման, 8-ը՝ ինքնուրույն աշխատանքի և կոնսուլտացիաների, իսկ 4-ը՝ քննաշրջանի համար: Առանձին դեպքերում, մասնագիտական առանձնահատկություններից ելնելով (օրինակ, լեզվական մասնագիտությունների համար), ֆակուլտետի խորհրդի որոշմամբ տեսական ուսուցման կազմակերպումը կարող է իրականացվել նաև 12-շաբաթյա ժամանակահատվածում:

6. Ծրագրի կառուցման հիմքում դրված է բակալավրի որակավորման աստիճանի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված 240 կրեդիտ ուսումնական աշխատածավալը, որը հեռակա ուսուցման ձևի մեկ կիսամյակի համար կազմում է 24 կրեդիտ: Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը, ինչպես և առկա ուսուցման ձևում կազմում է 1,5 կրեդիտ (24 կրեդիտ / 16 շաբաթ = 1,5) կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝ 1 կրեդիտ = 30 ժամ:

7. Ընդհանուր կրթության կառուցամասի աշխատածավալը ծրագրի 240 կրեդիտ ծավալում կազմում է 46 կրեդիտ (19%), իսկ մասնագիտականինը՝ 194 կրեդիտ (81%): Երկու կառուցամասերն էլ ներառում են տարբեր կրեդիտատարությամբ դասընթացներ և ուսումնական այլ մոդուլներ (այդ թվում՝ կուրսային աշխատանքներ, պրակտիկաներ, եզրափակիչ ատեստավորումներ):

8. Ծրագրի դասընթացների լսարանային աշխատանքի ժամաքանակը սահմանվում է առկա ուսուցման ձևի լսարանային ժամերի 3/8-ի (37,5%) չափով[13], իսկ մնացածը նախատեսված է ինքնուրույն աշխատանքի համար: Այսպես, եթե որևէ դասընթացի ուսումնական պլանով հատկացված է 2 (4) կամ 3 (6) կրեդիտ աշխատածավալ, որի ժամային համարժեքը կազմում է 60 (120) կամ 90 (180) ժամ, ապա դասընթացին հատկացվող լսարանային աշխատանքի ժամաքանակը կկազմի 12 (24) կամ 18 (36) ժամ, իսկ ինքնուրույն աշխատանքինը՝ 48 (96) կամ 72 (144) ժամ: Ըստ այդմ՝ 4-շաբաթյա տեսական ուսուցման պայմաններում այդ դասընթացների շաբաթական լսարանային ժամերը կկազմեն համապատասխանաբար 3 (6) կամ 4,5 (9) ժամ:

9. Հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման ուսումնական պլանի ձևաթերթը ներկայացված է կից *հավելվածում* (երկու և ավելի մոդուլներից բաղկացած դասընթացները կամ կրթական այլ մոդուլները պլանում ներկայացվում են առանձին տողերով):

[13] *Լեզվական մասնագիտությունների մասնագիտական դասընթացների համար այն կարող է սահմանվել լսարանային ժամերի 1/2-ի (50,0%) չափով:*

## 1. *ԲԱԿԱԼԱՎՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ*

Բակալավրի կրթական ծրագիրը բաղկացած է հետևյալ կրթամասերից՝ ***ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական, հատուկ մասնագիտական դասընթացներ***, ինչպես նաև կրթական այլ մոդուլներից և եզրափակիչ ատեստավորումից: Առաջին երկուսը ծառայում են բակալավրի կրթական աստիճանի ընդհանուր հենքի ապահովմանը, երրորդ կրթամասը կազմում է բակալավրի ծրագրի բովանդակային էությունը, որն ապահովում է մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը, իսկ չորրորդը՝ ծրագրի մասնագիտացված ուսուցման մասն է:

### 2.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս

Ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍՏ) կրթամասի աշխատածավալը 36 կրեդիտ է: Այն ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ պարտադիր և կամընտրական: Դրանց առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը (լեզվական, հաղորդակցման և այլ ունակությունների զարգացմանը):

***ՀՍՏ պարտադիր դասընթացների*** ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կազմով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները՝

| *Մոդուլ-դասընթաց* | *Կրեդիտ* | *Լսարանային ժամ (դ/գ/լ)*[14] | *Կիսամյակ* |
|---|---|---|---|
| *Հայոց լեզու և գրականություն-1* | **2** | *12 (3/9/0)* | 1 |
| *Հայոց լեզու և գրականություն-2* | **2** | *12 (3/9/0)* | 2 |
| *Ռուսաց լեզու-1* | **4** | *24 (0/24/0)* | 1 |
| *Ռուսաց լեզու-2* | **4** | *24 (0/24/0)* | 2 |
| *Օտար լեզու-1*[15] | **4** | *24 (0/24/0)* | 1 |
| *Օտար լեզու-2* | **4** | *24 (0/24/0)* | 2 |
| *Լրացուցիչ լեզվական դասընթաց* | **4** | *24 (0/24/0)* | 3 |

[14] *Այսուհետև՝ դ – դասախոսություն, գ – գործնական կամ սեմինար պարապմունք, լ – լաբորատոր աշխատանք:*
[15] *Անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն:*

| | | | |
|---|---|---|---|
| *(Ռուսաց լեզու-3 կամ Օտար լեզու-3)* | | | |
| *Հայոց պատմության հիմնահարցեր-1* | **2** | *12 (9/3/0)* | 1 |
| *Հայոց պատմության հիմնահարցեր-2* | **2** | *12 (9/3/0)* | 2 |
| *Փիլիսոփայության հիմունքներ* | **4** | *24 (18/6/0)* | 3 կամ 4 |
| *Ֆիզդաստիարակություն*[16] | – | | 1,2,3,4 |

***ՀՍՏ կամընտրական դասընթացների*** ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ կրթական մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը՝

| ***Մոդուլ-դասընթաց*** | ***Կրեդիտ*** | ***Լսարանային ժամ (դ/գ/լ)*** | ***Կիսամյակ*** |
|---|---|---|---|
| *Տնտեսագիտություն* | **2** | *12 (12/0/0)* | 4 |
| *Քաղաքագիտություն* | | | |
| *Իրավագիտություն* | | | |
| *Աշակութաբանություն* | **2** | *12 (12/0/0)* | 3 |
| *Կրոնների պատմություն* | | | |

### *2.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս*

Ծրագրի *ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական* (ԸՄԲ) կրթամասի աշխատածավալը 10 կրեդիտ է: Այն նույնպես ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ *պարտադիր* և *կամընտրական*: Այս կրթամասի առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ մի շարք փոխանցելի կարողությունների ձևավորմանը:

***ԸՄԲ պարտադիր դասընթացների*** ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները՝

| ***Մոդուլ-դասընթաց*** | ***Կրեդիտ*** | ***Լսարանային ժամ*** | ***Կիսամյակ*** |
|---|---|---|---|

[16] *Իրականացվում է կամավոր՝ սպորտային կատարելագործման խմբակներում:*

| | | | |
|---|---|---|---|
| | | *(դ/գ/լ)* | |
| *Համակարգչից օգտվելու հմտություններ* | 2 | *12 (3/9/0)* | 1 կամ 2 |
| *Քաղաքացիական պաշտպանություն* | 2 | *12 (9/3/0)* | 5 կամ 6 |
| *Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն* | 2 | *12 (3/9/0)* | |
| *Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ* | 2 | *12 (12/0/0)* | 1 կամ 2 |

***ԸՄԲ կամընտրական դասընթացների*** ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը՝

| *Մոդուլ-դասընթաց* | *Կրեդիտ* | *Լսարանային ժամ (դ/գ/լ)* | *Կիսամյակ* |
|---|---|---|---|
| *Մաթեմատիկայի հիմունքներ* | 2 | *12 (12/0/0)* | 1 կամ 2 |
| *Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաները* | | | |

## *2.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս*

***Ընդհանուր մասնագիտական (ԸՄԴ) կրթամասի*** աշխատածավալը ծրագրում սահմանված է 170 կրեդիտ: Այն նպատակաուղղված է ընտրված մասնագիտությամբ պատրաստությունն իրականացնելու գործառույթի կատարմանը: Այս կրթամասի բովանդակության, դասընթացների կազմի և դրանց կրեդիտատարության որոշումը գտնվում է մասնագիտական պատրաստությունն իրականացնող ֆակուլտետների և ամբիոնների իրավասության շրջանակներում՝ ապահովելով բակալավրի կրթական մակարդակում տվյալ մասնագիտությամբ պահանջվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտության կրթական չափորոշիչների պահանջները, մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները, ինչպես նաև տվյալ մասնագիտությամբ միջազգային ծրագրային չափանիշները:

Ուսումնական ծրագրի այս կրթամասը պետք է ապահովի բակալավրի որակավորմանը ներկայացվող մի շարք համընդունելի պահանջների (օրինակ՝ որակավորումների համաեվրոպական հենքը) կատարումը, համաձայն որի բակալավրի որակավորում շնորհվում է անձանց, ովքեր՝

- դրսևորել են միջնակարգ կրթության հենքի վրա ձևավորված մասնագիտական գիտելիքների և իմացության այնպիսի մակարդակ, որը համապատասխանում է մասնագիտական կրթական չափորոշչին և ընդգրկում է ուսուցման իրենց բնագավառի արդիական գիտելիքներ,
- կարող են կիրառել իրենց գիտելիքները՝ աշխատանքում դրսևորելով մասնագիտական մոտեցում, իրենց մասնագիտական բնագավառում կարող են ձևակերպել և ներկայացնել հիմնավորված դատողություններ, լուծել խնդիրներ,
- ունեն իրենց մասնագիտական բնագավառում համապատասխան տվյալներ հավաքագրելու և մեկնաբանելու ունակություններ, ներկայացնելու եզրահանգումներ՝ կապված համապատասխան սոցիալական, գիտական կամ բարոյական խնդիրների հետ,
- կարող են հաղորդակցվել մասնագիտական տեղեկատվության, գաղափարների, խնդիրների և լուծումների շուրջ ինչպես մասնագետների, այնպես էլ ոչ մասնագետների հետ,
- զարգացրել են սովորելու ունակությունները, որոնք անհրաժեշտ են ինքնուրույնության բարձր աստիճանով իրենց հետագա ուսուցումը շարունակելու համար:

Այս պահանջները չեն վերաբերում մասնագիտական որևէ կոնկրետ ոլորտի, այլ ունեն ընդհանուր ձևակերպումներ և բնութագրական են բարձրագույն կրթության առաջին՝ բակալավրի աստիճանի բոլոր կրթական ծրագրերի համար: Յուրաքանչյուր առանձին ծրագրի համար դրանք պետք է լրացվեն մասնագիտական տվյալ ասպարեզին (առարկայական ոլորտին) բնորոշ լրացուցիչ բնութագրիչներով, որոնք պետք է սահմանեն կոնկրետ մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ կազմը:

### *2.4. Հատուկ մասնագիտական պատրաստության կրթամաս*

***Հատուկ մասնագիտական (ՀՄԴ) կրթամասի*** առկայությունը ծրագրում պայմանավորված է ընտրված մասնագիտության այս կամ այն ոլորտի խնդիրներում մասնագիտացված պատրաստում իրականացնելու նպատակով, որի անհրաժեշտու-

թյունը կարող է առաջանալ՝ բխելով կոնկրետ կրթական ծրագրի առջև դրված նպատակներից և խնդիրներից: Այս կրթամասը, հետևաբար, լրացական դեր է կատարում ծրագրի նպատակների առումով և որոշակի մասնագիտացման անհրաժեշտության բացակայության պարագայում կարող է ծրագրում չառանձնացվել: Ծրագրում ներկայացված լինելու պարագայում ՀՄԴ կրթամասով նախատեսվող ուսումնական աշխատածավալը չպետք է գերազանցի 24 կրեդիտը: Այն դեպքում, երբ կոնկրետ կրթական ծրագիրը ՀՄԴ կրթամաս չի նախատեսում, ծրագրի ԸՄԴ հատվածում նախընտրելի է ընդգրկել մինչև 12 կրեդիտ աշխատածավալով կամընտրական դասընթացների փաթեթ:

* * *

Ծրագրի մասնագիտական հատվածում անհրաժեշտ է նախատեսել 2-ական կրեդիտ աշխատածավալով կուրսային 2 աշխատանքներ, որոնց արդյունքների ստուգումն իրականացվում է տարբերակված գնահատման եղանակով (թվանշանով): Մասնագիտական կրթամասի (ԸՄԴ և ՀՄԴ) մոդուլ-դասընթացների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 35-ը:

### *2.5. Կրթական այլ մոդուլներ և եզրափակիչ ատեստավորում*

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները և ատեստավորման ձևերը՝

| *Մոդուլ* | *Կրեդիտ* | *Կիսամյակ* |
|---|---|---|
| *Պրակտիկա*[17] | **4** | 7-9 |
| *Պետական մասնագիտական քննություն* | **4** | 10 |
| *Ավարտական աշխատանք* | **12** | 10 |

Հարկ է նշել, որ ի տարբերություն ավանդական ուսումնական պլանների՝ կրթական այս բաղադրիչների աշխատածավալները հաշվարկվում են ծրագրի ընդհանուր աշխատածավալում:

[17] *Ուսումնական ծրագիրը պետք է պարունակի 4-շաբաթյա պրակտիկայի առնվազն 1 մոդուլ, որի աշխատածավալը գնահատվում է 4 կրեդիտ: Ծրագիրը կարող է նախատեսել նաև պրակտիկայի այլ ձևեր, որոնց իրականացման կիսամյակը և կրեդիտատարությունը (շաբաթները) որոշում է մասնագիտացնող ֆակուլտետը՝ ելնելով 1 շաբաթ = 1 կրեդիտ համամասնությունից:*

## 2. ԾՐԱԳՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ԵՊՀ հեռակա ուսուցման ուսանողը պետք է ծրագրի կատարման արդյունքում հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, որի համար հաշվարկված հանրագումարային *միջին որակական գնահատականը (ՄՈԳ)* պետք է կազմի առնվազն 9,00:

3.2. Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորումն (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանքի պաշտպանություն) ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 9,00: Հակառակ պարագայում, որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև սահմանված նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ:

3.3. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն մինչև 36 կրեդիտ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ 4 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), 10 կրեդիտ՝ մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից (ներառյալ 2 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների ցանկից) և առնվազն 20 կրեդիտ՝ պրակտիկայից և եզրափակիչ ատեստավորման ձևերից:

3.4. Մնացած առնվազն 174 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ բակալավրի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից, և յուրաքանչյուր մասնագիտության համար տրվում է առանձին (ընդ որում, մինչև 24 կրեդիտ կարող է հատկացվել տվյալ մասնագիտության շրջանակներում որոշակի ուղղություններով մասնագիտացում իրականացնելու համար):

* * *

Հեռակա ուսուցման եղանակով բակալավրի կրթական ծրագրի կազմակերպման, ինչպես նաև ուսանողների գիտելիքների գնահատմանն առնչվող խնդիրները կարգավորվում են համապատասխան կարգով:

## 2.5. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «*ԵՊՀ-ում հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը*» մեթոդական փաստաթուղթը սահմանում է համապատասխան ծրագրի կառուցվածքը, բովանդակությունը, աշխատածավալներն ըստ կրթամասերի և ուսումնական աշխատանքի ձևերի, ծրագրի դասընթացների և կրթական ու հետազոտական այլ մոդուլների կազմն ու աշխատածավալները՝ արտահայտված ECTS կրեդիտներով, դրանց իրացման ժամկետները և այլն:
2. Մագիստրոսի պատրաստման ծրագիրը կառուցված է 2 հիմնական կառուցամասերից՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են նախանշված ուսումնական կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական կառուցամասերի կրեդիտներով արտահայտված ծավալների հետևյալ համամասնությամբ.

**Աղյուսակ 1. Մագիստրոսի ծրագրի ուսումնական և հետազոտական կառուցամասերի հարաբերակցությունը**

| Կիսամյակ | I | II | III | IV | V | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| Ուսումնական կառուցամաս, կրեդիտ | 18 | 18 | 18 | 18 | 0 | 72 |
| Հետազոտական կառուցամաս, կրեդիտ | 6 | 6 | 6 | 6 | 24 | 48 |
| **Ընդամենը, կրեդիտ** | **24** | **24** | **24** | **24** | **24** | **120** |

3. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման ծրագրի տևողությունը կազմում է 2,5 տարի (5 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողությունը, որից 3 շաբաթը հատկացվում է տեսական ուսուցման, 9-ը՝ ինքնուրույն աշխատանքի և կոնսուլտացիաների, իսկ 4-ը՝ քննաշրջանի համար: Առանձին դեպքերում, մասնագիտական առանձնահատ-

կություններից ելնելով, ֆակուլտետի խորհրդի որոշմամբ տեսական ուսուցման կազմակերպումը կարող է իրականացվել նաև 12-շաբաթյա ժամանակահատվածում:

4. Ծրագրի կառուցման հիմքում դրված է մագիստրոսի որակավորման աստիճանի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված 120 կրեդիտ ուսումնական աշխատածավալը, որը հեռակա ուսուցման ձևի մեկ կիսամյակի համար կազմում է 24 կրեդիտ: Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը, ինչպես և առկա ուսուցմամբ սովորող ուսանողի մոտ, կազմում է 1,5 կրեդիտ (24 կրեդիտ / 16 շաբաթ = 1,5) կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝ 1 կրեդիտ = 30 ժամ:
5. Ուսումնական կառուցամասի աշխատածավալը ծրագրի 120 կրեդիտ ընդհանուր ծավալում կազմում է 72 կրեդիտ, իսկ հետազոտական կառուցամասինը՝ 48 կրեդիտ: Ծրագիրը բաղկացած է 3 կամ 6 կրեդիտ աշխատածավալով մի շարք դասընթացներից և ուսումնական ու հետազոտական այլ մոդուլներից, ինչպես նաև 12 կրեդիտ ծավալով մագիստրոսական ատենախոսությունից:
6. Ծրագրի ուսումնական կառուցամասի դասընթացների լսարանային աշխատանքի ժամաքանակը սահմանվում է առկա ուսուցման ձևի լսարանային ժամերի 3/8-ի (37,5%) չափով, իսկ մնացածը նախատեսված է ինքնուրույն աշխատանքի համար: Օրինակ, եթե որևէ դասընթացի ուսումնական պլանով հատկացված է 3 (6) կրեդիտ աշխատածավալ, որի ժամային համարժեքը կազմում է 90 (180) ժամ, ապա դասընթացին հատկացվող լսարանային աշխատանքի ժամաքանակը կկազմի 12 (24) ժամ, իսկ ինքնուրույն աշխատանքինը՝ 78 (156) ժամ: Ըստ այդմ՝ 3-շաբաթյա տեսական ուսուցման պայմաններում այդ դասընթացների շաբաթական լսարանային ժամերը կկազմեն համապատասխանաբար 4 կամ 8 ժամ:
7. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման ուսումնական պլանի ձևաթերթը ներկայացված է կից *հավելվածում* (երկու և ավելի մոդուլներից բաղկացած դասընթացները կամ ուսումնական/հետազոտական մոդուլները պլանում ներկայացվում են առանձին տողերով):

## 2. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

### 2.1. Ուսումնական կառուցամաս

Ծրագրի ուսումնական կառուցամասը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ ***լրացական դասընթացներ***, ***ընդհանուր կրթամաս, մասնագիտական պարտադիր կրթամաս և կամընտրական դասընթացներ***: Առաջին երկուսը ծառայում են մագիստրոսի կրթական աստիճանի ընդհանուր հենքի ապահովմանը կամ համալրմանը, երրորդ

կրթամասը կազմում է մագիստրոսի ծրագրի բովանդակային էությունը, որն ապահովում է մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը, իսկ չորրորդը՝ ծրագրի անհատականացված ուսուցման մասն է:

2.1.1. ***Լրացական դասընթացների*** բաղադրիչն ուղղված է նախորդ կրթական աստիճանի պահանջներն անհրաժեշտության դեպքում լրացնելուն (մասնագիտության փոփոխության դեպքում կամ օտար լեզուների իմացության ոլորտում): Նկատի ունենալով մագիստրոնների՝ մասնագիտական և հետազոտական աշխատուժի միջազգային շուկայում ազատ տեղաշարժն ու պահանջվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, որպես պարտադիր լրացական դասընթաց՝ ծրագրում ընդգրկված է անգլերենը: Մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, գիտական ղեկավարի երաշխավորությամբ ուսանողի անհատական ուսումնական պլանում որպես լրացական դասընթաց կարող է ներառվել նաև օտար այլ լեզու: Բաղադրիչը յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրում նախատեսում է մինչև 3 լրացական դասընթացի առկայություն: Լրացական դասընթացները կրեդիտատար չեն:

2.1.2. ***Ընդհանուր կրթամասի*** աշխատածավալը 6 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ *Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում* և *Մասնագիտության արդիական խնդիրները*: Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, *մասնագիտական պարտադիր կրթամասին* հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

2.1.3. ***Մասնագիտական պարտադիր կրթամասն*** ընդգրկում է 8-ից մինչև 16՝ երեք կամ վեց կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթացներ: Կրթամասի ընդհանուր աշխատածավալը ծրագրում սահմանված է 48 կրեդիտ: Սա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները: Ուսումնական ծրագրի այս կրթամասը միտված է մագիստրոսի որակավորմանը ներկայացվող մի շարք համընդունելի պահանջների կատարմանը, համաձայն որի մագիստրոսի որակավորում շնորհվում է ուսանողներին, ովքեր՝

– ընդլայնել և խորացրել են բակալավրի աստիճանում ձեռք բերած գիտելիքներն ու իմացությունը, ինչը հիմք է հանդիսանում կամ հնարավո-

րություն է տալիս գաղափարների մշակման և/կամ կիրառման մեջ ինքնատիպության դրսևորման համար (սովորաբար հետազոտական համատեքստում),

- կարող են կիրառել իրենց գիտելիքներն ու խնդիրներ լուծելու ունակությունները նոր կամ անծանոթ միջավայրերում, ինչպես իրենց մասնագիտական, այնպես էլ հարակից և միջառարկայական բնագավառներում,
- ունակ են համադրելու գիտելիքները և լուծելու բարդ խնդիրներ, ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու՝ պահպանելով մասնագիտական էթիկայի և հասարակական պատասխանատվության նորմերը,
- կարող են մասնագետներին և ոչ մասնագետներին հստակ ներկայացնել իրենց դատողություններն ու եզրահանգումները՝ գիտականորեն փաստարկված և տրամաբանական հիմնավորումներով,
- կարող են արդյունավետ աշխատել մասնագիտական աշխատանքային կամ հետազոտական խմբի կազմում,
- ունեն սովորելու բավարար ունակություններ՝ ուսումն ինքնուրույնաբար շարունակելու համար:

Այս պահանջները չեն վերաբերում մասնագիտական որևէ կոնկրետ ոլորտի, այլ ունեն ընդհանուր ձևակերպումներ և բնութագրական են բարձրագույն կրթության երկրորդ՝ մագիստրոսի աստիճանի բոլոր կրթական ծրագրերի համար: Յուրաքանչյուր առանձին ծրագրի համար դրանք պետք է լրացվեն մասնագիտական տվյալ ասպարեզին (առարկայական ոլորտին) բնորոշ լրացուցիչ բնութագրիչներով, որոնք պետք է սահմանեն կոնկրետ մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ կազմը:

2.1.4. ***Կամընտրական դասընթացները*** մագիստրոսական ծրագրի դասընթացների ընտրացանկն է, որն ապահովում է մագիստրոսական ատենախոսության թեմայով և ուսանողի մասնագիտական նախասիրություններով պայմանավորված հատուկ գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Այս դասընթացների ընդհանուր աշխատածավալը ծրագրում սահմանափակված է 18 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջդիսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2÷4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատածավալը պետք է կազմի առնվազն 9 կերդիտ, իսկ

առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

### 2.2. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ *գիտական ղեկավարի սեմինար*, *գիտահետազոտական աշխատանք*, *գիտահետազոտական պրակտիկա*, *գիտամանկավարժական պրակտիկա* և *մագիստրոսական ատենախոսություն:*

2.2.1. ***Գիտական ղեկավարի սեմինարը*** գիտական ղեկավարի կողմից իր ղեկավարած ուսանողների հետ վարվող սեմինարների շարք է, որի ընթացքում ուսանողներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու ունակությունները: Կազմակերպվում է ուսումնառության բոլոր 5 կիսամյակներում, որոնցից յուրաքանչյուրում հատկացվում է 3 կրեդիտ:

2.2.2. ***Գիտահետազոտական աշխատանքի*** բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական ատենախոսության թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն նույնպես կազմակերպվում է ուսումնառության բոլոր 5 կիսամյակներում, որոնցից յուրաքանչյուրում կազմում է 3 կրեդիտ աշխատածավալ:

2.2.3. ***Գիտահետազոտական պրակտիկան*** կազմակերպվում է 5-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ (3 շաբաթ) աշխատածավալ:

2.2.4. ***Գիտամանկավարժական պրակտիկան*** կազմակերպվում է 5-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Նախատեսում է բակալավրիատում սեմիանարների և գործնական պարապմունքների անցկացում, կուրսային աշխատանքների գրախոսում: Այն ևս ունի 3 կրեդիտ (3 շաբաթ) աշխատածավալ:

2.2.5. ***Մագիստրոսական ատենախոսության*** կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 5-րդ կիսամյակում: Ատենախոսության կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 12 կրեդիտ աշխատածավալ:

### 2.3. Ծրագրի ավարտական պահանջները

2.3.1. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ԵՊՀ հեռակա ուսուցման ուսանողը ծրագրի կատարման արդյունքում պետք է հաջողությամբ

լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն, որի համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 10,00:

2.3.2. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն առնվազն 6 կրեդիտ՝ *ընդհանուր դասընթացների կրթամասից*, և 48 կրեդիտ՝ *հետազոտական կառուցամասից*:

2.3.3. Մնացած կրեդիտների (մինչև 66) բովանդակային կազմը սահմանվում է *մասնագիտական պարտադիր կրթամասով* և *կամընտրական դասընթացներով*՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ մագիստրոսի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման պայմանից, և յուրաքանչյուր մասնագիտության համար տրվում է առանձին (ընդ որում, մինչև 18 կրեդիտ հատկացվում է կամընտրական դասընթացների ձևով որոշակի ուղղությամբ անհատական ուսուցում իրականացնելու համար):

## 2.6. ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգը

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԳԽ – Գիտական խորհուրդ

ԵՊՀ – Երևանի պետական համալսարան

ԾԱՀ – Ծրագրի առաջարկի հայտ

ԾՀՓՓ – Ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթ

ԾՄԱԽ – Ծրագրի մշակման աշխատանքային խումբ

ՈԱԿ – ԵՊՀ Որակի ապահովման կենտրոն

ՈԱՄՀ – Գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողով

ՈՒԱԳ պրոռեկտոր – Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր

ՈՒՄՎ – Ուսումնամեթոդական վարչություն

ՈՒՍԽ – Ուսումնական ստորաբաժանման գիտական խորհուրդ (կամ ղեկավարության նիստ)

ՓՔՀ- Փորձաքննական հանձնաժողով

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգը (այսուհետ՝ կարգ) կանոնակարգում է ԵՊՀ-ում բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի հաստատման գործընթացը, որը բաղկացած է երեք առանձին փուլերից՝
   - ծրագրի մշակման արտոնում (նախնական հաստատում),
   - ծրագրի փաստաթղթային փաթեթի ստեղծում և ծրագրի առաջարկի փորձաքննություն,
   - փորձաքննության եզրակացությունների կատարում և ծրագրի հաստատում:
2. Կրթական ծրագրերի արտոնման, փորձաքննության և հաստատման գործընթացները ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման փուլում դրանց որակի ապահովման հիմնական մեխանիզմներից են:
3. Կարգը սահմանում է ԵՊՀ կրթական ծրագրերի արտոնման, փորձաքննության և հաստատման գործընթացների նպատակները և խնդիրները, դրանց ներկայացվող պահանջները, կիրառվող ընթացակարգերը, հիմնական դերակատարներին և համապատասխան ժամանակացույցերը:
4. Կարգում տրվում են նաև նոր կրթական ծրագրի ստեղծման հայտի ձևաթերթը և ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթի կազմը:
5. Նոր կրթական ծրագրերի ստեղծման առաջարկները ներկայացնում են ԵՊՀ ուսումնական ստորաբաժանումները (ֆակուլտետ, կենտրոն). բակալավրի ծրագրի համար՝ վերջինիս ակնկալվող մեկնարկից առնվազն 9 ամիս առաջ (դեկտեմբերի 15), իսկ մագիստրոսի ծրագրի համար՝ վերջինիս ակնկալվող մեկնարկից առնվազն 4,5 ամիս առաջ (դեկտեմբերի 15):
6. ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի արտոնման, փորձաքննության և հաստատման գործընթացների ժամանակացույցերը ներկայացված են հավելված 1-ում և հավելված 2-ում:
7. ԵՊՀ բոլոր նոր ստեղծվող բակալավրի կրթական ծրագրերը պետք է անցնեն հաստատման գործընթաց՝ սկսած 2015/16 ուստարվանից, իսկ մագիստրոսինը՝ 2014/15 ուստարվանից:

# 2. ԵՊՀ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՐՏՈՆՈՒՄԸ

## 2.1. Արտոնման նպատակը և խնդիրները

8. Կրթական ծրագրերի մշակման արտոնումը համալսարանի պաշտոնական համաձայնությունն է ուսումնական ստորաբաժանմանը (ֆակուլտետին, կենտրոնին)՝ սկսելու նոր կրթական ծրագրի մշակման գործընթացը՝ ներկայացված հայտի համաձայն:
9. Արտոնման գործընթացի նպատակն է գնահատել ներկայացված ծրագրի հայտի հիմնավորումը և դրա համապատասխանությունը ծրագրերի հաստատման ԵՊՀ պահանջներին/չափանիշներին:
10. Գործընթացի խնդիրներն են.
    - պարզել ծրագրի իրականացման նպատակահարմարությունը շուկայական վերլուծության միջոցով, հիմնավորել առաջարկվող ծրագրի սոցիալական պահանջարկը և պահանջարկվածությունը տեղական և միջազգային աշխատաշուկայում, ծրագրի մրցակցային առավելություններն ու թույլ կողմերը ՀՀ այլ բուհերում իրականացվող համանման ծրագրերի նկատմամբ (եթե այդպիսիք կան),
    - հիմնավորել, որ առաջարկվող ծրագիրը նպատակահարմար է իրականացնել ԵՊՀ տվյալ ուսումնական ստորաբաժանումում, վերլուծել առաջարկության իրագործելիությունը ծրագրային թիմի՝ ծրագիրը մշակելու փորձագիտական կարողության տեսանկյունից,
    - տալ առաջարկվող ծրագրի ռեսուրսային ապահովվածության նախնական գնահատականը և բացահայտել լրացուցիչ ռեսուրսների անհրաժեշտությունը:
11. ԵՊՀ կրթական ծրագրերի արտոնման գործընթացը նկարագրող սխեման ներկայացված է հավելված 4–ում:

## 2.2. Ծրագրի ստեղծման առաջարկության հայտը

12. Նոր կրթական ծրագիր ստեղծելու առաջարկությունը ներկայացնում է համապատասխան ուսումնական ստորաբաժանումը (ֆակուլտետ, կենտրոն)՝ ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման պահանջներին և ծրագրի առաջարկի հայտի (ԾԱՀ) ձևաթերթին համապատասխան: Ծրագրի մշակման առաջարկությունն արտոնման է ներկայացվում ֆակուլտետի գիտական խորհրդի (կենտրոնի ղեկավարության նիստի) որոշմամբ:

13. Առաջարկության մշակման և հետագա իրականացման համար համապատասխան ստորաբաժանում(ներ)ը ձևավորում է (են) աշխատանքային խումբ, որը ձևակերպում է ծրագրի առաջարկի հայտն (ԾԱՀ) ըստ հավելված 3–ի:
14. Հայտի մշակման ընթացքում ձևակերպվում է առաջարկվող ծրագրի նպատակը (որակավորման պրոֆիլը), այսինքն՝ ծրագրի ուղղվածությունը և այն առանձնահատուկ նպատակները, որոնք պետք է ձեռք բերվեն դրա իրականացման արդյունքում: ԾԱՀ-ը հիմնավորում է նաև ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային ապահովվածությունը, տալիս պոտենցիալ աշխատաշուկայի նկարագրությունը:
15. Առաջարկության մշակման համար հիմք են հանդիսանում.
    - ստորաբաժանման (ֆակուլտետի, կենտրոնի) զարգացման ռազմավարական գերակայությունները,
    - պոտենցիալ աշխատաշուկայի և գործատուների պահանջարկի ու կարիքների վերլուծությունը, կոնկրետ պատվերով նպատակային ուսուցման հնարավորությունները,
    - առաջարկության տնտեսական նպատակահարմարության գնահատականը,
    - առաջարկվող ծրագրի մրցակցային դիրքը (առավելություններն ու թույլ կողմերը) ՀՀ այլ բուհերում իրականացվող համանման այլ ծրագրերի նկատմամբ (եթե այդպիսիք կան),
    - արտաքին՝ ազգային և միջազգային ծրագրային կողմնորոշիչների (որակավորումների ազգային և եվրոպական շրջանակների) և կամ կրթական չափորոշիչների պահանջները տվյալ մասնագիտության համար,
    - ուսումնական ստորաբաժանումում ծրագրի իրականացման համար անհրաժեշտ դասախոսական, նյութական, տեղեկատվական և այլ ռեսուրսների առկայությունը,
    - համակարգչային ենթակառուցվածքի և ուսուցման տեխնիկական միջոցների առկայությունը:

## 2.3. Ծրագրի մշակման աշխատանքային խումբը

16. Նոր կրթական ծրագիր կազմելու համար ստեղծվում է ծրագրի մշակման աշխատանքային խումբ (ԾՄԱԽ), որի կազմում ընդգրկվում են փորձառու դասախոսներ ծրագրի մասնագիտական ոլորտից և այլ փորձագետներ, որոնց ներգրավումը խմբում նպատակահարմար է գտնում ուսումնական ստորաբաժանումը:

17. Միջմասնագիտական կրթական ծրագրերի ստեղծման դեպքում ստորաբաժանումներից մեկը վարչական պատասխանատվություն է ստանձնում ծրագրի մշակման և հետագա իրականացման համար: Այդ ստորաբաժանման ղեկավարը (ֆակուլտետի դեկանը, կենտրոնի տնօրենը), խորհրդակցելով ծրագրին մասնակցող մյուս ստորաբաժանումների ղեկավարների հետ, նշանակում է աշխատանքային խմբի ղեկավարին և անդամներին:

18. ԾՄԱԽ–ը պատասխանատու է ծրագրի առաջարկի հայտի (ԾԱՀ) ձևակերպման, ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթի (ԾՀՓՓ) ստեղծման և փորձաքննության եզրակացությունների կատարմանը հետամուտ լինելու համար:

19. Համալսարանի Որակի ապահովման կենտրոնը (ՈԱԿ) անհրաժեշտ խորհրդատվություն է տրամադրում ԾՄԱԽ-ին՝ ծրագրի արտոնման և հաստատման համար պահանջվող փաստաթղթերի ցանկի, դրանց բովանդակության և նախապատրաստման վերաբերյալ:

## 2.4. Ծրագրի արտոնման գործընթացը

20. Արտոնման գործընթացի առաջին քայլը ծրագրի առաջարկի հայտի (ԾԱՀ) ձևակերպումն է ԾՄԱԽ–ի կողմից: Հայտի ձևաթերթը՝ լրացման համապատասխան ցուցումներով, ներկայացված է հավելված 3-ում:

21. ԾԱՀ–ը սկզբնապես հաստատվում է ծրագիրն առաջարկող ուսումնական ստորաբաժանումում (ֆակուլտետի գիտական խորհրդում, կենտրոնի ղեկավարության նիստում), իսկ միջմասնագիտական ծրագրի դեպքում՝ ստանում մասնակից ստորաբաժանումների ղեկավարների համաձայնությունը և ներկայացվում ՈԱԿ: Վերջինս այն ներկայացնում է ուսումնական աշխատանքների գծով (ՈՒԱԳ) պրոռեկտորի արտոնմանը:

22. Երկու կամ ավելի ուսումնական ստորաբաժանումների առաջարկությունը միջմասնագիտական կրթական ծրագրի մշակման վերաբերյալ արտոնման է ներկայացվում ծրագրի մշակման համար վարչական պատասխանատվություն ստանձնած ուսումնական ստորաբաժանման գիտական խորհրդի որոշմամբ:

23. Առաջարկվող կրթական ծրագրի մշակումն արտոնելու վերաբերյալ եզրակացությունը տալիս է ՈՒԱԳ պրոռեկտորը: Եզրակացությունը արտոնման վերաբերյալ կարող է լինել դրական, դրական պայմանական (որոշակի թերությունների և բացթողումների վերացման պայմանով) և բացասական:

24. ԾՄԱԽ-ն ուսումնասիրում է արտոնման եզրակացությունը և միջոցներ ձեռնարկում այնտեղ նշված թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ:

25. ՌԻԱԳ պրոռեկտորի կողմից ԾԱՀ-ի արտոնումից հետո համապատասխան ուսումնական ստորաբաժանումը (ֆակուլտետը, կենտրոնը) և ՌԱԿ–ը կազմում են ծրագրի հաստատման հետագա գործընթացի ժամանակացույցը:

26. Արտոնված ԾԱՀ–երի պատճենները տրամադրվում են ուսումնամեթոդական վարչություն (ՈւՄՎ)՝ ԵՊՀ կրթական ծրագրերի հավաքապանակը պլանավորելու համար:

27. Նորաստեղծ ծրագիրն արտոնելու վերաբերյալ դրական որոշումը հիմք է հանդիսանում ԵՊՀ–ի կողմից տվյալ ծրագրի լիցենզավորման դիմելու, իսկ լիցենզիայի առկայության դեպքում՝ նաև տվյալ կրթական ծրագրով ընդունելության հայտ ներկայացնելու համար:

# 3. ԵՊՀ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

## 3.1. Փորձաքննության և հաստատման նպատակը և խնդիրները

28. Կրթական ծրագրերի փորձաքննության և հաստատման գործընթացների նպատակն է գնահատել ծրագրի մշակման որակը և ուսումնական ստորաբաժանման կարողությունը՝ այն իրականացնելու սահմանված կրթական չափորոշիչներին և/ կամ ծրագրային կողմնորոշիչներին համապատասխան:
29. Գործընթացի խնդիրներն են.
    - գնահատել մշակված ծրագրի նպատակների (որակավորման պրոֆիլի), կրթական վերջնարդյունքների և ուսումնական պլանի բովանդակության համապատասխանությունը՝ ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի և համապատասխան կրթական չափորոշչի պահանջներին,
    - հավաստիանալ, որ կրթական ծրագրերի մշակմանը, կառուցվածքին և բովանդակությանը վերաբերող ԵՊՀ պաշտոնական փաստաթղթերում սահմանված պահանջները պահպանված են,
    - հավանություն տալ ծրագրի բաղկացուցիչ դասընթացների (կրթական մոդուլների) կազմին և բովանդակությանը, հավաստիանալ, որ դրանց կրթական վերջնարդյունքները համապատասխանում են ծրագրի որակավորման բնութագրիչներին,
    - ստուգել, որ ծրագրի մշակման արտոնման վերաբերյալ եզրակացությունում նշված թերությունները հիմնականում վերացված են,
    - հավաստիանալ, որ առաջարկության հեղինակ ուսումնական ստորաբաժանումն (ստորաբաժանումները) ունակ է (են) իրականացնելու մշակված ծրագիրը՝ սահմանված կրթական չափորոշիչներին և մատուցման որակի պահանջներին համապատասխան,
    - գնահատել նորաստեղծ ծրագրի և դրա բաղկացուցիչ դասընթացների (կրթական մոդուլների) իրականացման ռեսուրսային բազայի և ուսումնական ենթակառուցվածքի համապատասխանությունը սահմանված նորմատիվային պահանջներին:
30. ԵՊՀ կրթական ծրագրերի փորձաքննության և հաստատման գործընթացները նկարագրող սխեման ներկայացված է հավելված 5-ում:

### 3.2. Ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթը

31. Կրթական ծրագրի հաստատման համար անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը (ԾՀՓՓ) ներառում է.

   - Ծրագրի մշակման արտոնման եզրակացությունը՝ համապատասխան դիտողություններով և բարելավման առաջարկություններով:
   - Ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)՝ ներառյալ ուսումնական պլանի քարտեզը: Ծրագրի մասնագիրը պարզաբանում է ծրագրի նպատակը, ակնկալվող կրթական վերջնարդյունքները, որոնք պետք է ձեռք բերի ուսանողը ծրագրի ավարտին, նկարագրում է ուսումնառության, դասավանդման և ուսանողների գնահատման օգտագործվող մեթոդները, ծրագրի շրջանավարտների ապագա կարիերայի և ուսումը շարունակելու հնարավորությունները և այլն: Այն հղումներ է պարունակում նաև համապատասխան առարկայական/ծրագրային կողմնորոշիչներին և/կամ չափորոշիչներին, որոնք օգտագործվել են ծրագրի մշակման ընթացքում: Ծրագրի մասնագիրը կազմըվում է ԵՊՀ միասնական ձևաթերթի[18] համաձայն :
   - Ծրագրի բաղկացուցիչ դասընթացների (ուսումնական մոդուլների) համառոտ նկարագրությունները և դրանց կրթական վերջնարդյունքները:
   - Արտաքին փորձաքննության եզրակացությունը և պոտենցիալ գործատուների կարծիքները (եթե այդպիսիք կան):

32. Առաջարկվող կրթական ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթը (ԾՀՓՓ) կազմում է ծրագրի մշակման աշխատանքային խումբը (ԾՄԱԽ):

### 3.3. Ծրագրի առաջարկի ներքին փորձաքննությունը

33. Համապատասխան ուսումնական ստորաբաժանումը և ՌԱԿ-ը պատասխանատու են ծրագրի փաստաթղթային փաթեթը փորձաքննական հանձնաժողովի (ՓՔՀ) կողմից դիտարկելու համար անհրաժեշտ նախապատրաստությունների ապահովման համար: Ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթը ՌԱԿ է ներկայացվում փորձաքննության նշանակված օրվանից

[18] Տե՛ս «ԵՊՀ Կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկ», ԵՊՀ, 2013 (բաժին II, կետ 13):

առնվազն 6 շաբաթ առաջ՝ բակալավրի, և 3 շաբաթ առաջ՝մագիստրոսի ծրագրերի դեպքում:

34. ՌԱԿ–ի կողմից համալսարանի ծրագրային պահանջներին փաստաթղթային փաթեթի համապատասխանությունը ստուգելուց հետո ստորաբաժանումը փորձաքննության նշանակված օրվանից ոչ ուշ՝ քան 4 (մագիստրոսի ծրագրի դեպքում՝ 2) շաբաթ առաջ վերջնական փաթեթի պահանջվող թվով օրինակներ (6՝ բակալավրի և 4՝ մագիստրոսի ծրագրերի համար) ներկայացնում է ՌԱԿ՝ ՓՔՀ անդամներին տրամադրելու համար: ՌԱԿ–ն ապահովում է, որպեսզի ԾՀՓՓ–ն և փորձաքննության իրականացմանը վերաբերող իրահանգչական ցուցումները փորձաքննության օրվանից առնվազն 3 (մագիստրոսի ծրագրի դեպքում՝ 1,5) շաբաթ առաջ բաժանվեն ՓՔՀ անդամներին:

35. Փորձաքննության կազմակերպման համար պատասխանատու է ԵՊՀ Որակի ապահովման կենտրոնը:

### 3.4. Ծրագրի փորձաքննական հանձնաժողովը

36. ՌԱԿ–ը պատասխանատու է ծրագրի փորձաքննական հանձնաժողովի (ՓՔՀ) ստեղծման համար, որը քննարկելու է նոր ծրագրի առաջարկը և ԵՊՀ Գիտական խորհրդի (ԳԽ) Որակի ապահովման մշտական հանձնաժողովին (ՌԱՄՀ) եզրակացություն է ներկայացնելու նոր մշակված ծրագրի վերաբերյալ:

37. Հանձնաժողովի կազմը որոշելիս հաշվի է առնվում ծրագրի բնույթը և նպատակները, մասնագիտական ոլորտը, ՓՔՀ անդամների համապատասխան փորձը և այլ առանձնահատուկ գործոններ, որոնք կարևոր են ծրագրի առաջարկը օբյեկտիվ և համակողմանի գնահատելու համար:

38. Բակալավրի կրթական ծրագրի փորձաքննության ՓՔՀ կազմը բաղկացած է 6, իսկ մագիստրոսինը՝ 5 անդամներից (ներառյալ նախագահը), որոնցից առնվազն երկուսը արտաքին փորձագետներ են, երկուսը՝ ԵՊՀ դասախոսական կազմի ներկայացուցիչներ ծրագրի մասնագիտական ոլորտից:

39. Եթե ծրագիրը նախատեսված է օտարերկրյա ուսանողների համար և իրականացվելու է օտար լեզվով, ապա հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկվի նաև միջազգային համագործակցության վարչության պետը:

40. ՓՔՀ նախագահի պարտականությունը կարող է կատարել ԵՊՀ պրոֆեսորադասախոսական և/կամ վարչական կազմի փորձառու անդամը (օրինակ՝ ֆակուլտետի դեկան, դեկանի տեղակալ, ամբիոնի վարիչ, փորձառու պրոֆեսոր կամ դոցենտ և այլն):

41. Փորձաքննության անաչառությունն ապահովելու նպատակով ՓՔՀ թե՛ ներքին և թե՛ արտաքին փորձագետները, ինչպես նաև նախագահը չպետք է անմիջական առնչություն ունենան առաջարկվող ծրագրի մշակման և հետագա իրականացման աշխատանքների հետ (օրինակ՝ չլինեն ԾՄԱԽ-ի կամ ծրագիրը սպասարկող դասախոսական կազմի անդամ):

42. Հանձնաժողովի քարտուղարը ՈԱԿ-ի ներկայացուցիչն է, որը հանձնաժողովի անդամ չէ:

43. ՓՔՀ կազմում ներգրավված արտաքին փորձագետները, ում փորձն ու փորձագիտական կարողությունները կարող են արժեքավոր լինել օբյեկտիվ փորձաքննություն իրականացնելու համար, պետք է լինեն ծրագրի մասնագիտական ոլորտից: Խորհուրդ է տրվում, որ արտաքին փորձագետներից մեկը լինի ակադեմիական (բուհական, գիտական) միջավայրից, իսկ մյուսն ունենա քննարկվող ծրագրի մասնագիտական ոլորտին առնչվող պրակտիկ աշխատանքի ժամանակակից փորձ:

44. Ցանկալի է նաև ՓՔՀ կազմում մասնագիտական տարբեր ընկերակցություններից և կազմակերպություններից, ինչպես նաև տվյալ մասնագիտական ոլորտը կարգավորող մարմիններից (օրինակ՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնից, նախարարություններից և այլ գերատեսչություններից) արտաքին փորձագետների ընդգրկումը՝ հետագայում ծրագրի լիցենզավորման և հավատարմագրման գործընթացները դյուրացնելու նպատակով:

45. ՓՔՀ կազմը համաձայնեցվում է ՈԱԿ-ի տնօրենի հետ և հրամանագրվում ՌԻԱԳ պրոռեկտորի կողմից: Հրամանում նշվում է նաև հանձնաժողովի աշխատանքի ժամկետները:

46. Փորձաքննության նշանակված օրը ՓՔՀ-ն հանդիպում է ԾՄԱԽ-ին՝ դիտարկվող ծրագրի քննարկման և գնահատման համար: Միջոցառումը սովորաբար տևում է մեկ լրիվ աշխատանքային օր, որի արդյունքում ՓՔՀ-ն ծրագրի մշակման որակի վերաբերյալ եզրակացություն է ներկայացնում ԵՊՀ ԳԽ ՈԱՄՀ-ին: ՓՔՀ-ն բացահայտում է նաև կրթական ծրագրերի մշակման հաջողված փորձի օրինակները՝ դրանք համալսարանում տարածելու նպատակով:

### 3.5. Փորձաքննության զեկույցը

47. Փորձաքննության արդյունքը ՓՔՀ-ի կողմից կազմված զեկույցն է, որն իրենից ներկայացնում է փորձաքննության եզրակացությունների ցանկ: Եզրակացությունները կարող են ներառել ինչպես պահանջներ, որոնք ԾՄԱԽ–ը պետք է

պարտադիր կատարի մինչև ծրագրի հաստատումը, այնպես էլ առաջարկություններ, որոնք ենթակա են կատարման ԾՄԱԽ–ի և շահագրգիռ ուսումնական ստորաբաժանումների կողմից՝ մինչ ծրագրի պաշտոնական մեկնարկը: ՓՔՀ նախագահը և բոլոր անդամները ստորագրում են զեկույցի վերջնական տարբերակը:

48. ՓՔՀ-ն պետք է խուսափի ծրագրի ռեսուրսային ապահովվածության հետ կապված հարցերն իր զեկույցում որպես պահանջ ներկայացնելուց, քանի որ այդ պահանջի կատարումը դուրս է ԾՄԱԽ–ի լիազորությունների տիրույթից: ՓՔՀ-ն պետք է հաշվի առնի, որ ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը հիմնականում գնահատվում և հավաստվում է ծրագրի արտոնման փուլում: Այնուամենայնիվ, փորձաքննության ընթացքում այդ հարցերը կարող են քննարկվել՝ հավաստիանալու համար, որ ԾԱՀ-ում բացահայտված ռեսուրսային պահանջները լիովին բավարարված են կամ կան հիմքեր, որ դրանք կբավարարվեն մինչև ծրագրի մեկնարկը:

### 3.6. Փորձաքննության եզրակացությունների կատարումը և ծրագրի հաստատումը

49. ԾՄԱԽ–ը պարտավոր է 10 օրվա (մագիստրոսի ծրագրի պարագայում՝ 5 օրվա) ընթացքում պատասխան զեկույց պատրաստել՝ ՓՔՀ զեկույցի եզրակացություններում նշված պահանջների և առաջարկությունների վերաբերյալ և այն ներկայացնել ՌԱԿ: Վերջինս ուսումնասիրում է զեկույցը և ներկայացնում ՓՔՀ նախագահին ծանոթանալու համար:

50. Համալսարանի ԳԽ ՌԱՄՀ-ը դիտարկում է ՓՔՀ զեկույցի եզրակացությունները և ԾՄԱԽ-ի պատասխան զեկույցը: Եթե ՌԱՄՀ-ը գտնում է, որ ՓՔՀ պահանջները և առաջարկությունները բավարարված են կամ կան բավարար հիմքեր, որ դրանք կկատարվեն մինչև ծրագրի պաշտոնական մեկնարկը, ապա ծրագիրը երաշխավորվում է ԵՊՀ ԳԽ հաստատմանը:

51. Հաստատվելու դեպքում ԾՀՓՓ-ի մեկական օրինակ 1 շաբաթվա ընթացքում ներկայացվում է ՌԱԿ և ՌԻՄՎ:

52. Յուրաքանչյուր ուստարվա ավարտին (հունիս) ՌԱԿ-ը ՌԱՄՀ–ի հետ համատեղ կազմում են համալսարանի նորաբաց կրթական ծրագրերի հաստատման գործընթացի արդյունքների տարեկան ամփոփիչ զեկույցը, որը ներառում է նաև ՓՔՀ–երի կողմից բացահայտված օրինակելի փորձը և ընդհանրացնում այն՝ համալսարանում տարածելու նպատակով:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ[19]

| | |
|---|---|
| 15 դեկտեմբեր[20] | Ծրագրի հայտի ներկայացման համար ուսումնական ստորաբաժանման գիտական խորհրդի (ՈՒՍԳԽ) կամ ղեկավարության նիստի որոշում |
| 10 հունվար | Ծրագրի մշակման աշխատանքային խմբի (ԾՄԱԽ) ստեղծում |
| 10 փետրվար | Ծրագրի առաջարկի հայտի (ԾԱՀ) ձևակերպում և համաձայնեցում ՈԱԿ-ի հետ |
| 20 փետրվար | Հայտի հաստատում ՈՒՍԳԽ կողմից և ներկայացում ՈԱԿ |
| **01 մարտ** | ԾԱՀ-Ի ԱՐՏՈՆՈՒՄ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ԿԱԶՄՈՒՄ |
| 10 ապրիլ | Ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթի (ԾՀՓՓ), ներառյալ ծրագրի մասնագրի պատրաստում |
| 20 ապրիլ | ԾՀՓՓ-ի նախնական ստուգում ՈԱԿ-ի կողմից |
| 05 մայիս | Վերջնական ԾՀՓՓ-ի ներկայացում ՈԱԿ |
| 10 մայիս | ԾՀՓՓ բաժանում փորձաքննական հանձնաժողովի (ՓՔՀ) անդամներին |
| **05 հունիս** | ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ |
| 20 հունիս | Փորձաքննության եզրակացությունները (պահանջները, առաջարկությունները) ՈԱԿ-ը տրամադրում է ԾՄԱԽ–ին՝ պատասխան զեկույց կազմելու համար |

[19] Ներկայացված ժամանակացույցերը կողմնորոշիչ բնույթ են կրում և առանձնահատուկ դեպքերում կարող են արագացվել, օրինակ՝ աշխատաշուկայի կարիքներին արագ արձագանքելու նպատակով:

[20] Նշված է համապատասխան գործընթացի ավարտի վերջնաժամկետը:

| | |
|---|---|
| 01 հուլիս | ԾՄԱԽ–ը փորձաքննության եզրակացությունների պատասխան զեկույցը ներկայացնում է ՈԱԿ |
| 25 օգոստոս | Պատասխան զեկույցը ուսումնասիրվում է ՓՔՀ նախագահի կողմից |
| 01 սեպտեմբեր | ՓՔՀ զեկույցը և ԾՄԱԽ պատասխան զեկույցը ներկայացվում է Գիտական խորհրդի (ԳԽ) որակի ապահովման մշտական հանձնաժողովին (ՈԱՄՀ)՝ եզրակացության համար |
| 05 սեպտեմբեր | ՈԱՄՀ-ը դիտարկում է ՓՔՀ եզրակացությունները, ԾՄԱԽ պատասխան զեկույցը և ԵՊՀ ԳԽ-ին ներկայացնում եզրակացություն ծրագրի հաստատման/մերժման վերաբերյալ |
| **15 սեպտեմբեր** | **ԵՊՀ ԳԽ–Ը ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ՆՈՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ** |

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

| | |
|---|---|
| 15 դեկտեմբեր[21] | Ծրագրի հայտի ներկայացման համար ուսումնական ստորաբաժանման գիտական խորհրդի (ՈՒՍԳԽ) կամ ղեկավարության նիստի որոշում |
| 20 դեկտեմբեր | Ծրագրի մշակման աշխատանքային խմբի (ԾՄԱԽ) ստեղծում |
| 20 հունվար | Ծրագրի առաջարկի հայտի (ԾԱՀ) ձևակերպում և համաձայնեցում ՈԱԿ-ի հետ |
| 27 հունվար | Հայտի հաստատում ՈՒՍԳԽ կողմից և ներկայացում ՈԱԿ |
| **10 փետրվար** | **ԾԱՀ-Ի ԱՐՏՈՆՈՒՄ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ԿԱԶՄՈՒՄ** |
| 01 մարտ | Ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթի (ԾՀՓՓ), ներառյալ ծրագրի մասնագրի պատրաստում |
| 10 մարտ | ԾՀՓՓ-ի նախնական ստուգում ՈԱԿ-ի կողմից |
| 15 մարտ | Վերջնական ԾՀՓՓ-ի ներկայացում ՈԱԿ |
| 20 մարտ | ԾՀՓՓ բաժանում փորձաքննական հանձնաժողովի (ՓՔՀ) անդամներին |
| **01 ապրիլ** | **ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ** |
| 10 ապրիլ | Փորձաքննության եզրակացությունները (պահանջները, առաջարկությունները) ՈԱԿ-ը տրամադրում է ԾՄԱԽ–ին՝ պատասխան զեկույց կազմելու համար |

[21] Նշված է համապատասխան գործընթացի ավարտի վերջնաժամկետը։

| | |
|---|---|
| 15 ապրիլ | ԾՄԱԽ–ը փորձաքննության եզրակացությունների պատասխան զեկույցը ներկայացնում է ՈԱԿ |
| 20 ապրիլ | Պատասխան զեկույցը ուսումնասիրվում է ՓՔՀ նախագահի կողմից |
| 22 ապրիլ | ՓՔՀ զեկույցը և ԾՄԱԽ պատասխան զեկույցը ներկայացվում է Գիտական խորհրդի (ԳԽ) որակի ապահովման մշտական հանձնաժողովին (ՈԱՄՀ)՝ եզրակացության համար |
| 25 ապրիլ | ՈԱՄՀ-ը դիտարկում է ՓՔՀ եզրակացությունները, ԾՄԱԽ պատասխան զեկույցը և ԵՊՀ ԳԽ-ին ներկայացնում եզրակացություն ծրագրի հաստատման/մերժման վերաբերյալ |
| **01 մայիս** | **ԵՊՀ ԳԽ–Ը ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ՆՈՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ** |

## <u>ՀԱՎԵԼՎԱԾ 3.</u> ՆՈՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅՏԻ ՁԵՎԱԹԵՐԹԸ

Ստորև ներկայացված է ԵՊՀ նոր կրթական ծրագրերի ստեղծման հայտի ձևաթերթը:

Ձևաթերթը լրացվում է ծրագրի մշակման աշխատանքային խմբի կողմից, հաստատվում ուսումնական ստորաբաժանման գիտական խորհրդում կամ ղեկավարության նիստում և ներկայացվում ՌԱԿ՝ հայտի գնահատման և ծրագրի հետագա մշակումն արտոնելու համար:

*Հաստատում եմ*

“______” _______________ 201___ թ.

**Ուսումնական աշխատանքների**

**գծով պրոռեկտոր**

_________________________________

**1. Ծրագրի ընդհանուր բնութագրերը**

Ֆակուլտետ ........................................................................................

Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը ....................................

..................................................................................................................................

Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս) ...........................

**2. Ընդունելության չափաքանակները**

Ընդունելության ակնկալվող չափաքանակը 1-ին տարում ..................

Ընդունելության հեռանկարային չափաքանակը ...................................

**3. Նոր ծրագրի ներմուծման հիմնավորումը**

Ամփոփ ներկայացնել նոր կրթական ծրագրի ներմուծման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը: Պարզաբանել նաև, թե ծրագրի ներմուծումը որքանով կնպաս-

տի ԵՊՀ և/կամ ուսումնական ստորաբաժանման առաքելության և հիմնական նպատակների իրականացմանը:

**4. Աշխատաշուկայի վերլուծություն**

Ներկայացնել տվյալներ (պոտենցիալ գործատուների, մասնագետների ու շահագրգիռ կառույցների կարծիքներ, վիճակագրական և այլ առկա նյութեր) առաջարկվող կրթական ծրագրի ուղղությամբ աշխատաշուկայի պահանջարկի վերաբերյալ:

**5. Ծրագրի մրցակցային դիրքը**

Ներկայացնել ամփոփ տվյալներ ՀՀ այլ բուհերում իրականացվող համանման կրթական ծրագրերի վերաբերյալ և գնահատել առաջարկվող ծրագրի մրցակցային առավելությունները և թույլ կողմերը: Հիմնավորել ԵՊՀ տվյալ ուսումնական ստորաբաժանումում ծրագրի իրականացման նպատակահարմարությունը: Թվարկել ազգային և/կամ միջազգային ծրագրային կողմնորոշիչների և չափորոշիչների պահանջները տվյալ մասնագիտության համար:

**6. Ծրագրի նպատակները և կրթական վերջնարդյունքները**

Թվարկել ներմուծվող կրթական ծրագրի հիմնական նպատակները և այն ակնկալվող կրթական վերջնարդյունքները (գիտելիք, կարողություն և հմտություններ), որոնք ձեռք կբերեն ուսանողները ծրագրի ավարտին[22]:

**7. Ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը**

Ներկայացնել կրթական ծրագրի հիմնական ուսումնական մոդուլները/դասընթացները և դրանց հատկացված կրեդիտները, մոդուլների/դասընթացների բաշխումն ըստ կիսամյակների և այլն: Ներկայացնել ուսումնական պլանի նախագիծը:

**8. Ծրագրի առանձնահատկությունները**

Նշել կրթական ծրագրի առանձնահատկությունները, դասավանդման և ուսումնառության նորարարական եղանակները կամ միջոցները, որոնք կարևոր են տվյալ ծրագրի նպատակների հաջող իրականացման համար:

**9. Պրակտիկան**

Նշել ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաների անցկացման ձևերը և տևողությունը, ինչպես նաև այն ձեռնարկությունները և կազմակերպությունները, որտեղ հնարավոր է կամ նպատակահարմար դրանց անցկացումը:

**10. Շրջանավարտների աշխատանքի հնարավորությունները**

Ներկայացնել ծրագրի շրջանավարտների հնարավոր աշխատատեղերի և կարիերայի հնարավորությունները: Եթե ծրագիրը նախատեսված է բավարարելու տեղական կամ միջազգային գործատուների (ձեռնարկությունների, կազմակերպությունների, պետական

---

[22] Տե՛ս «ԵՊՀ Կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկ», ԵՊՀ, 2013 (բաժին I, կետ 2 և 3):

մարմինների) կոնկրետ պատվերները, այսինքն՝ ներմուծվում է նպատակային ձևով, ապա այն հավաստել համապատասխան փաստաթղթերով:

**11. Դասախոսական կազմը**

Հավաստել, որ առաջարկվող ծրագրի իրականացման համար ուսումնական ստորաբաժանումում առկա է անհրաժեշտ որակավորումով և թվակազմով դասախոսական անձնակազմ: Ներկայացնել այն դասախոսների տվյալները (ԵՊՀ-ում սահմանված ձևաչափի CV-ները), որոնք պետք է սպասարկեն այդ ծրագիրը:

**12. Դասախոսների վերապատրաստման կարիքները**

Բացահայտել առաջարկվող ծրագրի իրականացման համար անհրաժեշտ դասախոսների վերապատրաստման կարիքները և հնարավորությունները (օրինակ՝ նոր դասընթացների, ուսուցման արդի ձևերի ու տեխնոլոգիաների, ժամանակակից սարքավորումների և տեխնիկական միջոցների յուրացման համար):

**13. Ուսումնական տարածքներ և լաբորատոր սարքավորումներ**

Հիմնավորել, որ ծրագրի իրականացման համար ուսումնական ստորաբաժանումում առկա են անհրաժեշտ ուսումնական և օժանդակ տարածքներ, լաբորատոր և գիտակրթական անհրաժեշտ սարքավորումներ կամ՝ դրանք կարող են հատկացվել մինչև ծրագրի պաշտոնական մեկնարկը:

**14. Համակարգչային և ուսուցման տեխնիկական միջոցներ**

Նկարագրել ստորաբաժանումում առկա համակարգչային բազան և դասավանդման առաջարկվող տեխնիկական միջոցները, որոնք անհրաժեշտ են ծրագրի իրականացման համար: Նշել, թե տեխնիկական ինչպիսի լրացուցիչ (ներառյալ համակարգչային) միջոցներ կպահանջվեն առաջարկվող ծրագրի իրականացման համար և դրանք ինչպես պետք է ձեռք բերվեն:

**15. Գրադարանային և տեղեկատվական այլ աղբյուրներ**

Նշել, թե մասնագիտական ինչպիսի գրականություն, ուսումնամեթոդական ու տեղեկատվական նյութեր (տպագիր կամ էլեկտրոնային) են առկա ԵՊՀ գրադարանում և ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանումում և ինչ նոր նյութեր ձեռք բերելու կամ մշակելու անհրաժեշտություն կա:

Ծրագրի մշակման աշխատանքային խմբի ղեկավար՝ ..........................................

Անդամներ՝

……………………………….………..

……………………………….………..

……………………………….………..

……………………………….………..

……………………………….………..

……………………………….………..

……………………………..………..

Ծրագրի մշակման հայտը քննարկվել և հավանության է արժանացել ֆակուլտետի գիտական խորհրդի կամ կենտրոնի ղեկավարության նիստի կողմից (որոշում թիվ…... , ամսաթիվ)։

Ֆակուլտետի դեկան/կենտրոնի տնօրեն .....................................

ԵՊՀ ՌԱԿ-ի եզրակացությունը ծրագրի մշակումն արտոնելու վերաբերյալ
…………………………………………………………………………………………………………
…………………………………………………………………………………………………………
…………………………………………………………………………………………………………
………………………………………………………………………………………...

ՌԱԿ տնօրեն՝ …………………………………

# <u>ՀԱՎԵԼՎԱԾ 4.</u> ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐՏՈՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ



## ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ



## 2.7. ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԳԽ – Գիտական խորհուրդ

ԵՊՀ – Երևանի պետական համալսարան

ՄԹԽ – Մոնիթորինգի խումբ

ՄԹՀ – Մոնիթորինգի հաշվետվություն

ՈԱԿ – ԵՊՀ Որակի ապահովման կենտրոն

ՈԱՄՀ – ԵՊՀ Գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողով

ՈՒԱԳ պրոռեկտոր – Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր

ՖՈԱՀ – Ֆակուլտետի գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողով

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը (այսուհետ՝ կարգ) ԵՊՀ-ում կանոնակարգում է բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման գործընթացները:
2. Կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացները ԵՊՀ կրթական ծրագրերի իրականացման փուլում դրանց որակի ապահովման և շարունակական բարելավման հիմնական մեխանիզմներից են:
3. Կարգը սահմանում է ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման գործընթացների նպատակները և խնդիրները, այդ գործընթացներին ներկայացվող հիմնական պահանջները, կիրառվող ընթացակարգերը, հիմնական դերակատարներին և համապատասխան ժամանակացույցերը:
4. Կարգում տրվում են նաև կրթական ծրագրի ընթացիկ մոնիթորինգի հաշվետվության ձևաթերթը՝ ծրագրի կատարողականի առանցքային ցուցանիշների կազմով, ինչպես նաև ծրագրի պարբերական վերանայման համար պահանջվող փաստաթղթային փաթեթի կազմը:
5. Ծրագրերի ընթացիկ մոնիթորինգն իրականացնում են ԵՊՀ ուսումնական ստորաբաժանումները (ֆակուլտետ, կենտրոն)՝ երկամյա պարբերականությամբ, իսկ վերանայումը հանդիսանում է համաբուհական գործընթաց, որի իրականացման պարբերականությունը որոշվում է սույն կարգով՝ ելնելով ծրագրի կրթական մակարդակից (բակալավրի/մագիստրոսի), բնույթից (ակադեմիական/կիրառական) և մասնագիտական ոլորտից:
6. ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) հաշվետվության ձևաթերթը ներկայացված է հավելված 1-ում, ընթացակարգի սխեման՝ հավելված 2-ում, իսկ ժամանակացույցը՝ հավելված 3-ում:
7. ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը պետք է ենթարկվեն երկամյա մոնիթորինգի և պարբերական վերանայման՝ սկսած 2014/15 ուստարվանից:

# 2. ԵՊՀ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

## 2.1. Մոնիթորինգի (մշտադիտարկման) նպատակը և խնդիրները

8. Կրթական ծրագրերի կանոնավոր մոնիթորինգը որակի ապահովման ներբուհական գործընթաց է, որի նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման որա-

կը և համապատասխանությունը ծրագրի սահմանված նպատակներին ու համապատասխան կրթական չափորոշչի պահանջներին: Մոնիթորինգի վերջնարդյունքը ծրագրի որակի բարելավմանն (բարձրացմանը) ուղղված միջոցառումների պլանի կազմումն ու իրականացումն է:

9. Մոնիթորինգի խնդիրներն են.
   - գնահատել ծրագրի և նրա բաղկացուցիչ դասընթացների սահմանած նպատակների և ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման ընթացքը և մակարդակը,
   - գնահատել դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման գործընթացների արդյունավետությունը, ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների համապատասխանությունը ծրագրի պահանջներին և դրանց արդիականությունը, բացահայտել ծրագրի ռեսուրսային կարիքները,
   - բացահայտել և վեր հանել ծրագրի թերություններն ու իրականացման դժվարությունները և անհրաժեշտ ճշգրտումներ առաջարկել ծրագրում և դասընթացներում,
   - վերլուծել ծրագրի հիմնական քանակական բնութագրերը (ընդունելություն, համակազմ, հեռացումներ, առաջադիմություն, ուսանողների բավարարվածություն, շրջանավարտների զբաղվածություն և այլն) և բացահայտել որակի անկման միտումները, եթե այդպիսիք կան,
   - գնահատել կրթական ծրագրի որակի բարելավման/բարձրացման նախորդ ուստարվա պլանի կատարողականը,
   - բացահայտել ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, մշակել (լրամշակել) ծրագրի որակի բարելավմանն (բարձրացմանը) ուղղված միջոցառումների և գործողությունների նոր պլան և ապահովել վերջինիս կատարումը:

10. ԵՊՀ–ում կրթական ծրագրերի մոնիթորինգի ընդհանուր գործընթացն իրականացվում է երկու մակարդակներով (փուլերով)՝ ուսումնական ստորաբաժանման (ֆակուլտետ, կենտրոն) և համալսարանական: Մոնիթորինգն ընդգրկում է համալսարանի բակալավրի և մագիստրոսի բոլոր կրթական ծրագրերը:

## 2.2. Մոնիթորինգի ընթացակարգը

11. Կրթական ծրագրի մոնիթորինգի գործընթացը նախաձեռնում և իրականացնում է համապատասխան ուսումնական ստորաբաժանումը (ֆակուլտետ, կենտրոն)՝

երկամյա պարբերականությամբ, մոնիթորինգի անցկացման ժամանակացույցին համապատասխան (հավելված 3):

12. Ուսումնական ստորաբաժանման ղեկավարը (ֆակուլտետի դեկան, կենտրոնի տնօրեն) մոնիթորինգի գործընթացն իրականացնելու նպատակով յուրաքանչյուր կրթական ծրագրի կամ ծրագրերի խմբի համար ձևավորում է մոնիթորինգի խումբ (ՄԹԽ):
13. Մոնիթորինգի խումբը բաղկացած է 4 անդամներից: Խմբի ղեկավարը նշանակվում է տվյալ կրթական ծրագրի իրականացման համար առանցքային դերակատարություն ունեցող ամբիոնների վարիչների կազմից (կենտրոնի դեպքում՝ տնօրենը), իսկ անդամներն ընտրվում են այդ ամբիոնների դասախոսական կազմերից՝ խմբի ղեկավարի առաջարկությամբ: Ցանկալի է մոնիթորինգի խմբում մեկ արտաքին անդամի ընդգրկումը, որը ներգրավված է տվյալ ծրագրի իրականացման գործընթացում:
14. Մոնիթորինգի խումբն առաջնորդվում է կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի սույն ընթացակարգով և հաստատված ժամանակացույցով:
15. Գործընթացն սկսվում է նախորդ մոնիթորինգից հետո ծրագրի իրականացման արդյունքում ստացված կատարողականի ցուցանիշների հավաքմամբ և վերլուծությամբ:
16. Մոնիթորինգի արդյունքների հիման վրա, ըստ սահմանված հաշվետվության ձևաթերթի (տե'ս հավելված 1), մոնիթորինգի խումբը կազմում է մոնիթորինգի հաշվետվությունը:
17. Մոնիթորինգի հաշվետվությունը պարունակում է ծրագրի նախորդ երկու ուստարիների կատարողականի ցուցանիշները՝ ներառյալ ծրագրում ընդգրկված ուսանողների և ծրագրի շրջանավարտների հարցումների արդյունքները, ինչպես նաև ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների (փոփոխությունների) պլանի նախագիծը հաջորդ երկու տարիների համար:
18. Մոնիթորինգի խմբի ղեկավարը մոնիթորինգի հաշվետվությունը և կից փաստաթղթերը ներկայացնում է ֆակուլտետի գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի (ՖՈԱՀ) դիտարկմանը, որը համապատասխան եզրակացությամբ դրանք ներկայացնում է ֆակուլտետի դեկանին: Ուսումնական կենտրոնի պարագայում՝ մոնիթորինգի հաշվետվությունը անմիջականորեն ներկայացվում է կենտրոնի տնօրենին:
19. Ուսումնական ստորաբաժանման ղեկավարը (ֆակուլտետի դեկանը, կենտրոնի տնօրենը), հիմնվելով ներկայացված մոնիթորինգի առանձին հաշվետվությունների արդյունքների վրա, կազմում է իր ստորաբաժանման բոլոր կրթական ծրագրերի մոնիթորինգի ամփոփիչ հաշվետվությունը և ներկայացնում այն ֆակուլտետի գիտական խորհրդի կամ կենտրոնի ղեկավարության նիստի քննարկմանը:

20. Ֆակուլտետի գիտական խորհուրդը կամ կենտրոնի ղեկավարության նիստը քննարկում է տարեկան մոնիթորինգի ամփոփիչ հաշվետվությունը և ընդունում համապատասխան որոշում: Որոշումը պետք է ներառի՝
    - նախորդ մոնիթորինգի արդյունքում կազմված՝ կրթական ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագրի կատարողականը,
    - հաջորդ երկու ուստարիների ընթացքում ծրագրի բարելավմանն ուղղված նոր միջոցառումների ծրագիրը, որը պետք է կատարվի ֆակուլտետի, կենտրոնի և ամբիոնի մակարդակներում,
    - ԵՊՀ կենտրոնական վարչակազմին հասցեագրվող հիմնախնդիրները,
    - կրթական ծրագրի մոնիթորինգի ընդհանուր գնահատականը:
21. Ուսումնական ստորաբաժանման ղեկավարը (ֆակուլտետի դեկան, կենտրոնի տնօրեն) ստորաբաժանման կրթական ծրագրերի մոնիթորինգի հաշվետվությունը ֆակուլտետի գիտական խորհրդի (ղեկավարության նիստի) կողմից ընդունված որոշման հետ միասին ներկայացնում է ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի (ՈԱԿ) դիտարկմանը:
22. ՈԱԿ-ն իրականացնում է ստորաբաժանումներից ստացված մոնիթորինգի հաշվետվությունների և կից փաստաթղթերի՝ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգումը: Անհամապատասխանության դեպքում դրանք վերադարձվում են ուսումնական ստորաբաժանմանը՝ վերանայման համար:
23. Ընդունված հաշվետվությունների վերլուծության արդյունքների հիման վրա ՈԱԿ-ը պատրաստում է համալսարանի կրթական ծրագրերի մոնիթորինգի ընդհանրացնող հաշվետվությունը և համապատասխան եզրակացություններով ներկայացնում ուսումնական աշխատանքների գծով (ՈՒԱԳ) պրոռեկտորին:
24. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, դիտարկելով ընդհանրացնող հաշվետվությունը, հղում է այն ԵՊՀ Գիտական խորհրդի (ԳԽ) Որակի ապահովման մշտական հանձնաժողովին (ՈԱՄՀ)՝ քննարկելու և համահավաք կարծիք ձևավորելու համար:
25. ՈԱՄՀ-ը քննարկում է ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի ընդհանրացնող հաշվետվությունը և կազմում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշման նախագիծ, որը ներառում է հետևյալ թիրախային հարցերը.
    - նախորդ շրջափուլի մոնիթորինգի արդյունքում ԵՊՀ կրթական ծրագրերի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կատարողականը,

– հաջորդ երկու ուստարիների ընթացքում ԵՊՀ ծրագրերի բարելավմանն ուղղված նոր միջոցառումների պլանը, որը պետք է իրականացնեն ուսումնական ստորաբաժանումները և ԵՊՀ կենտրոնական կառույցները,
– տարածման արժանի լավագույն/օրինակելի փորձը,
– ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի կազմակերպման և իրականացման ընդհանուր գնահատականը:

26. ԵՊՀ Գիտական խորհուրդը, հիմք ընդունելով ՈԱՄՀ-ի կողմից կազմված որոշման նախագիծը, քննարկումների արդյունքում ընդունում է համապատասխան որոշում, ինչը հիմք է հանդիսանում կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված միջոցառումների և փոփոխությունների իրականացման համար:
27. Մոնիթորինգի հատուկ ընթացակարգ է կիրառվում ռիսկային բնույթի կրթական ծրագրերի հետևյալ խմբերի համար.
   – նոր ներմուծված (իրականացման առաջին շրջափուլում գտնվող) ծրագրեր,
   – ծրագրեր, որոնք բացասական եզրակացություն են ստացել նախորդ մոնիթորինգի, պարբերական վերանայման կամ որակի արտաքին գնահատման/հավատարմագրման արդյունքներով,
   – ծրագրեր, որոնց վերաբերյալ ուսանողական հարցումները և շրջանավարտների բավարարվածության հարցումները արձանագրումեն կրկնվող ցածր գնահատականներ,
   – ընդունելության, ռեսուրսային ապահովվածության և/կամ ուսումնական առաջադիմության կրկնվող ցածր ցուցանիշներով ծրագրեր:
28. Ռիսկային համարվող ծրագրերի մոնիթորինգի գործընթացն իրականացվում է սույն ընթացակարգով՝ այն տարբերությամբ, որ այդ ծրագրերի մոնիթորինգը կատարվում է տարեկան պարբերականությամբ: Ընդ որում, ֆակուլտետի գիտական խորհրդի (կենտրոնի ղեկավարության նիստի) որոշման մեջ պետք է նախատեսվի առանձին կետ՝ ծրագրի շարունակման, վերանայման կամ դադարեցման առաջարկությամբ:
29. Ռիսկային բնույթի կրթական ծրագրերի մոնիթորինգի հաշվետվությունները ԵՊՀ Գիտական խորհուրդը քննարկում է յուրաքանչյուր տարի:
30. Ռիսկային համարվող կրթական ծրագրերի դեպքում ԵՊՀ Գիտական խորհուրդը, հիմնվելով ՈԱՄՀ-ի և ՈԱԿ-ի եզրակացությունների և կայացած քննարկման արդյունքների վրա, ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

– մոնիթորինգի արդյունքները համարել բավարար և շարունակել ծրագիրը՝ հաշվի առնելով մոնիթորինգի հաշվետվության քննարկումների արդյունքում ստացված դիտողություններն ու առաջարկությունները,

– մոնիթորինգի արդյունքները համարել թերի և հանձնարարել ուսումնական ստորաբաժանմանը (ֆակուլտետ, կենտրոն)՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել սահմանված ժամկետներում թերությունների վերացման կամ ծրագրի վերանայման համար:

– մոնիթորինգի արդյունքները համարել անբավարար և սկսել ծրագրի դադարեցման գործընթացը:

31. ԵՊՀ կրթական ծրագրերի երկամյա մոնիթորինգի (մշտադիտարկման) ընթացակարգի սխեման ներկայացված է հավելված 2-ում, իսկ համապատասխան ժամանակացույցը՝ հավելված 3-ում:

## 3. ԵՊՀ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

### 3.1. Պարբերական վերանայման նպատակը և խնդիրները

32. Կրթական ծրագրի պարբերական վերանայման նպատակն է գնահատել ծրագրի արդիականությունը (ծրագրի նպատակների համարժեքությունը աշխատաշուկայի ներկայիս պահանջմունքներին) և շարունակական հիմնավորվածությունը (սոցիալական կարիքի առակյությունը՝ պահանջվարկվածությունը աշխատաշուկայի և ուսանողների կողմից), ինչպես նաև մատուցման փաստացի որակը՝ ծրագրի իրականացման լրիվ շրջափուլի արդյունքներով, որոշում ընդունել ծրագրի հետագա շարունակման նպատակահարմարության կամ փոփոխությունների վերաբերյալ:

33. Վերանայման հիմնական խնդիրներն են.

- վերագնահատել ծրագրի արդիականությունը և պահանջարկվածությունը աշխատաշուկայում՝ հաշվի առնելով համապատասխան մասնագիտական ոլորտում գիտելիքի կիրառման առկա պրակտիկան, տեխնոլոգիական առաջընթացը և դասավանդման ու ուսումնառության մեթոդների զարգացումը,
- ուսումնասիրել ծրագրում ներգրավված ուսանողների և շրջանավարտների կարծիքները ծրագրի որակի վերաբերյալ, ինչպես նաև՝ հիմնական գործատուների բավարարվածությունը ծրագրի շրջանավարտներից:
- հաշվի առնել արտաքին ծրագրային պահանջների փոփոխությունները (օրինակ՝ կրթական չափորոշիչներ, որակավորումների ազգային կամ եվրոպական շրջանակներ, միջազգային առարկայական կողմնորոշիչներ, համապատասխան մասնագիտական, օրենսդիր և ոլորտը կարգավորող կառույցների պահանջներ) և դրանց հետ համադրել ծրագրի փաստացի կրթական վերջնարդյունքները,
- համակողմանիորեն գնահատել ծրագրի մատուցման փաստացի որակը և ռեսուրսային ապահովվածությունը (դասախոսական, նյութական և այլն),
- գնահատել ժամանակի ընթացքում ծրագրի կառուցվածքում և իրականացման մեթոդներում կատարված փոփոխությունների ազդեցությունը,
- հաշվի առնել հավատարմագրող կամ արտաքին գնահատում իրականացնող կառույցների եզրակացությունները,
- կատարել ծրագրի քննադատական վերլուծություն՝ դիտարկելով դրա ուժեղ ու թույլ կողմերը իրականացման ընթացքում
- և նախաձեռնել վերլուծությունից բխող ծրագրային փոփոխություններ,

– հիմնավորել ծրագրի շարունակման, փակման կամ վերանայման նպատակահարմարությունը:

### 3.2. Պարբերական վերանայման ընթացակարգը

34. Ծրագրի ամբողջական գնահատումը և պարբերական վերանայումը համահամալսարանական գործընթաց է, որտեղ կարող են ներգրավվել են նաև արտաքին փորձագետներ:
35. Ծրագրի վերանայման պարբերականությունը որոշվում է ծրագրի իրականացման շրջափուլի նորմատիվային տևողությամբ, լիցենզիայի գործողության ժամկետով, ծրագրի մասնագիտական ոլորտի զարգացման տեմպերով և այլն:
36. ԵՊՀ-ում բակալավրի կրթական ծրագրերի վերանայման պարբերականությունը սահմանվում է 6÷7, իսկ մագիստրոսի ծրագրերինը՝ 3÷4 տարի:
37. Վերանայման գործընթացը պլանավորում և իրականացնում է ՈԱԿ–ը՝ համապատասխան ուսումնական ստորաբաժանման (ֆակուլտետ, կենտրոն) հետ համատեղ:
38. ԵՊՀ կրթական ծրագրերի պարբերական վերանայման ընթացակարգն ամբողջությամբ համապատասխանում է «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգում»[23] նկարագրված կրթական ծրագրերի ներքին փորձաքննության և վերջնական հաստատման ընթացակարգերին (բաց է թողնվում ծրագրի մշակման արտոնման փուլը):

[23] ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգ, ԵՊՀ հրատ., Երևան, 2013 (28 էջ):

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## <u>ՀԱՎԵԼՎԱԾ 1.</u> ԵՊՀ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԹԵՐԹԸ

*Ստորև ներկայացվում է ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի ձևաթերթը: Ձևաթերթը լրացնում է ծրագրի մոնիթորինգի խումբը, որն այնուհետև հաստատվում է ֆակուլտետի խորհրդում (կենտրոնի ղեկավարության նիստում) և ներկայացվում ԵՊՀ ԳԽ քննարկմանը:*

*«Հաստատում եմ»*

“______” ______________ 201___ թ.

**Ուսումնական աշխատանքների**

**գծով պրոռեկտոր**

________________________________

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Կրթական ծրագրի ընթացիկ մոնիթորինգի հաշվետվության ձևաթերթ**

Ֆակուլտետ/կենտրոն ...........................................................................................................

Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը .................................
.............................................................................................................................................

Ուսուցման ձևը (առկա, հեռակա) ........................................................................

Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս) ………………….....................

Ծրագրի սկզբնական հաստատման ամսաթիվը …………………………………...

Ծրագրի նախորդ մոնիթորինգի ամսաթիվը ……………………………………..........

Ծրագրի նախորդ վերանայման ամսաթիվը ……………….………………….............

1. **Նախորդ մշտադիտարկման արդյունքներով ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կատարողականը**

Հաշվետվության ենթակա են պլանով նախատեսված բոլոր միջոցառումները:

| Թիվ | Միջոցառում (գործողություն) | Կատարո-ղականը (%) | Պատասխա-նատու անձը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1.<br>2.<br>3.<br>4.<br>5. | | | | |

2. **Ծրագրի քանակական բնութագրերը**

| Ուսումնական տարի | 2011/12 | 2012/13 | 2013/14 |
|---|---|---|---|
| **Ընդունելությունը և ուսանողական համակազմը** | | | |
| Դիմորդների թիվը (այդ թվում 1-ին հայտով) | | | |
| Ընդունելության մրցութային ցուցանիշը և անցողիկ շեմային միավորը | | | |
| Ընդունված ուսանողների թվաքանակը | | | |
| **Ուսումնական առաջադիմության ցուցանիշները** | | | |
| Ծրագրում ընդգրկված ուսանողների ուսումնական առաջադիմության ընդհանրական ցուցանիշը (անցողիկ միավորներ հավաքած ուսանողների %-ը) | | | |
| *«Գերազանց»*, *«լավ»* և *«բավարար»* գնահատական-ների բաշխումն ըստ ուսանողների թվի (%-ով) | | | |
| Ծրագրում ընդգրկված ուսանողների հանրագումա-րային միջին որակական գնահատականը (ՄՈԳ) | | | |
| Դուրս մնացած/վերականգնված ուսանողների թիվը | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Այլ ծրագրեր/այլ ծրագրերից տեղափոխված ուսանողների թվաքանակը | | | |
| **Տվյալներ ծրագրի շրջանավարտների վերաբերյալ** | | | |
| Ամփոփիչ ատեստավորման արդյունքները | | | |
| Հաջորդ կրթական մակարդակում ուսումը շարունակող ուսանողների մասնաբաժինը | | | |
| Մասնագիտությամբ կամ հարակից ոլորտում աշխատանքի անցած շրջանավարտների մասնաբաժինը | | | |

### 3. Ուսանողական հարցումների արդյունքները

Ներկայացվում են ծրագրի բաղկացուցիչ դասընթացների վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքները՝ դասընթացի մատուցման որակի, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների և դրանց արդյունավետության վերաբերյալ, ինչպես նաև նախորդ երկու տարիների ընթացքում ուսանողների կողմից բարձրացված հարցերն ու դրանց լուծման ուղղությամբ իրականացված միջոցառումները։

### 4. Շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքները

Ներկայացվում են ծրագրի նախորդ երկու տարիների շրջանավարտների բավարարվածության հարցումների ամփոփ արդյունքները, որոնք վերաբերում են կրթական ծրագրի պրոֆիլին և համապատասխանությանը մասնագիտական աշխատաշուկայի արդի պահանջմունքներին, ծրագրի բովանդակությանը և կառուցվածքին, դասավանդման և ուսուցման ընտրված մեթոդաբանությանը, գիտելիքների գնահատման գործընթացին, ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսումնառության առկա ռեսուրսներին։

### 5. Ծրագրի դասախոսական կազմի արձագանքը

Ներկայացվում են դասավանդող կազմի նկատառումները ծրագրի իրականացման ընթացքի և ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի վերաբերյալ, գնահատվում է կատարված փոփոխությունների և միջոցառումների արդյունավետությունը, ծրագրի ռեսուրսային բավարարվածության վիճակը հաշվետու ժամանակաշրջանում և այլն։

6. Համագործակցային կապերը

Գնահատվում են ծրագիրը սպասարկող այլ ուսումնական ստորաբաժանումների (ֆակուլտետներ, կենտրոններ) հետ համագործակցության ձևերն ու արդյունքները:

7. Ծրագրի փոփոխությունները

Ներկայացվում են նախորդ երկու տարիներին ծրագրում կատարված փոփոխությունները և գնահատվում դրանց իրականացման արդյունքները:

8. Ծրագրի նախորդ մոնիթորինգի, վերանայման և/կամ արտաքին գնահատման արդյունքները

Ներկայացվում են վերջին անգամ ծրագրի մոնիթորինգի, վերանայման (կամ հաստատման) և/կամ արտաքին գնահատման (հավատարմագրման) արդյունքները՝ նշելով, թե այդ գործընթացների արդյունքում ծրագրի բարելավման ուղղությամբ արված եզրակացությունների (պահանջների, առաջարկությունների, երաշխավորությունների) իրականացման ուղղությամբ ինչ պատասխան միջոցներ են ձեռնարկվել: Բացահայտվում են այն դեպքերը, երբ այդ միջոցառումները չեն կատարվել և պարզաբանվում դրանց պատճառները:

9. Ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, տարածման արժանի լավագույն փորձը

Վերլուծվում են հիմնական միտումները՝ ծրագրի ընդունելության, ուսանողական համակազմի, ուսումնական առաջադիմության և ծրագրի շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ, մեկնաբանվում են շեղումները ծրագրի հաստատման ժամանակ արված կանխատեսումներից:

Այս վերլուծության արդյունքում արվում են եզրակացություններ՝ ծրագրի պահանջարկվածության և կենսունակության, սահմանված պահանջներին ուսանողական թվակազմի համապատասխանության, դասավանդման և ուսումնառության աջակցման առկա միջոցների համարժեքության վերաբերյալ, որոնք պետք է հիմք հանդիսանան ծրագրի բարելավմանն ուղղված հետագա գործողությունների պլանավորման համար:

Կազմվում է ծրագրի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և վտանգների (SWOT) աղյուսակը:

**Կրթական ծրագրի SWOT աղյուսակը**

| SWOT գործոնը | Փաստացի վկայություն | Լավագույն փորձի զարգացման և տարածման, հնարավորությունների օգտագործման առաջար- | Թույլ կողմերի շտկման և վտանգների չեզոքացման կամ մեղմացման առաջար- |
|---|---|---|---|

| | | կություններ | կություններ |
|---|---|---|---|
| Ուժեղ կողմերը<br>1.<br>2.<br>3.<br>4. | | | |
| Թույլ կողմերը<br>1.<br>2.<br>3.<br>4. | | | |
| Հնարավորությունները<br>1.<br>2.<br>3.<br>4. | | | |
| Վտանգները<br>1.<br>2.<br>3.<br>4. | | | |

**10. Որակի բարելավման (բարձրացման) գործողությունների պլանը**

Կազմվում է ծրագրի որակի բարելավման/բարձրացման ուղղությամբ ուսումնական ստորաբաժանման (ամբիոնի, ֆակուլտետի, կենտրոնի) և համալսարանի կենտրոնական վարչակազմի մակարդակով իրականացվելիք միջոցառումների (գործողությունների) պլանը հաջորդ երկու ուստարիների համար.

| Բարելավման ասպարեզը/ առարկան | Պլանավորված միջոցառումը /գործողությունը | Պատասխանատուն | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| 1.<br>2.<br>3.<br>4.<br>5. | | | |

Ֆակուլտետի դեկան (կենտրոնի տնօրեն) ..................................................................

Ընդհանուր եզրակացություն կրթական ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ

1. ____________________________________________________________
2. ____________________________________________________________
3. ____________________________________________________________
4. ____________________________________________________________
5. ____________________________________________________________

Մոնիթորինգի արդյունքները քննարկվել և հավանության են արժանացել ………………………………………………………………………………….. ֆակուլտետի գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի նիստում (*որոշում թիվ ...... , ամսաթիվ*)։

Որակի ապահովման հանձնաժողովի նախագահ՝ ……………..............................

Մոնիթորինգի արդյունքները քննարկվել և հավանության են արժանացել …………………………………………………………… ֆակուլտետի գիտական խորհրդի (կենտրոնի ղեկավարության նիստի) կողմից (*որոշում թիվ ...... , ամսաթիվ*)։

Ֆակուլտետի դեկան (կենտրոնի տնօրեն)՝ …………………..............................

Մոնիթորինգի հաշվետվությունը ստուգվել է ԵՊՀ ՈԱԿ-ի կողմից։

ՈԱԿ տնօրեն՝ ……………………………………………….

Մոնիթորինգի արդյունքները քննարկվել են ԵՊՀ գիտական խորհրդի նիստում (*որոշում թիվ ...... , ամսաթիվ*)։

Ռեկտոր՝ ………………………………………………

## *ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԵՊՀ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ*



## *ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԵՊՀ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ*

| | |
|---|---|
| 01 նոյեմբերի[24] | Ֆակուլտետի դեկանը (կենտրոնի տնօրենը) ստեղծում է կրթական ծրագրի (ծրագրերի խմբի) ընթացիկ մոնիթորինգի խումբ (ՄԹԽ) |
| **15 հունվարի** | **ՄԹԽ–ն կազմում է ծրագրի մոնիթորինգի հաշվետվությունը (ՄԹՀ), որը ներառում է ծրագրի նախորդ մոնիթորինգի եզրակացությունների կատարողականի գնահատականը և ծրագրի բարելավման միջոցառումների պլանը** |
| 30 հունվարի | Ֆակուլտետի գիտական խորհրդի (ԳԽ) որակի ապահովման հանձնաժողովը (ՖՈԱՀ) քննարկում է ՄԹՀ–ը և ֆակուլտետի դեկանին ներկայացնում է համապատասխան եզրակացություն |
| 15 փետրվարի | Ֆակուլտետի դեկանը/կենտրոնի տնօրենը կազմում է իր ստորաբաժանման բոլոր ծրագրերի մոնիթորինգի ամփոփ հաշվետվությունը և ներկայացնում ֆակուլտետի ԳԽ-ի կամ կենտրոնի ղեկավարության նիստի քննարկմանը |
| 25 փետրվարի | Ֆակուլտետի ԳԽ-ը կամ կենտրոնի ղեկավարության նիստը մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ կայացնում է որոշում |
| 01 մարտի | Ֆակուլտետի դեկանը/կենտրոնի տնօրենը իր ստորաբաժանման ծրագրերի ՄԹՀ-ը ներկայացնում է ԵՊՀ Որակի ապահովման կենտրոն (ՈԱԿ)՝ ստուգման համար |

[24] Նշված է համապատասխան գործընթացի ավարտի վերջնաժամկետը:

| | |
|---|---|
| 15 մարտի | ՌԱԿ-ը ստուգում է ՄԹՀ-ի համապատասխանությունը պահանջներին, կազմում ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի հանրագումարային հաշվետվությունը և ներկայացնում ՈւԱԳ պրոռեկտորի հաստատմանը |
| 01 ապրիլի | ԵՊՀ ԳԽ որակի ապահովման մշտական հանձնաժողովը (ՈԱՄՀ) քննարկում է ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի ընդհանուր հաշվետվությունը և կազմում ԳԽ որոշման նախագիծ |
| **10 ապրիլի** | **ԵՊՀ ԳԽ-ն ընդունում է որոշում ծրագրերի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի վերաբերյալ** |

# 3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

## 3.1. ԵՊՀուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգը

### 6.1. Համակարգի հիմնադրույթները

1. ԵՊՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝
   ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,
   բ) ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:
2. Գիտելիքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.
   ա) դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում դասահաճախումների հաշվառման օգնությամբ,
   բ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ և ստուգումներ),
   գ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում, ինչը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում:
   դ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա

դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

3. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

    ա) *եզրափակիչ գնահատումով դասընթացներ,*

    բ) *առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ*:

## 6.2. Գնահատման մեթոդաբանությունը

### 6.2.1. Բակալավրի կրթական ծրագիր

Բակալավրի կրթական ծրագրում յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում կարող է ներառվել *եզրափակիչ գնահատումով* առավելագույնը 4 մասնագիտական դասընթաց, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ այդ դասընթացների քանակը սահմանափակվում է 3-ով:

1. *Եզրափակիչ գնահատումով դասընթացը* քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն:

   ա) Ընթացիկ քննությունները հիմնականում անցկացվում են գրավոր, իսկ որոշ դեպքերում նաև բանավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից: Քննության բանավոր անցկացումը պահանջում է համապատասխան հիմնավորում և թույլատրվում է ֆակուլտետի խորհրդի որոշմամբ:

   բ) Եզրափակիչ քննությունը հիմնականում անցկացվում է բանավոր, իսկ որոշ դեպքերում նաև գրավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից: Քննության գրավոր անցկացումը պահանջում է համապատասխան հիմնավորում և թույլատրվում է ֆակուլտետի խորհրդի որոշմամբ:

2. *Եզրափակիչ գնահատումով դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը ($Գ_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 2 միավոր: Դասընթացին ուսանողի մասնակցության $Գ_{մաս.}$ միավորը որոշվում է *աղյուսակ 1-ում* բերված սանդղակի չափանիշներին համապատասխան.

*Աղյուսակ 1.*

| Մասնակցության աստիճանը (%) | Հատկացվող միավորը |
|---|---|
| 90-ից բարձր | 2 |
| 80-90 | 1 |
| <80 | 0 |

*Օրինակ 1. Եթե 32 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 15 ժամ բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝ $\left(1-\frac{15}{32}\right)$ x 100% = (1 – 0,47) x 100% = 53 %: Համաձայն աղյուսակի՝ $Գ_{մաս.}$ = 0 միավոր:*

*Օրինակ 2. Եթե 64 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 10 ժամ անհարգելի և 4 ժամ հարգելի բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝ $\left(1-\frac{10}{64-4}\right)$ x 100% = (1 – 0,17) x 100% = 83%: Համաձայն աղյուսակի՝ $Գ_{մաս.}$ = 1 միավոր:*

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների արդյունքներից ($\sum Ք_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 4 միավոր,

գ) եզրափակիչ քննության արդյունքից ($Ք_{եզր.}$), որը կարող է գնահատվել մինչև 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{արդ.} = Գ_{մաս.} + \sum Ք_{ընթ.} + Ք_{եզր.} :$$

Ըստ այդմ, *եզրափակիչ գնահատումով դասընթացն* ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով[25]).

*Աղյուսակ 2.*

| Գնահատման բաղադրամասը | $Գ_{մաս.}$ | $Ք_{ընթ.1}$ | $Ք_{ընթ.2}$ | $Ք_{եզր.}$ | $Գ_{արդ.}$ |
|---|---|---|---|---|---|
| Միավորը | 2 | 4 | 4 | 10 | **20** |

*Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 1 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 3 և 4 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 8 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝ $Գ_{արդ.} = 1 + 3 + 4 + 8 = 16$ :*

3. Լաբորատոր աշխատանքի ձևեր ունեցող *եզրափակիչ գնահատումով դասընթացի* ընթացիկ քննությանը ուսանողի մասնակցությունը թույլատրվում է նախորդող ժամանակահատվածում նախատեսված լաբորատոր աշխատանքների առնվազն 60% կատարողականի (փորձերի կատարում և հանձնում) դեպքում: Հակառակ պարագայում ուսանողին չի թույլատրվում մասնակցել ընթացիկ քննությանը, իսկ քննական ամփոփագրում նրա անվան դիմաց դրվում է «0» միավոր:
4. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացը* գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ

[25] Ընթացիկ քննության մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր, իսկ գնահատման քայլը՝ առնվազն 0,5 է:

ստուգումների (գնահատումների) արդյունքներով: Ընթացիկ ստուգման ձևն ընտրում է դասընթացը կազմակերպող ամբիոնը:

5. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը ($Գ_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

   ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ $Գ_{մաս.}$, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը կարող է վաստակել 2 միավոր: Մասնակցության աստիճանը գնահատվում է համաձայն *աղյուսակ 1*-ում բերված սանդղակի,

   բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ ստուգումների արդյունքներից ($\sum Ս_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 9 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{արդ.} = Գ_{մաս.} + \sum Ս_{ընթ.} :$$

Ըստ այդմ, *առանց եզրափակիչ գնահատման դասընթացն* ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով[26]).

*Աղյուսակ 3.*

| Գնահատման բաղադրամասը | $Գ_{մաս.}$ | $Ս_{ընթ 1}$ | $Ս_{ընթ 2}$ | $Գ_{արդ.}$ |
|---|---|---|---|---|
| Միավորը | 2 | 9 | 9 | **20** |

*Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից նա վաստակել է համապատասխանաբար 5 և 7 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝ $Գ_{արդ.} = 2 + 5 + 7 = 14$ :*

[26] Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր, իսկ գնահատման քայլն առնվազն 0,5 է:

6. Գնահատման՝ վերը նկարագրված եղանակները կիրառվում են միայն *մասնագիտական կրթամասի* բաղկացուցիչ դասընթացների (ուսումնական մոդուլների) գնահատման համար: *Հումանիտար ու սոցիալ-տնտեսագիտական* և *մաթեմատիկական ու բնագիտական կրթամասերի* բաղկացուցիչ դասընթացների գնահատումն իրականացվում է ավանդական եղանակով (ստուգարք կամ 20 միավորանոց սանդղակով գնահատվող եզրափակիչ քննություն): Պրակտիկաները գնահատվում են ստուգարքի ձևով: Ավարտական աշխատանքը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով՝ 11.1 կետի 6-րդ ենթակետում բերված գնահատման չափանիշներին համապատասխան:

### 6.2.2. Մագիստրոսի կրթական ծրագիր

Մագիստրոսի կրթական ծրագրում ներառված բոլոր դասընթացները *եզրափակիչ գնահատումով դասընթացներ* են, որոնց գնահատման կառուցվածքը, սակայն, մի փոքր տարբերվում է բակալավրի կրթական ծրագրի դասընթացների գնահատման՝ վերը նկարագրված եղանակից:

1. Դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն: Ընթացիկ և եզրափակիչ քննությունների անցկացման ձևը դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատում է ֆակուլտետի դեկանը:
2. Դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը ($Գ_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

   ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 2 միավոր: Դասընթացին ուսանողի մասնակցության $Գ_{մաս.}$ միավորը որոշվում է 6.2.1. կետում բակալավրի կրթական ծրագրի համար նկարագրված եղանակով (ուսումնառության անհատական ժամանակացույցով սովորող ուսանողի՝ դասընթացի մասնակցության համար տրվող միավորների քանակը հաշվարկվում է նրա ինքնուրույն աշխատանքի կատարողականի հիման վրա),

   բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների արդյունքներից՝ ($\Sigma_{քննթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 4 միավոր,

   գ) եզրափակիչ քննության արդյունքից ($Ք_{եզր.}$), որը կարող է գնահատվել մինչև 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{արդ.} = Գ_{մաս.} + \sum Ք_{ընթ.} + Ք_{եզր.} :$$

Ըստ այդմ, մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով).

*Աղյուսակ 4.*

| Գնահատման բաղադրամաս | $Գ_{մաս.}$ | $Ք_{ընթ.1}$ | $Ք_{ընթ.2}$ | $Ք_{եզր.}$ | $Գ_{արդ.}$ |
|---|---|---|---|---|---|
| Միավորը | 2 | 4 | 4 | 10 | **20** |

3. Գնահատման վերը նկարագրված եղանակը կիրառվում է միայն *ուսումնական կառուցամասի* բաղկացուցիչ դասընթացների (բացի *լրացական դասընթացներից*) գնահատման համար: *Հետազոտական կառուցամասի* մոդուլները, այդ թվում նաև պրակտիկաները, գնահատվում են ստուգարքի ձևով: Մագիստրոսական ատենախոսությունը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով՝ 11.2 կետի 7-րդ ենթակետում բերված գնահատման չափանիշներին համապատասխան:

## 6.3. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը

1. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների/ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):
2. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցները կազմում են ֆակուլտետները և հաստատվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն:
3. Ընթացիկ քննությունները և ստուգումներն անց են կացվում ուսումնառության կիսամյակի 7÷8-րդ և 15÷16-րդ շաբաթներում (8-րդ կիսամյակում՝ 4-րդ և 8-րդ շաբաթներում): Ընթացիկ քննությունների օրը ուսանողն ազատվում է

դասերից: Ընթացիկ ստուգումներն անց են կացվում առարկայի՝ դասացուցակով հատկացված ժամերին կամ դասերից հետո՝ ֆակուլտետի դեկանի որոշմամբ:

4. Եզրափակիչ քննություններն անց են կացվում կիսամյակային քննաշրջաններում՝ 17÷20-րդ շաբաթներում (8-րդ կիսամյակում՝ 9÷10-րդ շաբաթներում):
5. Քննության/ստուգման ավարտից հետո քննությունն ընդունած դասախոսը քննական ամփոփագիրը նույն օրը ներկայացնում է դեկանատ:
6. Բոլոր գրավոր քննությունները և ստուգումները գրանցվում են ուսանողներին տրամադրված սահմանված նմուշի տետրերում, իսկ գրավոր աշխատանքի ավարտը վավերացվում է դեկանատի կնիքով:
7. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ու ստուգումների գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն գանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև նաև ֆակուլտետի դեկանին:

## 6.4. Գնահատման սանդղակը և նշագրումը

1. ԵՊՀ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

*Աղյուսակ 5.*

| Գնահատման արդյունարար միավորը | Գնահատականը |
|---|---|
| 18-20 | *«Գերազանց»* |
| 13-17 | *«Լավ»* |
| 8-12 | *«Բավարար»* |
| 0-7 | *«Անբավարար»* |
| 0 | *«Չներկայացած»* |
| - | *«Ստուգված» /«Չստուգված»* |

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում գնահատման արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ 18 (գերազ.)):

2. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 8-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է *«Չստուգված»*, կրեդիտներ չեն տրվում: *«Ստուգված»* գնահատման դեպքում ուսանողի օգտին *վարկանիշային միավորներ*[27] չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի *միջին որակական գնահատականի (ՄՈԳ)* վրա:

## 6.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԵՊՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են *ակադեմիական տեղեկագիր*[28], որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:
2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:
3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները[29]՝

   – *գումարային կրեդիտների* քանակը,

[27] Վարկանիշային միավորի վերաբերյալ տե՛ս սույն կարգի 6.5. կետը:

[28] Ակադեմիական տեղեկագրի օրինակները բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի համար կցված են սույն կարգին (*հավելվածներ 1 և 2*):

[29] Տե՛ս ակադեմիական տեղեկագրին կից օրինակը:

– *գնահատված կրեդիտների* քանակը,

– *վարկանիշային միավորները*,

– *միջին որակական գնահատականը*:

4. *Գումարային կրեդիտը (Կ)* կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:
5. *Գնահատված կրեդիտը (ԳԿ)* գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

$$\text{ԳԿ} = \sum \text{Կրեդիտ}_i \text{ :}$$

6. *Վարկանիշային միավորը (ՎՄ)* յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$\text{ՎՄ} = \sum \text{Կրեդիտ}_i \times \text{Գ}_{\text{արդ}\,i} \text{ ,}$$

**որտեղ $\text{Գ}_{\text{արդ}i}$-ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:**

*Օրինակ, եթե ուսանողը 5, 4 և 6 կրեդիտանոց դասընթացներից գնահատվել է (վաստակել է) համապատասխանաբար 12, 16 և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վաստակած վարկանիշային միավորը հավասար է՝ ՎՄ = 5 x 12 + 4 x 16 + 6 x 19 = 238՝ 300 հնարավորից (5 x 20 + 4 x 20 + 6 x 20):*

7. *Միջին որակական գնահատականը (ՄՈԳ)* կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ԳԿ}} \text{ :}$$

*Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝ ՄՈԳ* = $\frac{238}{15} = 15{,}87$ ՝ *20 հնարավորից:*

8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են *կիսամյակային* (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և *արդյունարար* (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

## 6.6. Ուսման առաջադիմությունը

1. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են՝ *առաջադիմող*, *փորձաշրջանի կարգավիճակում գտնվող* և *հեռացման ենթակա*:
2. Ուսանողը համարվում է *առաջադիմող*, եթե՝
   ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ ուսումնական միջին բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով),
   բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների[30] կրեդիտները:
3. Ուսանողը համարվում է *փորձաշրջանի կարգավիճակում*, եթե չի բավարարել նախորդ կետում նշված պայմաններից որևէ մեկը, և ռեկտորատի կողմից նրան թույլատրվել է մասնակցել ակադեմիական պարտքերի մարմանը (լուծարքին):
4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:
5. Բակալավրի կրթական ծրագրի համար փորձաշրջանի տևողությունը համընկնում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանի հետ, իսկ մագիստրոսի ծրագրում ուսանողին կարող է տրվել նաև լրացուցիչ ժամանակ՝ դասընթացը կրկնելու համար:
6. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավի-

[30] Տե՛ս դասընթացների ա) խումբը, բաժին 3, 3-րդ կետ:

ճակից: Հեռացված ուսանողի վերականգնումը կատարվում է նույն կիսամյակում՝ ուսումնառության նախորդ ընթացքում վաստակած բոլոր կրեդիտների պահպանմամբ:

7. Նույն ուսումնական բեռնվածությամբ ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են (ուսանողական նպաստներ, պետական, ներբուհական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս) նրանց միջին որակական գնահատականներով:

## 7. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը

1. Դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանը որոշելիս հաշվի չեն առնվում հարգելի պատճառներով բացակայության դեպքում բաց թողնված դասաժամերը, եթե այն հավաստող սահմանված կարգի բժշկական տեղեկանքը կամ դիմումը ներկայացվում է հաճախումները վերսկսելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
2. Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն այն դեպքում, եթե ուսանողը  մինչև քննության օրը ներառյալ հիվանդության մասին գրավոր իրազեկում է դեկանատ, իսկ հիվանդության վերաբերյալ համապատասխան բժշկական տեղեկանքը ներկայացնում է մինչև բուժման շրջանի ավարտին հաջորդող օրը ներառյալ:
3. Ընթացիկ (միջանկյալ) քննությունների կամ ստուգումների արդյունքների վերահանձնում, այդ թվում նաև ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում, չի թույլատրվում:
4. Հարգելի պատճառով ընթացիկ քննությանը կամ ստուգմանը չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել հիվանդության շրջանի ավարտից հետո՝ հնգօրյա ժամկետում, դեկանատի կողմից հաստատված ժամանակացույցով:
5. Հարգելի պատճառներով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում կարող է վերահանձնել այն:
6. Սահմանվում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) երկու շրջան, որոնց ընթացքում ստուգարքների և քննությունների վերահանձնումը կազմակերպվում է միայն քննական հանձնաժողովներով, որոնք ձևավորվում են դեկանի հրամանով:
7. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի* գնահատման արդյունարար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի

մարման (լուծարքի) շրջանում բարձրացնում է իր արդյունարար միավորը մինչև անցողիկ 8-ը՝ վերահանձնելով անհրաժեշտ քանակի ընթացիկ ստուգումներ:

*Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 1 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից նա վաստակել է համապատասխանաբար 1 և 2 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունարար միավորը կլինի՝ $Գ_{արդ.}$= 1 + 1 + 2 = 4, որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է մեկ կամ երկու ընթացիկ ստուգումներ (ըստ անհրաժեշտության), սակայն նրա արդյունարար միավորը չի կարող գերազանցել անհրաժեշտ նվազագույնը՝ $Գ_{արդ.}$ ≤ 8:*

8. *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատման արդյունարար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ:

*Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 1 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 1 և 2 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 3 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝ $Գ_{արդ.}$= 1 + 1 + 2 + 3 = 7, որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ, իսկ արդյունարար գնահատականը փոխվում է եզրափակիչ քննության միավորների տարբերությամբ: Օրինակ, եթե եզրափակիչ քննության 3 միավորը լուծարքում բարձրացվել է մինչև 5, ապա $Գ_{արդ.}$ = 7 + (5 - 3) = 9:*

9. Եթե մագիստրոսական ծրագրում դասընթացի գնահատման արդյունարար միավորը գտնվում է 5÷7 միավորի տիրույթում, ապա թույլատրվում է դասընթացի վերահանձնում նախորդ կետում բերված պահանջներին համապատասխան, ընդ որում՝ նույն կիսամյակի ընթացքում ուսանողն ունի յուրաքանչյուր այդպիսի դասընթաց վերահանձնելու ընդամենը մեկ հնարավորություն՝ առաջին լուծարքային շրջանում: 4 միավոր և ցածր արդյունք ցուցաբերած մագիստրոսական ծրագրով սովորող ուսանողը պարտավոր է կրկնել դասընթացը:

10. Քննաշրջանի ընթացքում եզրափակիչ գնահատումով դասընթացներից 3 և ավելի պարտք ունեցող ուսանողները ազատվում են համալսարանից՝ անբավարար ակադեմիական առաջադիմության պատճառով:
11. Ակադեմիական պարտքերի մարման շրջանում միևնույն դասընթացից 2 անգամ անբավարար ստացած ուսանողները ազատվում են համալսարանից՝ անբավարար ակադեմիական առաջադիմության պատճառով:
12. Ուսումնառության 1-ին կիսամյակում 2 դասընթաց չհանձնած մագիստրոսական ծրագրով սովորող ուսանողին հնարավորություն է տրվում կրկնել դասընթացները հաջորդ աշնանային կիսամյակում՝ շարունակելով ուսումը: 2-րդ և 3-րդ կիսամյակներում որևէ դասընթաց չհանձնած (0-4 միավոր վաստակած) ուսանողը ազատվում է համալսարանից:
13. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:
14. Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակն ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

## 3.2. ԵՊՀ ուսանողիզնահատման ուղեցույցը

## *1. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Բարձրագույն կրթության ժամանակակից համակարգում ուսանողի գնահատման քաղաքականությունն առանձնահատուկ նշանակություն ունի: Ուսանողների կողմից ծրագրով սահմանված կրթական վերջնարդյունքներին հասնելու տեսանկյունից հատկապես կարևորվում է գնահատման համարժեք ձևերի և մեթոդների ընտրությունը: Գնահատումը դիտարկվում է ոչ միայն որպես դասավանդման և ուսումնառության արդյունքների ամփոփում, այլ նաև որպես այդ գործընթացների հիմնական ուղղորդող բաղադրիչ, որն անմիջականորեն շաղկապված է կրթական արդյունքների հետ: Ուսումնական մոդուլի (դասընթացի) շրջանակներում ձևակերպված նպատակները, խնդիրները փոխլրացնում են միմյանց, իսկ ճիշտ ընտրված գնահատման համակարգը հանգեցնում է նախապես սահմանված վերջնարդյունքների ձևավորմանը: Ձեռք բերված գիտելիքի փաստացի մակարդակը կարող է չափվել միայն գնահատման համապատասխան մեթոդներով և ճիշտ ընտրված գնահատման չափանիշների օգնությամբ: Ներկայիս գնահատման բազմագործոն համակարգը թևակոխել է զարգացման նոր փուլ և որդեգրել *չափանիշների և չափորոշիչների* վրա հիմնված բոլորովին նոր մոտեցում: Գնահատման այս համակարգը հնարավորություն է ընձեռում փոխկապակցելու գնահատման ընթացքը և ուսումնառության ու դասավանդման մեթոդները: Այն թույլ է տալիս նաև գնահատման գործող մեխանիզմները համապատասխանեցնելու դասընթացի (ուսումնական մոդուլի) կրթական վերջնարդյունքներին և երաշխավորելու գնահատման իրական որակը:

Ուղեցույցը հասցեագրված է ուսումնական գործընթացում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերին՝ դասախոսներին, ծրագրերի ղեկավարներին, ամբիոնների վարիչներին, ֆակուլտետային և համահամալսարանական ստորաբաժանումների վարչական աշխատակիցներին. նրանցից յուրաքանչյուրն իր գործառույթների շրջանակում կարող է աջակցություն ստանալ արդյունավետ գնահատում կազմակերպելու, գնահատման համակարգը զարգացնելու և բարելավելու համար:

## *2. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ*

Չափանիշների և չափորոշիչների վրա հիմնված գնահատման այս համակարգն ապահովում է որակական մի հենք, որը՝

- ուղղորդում և խրախուսում է ուսանողի արդյունավետ ուսումնառությունը,
- արժանահավատ, հուսալի և անաչառորեն չափում է ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը,
- ներառում է դասավանդման, ուսումնառության և գնահատման շարունակական բարելավման մեխանիզմներ,
- սահմանում և պահպանում է ակադեմիական չափանիշները։

Գնահատումն ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչն է։ Այն ուղղորդում և խթանում է նաև ուսանողի ուսումնառության ողջ գործընթացը, քանի որ հանդիսանում է այն հիմնական միջոցը, որը նպաստում է դասընթացի բովանդակության յուրացմանը և հիմնական հմտությունների, գիտելիքի և արժեքների ձեռքբերմանը։ Հետևաբար, արդյունավետ և բազմակողմանի գնահատումը պետք է կիրառի գնահատման մեթոդների բազմազանություն, որը հնարավորություն կընձեռի ոչ միայն ճիշտ որոշելու առաջադիմության մակարդակը, այլ նաև նոր արժեքներ զարգացնելու։

Այսպես,եթե ուսանողը հասկանում է, թե ի՞նչ է պահանջվում իրենից ըստ արժանվույնս գնահատվելու համար, ապա նա կարող է նպատակաուղղել իր ջանքերն այդ ուղղությամբ։ Բարձր գնահատական ստանալու համար ուսանողը պետք է ծանոթ լինի գնահատման չափանիշներին և նպատակներին։ Ուսանողների համար գնահատման նպատակներն առավել հասկանալի են, երբ նրանք տեղեկացված են գնահատման առաջադրանքի պահանջներին և կատարման որակը չափելու ընտրված մեթոդներին։

Երբ դասախոսը հստակ ձևակերպում է այն չափանիշները և չափորոշիչները, որոնք նա նախատեսել է գնահատման առաջադրանքի կատարման որակական աստիճանը գնահատելու համար, ապա ուսանողը հստակ պատկերացում է կազմում, թե հատկապես ինչ է ակնկալվում իրենից։ Նույնքան կարևոր է նաև, որ դասախոսը նախապես հրապարակի գնահատման չափանիշի կատարման նախատեսված մակարդակները և որակական շեմերի պահանջները, որպեսզի ուսանողն իմանա, թե ի՞նչ է ակնկալվում իրենից գնահատման այս կամ այն շեմը հաղթահարելու տեսանկյունից և ինչպե՞ս է կատարվելու գնահատումը։

Արդյունավետ գնահատման երեք սկզբունքներն են.

1. Արժանահավատությունը

2. Հուսալիությունը

3. Անաչառությունը:

Հուսալի (հետևողական) գնահատումը ենթադրում է հետևողականություն (միասնական մոտեցում) թվանշանների նշանակման գործընթացում՝ տարբեր դասախոսների կողմից տարբեր ժամանակահատվածներում և ուսանողների տարբեր խմբերում գնահատելիս: Այն ընդունելի և համահավասար պետք է լինի ինչպես տարբեր դասախոսների, այնպես էլ տարբեր ուսանողների գնահատման արդյունքների տեսանկյունից: Երբ թվանշումը միատեսակ տրամաբանված և հիմնավորված է մի քանի դասախոսների գնահատման արդյունքում կամ մեկ դասախոս հետևողական է գնահատման ողջ ընթացքում, դա վկայում է, որ գնահատման արդյունքները հուսալի են:

Արժանահավատ (վավեր) է համարվում այն գնահատումը, որտեղ գնահատման մեթոդներն անմիջականորեն կապակցված են դասընթացի կրթական վերջնարդյունքներին և չափում են ուսանողի կողմից դրանց ձեռքբերման մակարդակը: Այս իսկ պատճառով, արժանահավատ է համարվում գնահատման այն համակարգը, որը հիմնված է դասավանդման և ուսումնառության ձևերի և ակնկալվող վերջնարդյունքների համապատասխանեցման վրա և կիրառում է այդ վերջնարդյունքներին ուսանողի հասնելու աստիճանը չափելու մեթոդներ ու առաջադրանքներ:

Անաչառ (արդարացի) է համարվում այն գնահատումը, որտեղ ուսանողներին տրվել են հավասար հնարավորություններ՝ դրսևորելու իրենց ուսումնառության արդյունքները: Այն ենթադրում է նաև համապատասխան ժամանակի և ռեսուրսների տրամադրում այնպես, որ ուսանողներն ակամա չհայտնվեն իրենց առաջադիմությունը դրսևորելու ավելի լավ կամ վատ պայմաններում: Չափանիշների և չափորոշիչների սահմանումը ուսանողների համար գնահատման գործընթացն ավելի թափանցիկ է դարձնում:

## *3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՐՈՇՈՒՄԸ*

*Չափանիշների և չափորոշիչների վրա հիմնված գնահատումը* ուսանողներին ցույց է տալիս, թե ինչն է կարևոր իրենց ուսումնառության և գնահատման համակարգում: Այն ուսանողների համար հստակեցնում է այն չափանիշները, որոնց օգնությամբ դասախոսը գնահատելու իրենց կատարած աշխատանքը: Դասախոսների համար *չափանիշների և չափորոշիչների վրա հիմնված գնահատման* համակարգի ընդունումն առավել հուսալիություն է ապահովում գնահատման մեջ մի քանի գնահատողների ներգրավվածությամբ կամ, հնարավորություն է ընձեռում առավել հետևողական լինել գնահատման մեջ, երբ դասախոսն ինքնուրույն է կատարում գնահատումը: *Չափանիշների և չափորոշիչների վրա հիմնված գնահատումը* նաև առավել արդյունավետ է դարձնում ուսանող-դասախոս հետադարձ կապը: Բուհի վարչակազմի համար գնահատման այս համակարգը որակյալ ուսումնառության և գնահատման կարևորագույն երաշխիքն է:

*Չափանիշների և չափորոշիչների վրա հիմնված գնահատման* սույն համակարգում չափանիշները սահմանում են գնահատման գործընթացում ուսանողի կատարողականի հիմնական բնութագրիչները կամ հատկանիշները: Դրանք սահմանում են, թե գնահատման գործընթացում ինչ պետք է անի ուսանողը դասընթացի կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը հաստատելու համար: Չափանիշները, սովորաբար, ձևակերպվում են համառոտ նկարագրությունների տեսքով, օրինակ, եթե գնահատվում է էսսե կամ զեկույց գրելու կարողությունը, ապա չափանիշը կարող է ձևակերպվել այսպես. «դրսևորել համարժեք գրականություն ընթերցելու և համապատասխան հղումներ կատարելու կարողություն»: Այս չափանիշի պահանջները կարող են կատարվել որակական տարբեր մակարդակներում, որոնք սահմանվում են գնահատման չափորոշիչներով: Չափորոշիչները փաստում են ուսանողի գնահատման առաջադրանքը կատարելու որակական մակարդակը: Գնահատման չափորոշիչների սահմանումը դասախոսներից պահանջում է որոշակիացնել և հրապարակել դասընթացի կատարման ակնկալվող մակարդակները, իսկ ուսանողի կատարողականի գնահատումն այնուհետև պայմանավորված կլինի համապատասխան չափորոշիչներով: Չափորոշիչների ձևակերպումները կարող են տարբեր լինել, սակայն որպես կանոն դրանք սահմանվում են նախադասություններով և պարունակում համառոտ, բայց բավարար տեղեկատվություն ուսանողի՝ առաջադրանքը կատարելու որակը և մակարդակը որոշելու վերաբերյալ, որպեսզի տարբեր գնահատողներ կարողանան հստակ եզրակացություններ կատարել գնահատման առաջադրանքում ուսանողի գործադրած ջանքերի վերաբերյալ: Օրինակ, էսսե գրելու դեպքում չափորոշիչներում կարող է ներառված լինել «գրականության աղբյուրների մանրազնին վերլուծություն և քննարկում» ձևակերպումը:




**Նկ. 1.** Գնահատման գործընթացի կազմակերպման հաջորդականությունը

Հստակ ձևակերպված կրթական վերջնարդյունքների օգնությամբ մշակվում են գնահատման այնպիսի չափանիշներ, որոնք փաստում են ուսանողների կողմից այդ կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը: Ինչպես նշվեց, չափանիշները ուսանողի կողմից գնահատման առաջադրանքը կատարելու հիմնական բնութագրիչներն են: Գնահատման սահմանված չափանիշները պետք է ուղղորդեն ուսանողին գնահատ-

ման գործընթացում՝ տեղեկացնելով, թե նա հատկապես ինչ պետք է կատարի գնահատման առաջադրանքում:

Գնահատման հստակ չափանիշներ սահմանելու համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել կրթական վերջնարդյունքը ձևակերպող այն բային, որը նկարագրում է, թե ինչ պետք է կարողանա անել ուսանողը դասընթացի հաջող ավարտին: Բայը դառնում է կատարողականի ուրույն մի սահմանում, որի օգնությամբ ձևավորվում է չափանիշը: Օրինակ, եթե կրթական վերջնարդյունքը սահմանող բայը «նախագծելն» է, անհրաժեշտ է նախ և առաջ հստակ պատկերացում կազմել, թե որո՞նք են նախագծելու հմտությունների այն կարևորագույն բնութագրիչները, որոնք պարտադիր են ուսանողի համար: Հենց այդ բնութագրիչներն էլ այնուհետև ձևավորում են գնահատման չափանիշները:

Չափանիշները չպետք է պարունակեն կատարման որակի մասին տեղեկություններ. այսպես, անհրաժեշտ է խուսափել նկարագրական այնպիսի բառերից, ինչպես «արդյունավետորեն», «լավ», «բավարար»: Դրանք անհրաժեշտ են գնահատման չափորոշիչները նկարագրելու համար: Հստակ չափանիշներ ձևակերպելու ընթացքում կարող է առաջանալ դասընթացի կրթական վերջնարդյունքների ձևակերպման վերաճշտման անհրաժեշտություն: Կրթական վերջնարդյունքների ձևակերպումը մշտապես կրկնվող շարունակական գործընթաց է, և գնահատման չափանիշների սահմանումը գործնականում օգնում է նաև հստակեցնելու կրթական վերջնարդյունքների ձևակերպումները:

## *4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ*

Դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ցանկի վերլուծությունը թույլ է տալիս սահմանել այն չափանիշները, որոնք այս կամ այն կերպ հիմնավորում են ուսանողների կրթական վերջնարդյունքներին հասնելու փաստը: Կրթական վերջնարդյունքների բնույթը յուրահատուկ ուղեցույց է հանդիսանում գնահատման այնպիսի մեթոդների և առաջադրանքների ընտրության համար, որոնք արժանահավատ կերպով գնահատում են այս կամ այն կրթական արդյունքի ձեռքբերումը:

Գնահատման մեթոդների ճիշտ ընտրությունը նույնպես նպաստում է հուսալի գնահատման իրականացմանը: Կրթական վերջնարդյունքների յուրաքանչյուր տեսակ առավել արդյունավետ գնահատվում է գնահատման որոշակի մեթոդներով:

**Աղ. 1.** Գնահատման մեթոդների օրինակներ

| **Կրթական վերջնարդյունք** | **Գնահատման մեթոդները** |
|---|---|
| 1. **Գիտելիք և իմացություն** ցուցաբերել (հիշել, նկարագրել, զեկուցել, պատմել/ շարադրել, ճանաչել, որոշել, կապ հաստատել, փոխկապակցել) | ▪ Գրավոր քննություն<br>▪ Բանավոր քննություն<br>▪ Էսսե<br>▪ Զեկույց<br>▪ Գրառումների վերաբերյալ մեկնաբանություններ<br>▪ Բարձրացված հարցադրումներին գրավոր պատասխան<br>▪ Կարճ պատասխաններ պահանջող հարցեր. ճիշտ/սխալ/բազմակի ընտրության հարցեր (թղթի վրա կամ համակարգչային գնահատում) |
| 2. **Հաղորդակցվել** (միակողմանի և երկկողմանի հաղորդակցում, հաղորդակցում խմբի ներսում, բանավոր և գրավոր հաղորդակցում, բանավիճում/ փաստարկում, նկարագրում, պաշտպանել, հարցազրույց անցկացնել, բանակցել, ներկա- | ▪ Գրավոր ներկայացում (էսսե, զեկույց, հոդված և այլն)<br>▪ Բանավոր ներկայացում<br>▪ Խմբային աշխատանք<br>▪ Քննարկում/բանավեճ/ դերախաղ<br>▪ Ներկայացում կինոխցիկի առջև |

| | |
|---|---|
| յացնել, որոշակի գրավոր ձևաչափերի օգտագործում) | |
| 3. **Քննադատորեն մտածել և դատողություններ անել** (բերել փաստարկներ, անդրադարձ կատարել, գնահատել, արժևորել, դատել) | ▪ Էսսե<br>▪ Զեկույց<br>▪ Գրախոսություն<br>▪ Հոդված |
| 4. **Լուծել խնդիրներ և մշակել ծրագրեր** (բացահայտել խնդիր-ներ, ձևակերպել/սահմանել խնդիրներ, վերլուծել տվյալներ, կատարել փորձաքննություն, մշակել փորձեր, պլանավորել, օգտագործել տեղեկատվություն) | ▪ Խնդրի լուծման տարբերակների կազմում<br>▪ Խմբային աշխատանք<br>▪ Նախադեպերի վերլուծություն<br>▪ Գիտական հոդվածի պատրաստում |
| 5.**Տեղեկատվություն հայթայթել և կառավարել** (ուսումնասիրել/ հետազոտել, հետաքննել, մեկնա-բանել, հավաքել տեղեկատ-վություն, փորձաքննել և ձևա-փոխել տեղեկատվություն, տվյալներ հավաքել, տեղեկա-տվության աղբյուրների փնտրում և կառավարում, դիտարկում) | ▪ Գրականության ցանկ՝ համա-պատասխան հղումներով<br>▪ Նախագիծ<br>▪ Ատենախոսություն<br>▪ Կիրառական առաջադրանք<br>▪ Կիրառական խնդիր |

Առարկայական համատեքստը նույնպես էական նշանակություն ունի գնա-հատման առաջադրանքի ընտրության համար: Գնահատման որոշ մեթոդներ առավել համարժեք են այս կամ այն առարկայական ոլորտին, քանի որ դրանք զարգացնում են համապատասխան հմտություններ և մասնագիտական կոմպետենցիաներ:

Գնահատումը խթանում և նպաստում է ուսումնառությանը երբ այն.

- ստեղծագործական է և կիրառելի,
- ակնկալում է հստակ վերջնարդյունք,
- պատշաճ կերպով գնահատում է կրթական վերջնարդյունքի ձեռքբերումը,
- համարժեք է և իրատեսական,
- հիմնված է միասնական, այլ ոչ հատվածային մոտեցման վրա,

– արդյունավետորեն է հաշվարկում ժամանակը,
– զարգացնում է ուսանողի ինքնագնահատման կարողությունը:

Դասընթացի կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը գնահատող առաջադրանքներ մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել գնահատման առաջադրանքի հատուկ նպատակը, գրագողության հնարավորությունների նվազեցման և գնահատման ընթացքի արդարացի ժամանակի հաշվառման անհրաժեշտությունը և այլն:

Գնահատման առաջադրանքի մշակումը, բացի գնահատման մեթոդի ընտրությունից, որը պատշաճ կերպով գնահատում է կոնկրետ կրթական վերջնարդյունքները, պայմանավորված է մի շարք հանգամանքներով (երբեմն միմյանց հակադրվող):

Գնահատումը նախ և առաջ պետք է խրախուսի արդյունավետ ուսումնառությունը: Ուսանողներն առավել արդյունավետ կերպով սովորում և առաջադրանքներ են կատարում դասերի/պարապմունքների ընթացքում, քան քննությունների ժամանակ: Ուսումնառությունն էլ ավելի արդյունավետ դարձնելու նպատակով գնահատման առաջադրանքների մշակումը ստեղծագործական աշխատանք է: Հարկ է նշել, որ գնահատման առաջադրանքի վերջնամշակումը շարունակական գործընթաց է, որն անընդհատ լրամշակման կարիք ունի:

Գնահատման առաջադրանքում ուսանողի առջև դրված պահանջները պլանավորելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել առաջադրանքի «անցողիկ» մակարդակի սահմանմանը՝ հավաստիանալով, որ այն թվանշված է պատշաճ մակարդակով:

Ուսանողներին ժամանակ է անհրաժեշտ ուսումնառության ընթացքում ձեռք բերած իմացությունը և հմտությունները կիրառելու համար: Դասընթացները պետք է մշակված լինեն այնպես, որ պարբերաբար ուսանողներին տրամադրվի համապատասխան խորհրդատվություն, որպեսզի յուրացնեն և ամրապնդեն իրենց իմացությունն ու հմտությունները մինչև գնահատումը: Այսպիսով, մինչև եզրափակիչ գնահատման առաջադրանքը պետք է նախատեսվի առնվազն մեկ փորձնական առաջադրանք, որի կատարման ընթացքում ուսանողների հետ կքննարկվի նրանց կատարողականի որակը:

Կրթական վերջնարդյունքների տարատեսակությունը հանգեցնում է գնահատման մեթոդների բազմազանության: Ուսումնառության ընթացքում ուսանողներին անհրաժեշտ է ծանոթացնել գնահատման տարբեր մեթոդների, որոնք ներառում են հետաքրքիր և բազմազան առաջադրանքներ, որոնք առավել արդյունավետ են դարձնում կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը:

Գնահատման առաջադրանքի կատարման իրատեսական ժամանակի որոշումը նույնպես կարևոր նշանակություն ունի գնահատման արդյունավետությունը երաշխավորելու տեսանկյունից: Գնահատման արժանահավատ ժամանակի

հաշվարկը նաև հաշվի է առնում, թե առաջադրանքի ծավալը որքանով է համապատասխանում է վերջինիս իրատեսական կշռին։

## *5. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ*

Չափորոշիչները նկարագրում են գնահատման գործընթացում ուսանողի կատարողականի (պատասխանի, աշխատանքի և այլն) որակական մակարդակը: Հստակ նկարագրված չափորոշիչները ուսանողների համար նախապես պարզ և հասկանալի են դարձնում, թե ինչպե՞ս է գնահատվելու իրենց աշխատանքի որակը: Գնահատման չափորոշիչները որոշելիս դասախոսը պարտավոր է սահմանել և հրապարակել տվյալ դասընթացում ուսանողի առաջադիմության հնարավոր մակարդակները: Դասախոսներն օգտագործում են իրենց մասնագիտական կարողությունները գնահատման չափորոշիչները մշակելու և դրանք ուսանողների աշխատանքի որակը չափելիս կիրառելու համար: Այնուհետև, ուսանողի կատարողականի (առաջադիմության) գնահատումը որոշվում է սահմանված չափորոշիչներին համապատասխան:

Չափորոշիչների մշակման և նկարագրման եղանակները տարբեր են ու բազմազան: Գործընթացը ենթադրում է ուսանողների գնահատման թվանիշերի վերաբերյալ կայացվող որոշումների հիմքում ընկած նկատառումների պրակտիկայի ուսումնասիրություն, նախորդ տարիների ուսանողների նույնանման առաջադրանք-ներին տված պատասխանների փորձի ուսումնասիրում և այլն: Չափորոշիչների մշակման և սահմանման հիմնական խնդիրն է նկարագրել գնահատման առաջադրանքի կատարման ակնկալվող որակական մակարդակները գնահատման յուրաքանչյուր չափանիշի համար: Ընդ որում, առաջին քայլն այս ուղղությամբ պետք է լինի առաջադրանքի կատարման անցողիկ (շեմային) մակարդակի որոշումը, որից հետո արդեն կարելի է նկարագրել վերին և ստորին մակարդակները: Անցողիկ մա-կարդակի որոշումը հաճախ կատարվում է հենց գնահատման առաջադրանքի մշակման ընթացքում, սակայն գործընկերների և այլ մասնագետների հետ այդ խնդրի քննարկումը կարող է նպաստել կայացված որոշման հուսալիությանը:

## *6.ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ*

Գնահատման չափորոշիչների մակարդակների քանակը կախված է հստակ տարբերակում կատարելու հնարավորությունից և գնահատման սանդղակի պահանջներից: Այսպես, մասնագիտական չափորոշիչների մեծ մասն ընդամենը մեկ ձևակերպումն է այն մակարդակի, որն անհրաժեշտ է մասնագիտությամբ աշխատ-անք սկսելու համար: Բազմամակարդակ չափորոշիչներն ավելի շատ մանրամասներ են տրամադրում հնարավոր որակական տվյալների վերաբերյալ, ինչը կարևոր է ուսանողների աշխատանքն ավելի ճշգրիտ գնահատելու համար: Օրինակ, ամենա-պարզ սխեման առաջադրանքի կատարման գնահատումն է երեք մակարդակով (համապատասխանում է ակնկալիքին, գերազանցում է ակնկալիքը, ցածր է

ակնկալիքից): Եռամակարդակ սխեման ավելի հեշտ է ստեղծել, կառավարել և բացատրել, սակայն այն կարող է բավարար չլինել առաջադրանքը կատարելու որակի հնարավոր մակարդակները տարբերակելու համար: Ստորև ներկայացվում է գնահատման մեկ չափանիշի համար անցողիկ և այլ մակարդակի չափորոշիչների որոշումը բնութագրող սխեմա:

**Չափանիշ՝** «*Դրսևորել համարժեք գրականություն ընթերցելու և համապատասխան հղումներ կատարելու կարողություն*»

| Չափորոշիչներ | |
|---|---|
| **«Անբավարար»** | Հանձնարարված կամ ստանդարտ տեքստերին փոքր-ինչ ծանոթ է կամ անծանոթ, հիմնականում օգտագործում է ոչ գրախոսվող համացանցային աղբյուրներ, հղումները բացակայում են: |
| **«Բավարար»** | Հիմնականում, օգտագործում է հանձնարարված կամ ստանդարտ տեքստ՝ փոքրաթիվ այլ աղբյուրներին նվազագույն հղումներ կատարելով կամ առանց հղումների: |
| **«Բավարարից բարձր»** | Համապատասխանում է «բավարար» շեմին, սակայն էսսեն պարունակում է նաև համարժեք գրականությունից հղումներ: |
| **«Լավ»** | Համապատասխանելով նախորդ շեմին՝ օգտագործում է նաև բավականաչափ համարժեք գրականություն, ինչպես նաև վերջին հետազոտություններից ստացված տվյալներ: |
| **«Գերազանց»** | Համապատասխանելով «լավ» շեմին՝ ներկայացնում է գրականությունից ստացված գաղափարների նոր ընկալում: Տարբերակում է աղբյուրներն ըստ որակի և օգտագործում է ոչ ստանդարտ, բայց համարժեք աղբյուրներ: |

Տարբերակում են գնահատման միասնական և վերլուծական չափորոշիչներ: Միասնական չափորոշիչներն ընդհանրական ձևով նկարագրում են առաջադրանքի կատարման ցանկալի մակարդակը: Դրանք գնահատում են ուսանողների կատարողականի ամբողջական մակարդակը, այլ ոչ թե վերջինիս այս կամ այն հատվածը և ավելի իրատեսորեն են ներկայացնում ուսանողների կարողությունները: Այս չափորոշիչները նախընտրելի են այն դեպքում, երբ առաջադրանքի կատարման

հանրագումարային արդյունքն ավելի կարևոր է, քան նրա առանձին բաղադրիչների կատարման որակը։

Վերլուծական չափորոշիչները նկարագրում են առաջադրանքի կատարման առանձին մակարդակներն ըստ յուրաքանչյուր չափանիշի։ Դրանց կիրառումը հնարավորություն է ընձեռում ավելի մանրամասն բացատրելու ուսանողներին, թե նրանք որքանով են լավ կատարել առաջադրանքի տարբեր բաղադրիչները։ Այս չափորոշիչներն առավել կարևոր են ֆորմատիվ (ձևավորող) գնահատման դեպքում։ Ընդհանրապես, չափորոշիչների նկարագրությունը պետք է պարունակի բավարար մանրամասներ, որպեսզի ուսանողները պատկերացում կազմեն առաջադրանքի կատարման մակարդակների մասին, սակայն չպետք է լինի չափազանց մանրատված, որպեսզի նրանց համար չդառնա դժվար ընկալելի։

Այս համատեքստում կարևորագույն կիրառական նշանակություն ունի նաև գնահատման սանդղակը։ Գնահատման սանդղակը մի փաստաթուղթ է, որը պարզաբանում է, թե ինչպես են գնահատվելու ուսանողների պատասխանները։ Այն ցույց է տալիս գնահատման չափանիշները և ձևարկերպում առաջադիմության որակական չափորոշիչները յուրաքանչյուր չափանիշի համար։

Գնահատման սանդղակներն ունեն տարբեր ձևաչափ, որը պայմանավորված է այն հանգամանքով, թե չափորոշիչների ներկայացման որ տարբերակն է նկարագրվում՝ միասնական, թե վերլուծական։ Վերջիններս, սովորաբար, ներկայացվում են աղյուսակով, իսկ միասնական չափորոշիչները կարող են նկարագրվել թե աղյուսակի, թե հաջորդական շարադրանքի տեսքով։

Թվանշանները նկարագրում են առաջադրանքի կատարման մակարդակները։ Դրանք պետք է ընտրել զգուշորեն՝ նախապատվությունը տալով դրական նշանակություն ունեցող բառերին (սկսնակ, առաջանցիկ, զարգացող) և խուսափելով բացասականներից (թույլ, ոչ կոմպետենտ, անբավարար)։ Միասնական չափորոշիչները գնահատման մեկ նիշը տալիս են աշխատանքի ողջ ծավալի համար։ Վերլուծական չափորոշիչները, սովորաբար, բաշխում են նիշերն ըստ յուրաքանչյուր չափանիշի։ Ամեն դեպքում, գնահատման սանդղակը պետք է նպաստի թվանշանների համակարգի պարզեցմանը։

Այստեղ կարևորվում է մեկ հանգամանք ևս։ Այս համակարգում չպետք է միմյանց հետ շփոթել թվանշումը (գնահատական-միավորների հաշվարկը) և ուսումնառության գնահատումը։ Թվանշանները հաճախ հիմնված են լինում ոչ միայն կրթական վերջնարդյունքների վրա. թվանշման չափանիշները հաճախ ներառում են նաև վարքը կամ այլ գործողություններ, որոնք չեն չափում կրթական վերջնարդյունքը, ինչպես, օրինակ, ներկայությունը, մասնակցությունը կամ ջանասիրությունը։ Չնայած այն հանգամանքին, որ դրանք ինչ-որ առումով կարող են փոխկապակցվել կրթական վերջնարդյունքների հետ և արժևորել դասընթացի այս կամ այն ասպեկտը, սակայն որպես կանոն դրանք կրթական արդյունքների չափման

միջոցներ չեն հանդիսանում: Այնուամենայնիվ, ուսումնառության գնահատումը կարող է և պետք է հիմնված լինի թվանշանների վրա, և թվանշանները կարող են լինել գնահատման գլխավոր աղբյուրներից մեկը: Դրանք պետք է ունենան հստակ ձևակերպումներ, որոնք հետևողականորեն կիրառվում են: Առանձին թվանշաններ կամ ենթամիավորներ պետք է հաշվարկվեն գիտելիքի և հմտությունների հիմնական բաղադրիչների համար, այնպես, որ հնարավոր լինի որոշել ուսանողների այս կամ այն ոլորտի թույլ և ուժեղ կողմերը: Ուժեղ և թույլ կողմերի գնահատման այս համակարգն ապահովում է այնպիսի հետադարձ կապ, որը շատ օգտակար է՝ (ա) ուսանողների համար, որովհետև կարող է ուղղորդել և կենտրոնացնել նրանց գործունեությունը. (բ) դասախոսի համար, քանի որ կարող է բացահայտել այն թեմաները և հմտությունները, որոնք պահանջում են դասավանդման լրացուցիչ ջանքեր. (գ) ամբիոնի/ֆակուլտետի համար, որովհետև կարող է ուղենշել ուսումնական պլանում հնարավոր փոփոխությունները:

Գոյություն ունեն գնահատման տարբեր մեթոդներ, և դրանցից յուրաքանչյուրը կարող է գնահատել տարբեր հմտություններ և կարողություններ: Կրթական վերջնարդյունքները ճշգրտորեն գնահատելու համար գնահատման յուրաքանչյուր տեսակ (օր.՝ քննություն, նախագիծ, առաջադրանք և այլն) անհրաժեշտ է վերլուծել այն տարբեր հմտությունների տեսանկյունից, որոնք այն կարևորում է և զուգընթաց հաշվարկել գնահատման տարբեր գործողություններ, որոնք պետք է կազմվեն և առաջադրվեն յուրաքանչյուր հմտության համար:

Գնահատման այս համակարգը գնահատման կառուցման, իրագործման և հետագա պարզաբանման պատասխանատվությունը դնում է դասախոսի վրա, քանի որ նա միայն ունի բովանդակային փորձագիտական ունակություն, ինչպես նաև դասընթացի ուսումնական նպատակների և գնահատման մեթոդների ու նյութերի մասին իմացություն: Ավելին, միայն առարկայի դասախոսը կամ ամբիոնի դասախոսները՝ որպես մասնագիտական խումբ կարող են որոշում կայացնել պատշաճ չափանիշների և չափորոշիչների վերաբերյալ՝ դասակարգելու համար կրթական վերջնարդյունքի գնահատման «գերազանց», «լավ», «բավարար» կամ «անբավարար» մակարդակները: Այնուամենայնիվ, երբ այդ կարգի գնահատումը համակցվում է ուսումնառության խնդիրների հստակ ձևակերպման հետ, արտաքին գնահատողները (դեկանը, պրոռեկտորը, արտաքին հավատարմագրողները, այլ բուհերի համանման ամբիոնները, գործատուները և այլն) հնարավորություն են ունենում արժևորելու այն մակարդակը (աստիճանը), որին ուսանողները, ինչպես անհատապես, այնպես էլ որպես խումբ, հասել են ցանկալի կրթական վերջնարդյունքների ձեռք բերման ճանապարհին:

## *7. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ*

Ստորև ներկայացվում են գնահատման չափանիշների ձևակերպման, չափորոշիչների սահմանման և գնահատման սանդղակում վերջիններիս միավորման մի քանի գործնական օրինակներ:

**Օրինակ 1.** Գնահատվում է լսարանի առջև ելույթ ունենալու կարողությունը

| Գնահատման չափանիշները | Գնահատման չափորոշիչները | | |
|---|---|---|---|
| | *Գերազանց* | *Լավ* | *Բավարար* |
| **Գիտելիք** | Ելույթն ընդգրկում է տեսական եգործնական հարուստ տեղեկատվություն, բոլոր փաստարկները հիմնավոր են, ներառված են թեմայի հիմնական գաղափարները: | Ընդհանուր առմամբ, ելույթը ներառում է տեսական և գործնական տեղեկատվություն, սակայն երբեմն թերի են հիմնավորումները, հիմնահարցերը միայն մասամբ են ներկայացված: | Միայն մասամբ է ներկայացվում տեղեկատվությունը, գրեթե բացակայում էհիմնավորված խոսքը: Թեման ներկայացված է թերի: |
| **Մեկնաբանություններ և պատասխաններ հարցադրումներին** | Ներկայացնողը հարցադրումներին տալիս է տրամաբանված պատասխաններ, փաստարկներով հիմնավորելով իր խոսքը: | Ներկայացնողը հարցադրումներին պատասխանում է հետևողականորեն, սակայն երբեմն մեկնաբանություններն այնքան էլ համոզիչ չեն: | Ներկայացնողը խուսափում է հարցադրումներից, պատասխանները հիմնավոր չեն: |
| ***Տեսողական օժանդակ նյութերի կիրառումը*** | Ելույթն ընդգրկում է համապատասխան և դյուրըմբռնելի տեսողական օժանդակ նյութեր, որոնք ելույթ ունեցողը կիրառում է տեղին՝ հղումներ կատարելով ն մեկնաբանելով: | Բանավորխոսքն ուղեկցվում է համապատասխան տեսողական օժանդակ նյութերով,սակայն դրանք բավական քիչ են: Օժանդակ նյութերն առանձնապես չեն առնչվում ելույթի հետ, ելույթ ունեցողը մոռանում է զուգահեռներ անցկացնել և օգտագործված օժանդակ նյութերին հղումներ կատարել: | Ելույթը չի ուղեկցվում պատկերավոր օժանդակ նյութերով կամ ուղեկցվում է, սակայն ոչ տեղին, օգտագործված նյութերը քիչ են և խրթին: |
| ***Լսարանի առջև ելույթ ունենալու կարողություններ*** | Ներկայացնողը խոսում է հստակ և բարձր, լսարանի հետ առկա է անընդհատ կապ, կեցվածքը և շարժուձևերը գրավում են ունկնդիրներին: | Ներկայացնողը խոսում է հստակ և բավականաչափ բարձր՝ լսելի լինելու համար, սակայն կապը լսարանի հետ արդյունավետ չէ: | Ներկայացնողը խոսում է ցածր, ներկաները ձանձրանում են և գրեթե ներգրավված չեն: Ոչ մի փորձ չի արվում լսարանը գրավելու համար: |

Օրինակ. 2. Գնահատվում է լսարանի առջև ելույթ ունենալու կարողությունը

| Գնահատման չափանիշները | Գնահատման չափորոշիչները | | | |
|---|---|---|---|---|
| | *Անբավարար* | *Բավարար* | *Լավ* | *Գերազանց* |
| *Խոսքի տրամաբանական կառուցվածքը* | Լսարանը չի կարողանում հասկանալ նյութը, քանի որ մտքերի տրամաբանական հաջորդականություն չկա: | Լսարանը դժվարությամբ է հետևում մտքերի ընթացքին, քանի որ խոսքի տրամաբանական շղթան հաճախ ընդհատվում է: | Ուսանողի մտքերն աչքի են ընկնում տրամաբանական հաջորդականությամբ, և լսարանը կարողանում է հետևել խոսքի ընթացքին: | Ուսանողի մտքերն ունեն տրամաբանական կուռ կառուցվածք, հետաքրքիր ընթացք, բերված օրինակները դիպուկ են և ուշագրավ, լսարանը ներգրավված է և հետաքրքրված: |
| *Առարկայի իմացությունը* | Ուսանողի իմացությունը թերի է, չի կարողանում հարցերին սպառիչ պատասխաններ տալ: | Ուսանողը նյութը լավ չի յուրացրել և կարողանում է պատասխանել միայն տարրական հարցերին: | Ուսանողը հեշտությամբ է գտնում բոլոր հարցերի պատասխանները, սակայն չի կարողանում հիմնավորել իր պատասխանները: | Ուսանողն ունի հիմնարար գիտելիքներ, տալիս է սպառիչ պատասխաններ՝ մեկնաբանություններով և գաղափարական նոր մոտեցումներով: |
| *Գծապատկերները* | Ուսանողը չի օգտագործում որևէ տեսողական պատկեր, գծապատկեր, ինչն անհրաժեշտ է նյութը հասկանալի դարձնելու համար: | Ուսանողն օգտագործում է գծապատկերներ, որոնք հազվադեպ են լրացնում տեքստը և ելույթը: | Ուսանողի ներկայացրած գծապատկերներն առնչվում են տեքստին և ելույթին, սակայն դեռևս շտկման կարիք կա: | Ուսանողը մեկնաբանում է գծապատկերները և դրանցով ավելի բովանդակային դարձնում խոսքը: Բոլոր տեսողական պատկերներն արտահայտիչ են և նպաստում են նյութի ընկալմանը: |
| *Լեզվամտածողությունը* | Ուսանողը ելույթի ընթացքում թույլ տվեց քերականական և (կամ) արտասանական չորս և ավելի սխալ: | Ուսանողը ելույթի ընթացքում թույլ տվեց քերականական և (կամ) արտասանական երեք սխալ: | Ուսանողը ելույթի ընթացքում թույլ տվեց երկուսից ոչ ավելի քերականական և (կամ) արտասանական սխալ: | Ուսանողի խոսքը գրագետ էր, չկային քերականական և արտասանական սխալներ: |
| *Կապը լսարանի հետ* | Ուսանողի զեկույցն անկենդան է, բացակայում է կապը լսարանի հետ: | Ուսանողը մեծ մասամբ ընթերցում է զեկույցը, երբեմն-երբեմն փորձում է կապ հաստատել լսարանի հետ: | Ուսանողը մեծ մասամբ պահպանում է կապը լսարանի հետ, սակայն հաճախ անդրադառնում է գրառումներին: | Ուսանողը պահպանում է կապը լսարանի հետ՝ հազվադեպ անդրադառնալով գրառումներին: |

**Օրինակ 3.** Գնահատվում է թիմային ելույթը

| Գնահատ-ման չափա-նիշները | Գնահատման չափորոշիչները | | |
|---|---|---|---|
| | *Օրինակելի* | *Բավարար* | *Ենթակա է զարգացման* |
| *Ելույթ ունենալու կարողու-թյունները* | Ելույթ ունեցողը խոսեց հստակ, դան-դաղն բավականաչափ բարձր, գեղեցիկ առո-գանությամբ: Պահ-վածքը, շարժումները համապատասխանում էին ելույթի ձնաչա-փին (պաշտոնական կամ ոչ պաշտոնա-կան): Արդյունավետ օգտագործվեց ելույթին հատկացված ողջ ժամանակը: | Նյութը հասկանալի էր, բայց խոսքը՝ ոչ հստակ: Խոսողի պահվածքը չէր համապատասխանում ելույթի ձնաչափին, սակայն դա էական ազդեցություն չթողեց: Խոսողը չկարո-ղացավ արդյունավետ օգտագործել ժամանակը, ավարտեց նախատեսված ժամանակից մի փոքր շուտ (կամ ուշ): | Խոսքը հստակ չէր, լսարանը դժվարությամբ հետևեց ընթաց-քին: Խոսողը հուզված էր, լսա-րանը դժվարությամբ էր կենտ-րոնանում նյութի բովանդա-կության վրա: Ելույթ ունեցողը չկարողացավ արդյունավետ օգտագործել ժամանակը, ավարտեց բավականին շուտ (կամ ուշ): |
| *Թիմային աշխա-տանքը* | Ելույթ ունեցողը կամ օգնականը լիարժեք օգտվեցին սարքավո-րումներից: Ելույթ ունեցողն իր թիմի բոլոր անդամներին արտահայտվելու հնարավորություն տվեց:Անհատական ելույթները տրամաբանորեն հաջորդեցին իրար: | Թիմում տեղի ունեցավ սխալ դերաբաշխում, սա-կայն դա մեծ ազդեցություն չունեցավ ընթացքի վրա: Թիմի որոշ անդամներ մյուսներին արտա-հայտվելու հնարավորու-թյուն չտվեցին: Անհատա-կան ելույթները տրամաբա-նորեն հաջորդեցին միմ-յանց, սակայն որոշ դեպքե-րում կապը հստակ չէր: | Ելույթն անկազմակերպ էր, չկար հստակ դերաբաշխում: Մեկ կամ մի քանի հոգի իրենց վրա վերցրեցին հիմնական պատասխանատվությունը: Անհատական ելույթների միջն բացակայում էր տրամաբա-նական կապը: |
| *Բովան-դակու-թյունը* | Փաստերը կամ օրի-նակները մանրամասն էին, ճշգրիտ և համա-պատասխան: Տեսու-թյունները, որոնց հղում էր արված, հստակ նկարագրված էին և համապատաս-խան ձևով օգտագործ-ված: Վերլուծություն-ները, քննարկումները և եզրակացություն-ներն առնչվում էին օրինակների, փաստե-րի և տեսությունների հետ: | Փաստերն ու օրինակները հիմնականում մանրամասն էին, ճշգրիտ և համապա-տասխան, սակայն կային վրիպումներ: Տեսություն-ներին հղումներ արված էին, բայց դրանք հստակ չէին նկարագրված կամ: Վերլուծությունների, քննարկումների և եզրա-կացությունների միջն կապն ակնհայտ չէր կամ ենթադրվում էր: | Փաստերում և օրինակներում բացակայում էին մանրամաս-ները, օրինակները չէին համա-պատասխանում և անհասկանա-լի էին: Այն տեսությունները, որոնց հղումներ էր կատարված, նկարագրված էին ոչ հստակ և ճիշտ չէին օգտագործված: Ոչ մի տրամաբանական կապ չկար վերլուծությունների, քննարկումների և օրինակների, փաստերի և տեսությունների միջն: |

**Օրինակ 4.** Գնահատվում է օտար լեզվի իմացության մակարդակը (վերցված է *Եվրոպական լեզվական փաթեթի* մակարդակների նկարագրիչներից)

| Գնահատման աստիճանները | Գնահատման չափանիշները | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *Հ ա ս կ ա ն ա լ* | | *Խ ո ս ե լ* | | *Գ ր ե լ* |
| | *Լսել* | *Կարդալ* | *Խոսակցական շփում* | *Խոսքի վերարտադրություն* | *Գրել* |
| **Վարպետ C2** | Ես առանց որևէ դժվարության հասկանում եմ ցանկացած խոսակցական լեզու, կենդանի, թե հեռարձակված, անգամ երբ այն մատուցվում է բնական արագությամբ, պայմանով, որ ժամանակ ունենամ վարժվելու ակցենտին: | Ես կարող եմ հեշտությամբ հասկանալ ցանկացած գրավոր խոսք, այդ թվում՝ վերացական, կառուցվածքային և լեզվաբանական առումովբարդ տեքստերը, ինչպես, օրինակ, ձեռնարկներ, մասնագիտական հոդվածներ և գրականգործեր: | Ես կարող եմ առանց որևէ ջանքի մասնակցել ցակացած խոսակցության կամ բանավեճի և ծանոթ եմ իդիոմատիկ ու խոսակցական արտահայտություններին: Կարող եմ ազատ արտահայտվել և հստակ փոխանցել իմաստային նրբերանգները: Իսկ դժվարանալիս կարող եմ ետ վերադառնալ և նույնքան սահուն վերաշարադրել նախադասությունը, որ մյուսներն անգամ չզգան իմ դժվարությունը: | Ես կարող եմ ներկայացնել հստակ, սահուն նկարագրություն կամ փաստարկ՝ համատեքստին համահունչ ոճով ու տրամաբանական կառուցվածքով, որըլսողին կօգնի գրառել և մտապահել կարևոր հատվածները: | Ես կարող եմ գրել հստակ, սահուն տեքստ՝ համապատասխան ոճով: Կարող եմ գրել բարդ նամակներ, հաշվետվություններ կամ հոդվածներ, որոնք ներկայացնում են նյութը տրամաբանական հստակ կառուցվածքով, ինչնընթերցողին կօգնի գրառել և մտապահել կարևոր հատվածները: Ես կարող եմ գրել համառոտագրեր, ինչպես նաև մասնագիտական ու գրական գործերի գրախոսականներ: |
| **Վարպետ C1** | Ես կարող եմ հասկանալ անգամ երկար խոսքը, երբ այն հստակ չի կառուցված և երբ հարաբերությունները միայն ենթադրվում են: Կարող եմ հասկանալ հեռուստատեսային | Ես կարող եմ հասկանալ երկար ու բարդ փաստագրական և գրական տեքստեր՝ արժևորելով ոճական տարբերությունները: Ես կարող եմ հասկանալ մասնագիտական հոդվածներ և բարդ տեխնիկա- | Ես կարող եմ վարժ և անկաշկանդ արտահայտվել առանց անհրաժեշտ արտահայտությունները փնտրելու ակնհայտ ջանքերի: Կարող եմ ճկուն և արդյունավետ օգտագործել լեզուն | Ես կարող եմ հստակ և մանրամասն ներկայացնել բարդ երևույթների նկարագրությունները՝ ինտեգրելով ենթաթեմաները, զարգացնելով առանձին կետեր ու եզրափակելով | Ես կարող եմ արտահայտվել հստակ և լավ կառուցված տեքստի միջոցով, արտահայտելով որոշակի տեսակետներ: Կարող եմ նամակում, ակնարկում կամ հաշվետվությունում գրել բարդ նյութերի շուրջ, ընդգծելով կարևորը: Ես կարող եմ ընտրել ոճ, հաշվի առնելով |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ծրագրերն ու կինոնկարներն առանց մեծ ջանքերի: | կանձեռնարկներ, անգամ եթե դրանք չեն առնչվում իմ ոլորտին: | սոցիալական և մասնագիտական նպատակներով: Ես կարող եմ հստակ ձևակերպել գաղափարներ ու կարծիքներ և վարպետորեն իմ կարծիքը հայտնել մյուս մասնակիցներին: | համապատասխան եզրակացությամբ: | ընթեցողի անձը: |
| Անկախ B2 | Ես կարող եմ հասկանալ երկար խոսքը և դասախոսությունը, իսկ հաջորդ անգամ՝ փաստարկների բարդ շարքը, եթե թեման ինձ փոքրիշատե ծանոթ է: Ես գրեթե կարող եմ հասկանալ հեռուստատեսային նորությունները և ընթացիկ ծրագրերը: Կարող եմ հասկանալ կինոնկարները՝ մատուցված առօրյա լեզվով: | Ես կարող եմ կարդալ ժամանակակից խնդիրներին վերաբերող հոդվածներ և հաշվետվություններ, որտեղ հեղինակներն ունեն որոշակի մոտեցում կամ տեսակետ: Ես կարող եմ հասկանալ ժամանակակից գրական արձակը: | Ես կարող եմ որոշակի վարժությամբ և անմիջականորեն շփվել, ինչը միանգամայն հնարավոր է դարձնում մշտական շփումը լեզուն կրողների հետ: Ես կարող եմ ակտիվորեն մասնակցել ծանոթ թեմաների շուրջ բանավեճերի, գնահատելով և պաշտպանելով իմ տեսակետները: | Ես կարող եմ հստակորեն և մանրամասն ներկայացնել իմ հետաքրքրությունների ոլորտի բավականին լայն շրջանակի նյութերի նկարագրությունները: Կարող եմ բացատրել թեմատիկ խնդրի վերաբերյալ տեսակետներ՝ տալով հնարավոր տարբերակների առավելություններն ու թերությունները: | Ես կարող եմ գրել հստակ, մանրամասն տեքստ իմ հետաքրքրությունների ոլորտի լայն շրջանակի թեմաների վերաբերյալ: Կարող եմ գրել ակնարկ կամ հաշվետվություն: Ես կարող եմ գրել նամակներ՝ ընդգծելով դեպքերի և փորձառության անձնական կարևորությունը: |
| Անկախ B1 | Ես կարող եմ հասկանալ աշխատանքում, դպրոցում, հանգստանալիս պատահող ծանոթ նյութի շուրջ հստակ սովորական խոսքի գլխավոր միտքը: Կարող եմ հասկանալ բազմաթիվ ռադիո և հեռուստածրագրեր | Ես կարող եմ հասկանալ տեքստեր, որոնք հիմնականում պարունակում են հաճախ հանդիպող ամենօրյա կամ աշխատանքին առնչվող բառապաշար: Ես կարող եմ հասկանալ անձնական նամակներու դեպքերի նկարագրությունը, | Ես մեծ մասամբ կարող Եմ հաղթահարել տվյալ լեզվով խոսող երկրում ճամփորդելիս պատահող իրավիճակները: Ես կարող եմ հանպատրաստից մտնել խոսակցության մեջ այն թեմաների շուրջ, որոնք ինձ ծանոթ | Ես կարող եմ պարզ կերպով կապել բառակապակցություններ, նկարագրել ապրումներ և դեպքեր, իմ երազանքները, հույսերը և հավակնությունները: Ես կարող եմ հակիրճ պատճառաբանել և բացատրել կար- | Ես կարող եմ ինձ ծանոթ կամ անձնական հետաքրքրության թեմաների վերաբերյալ գրել պարզ կապակցված տեքստ:Ես կարող եմ գրել անձնական բնույթ նամակ, նկարագրելով ապրումներն ու տպավորությունները: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ընթացիկ իրադարձությունների կամ անձնական, մասնագիտական թեմաների վերաբերյալ, երբ մատուցումը համեմատաբար դանդաղ է և հստակ: | արտահայտված զգացմունքներն ու ցանկությունները: | են, իմ հետաքրքրության շրջանակներում կամ առօրյա կյանքից են (օր., ընտանիք, հոբբի, աշխատանք, ճամփորդություն և ընթացիկ դեպքեր): | ծիքներն ու ծրագրերը: Ես կարող եմ շարադրել պատմություն կամ պատմել գրքի կամ կինոնկարի բովանդակությունը և նկարագրել իմ զգացողությունները: | |
| Բազային A2 | Ես կարող եմ հասկանալ բառակապակցություններ և հաճախ գործածվող բառեր, որոնք անմիջականորեն վերաբերում են անձնական թեմաներին (օր., խիստ պարզ անձնական և ընտանեկան տեղեկություններ, գնումներ, զբաղվածություն): Կարող եմ ըմբռնել կարճ, հստակ, պարզ ուղերձների ու հայտարարությունների հիմնական իմաստը: | Ես կարող եմ կարդալ շատ հակիրճ, պարզ տեքստեր: Ես կարող եմ քաղել հատուկ, կանխատեսելի տեղեկատվություն ամենօրյա պարզ նյութերից, ինչպիսիք են՝ հայտարարությունները, տեղեկատվական գրքույկները, ցանկերը և ժամանակացույցերը և կարող եմ հասկանալ հակիրճ, պարզ անձնական նամակները: | Ես կարող եմ շփվել պարզ և սովորական պարտականությունների շուրջ, որ պահանջում է ծանոթ թեմաների և գործողությունների մասին տեղեկատվության պարզ և անմիջական փոխանակում: Ես կարող եմ վարել շատ հակիրճ ընդհանուր խոսակցություններ, թեև սովորաբար չեմ կարող բավականաչափ երկար շարունակել խոսակցությունը: | Ես կարող եմ օգտագործել բառակապակցությունների և նախադասությունների շարքեր՝ պարզ բառերով նկարագրելու իմ ընտանիքը և այլ մարդկանց, կենսապայմանները, իմ մասնագիտական կրթությունը և իմ ներկա և անցյալ աշխատանքը: | Ես կարող եմ առաջին անհրաժեշտության հարցերի շուրջ գրել հակիրճ, պարզ գրություններ և ուղերձներ: Ես կարող եմ գրել շատ պարզ անձնական նամակ, օրինակ՝ շնորհակալություն հայտնել ինչ-որ մեկին, ինչ-որ բանի համար: |
| Բազային A1 | Ես կարող եմ ըմբռնել ծանոթ բառերը և ինձ, իմ ընտանիքին և անմիջական շրջապատին վերաբերող շատ սովորական բառակապակցություններ,երբ մարդիկ խոսում են դանդաղ և հստակ: | Ես կարող եմ հասկանալ ծանոթ անուններ, բառեր և շատ պարզ նախադասություններ, որոնք հանդիպումեն,օրինակ, պաստառների և պիտակների վրա կամ կատալոգների մեջ: | Ես կարող եմ շփվել պարզ ձևով, եթե զրուցակիցս պատրաստ է կրկնել կամ այլ ձևով վերաշարադրել իր ասածն ավելի դանդաղ և օգնել ինձ ձևակերպելու այն, ինչը ես փորձում եմ | Ես կարող եմ օգտագործել պարզ բառակապակցություններ և նախադասություններ՝ նկարագրելու, թե որտեղ եմ ապրում և ում եմ ճանաչում: | Ես կարող եմ գրել հակիրճ, պարզ բացիկ, օրինակ, ամանորյա շնորհավորանքներ ուղարկելիս: Ես կարող Եմ լրացնել անձնական տվյալների հարցաթերթիկ, օրինակ, գրելով իմ անունը, ազգությունը և հասցեն հյուրանոցի գրանցման թերթիկում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ասել: Կարող եմ տալ պարզ հարցեր առաջին անհրաժեշտության կամ շատ ծանոթ թեմաների վերաբերյալ: | | |

## 3.3. ԵՊՀ-ումուսանողների գնահատման վերաբերյալ հարցման կանոնա-կարգ

### 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ուսանողների գնահատման վերաբերյալ հարցման (այսուհետ` հարցում) կանոնակարգը սահմանում է համալսարանում գործող ուսանողների գնահատման գործընթացի արդյունավետության վերաբերյալ ԵՊՀ ուսանողների և դասախոսական կազմի շրջանում անցկացվող հարցման իրականացման, արդյունքների մշակման և օգտագործման կարգը:

1.2. Հարցումն անցկացվում է ԵՊՀ կանոնադրության, ԵՊՀ Որակի ապահովման հայեցակարգի և ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգի պահանջներին համապատասխան և հանդիսանում է ԵՊՀ-ում դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացների որակի բարելավման կարևորագույն գործառույթը:

1.3. Հարցման կանոնակարգը և օգտագործվող հարցաթերթերի բովանդակությունը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ է կատարում ԵՊՀ Գիտական խորհուրդը` ԳԽ Որակի ապահովման մշտական հանձնաժողովի երաշխավորությամբ:

### 2. Հարցման անցկացումը և արդյունքների մշակումը

2.1. Ուսանողների գնահատման արդյունավետության վերաբերյալ հարցումն իրականացվում է յուրաքանչյուր ուստարի` հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

2.2. Հարցումն անց է կացվում ապակենտրոնացված կարգով` ֆակուլտետների և կենտրոնների ղեկավարության կողմից:

2.3. Հարցումն անց է կացվում ուսանողների և դասախոսների համար նախատեսված առանձին հարցաթերթերով (հավելված 1 և հավելված 2), որտեղ նրանք հինգ միավորանոց սանդղակով արտահայտում են իրենց համաձայնության (անհամաձայնության) աստիճանը` ԵՊՀ-ում ուսանողների

գնահատման արդյունավետության վերաբերյալ առաջադրված հարցադրումների հետ:

2.4. Հարցման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր հարցադրման պատասխանի համար հաշվարկված գնահատումների միջին թվաբանականով և միջին քառակուսային շեղումով, որտեղ միջին թվաբանականը արտացոլում է հարցման մասնակիցների տված գնահատականների միջին արժեքը, իսկ միջին քառակուսային շեղումը՝ հարցման մասնակիցների միջև փոխհամաձայնության աստիճանը[31]:

2.5. Հարցաթերթերն ունեն կարծիքների և առաջարկությունների բաժին, որի արդյունքները մշակվում և ներկայացվում են որակական ցուցանիշներով և գնահատման տարբեր ասպեկտների բարելավմանն ուղղված ընդհանրացված առաջարկություններով:

2.6. Հարցումն անանուն է և կարող է անցկացվել ինչպես թղթային, այնպես էլ առցանց եղանակներով: Հարցման արդյունքները համարվում են վավեր, եթե դրան մասնակցել է խմբի/հոսքի ուսանողների առնվազն 1/3-ը:

2.7. Դասախոսների շրջանում հարցումն իրականացվում է ֆակուլտետի հիմնական դասախոսական կազմի առնվազն կեսի մասնակցության պայմաններում:

2.8. Ուղղումներ (ջնջումներ) պարունակող պատասխանները հաշվի չեն առնվում արդյունքների մշակման ժամանակ:

### 3. Հարցման արդյունքների օգտագործումը

3.1. Գնահատման արդյունավետության վերաբերյալ ուսանողական և դասախոսական հարցման արդյունքները մեկ ամսվա ընթացքում վերլուծվում են համապատասխան ֆակուլտետում: Անհրաժեշտության դեպքում ֆակուլտետի դեկանը կազմակերպում է քննարկումներ ֆակուլտետի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ:

3.2. Վերլուծության և/կամ քննարկումների արդյունքում մշակվում են գնահատման գործընթացի բարելավմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ և միջոցառումներ, որոնց մասին ուսանողները և դասախոսները տեղեկացվում են երկամսյա ժամկետում:

3.5. Ուսանողների գնահատման բարելավմանն ուղղված առաջարկությունները և միջոցառումները ֆակուլտետի գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի երաշխավորությամբ ներկայացվում են ֆակուլտետի ԳԽ

[31] Միջին քառակուսային շեղումը ցույց է տալիս գնահատումների շեղման չափը միջին թվաբանականից: Որքան մեծ է միջին քառակուսային շեղումը, այնքան հարցման մասնակիցների անհատական գնահատումներն ավելի լայն տիրույթում են ցրված:

հաստատմանը, որտեղ նշվում են դրանց կատարման ժամկետը և կոնկրետ պատասխանատուները:

# 4. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

## 4.1 ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգը

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով սահմանվում է Երևանի պետական համալսարանի (այսուհետ ԵՊՀ) գիտական համակազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման կարգն ու պայմանները, ինչպես նաև գիտական համակազմի պաշտոնների նկարագրությունը:

2. Սույն ընթացակարգի ընդունման իրավական հիմքերն են՝ <Կրթության մասին>, <Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքները, «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.10.2001թ. № 935 որոշումը, <Երևանի պետական համալսարան> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը և ԵՊՀ ներքին իրավական ակտերը:

3. ԵՊՀ-ում գիտական համակազմի պաշտոնների տեղակալումն իրականացվում է բաց մրցութային ընտրության միջոցով՝ մինչև 5 տարի ժամկետով:

## II. ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. ԵՊՀ-ում սահմանվում են գիտական համակազմի հետևյալ տարակարգերը՝ գլխավոր գիտական աշխատող, առաջատար գիտական աշխատող, ավագ գիտական աշխատող, գիտական աշխատող, կրտսեր գիտական աշխատող:

5. Գիտական համակազմի պաշտոնների տեղակալման չափանիշներն են՝

ա) պաշտոնի հավակնորդի բարձրագույն և/կամ հետբուհական մասնագիտական կրթության որակավորումը, գիտական աստիճանը, կոչումը,

բ) մասնագիտական հմտությունները,

գ) գիտահետազոտական գործունեության արդյունքները:

6. Գլխավոր գիտական աշխատողի (գիտական ստորաբաժանման ղեկավարի) թափուր պաշտոնին կարող են հավակնել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսները և թղթակից անդամները, ինչպես նաև գիտության այն դոկտորները, ովքեր ղեկավարել են գիտական ուղղություն կամ ստեղծել են գիտական դպրոց և ունեն ոչ պակաս քան 15 տարվա գիտական աշխատանքի փորձ (ստաժ):

7. Առաջատար գիտական աշխատողի (գիտական ստորաբաժանման կամ գիտական խմբի ղեկավարի) թափուր պաշտոնին կարող են հավակնել գիտության դոկտորները, ինչպես նաև գիտությունների թեկնածուի աստիճան ունեցող այն անձինք, ովքեր ունեն տասը[32] տարվա գիտական աշխատանքի փորձ և տվյալ մասնագիտությամբ արժեքավոր գիտական աշխատանքներ:

8. Ավագ գիտական աշխատողի թափուր պաշտոնին կարող են հավակնել գիտության դոկտորները, ինչպես նաև գիտությունների թեկնածուի աստիճան ունեցող այն անձինք, ովքեր ունեն տասը տարվա գիտական աշխատանքի փորձ:

9. Գիտական աշխատողի թափուր պաշտոնին կարող են հավակնել գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցողները կամ համապատասխան մասնագիտության գծով ասպիրանտուրան ավարտած և հինգ տարվա գիտական աշխատանքի փորձ ունեցող անձինք:

10. Կրտսեր գիտական աշխատողի թափուր պաշտոնին կարող են հավակնել գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցողները, համապատասխան մասնագիտության գծով դիպլոմավորված մասնագետները, մագիստրոսի աստիճան ունեցողները:

## III. ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

[32] Այսուհետ նշվում է պահանջվող ստորին շեմը

11. Պաշտոնների տեղակալման համար մրցույթները հայտարարվում են ռեկտորի հրամանով:

Մրցույթի վերաբերյալ հայտարարությունը տպագրվում է հանրապետական պարբերական մամուլում և հրապարակվում է ԵՊՀ ինտերնետային կայքում: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները, փաստաթղթերի ներկայացման վայրն ու վերջնաժամկետը:

Մրցույթին մասնակցելու փաստաթղթերն ընդունվում են հայտարարության օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում:

12. Մրցույթի մասնակիցները, մրցույթի վերաբերյալ հայտարարության օրվանից՝ մեկամսյա ժամկետում ներկայացնում են դիմում՝ ռեկտորի անունով, կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն, բարձրագույն կրթության վկայականի (դիպլոմի), գիտական աստիճանի դիպլոմի, գիտական կոչման վկայականի պատճենները, հրատարակված գիտական աշխատությունների և գյուտերի ցանկը:

Մրցույթի մասնակիցը կարող է ներկայացնել նաև գիտական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր:

13. Մրցույթի մասնակիցների փաստաթղթերը ռեկտորի մակագրությամբ ուղարկում են համապատասխան ստորաբաժանման քննարկմանը:

Դիմումները ենթակա են մերժման, եթե հավակնորդի տվյալները չեն բավարարում մրցույթի պայմաններին, կամ չի պահպանվել դիմումի ներկայացման ժամկետը:

14. Գիտական ստորաբաժանման նիստում հավակնորդների փաստաթղթերի քննարկման արդյունքում, բաց քվեարկությամբ (եթե այլ որոշում չի կայացվել) ընդունվում է կարծիք, որը ներկայացվում է ֆակուլտետի (ԵՊՀ, ինստիտուտի) գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովին:

15. Մրցութային հանձնաժողովն ուսումնասիրում է մրցույթի մասնակիցների փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ տալիս է գրավոր կարծիք: Գրավոր կարծիքում նշվում են.

- պաշտոնի հավակնորդի մասնագիտական բնութագիրը և գիտական որակավորումը,
- առաջարկվող պաշտոնում հավակնորդի առաջադրման հիմնավորումը,
- կազմակերպված քվեարկության արդյունքները:

16. ա) Ֆակուլտետի ենթակայության գիտական ստորաբաժանման գիտական համակազմի պաշտոնների մրցույթներն անցկացվում են ֆակուլտետի գիտական խորհրդում:

բ) Ինստիտուտների գիտական համակազմի պաշտոնների մրցույթներն անցկացվում են ինստիտուտի գիտական խորհրդում:

գ) Մնացած գիտական ստորաբաժանումների գիտական համակազմի պաշտոնների մրցույթներն անցկացվում են ԵՊՀ գիտական խորհրդում:

17. Գիտական խորհրդի նիստին գիտական համակազմի պաշտոնի թեկնածուի ներկայությունը, որպես կանոն պարտադիր է: Թեկնածուի բացակայության դեպքում գիտական խորհուրդը որոշում է կայացնում թեկնածությունը քննարկելու կամ քննարկումից հանելու մասին:

Քննարկման ընթացքում գիտական խորհրդի անդամներն իրավունք ունեն հարցեր տալու գիտական համակազմի պաշտոնի հավակնորդին:

18. Փակ, գաղտնի քվեարկության համար մրցույթի բոլոր մասնակիցների անուն, ազգանունները գրանցվում են քվեաթերթիկում:

19. Նախագահի առաջարկով՝ փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով գիտական խորհրդի անդամներից ընտրվում է հաշվիչ հանձնաժողով երեք հոգուց ոչ պակաս կենտ թվով անդամներով: Թեկնածուները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ:

Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

20.Մեկ թեկնածուի դեպքում քվեաթերթիկի մեջ նշվում է թեկնածուի ազգանունը, անունը, <կողմ> և <դեմ> բառերը (Հավելված 1):

Մեկից ավելի թեկնածուների քվեարկության դեպքում քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով նշվում են թեկնածուների ազգանունը, անունը, <կողմ> և <դեմ> բառերը (Հավելված 2):

21. Վավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում՝

ա) նշված է <կողմ> կամ <դեմ> բառը (միակ թեկնածուի քվեարկության դեպքում),

բ) քվեարկված է մի քանի թեկնածուների օգտին (մրցութային տեղերի քանակից ոչ ավելի):

Որևէ թեկնածուի օգտին քվեարկելու համար համապատասխան տողի վանդակում կատարվում է նշում:

Մնացած դեպքերում, ինչպես նաև քվեաթերթիկում չսահմանված նշումների, ընդգծումների և այլ նշանների առկայության դեպքում քվեաթերթիկը համարվում է անվավեր:

Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Եթե քվեաթերթիկն անվավեր ճանաչելն ազդում է ընտրությունների արդյունքների վրա, ապա այդ հարցի

կապակցությամբ հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը քննարկում է գիտական խորհուրդը և կայացնում համապատասխան որոշում:

22. Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում հաշվիչ հանձնաժողովի նիստի արձանագրություն (Հավելված 3):

23. Գիտական խորհրդի նիստն իրավազոր է, եթե խորհրդի նիստին ներկա է գիտական խորհրդի անդամների 2/3-ը:

Ընտրված է համարվում այն թեկնածուն (թեկնածուները), ով ստացել է առավելագույն թվով ձայներ, բայց ոչ պակաս քան գիտական խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների 50 տոկոսը:

Եթե թեկնածուների քանակն ավելին է մրցութային տեղերի քանակից, ապա թեկնածուներից որևէ մեկի՝ գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը չստանալու կամ հավասար ձայներ ստանալու դեպքերում, նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են առավելագույն ձայներ ստացած 2 (հավասար ձայների դեպքում 2-ից ավելի) թեկնածուները:

Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է սույն ընթացակարգին համա-պատասխան:

24. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները, որոնց հիման վրա գիտական խորհուրդը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) պաշտոնում ընտրվելու մասին,

բ) կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին,

գ) ընտրությունները չկայացած ճանաչելու մասին,

դ) ընտրություններն անվավեր ճանաչելու մասին:

Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը հաստատվում է գիտական խորհրդի կողմից, բաց քվեարկությամբ և կցվում է մրցութային փաստաթղթերին:

25. Գիտական խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել ռեկտորին՝ եռօրյա ժամկետում:

26. Ռեկտորն իրավասու է բեկանելու գիտական խորհրդի որոշումը, եթե բա-ցահայտվել են սույն կանոնակարգի էական խախտումներ, որոնք ազդել են ընտրության վերջնական արդյունքների վրա:

## IV. ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

27. Մրցույթով ընտրված թեկնածուի հետ ռեկտորը տվյալ պաշտոնի համար նախատեսված ժամկետով կնքում է աշխատանքային պայմանագիր, գիտական խորհրդի որոշման ընդունումից հետո յոթնօրյա ժամկետում:

Գիտական համակազմի պաշտոններում աշխատանքային պայմանագրերը կնքվում են. առաջին անգամ ընտրվելու դեպքում՝ մինչև 3 տարի, այնուհետև՝ 5 տարի ժամկետով:

28. Բարձրագույն կրթության երրորդ աստիճանում սովորողները կրտսեր գիտական աշխատողի պաշտոնում նշանակվում են առանց մրցույթի՝ գիտական ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ:

29. Առանձնահատուկ դեպքերում (հաստիքների թվաքանակի աճի, որոշակի անձի առողջական վիճակի կամ այլ պատճառներով գիտական գործունեության վաղաժամկետ դադարեցման) գիտական համակազմի թափուր պաշտոնում կարող է նշանակում կատարվել առանց մրցութային ընտրության՝ ռեկտորի հրամանով մինչև 1 տարի ժամկետով:

30. Աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո, գիտական գործունեության արդյունքների գնահատման հիման վրա, ռեկտորն իրավասու է գիտական համակազմի աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը երկարացնել մինչև մեկ տարի ժամկետով առանց մրցութային ընտրության:

31. Ռեկտորը (ֆակուլտետի դեկանը), աշխատակցի անմիջական ղեկավարը իրավասու են ԵՊՀ (ֆակուլտետի) գիտական խորհրդին ներկայացնելու գիտական համակազմի ներկայացուցչի զբաղեցրած պաշտոնին համապատասխանության հարցը:

Եթե գիտական խորհուրդը փակ, գաղտնի քվեարկությամբ հաստատում է զբաղեցրած պաշտոնին տվյալ անձի անհամապատասխանությունը, ապա ռեկտորը խորհրդի որոշումն ընդունելուց հետո սահմանված կարգով լուծում է նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

Զբաղեցրած պաշտոններին համապատասխանության մասին գիտական խորհրդի որոշմանը նախորդում է գիտական համակազմի ներկայացուցչի աշխատանքային գործունեության ստուգումը ֆակուլտետի (ԵՊՀ) գիտական խորհրդի անդամներից կազմված հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի կազմը հաստատում է ռեկտորը: Ռեկտորն իրավասու է հանձնաժողովում ընդգրկելու արտահամալսարանական (արտաֆակուլտետային) փորձագետների:

Հավելված 1

**ՔՎԵԱԹԵՐԹԻԿ**

Երևանի պետական համալսարանի
______________________________ ֆակուլտետի գիտական խորհրդի
____________ նիստում ________________ ________ պաշտոնի (փակ) քվեարկության

| | | | |
|---|---|---|---|
| 1. | ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ | ԿՈՂՄ | |
| | | ԴԵՄ | |

---

Որևէ թեկնածուի <Կողմ> կամ <դեմ> լինելու դեպքում քվեաթերթիկի համապատասխան վանդակում կատարվում է V նշումը:

Հավելված 2

**ՔՎԵԱԹԵՐԹԻԿ**

Երևանի պետական համալսարանի
______________________________ ֆակուլտետի գիտական խորհրդի
____________ նիստում ________________ պաշտոնի զաղտնի (փակ) քվեարկության

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ | ԿՈՂՄ | ԴԵՄ |
|---|---|---|---|
| 1. | ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ | | |
| 2. | ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ | | |
| 3. | ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ | | |
| 4. | ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ | | |

Որևէ թեկնածուի <կողմ> կամ <դեմ> լինելու դեպքում, քվեաթերթիկի համապատասխան վանդակում կատարվում է V նշումը (<կողմ>-երի թիվը չի կարող գերազանցել մրցութային տեղերի թվին):

Հավելված 3

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Հաշվիչ հանձնաժողովի նիստի

ք. Երևան 20 թ.

Հաշվիչ հանձնաժողովն ընտրվել է Երևանի պետական համալսարանի ______________________ ֆակուլտետի գիտական խորհրդի __________ նիստում հետևյալ կազմով.

1. ______________________________
2. ______________________________
3. ______________________________

Ֆակուլտետի գիտական խորհրդի _______ անդամներից ներկա էին ______ -ը:

Քվեարկվել է (են) ____________________ ֆակուլտետի ____________ պաշտոնի թեկնածությունը (ները):

Քվեարկությանը մասնակցել են ֆակուլտետի գիտական խորհրդի _____ անդամներ:

Բաժանվել է ____________ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է ____________ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են.

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ ԿՈՂՄ, ԴԵՄ, ԱՆՎԱՎԵՐ,
ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ ԿՈՂՄ, ԴԵՄ, ԱՆՎԱՎԵՐ,

Անվավեր քվեաթերթիկների քանակը ______:

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով ________________________________ ընտրվել է (չի ընտրվել) __________________________ ֆակուլտետի ____________________________ պաշտոնում:

Կամ,

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով ________________________ ֆակուլտետի ____________________ պաշտոնի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում_______________պաշտոնում, իսկ ներքոհիշյալ թեկնածուները

1. ________________________________________
2. ________________________________________
3. ________________________________________

Մասնակցում են կրկնակի քվեարկությանը:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ ______________ ____________________________

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ ______________ ___________________________

______________ ____________________________

## 4.2. ԵՊՀ դասախոսների տարբերակված հավելավճարի կարգը

1. ԵՊՀ դասախոսների տարբերակված հավելավճարի կարգի նպատակն է խթանել ԵՊՀ դասախոսների

- որակավորման անընդհատ աճը,
- գիտահետազոտական աշխատանքների ակտիվությունը,
- արտալսարանային աշխատանքները ուսանողների հետ,
- ուսումնամեթոդական և գիտամեթոդական աշխատանքները,
- մասնակցությունը համալսարանի և նրա ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացմանը

2. Դասախոսի աշխատավարձը իր բազային աշխատավարձի և հավելավճարի գումարն է:
3. Դասախոսների բազային աշխատավարձն ամեն տարի նշանակվում է ըստ հաստիքացուցակի և այն չի կարող նվազել:
4. Դասախոսի հավելավճարը գոյանում է նախորդ ուսումնական տարվա արդյունքով իր կուտակած միավորներին համապատասխան (միավորները շնորհվում են համապատասխան հավելվածի):
5. Դասախոսների միավորների հաշվարկը կատարվում է ուսումնական տարվա վերջում և հաստատվում է ամբիոնի նիստում:
6. Ֆակուլտետի դեկանը դասախոսներին ըստ կուտակած միավորների բաժանում է երեք խմբի (կարգի), որոնցից յուրաքանչյուրում ոչ պակաս քան ամբողջի 25%-ը: Առաջին և երրորդ խմբերում պետք է ընդգրկվեն հավասար թվով դասախոսներ: Առաջին խմբում ամենաբարձր միավորներովն են:
7. Ֆակուլտետի դեկանը մինչև հուլիսի 15-ը ռեկտորին է ներկայացնում ֆակուլտետի դասախոսների ցուցակն ըստ կարգերի:
8. Ռեկտորը մինչև օգոստոսի 20-ը որոշում է յուրաքանչյուր խմբի հավելավճարի չափը (անկախ զբաղեցրած պաշտոնից):
9. Այս կարգը վերաբերում է միայն լրիվ դրույքով աշխատող պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներին: Արտաքին և

ներքին համատեղողների, ինչպես նաև ոչ լրիվ դրույքով աշխատողների վրա այս կարգը չի տարածվում:

10. Մեկ դրույքից ավելի ծանրաբեռնվածությամբ աշխատող դասախոսները գնահատվում են միայն մեկ դրույքի բեռնվածության չափով:

Հավելված

| | Գործունեության տեսակը | միավորը | առավելագույն միավորը |
|---|---|---|---|

1. Ուսումնա-մեթոդական աշխատանք

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Առաջին խմբի ժամեր[33] (10 ժամ) | 1 | |
| 2. | Երկրորդ խմբի ժամեր (12 ժամ) | 1 | |
| 3. | Երրորդ խմբի ժամեր (14 ժամ) | 1 | |
| 4. | Չորրորդ խմբի ժամեր (15 ժամ) | 1 | |
| 5. | Ֆակուլտետի գիտական խորհրդով երաշխավորված դասախոսությունների կամ ուսումնական ձեռնարկի հրատարակում (մեկ կիսամյակի նյութ) | 8-ը հավասար բաժանել համահեղ. | |
| 6. | Ուսումնամեթոդական կամ գիտահանրամատչելի հոդված գրախոսվող հանդեսում | 1 | 3 |
| 7. | Աշխատանք համալսարանի<br>ա) գիտխորհրդում<br>բ) գիտխորհրդի մշտական հանձնաժողովում | <br>2<br>1 | |
| 8. | Աշխատանք ֆակուլտետի<br>ա) գիտխորհրդում<br>բ) գիտխորհրդի մշտական հանձնաժողովում | <br>2<br>1 | |
| 9. | Ընդհանուր կամ մասնագիտական նոր դասընթացի մշակում | 5 | 10 |
| 10. | Դասավանդում որակավորման | 2 | 2 |

[33] Խմբի բովանդակությունը բերված է վերջին էջում

| | | | |
|---|---|---|---|
| | բարձրացման ծրագրերում | | |
| 11. | Դասավանդում վերապատրաստման ծրագրերում | 1 | 1 |

## 2. Որակավորման բարձրացում

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Որակավորման բարձրացման ծրագրի կրթամասի յուրաքանչյուր կրեդիտի համար | 1 | 5 |
| 2. | անգլերենի B1 մակարդակի վկ. | 3 | |
| 3. | անգլերենի B2 մակարդակի վկ. | 4 | |
| 4. | անգլերենի C1 մակարդակի վկ. | 5 | |
| 5. | անգլերենի C2 մակարդակի վկ. | 6 | |

## 3. Գիտահետազոտական աշխատանք

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Դոկտորական թեզի պաշտպանում | 20 | |
| 2. | Թեկնածուական թեզի պաշտպանում | 10 | |
| 3. | Գիտության թեկնածուի պատրաստում | 5 | |
| 4. | Մենագրության հրատարակում | մամ.1 միավոր, բաժանել համահեղ. միջև | 20 |
| 5. | Դասագրքի հրատարակում | մամ.1 միավոր, բաժանել համահեղ. միջև | 20 |
| 6. | Հրատարակված գիտական հոդված<br>ա) ազդեցության գործակցով հանդեսներում<br>ա) առաջատար հանդեսներում[34]<br>բ) գիտական հանդեսներում[2] | <br>8-ը հավասար բաժանել համահեղ. միջև<br>4-ը հավասար բաժանել համահեղ. միջև<br>2-ը հավասար բաժանել համահեղ. միջև | 20 |

[34] Ցանկը որոշում է ֆակուլտետի գիտական խորհուրդը

4. Արտալսարանային աշխատանք

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Օլիմպիադայի կազմակերպում | 5 միավորը բաժանել կազմակերպիչների միջն | |
| 2. | Օլիմպիական թիմի պատրաստում | 5 միավորը բաժանել բոլոր պատասխանա-տուների միջն | |
| 3. | Ֆակուլտետում ուսանողների փոխանակման ծրագրի համակարգող | 2 | |
| 4. | ՈՒԳԸ ղեկավար | 3 | |
| 5. | ՈՒԳԸ նստաշրջանի զեկուցման ղեկավարում | 1 | 3 |

5. Ուսանողական հարցումների արդյունքով ձևավորվող միավոր

(հաշվարկվում է գնահատված կիսամյակների միջին թվաբանականը)

Ուսանողների հարցման միավորից հանել 3,75 և բազմապատկել

ա) 4-ով, եթե մասնակցել է 1-25 ուսանող

բ) 6-ով, եթե մասնակցել է 26-50 ուսանող

գ) 8-ով, եթե մասնակցել է 51-100 ուսանող

դ) 10- ով, եթե մասնակցել է 100-ից ավելի ուսանող

6. Դեկանատի կողմից տրվող միավոր

Այլ աշխատանքների համար դեկանատի որոշումով դասախոսին կարող է տրվել - 3-ից 8 միավոր: Դեկանատի կողմից միավորների շնորհման կարգը պետք է հաստատվի ֆակուլտետի գիտական խորհրդում:

1. Առաջին խմբի ժամեր
   - Դասախոսություններ

- Մագիստրոսի ղեկավարում
- Մագիստատուրայի ծրագրի գիտական սեմինարի ղեկավարում
- Ասպիրանտի ղեկավարում
- Հայցորդի ղեկավարում
- Մասնակցություն մեթոդխորհրդի աշխատանքներին
- Ֆակուլտետի դասախոսների որակավորման բարձրացման պատասխանատու
- Մագիստրատուրայի ծրագրի ղեկավար

2. Երկրորդ խմբի ժամեր
    - Գործնական պարապմունքներ
    - Սեմինար պարապմունքներ
    - Պրակտիկայի (ուսումնական, արտադրական, մանկավարժական) ղեկավարում
    - Ուսումնական խորհրդատու (կուրատոր)
3. Երրորդ խմբի ժամեր
    - Լաբորատոր պարապմունքներ
4. Չորրորդ խմբի ժամեր
    - Մնացած ժամերը

## 4.3. ԵՊՀ դասախոսական կազմի տարեկան գործունեության գնահատման ղեկավար ձեռնարկը

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն ղեկավար ձեռնարկը նախատեսված է ԵՊՀ դասախոսական կազմի ամենամյա գնահատման գործընթացն իրականացնելու համար:

1.2. Դասախոսական կազմի տարեկան գնահատումը ԵՊՀ որակի ներքին ապահովման և շարունակական բարելավման հիմնական մեխանիզմներից է, որի նպատակն է խթանել դասախոսների որակավորման անընդհատ աճը, գիտահետազոտական աշխատանքների ակտիվությունը, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և ուսանողների հետ տարվող արտալսարանային աշխատանքները, ինչպես նաև մասնակցությունը համալսարանի և նրա ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

1.3. Գնահատման են ենթակա ինչպես ԵՊՀ հիմնական դասախոսական կազմը, այնպես էլ ներքին և արտաքին համատեղողները և ժամավճարային հիմունքներով դասավանդող դասախոսները:

1.4. Դասախոսական կազմը գնահատվում է գործունեության երեք հիմնական ոլորտներից յուրաքանչյուրում (դասավանդում և ուսումնամեթոդական գործունեություն, գիտահետազոտական և ստեղծագործական գործունեություն, հասարակական և վարչական գործունեություն) կատարողականի գնահատման և այդ արդյունքների ընդհանրացման հիման վրա:

1.5. Գնահատումը կատարվում է գործընթացում ներգրավված երեք հիմնական շահեկիցների՝ ուսանողների, գործընկեր դասախոսների և անմիջական ղեկավարի (ամբիոնի վարիչի) կողմից՝ յուրաքանչյուր տարակարգի (դասախոս, ասիստենտ, դոցենտ և պրոֆեսոր) համար սահմանված գնահատման չափանիշների օգնությամբ, որոնց արդյունքներն այնուհետև ընդհանրացվում են:

## 2. ԴԱՍԱԽՈՍԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ

2.1. Դասախոսի ինքնագնահատումը կատարվում է սույն ղեկավար ձեռնարկով սահմանված գնահատման չափանիշների հիման վրա կառուցված «Դասախոսի ինքնագնահատման տարեկան զեկույցի» ձևաչափով, որը ներկայացված է հավելված 1-ում:

2.2. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին (հունիսի 15-30-ը) դասախոսը լրացնում է սահմանված ձևաչափի ինքնագնահատման տարեկան զեկույցը, ստորագրում այն և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի փաթեթի հետ միասին հանձնում ամբիոնի վարիչին:

2.3. Ինքնագնահատման զեկույցին կցվում են դասախոսի սահմանված ձևաչափի աշխատանքային կենսագրությունը (CV) և երեք հիմնական ոլորտներում (դասավանդում և ուսումնամեթոդական, գիտահետազոտական և ստեղծագործական, հասարակական և վարչական) նրա գործունեությունը հաստատող հիմքերն ու վկայությունները՝ հավաքված մեկ պորտֆոլիոյում (հավաքապանակում):

2.4. Ինքնագնահատման զեկույցը կազմելու համար անհրաժեշտ բոլոր ցուցումները և բացատրությունները ներկայացված են զեկույցի ձևաթերթում:

2.5. Տվյալ ուստարվա ինքնագնահատման զեկույցը կամելու համար, այդ տարվա գործունեության մյուս արդյունքներից զատ, հիմք են հանդիսանում նաև նախորդ տարվա զեկույցում ներկայացված նպատակների և խնդիրների ուղղությամբ ստացված ձեռքբերումները (հավելված 1, առաջին մաս):

# 3. ԴԱՍԱԽՈՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

3.1. Ամբիոնի վարիչը, ուսումնական տարվա ավարտին (մայիսի 20-30), իր նախագահությամբ կազմում է չորս հոգուց բաղկացած գնահատող հանձնաժողով, որի կազմում, իրենից բացի, ընդգրկվում են նույն ամբիոնի հիմնական դասախոսական կազմի երկու ներկայացուցիչ և նույն ֆակուլտետի հարակից ամբիոններից մեկ ներկայացուցիչ:

3.2. Ամբիոնի դասախոսական կազմի թվաքանակով պայմանավորված՝ գնահատման հանձնաժողովները կարող են լինել մեկից ավելի: Այս դեպքում ամբիոնի վարիչը նախագահում է մի քանի հանձնաժողովներ:

3.3. Ամբիոնի վարիչների գործունեությունը գնահատելու համար ֆակուլտետի դեկանն իր նախագահությամբ կազմում է չորս հոգուց բաղկացած գնահատող հանձնաժողով, որի կազմում իրենից բացի ընդգրկվում են նույն ամբիոնի հիմնական դասախոսական կազմի երկու ներկայացուցիչ և նույն ֆակուլտետի հարակից ամբիոններից մեկի վարիչը:

3.4. Գնահատող հանձնաժողովի կազմը համաձայնեցվում է հիմնական դասախոսական կազմի և համապատասխան ֆակուլտետի դեկանի հետ և մինչև հունիսի 1-ը հրամանագրվում դեկանի կողմից:

3.5. Դասախոսը (ամբիոնի վարիչը) կարող է բացարկ հայտարարել գնահատման հանձնաժողովի անդամներից մեկին: Այս դեպքում տվյալ դասախոսի գործունեության գնահատման համար հանձնաժողովում միանգամյա սկզբունքով հրամանագրվում է նոր անդամ:

3.6. Հանձնաժողովը, հիմնվելով դասախոսի տարեկան ինքնագնահատման զեկույցի, զեկույցին կից ներկայացված հավաքապանակի (հիմքեր, վկայություններ) տվյալների, նախորդ ուստարում դասախոսի կատարողականի բարելավմանը միտված միջոցառումների պլանի իրականացման արդյունքների, ուսանողական հարցումների (դասավանդման արդյունավետության և դասընթացի գնահատման վերաբերյալ) արդյունքների, ինչպես նաև ամբիոնի վարիչի և գործընկեր դասախոսների գնահատումների վրա, մինչև հուլիսի 15-ը գնահատում է դասախոսի տվյալ ուստարվա գործունեությունը (կատարողականը):

3.7. Գնահատումն իրականացվում է դասախոսական տվյալ տարակարգի համար (դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր) գործունեության երեք

հիմնական ոլորտներից յուրաքանչյուրում դասախոսի կատարողականի գնահատման համար սահմանված չափանիշների և ցուցանիշների օգնությամբ, որոնք ամբողջականացված են գնահատման վերլուծական ռուբրիկում (հավելված 5):

3.8. Դասախոսական կազմի գնահատման գործընթացն իրականացվում է այդ նպատակով ամբիոնի վարիչի և գործընկեր դասախոսների համար պատրաստված գնահատման ձևաթերթերի օգնությամբ, որոնք ներկայացված են համապատասխանաբար հավելված 2-ում և հավելված 3-ում:

3.9. Տարբեր գնահատողների (ուսանողներ, գործընկերներ, անմիջական ղեկավար) գնահատման արդյունքները գործունեության ոլորտներից յուրաքանչյուրում (դասավանդում, հետազոտություն և հասարակական աշխատանք) և ամբողջական գնահատումը մեկ համալիր ցուցանիշում ամփոփվում են համապատասխան ձևաթերթում, որը ներկայացված է հավելված 4-ում:

3.10. Գնահատման արդյունքները ներկայացվում են ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշների օգնությամբ:

3.11. Որպես գնահատման քանակական ցուցանիշներ են ծառայում երեք հիմնական ոլորտներում (դասավանդում, հետազոտություն և հասարակական աշխատանք) դասախոսի գործունեության գնահատման միավորները:

3.12. Որպես գնահատման որակական ցուցանիշներ են ծառայում երեք հիմնական ոլորտներում (դասավանդում, հետազոտություն և հասարակական աշխատանք) դասախոսի ուժեղ և բարելավման կարիք ունեցող (թույլ) կողմերը:

3.13. Գնահատման արդյունքում հանձնաժողովի անդամները և ամբիոնի վարիչը լրացնում և ստորագրում են սահմանված ձևաչափի գնահատման ձևաթերթերը (հավելվածներ 2 և 3): Գնահատման ձևաթերթերը ստորագրում է նաև դասախոսը (եթե նույնիսկ համաձայն չէ արդյունքների հետ), ինչը նշանակում է, որ նա տեղյակ է գնահատման արդյունքների մասին:

3.14. Գնահատման արդյունքում, ամբիոնի վարիչը դասախոսի հետ միասին կազմում է նրա կատարողականի բարելավմանը միտված գործողությունների/միջոցառումների ծրագիր (պլան), որը ենթակա է իրականացման հաջորդ ուստարում:

3.15. Գնահատման արդյունքները և կատարողականի բարելավման միջոցառումների ծրագիրը քննարկվում և հաստատվում են ամբիոնի նիստում:

3.16. Դասախոսի տարեկան գործունեության գնահատման արդյունքները հիմք են հանդիսանում դասախոսի աշխատանքային պայմանագրի շարունակման կամ ընդհատման, տարակարգային առաջքաշման (դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր), նպատակային/հասցեական վերապատրաստման կամ կատարելագործման, պարգևատրման կամ աշխատավարձի/հավելավճարների չափի սահմանման համար:

# 4. ԴԱՍԱԽՈՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4.1. Յուրաքանչյուր տարակարգի դասախոսի (դասախոս, ասիստենտ, դոցենտ կամ պրոֆեսոր) գործունեությունը/կատարողականը երեք հիմնական ոլորտներց յուրաքանչյուրում (դասավանդում, հետազոտություն և հասարակական աշխատանք) գնահատելու համար սահմանված են համապատասխան քանակական և որակական չափանիշներ, որոնք ներկայացված են գնահատման անալիտիկ (վերլուծական) ընդհանրական ռուբրիկում (տե՛ս հավելված 5):

4.2. Յուրաքանչյուր տարակարգի (դասախոս, ասիստենտ, դոցենտ կամ պրոֆեսոր) և կարգավիճակի (հիմնական, ժամավճարային/արտաքին համատեղում, ներքին համատեղում) դասախոսի համար ամբիոնը՝ դասախոսի համաձայնությամբ, գործունեության երեք հիմնական ոլորտներում սահմանում է գնահատման քաշային գործակիցներ՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակում բերված միջակայքերի.

Աղյուսակ 1. Գնահատման քաշային գործակիցները տարբեր տարակարգի և կարգավիճակի դասախոսների համար

| Թիվ | Կարգավիճակը, տարակարգը | Դասավանդում (%), $K_1$ | Հետազոտություն (%), $K_2$ | Ծառայություն (%), $K_3$ |
|---|---|---|---|---|
| 1 | **Հիմնական դասախոսական կազմ** | | | |
| 1.1 | Դասախոս | 80-100 | 0-20 | 0-5 |
| 1.2 | Ասիստենտ | 70-90 | 10-30 | 0-10 |
| 1.3 | Դոցենտ | 60-80 | 20-40 | 0-12 |
| 1.4 | Պրոֆեսոր | 50-70 | 30-50 | 0-15 |
| 2 | **Ներքին համատեղում** | | | |
| 2.1 | Դասախոս | 40-50 | 0-10 | 50-75 |
| 2.2 | Ասիստենտ | 35-45 | 5-15 | 50-75 |
| 2.3 | Դոցենտ | 30-40 | 10-20 | 50-75 |
| 2.4 | Պրոֆեսոր | 25-35 | 15-25 | 50-75 |
| 3 | **Ժամավճարային/արտաքին համատեղում** | | | |
| 3.1 | Դասախոս | 80-100 | 0-20 | 0 |
| 3.2 | Ասիստենտ | 70-90 | 10-30 | 0 |
| 3.3 | Դոցենտ | 60-80 | 20-40 | 0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3.4 | Պրոֆեսոր | 50-70 | 30-50 | 0 |

4.3. Դասախոսի գործունեության երեք հիմնական ոլորտներում (դասավանդում, հետազոտություն և հասարակական աշխատանք) գնահատման արդյունքում ստացված միավորները բազմապատկվում են տվյալ դասախոսի համար սահմանված գնահատման քաշային գործակիցներով և գումարվում.

$$\Sigma Գ = Գ_{դաս.} \text{ x } K_1 + Գ_{հետազ.} \text{ x } K_2 + Գ_{ծառ.} \text{ x } K_3 \ :$$

4.4. Գնահատման արդյունքներն ի մի են բերվում համաձայն հավելված 4-ում ներկայացված ամփոփող ձևաթերթի:

## *ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԴԱՍԱԽՈՍԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ*

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԴԱՍԱԽՈՍԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

2013/2014 ուստարի

(լրացնում է դասախոսը)

Ներկայացրեք Ձեր անձնական տվյալները.

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ ______________________________

ԳԻՏ. ԱՍՏ., ԿՈՉՈՒՄ ______________________________

ՖԱԿՈՒԼՏԵՏ ______________________________

ԱՄԲԻՈՆ ______________________________

ՊԱՇՏՈՆ ______________________________

ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ՍԿԻԶԲԸ ______________________________

## <u>ԱՄՓՈՓՈՒՄ.</u> ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

### 1. ՆՊԱՏԱԿՆԵՐ ՀԱՋՈՐԴ ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Ներկայացրեք այն նպատակները, որոնք նախանշել եք հաջորդ ուստարում իրականացնելու համար: Դրանք պետք է առնչվեն Ձեր գործունեության հիմնական ուղղությունների հետ և հնարավորություն տան ամբիոնի վարիչին և/կամ գործընկեր դասախոսներին՝ գնահատելու Ձեր պլանավորած գործողությունների արդյունքները:

| | գրի գնահատման աշխատանքներին (ծրագրի ընթացիկ մոնիթորինգ կամ պարբերական վերանայում),<br>▪ Մասնակցություն համալսարանի կամ նրա կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացներին: | հավաքագրում,<br>▪ Հանրության շրջանում համալսարանի կամ ֆակուլտետի հեղինակության բարձրացմանն ուղղված գործունեություն,<br>▪ Ուսումնական ծրագրի համակարգող,<br>▪ Մասնակցություն ուսումնական ծրագրի մշակման աշխատանքներին,<br>▪ Մասնակցություն ուսումնական ծրագրի գնահատման աշխատանքներին (ծրագրի ընթացիկ մոնիթորինգ կամ պարբերական վերանայում),<br>▪ Մասնակցություն համալսարանի կամ նրա կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացներին: | ֆակուլտետի կամ ամբիոնի համար ֆոնդերի հավաքագրում,<br>▪ Հանրության շրջանում համալսարանի կամ ֆակուլտետի հեղինակության բարձրացմանն ուղղված գործունեություն,<br>▪ Մասնագիտական հանդեսի գլխավոր խմբագիր կամ խմբագրի տեղակալ,<br>▪ Ուսումնական ծրագրի համակարգող,<br>▪ Ուսումնական ծրագրի մշակման աշխատանքային խմբի ղեկավար,<br>▪ Մասնակցություն ուսումնական ծրագրի գնահատման աշխատանքներին (ծրագրի ընթացիկ մոնիթորինգ կամ պարբերական վերանայում),<br>▪ Մասնակցություն համալսարանի կամ նրա կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացներին: | ղեկավարում,<br>▪ Համալսարանի, ֆակուլտետի կամ ամբիոնի համար զգալի ֆոնդերի հավաքագրում,<br>▪ Հանրության շրջանում համալսարանի կամ ֆակուլտետի հեղինակության բարձրացմանն ուղղված նշանակալի գործունեություն,<br>▪ Մասնագիտական հանդեսի գլխավոր խմբագիր,<br>▪ Ուսումնական ծրագրի համակարգող,<br>▪ Ուսումնական ծրագրի մշակման աշխատանքային խմբի ղեկավար,<br>▪ Ուսումնական ծրագրի գնահատման աշխատանքների (ծրագրի ընթացիկ մոնիթորինգ կամ պարբերական վերանայում) ղեկավարում,<br>▪ Ակտիվ մասնակցություն համալսարանի կամ նրա կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացներին: |

©Երևանի պետական համալսարան, 2013

# 3. ՊՐՈՖԵՍՈՐ

| 1. ԱՆԲԱՎԱՐԱՐ | 2. ՑԱԾՐ (ՄԻՋԻՆԻՑ ՑԱԾՐ) | 3. ԲԱՎԱՐԱՐ (ՄԻՋԻՆ) | 4. ԲԱՐՁՐ (ՄԻՋԻՆԻՑ ԲԱՐՁՐ) | 5. ԳԵՐԱԶԱՆՑ |
|---|---|---|---|---|
| I. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | | | | |
| Դասախոսը բավարարում է աջ կողմի սյունակի նույն վանդակում ներկայացված պահանջներից առավելագույնը երկուսին: | Ակնկալվածից ցածր որակի դասավանդում, ինչը հիմնավորվում է հետևյալներից առնվազն երեքով, օրինակ.<br>▪ Բոլոր դասընթացների համար օրացուցային պլանի առկայություն,<br>▪ Ուսանողական հարցումներից ստացված միջին միավորը կազմում է 3,0-3,5,<br>▪ Խորհրդատվության համար հասանելի է ուսանողներին, ինչը հիմնավորվում է փաստաթղթերով,<br>▪ Դասախոսությունների տեքստերի, գործնական/լաբորատոր աշխատանքների կատարման մեթոդական ձեռնարկների և այլ լրացուցիչ ուսումնական նյութերի (այդ թվում նաև էլեկտրոնային) պատրաստում և տրամադրում | Բավարար որակի դասավանդում, ինչը հիմնավորվում է հետևյալներից առնվազն չորսով, օրինակ.<br>▪ Բոլոր դասընթացների համար օրացուցային պլանի առկայություն,<br>▪ Ուսանողական հարցումներից ստացված միջին միավորը կազմում է 3,6-4,0,<br>▪ Խորհրդատվության համար հասանելի է ուսանողներին, ինչը հիմնավորվում է փաստաթղթերով,<br>▪ Դասախոսությունների տեքստերի, գործնական/ լաբորատոր աշխատանքների կատարման մեթոդական ձեռնարկների և այլ լրացուցիչ ուսումնական նյութերի (այդ թվում նաև էլեկտրոնային) պատրաստում և տրամադրում ուսանողներին,<br>▪ Դասավանդման նորարարական (ներառյալ ինտե- | Բարձր որակի դասավանդում, ինչը հիմնավորվում է հետևյալներից առնվազն հինգով, օրինակ.<br>▪ Բոլոր դասընթացների համար մանրամասն օրացուցային պլանի առկայություն,<br>▪ Ուսանողական հարցումներից ստացված միջին միավորը կազմում է 4,1-4,5,<br>▪ Խորհրդատվության համար մշտապես հասանելի է ուսանողներին, ինչը հիմնավորվում է փաստաթղթերով,<br>▪ Ուսումնական ձեռնարկի, դասախոսությունների տեքստերի, գործնական/լաբորատոր աշխատանքների կատարման մեթոդական ձեռնարկների և այլ լրացուցիչ ուսումնական նյութերի (այդ թվում նաև էլեկտրոնային) պատրաստում և տրամադրում ուսանողներին,<br>▪ Դասավանդման նորարարական (ներառյալ ինտե- | Գերազանց որակի դասավանդում, ինչը հիմնավորվում է հետևյալներից առնվազն վեցով, օրինակ.<br>▪ Բոլոր դասընթացների համար համակարգված և մանրամասն օրացուցային պլանի առկայություն,<br>▪ Ուսանողական հարցումներից ստացված միջին միավորը առնվազն 4,6,<br>▪ Խորհրդատվության համար մշտապես հասանելի է ուսանողներին, ինչը հիմնավորվում է փաստաղթերով,<br>▪ Դասագրքի, ուսումնական ձեռնարկի, դասախոսությունների տեքստերի, գործնական/լաբորատոր աշխատանքների կատարման մեթոդական ձեռնարկների և այլ լրացուցիչ ուսումնական նյութերի (այդ թվում նաև էլեկտրոնային) պատրաստում և տրամադրում ուսանողներին, |

©Երևանի պետական համալսարան, 2013

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ուսանողներին: | րակտիվ) մեթոդների կիրառում՝ հաստատված համապատասխան փաստաթղթերով: | րակտիվ) մեթոդների կիրառում՝ հաստատված համապատասխան փաստաթղթերով,<br>▪ Գերազանց դասավանդման այլ վկայություններ, օրինակ՝ ուսանողների գրավորները, ռեֆերատները, ինքնուրույն և ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը, զեկուցումները և այլն,<br>▪ Նոր մշակված կամ զգալիորեն արդիականացված դասընթաց(ներ)ի առկայություն:<br>▪ Էլեկտրոնային դասընթացի մշակում և իրականացում, դասընթացի վիրտուալ հարթակի (դասընթացի բլոգ, խումբ Ֆեյսբուք սոց.ցանցում) ստեղծում և օգտագործում: | ▪ Դասավանդման նորարարական (ներառյալ ինտերակտիվ) մեթոդների կիրառում՝ հաստատված համապատասխան փաստաթղթերով,<br>▪ Գերազանց դասավանդման այլ վկայություններ, օրինակ՝ ուսանողների գրավորները, ռեֆերատները, ինքնուրույն և ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը, զեկուցումները և այլն,<br>▪ Նոր մշակված կամ զգալիորեն արդիականացված դասընթաց(ներ)ի առկայություն,<br>▪ Էլեկտրոնային դասընթացի մշակում և իրականացում, դասընթացի վիրտուալ հարթակի (դասընթացի բլոգ, խումբ Ֆեյսբուք սոց.ցանցում) ստեղծում և օգտագործում,<br>▪ Դասավանդման գործընթացում հետազոտության արդյունքների կիրառում՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: |
| II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | | | | |
| Դասախոսը չի բավարար- | Ներդրում մասնագիտական | Զգալի ներդրում մասնագիտական | Նշանակալի ներդրում մասնագի- | Առանձնահատուկ ներդրում մասնա- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ում աջ կողմի սյունակի նույն վանդակում ներկայացված պահանջներից ոչ մեկին: | ոլորտում, ինչը հաստատվում է հետևյալներից մեկով, օրինակ.<br>▪ Գրախոսված 1 հրատարակության հեղինակ կամ համահեղինակ, կամ՝ համարժեք հրատարակություն (օրինակ՝ գյուտի արտոնագիր, գրքի գլուխ, հրատարակված զեկույց և այլն),<br>▪ Առնվազն 1 զեկուցում հանրապետական, տարածաշրջանային կամ միջազգային գիտաժողովում,<br>▪ 1 թեկնածուական ատենախոսության ղեկավարում: | ոլորտում, ինչը հաստատվում է հետևյալներից երկուսով, օրինակ.<br>▪ Գրախոսված 2 հրատարակության հեղինակ կամ համահեղինակ, կամ՝ համարժեք հրատարակություն (օրինակ՝ գյուտի արտոնագրեր, գրքի գլուխներ, հրատարակված զեկույցներ և այլն),<br>▪ Առնվազն 2 զեկուցում հանրապետական, տարածաշրջանային կամ միջազգային գիտաժողովներում,<br>▪ Պետական կամ միջազգային ֆինանսավորման ներկայացված 1 հետազոտական դրամաշնորհի/նախագծի հայտի հեղինակ կամ համահեղինակ,<br>▪ Առնվազն 1 թեկնածուական ատենախոսության ղեկավարում: | տական ոլորտում, ինչը հաստատվում է հետևյալներից երկուսով, օրինակ.<br>▪ Գրախոսված առնվազն 2 հրատարակության հեղինակ կամ համահեղինակ, կամ՝ համարժեք հրատարակություն (օրինակ՝ գյուտի արտոնագրեր, գրքի գլուխներ, հրատարակված զեկույցներ և այլն), որոնցից առնվազն մեկում որպես առաջին հեղինակ,<br>▪ Առնվազն 2 զեկուցում հանրապետական կամ տարածաշրջանային և 1 զեկուցում՝ միջազգային գիտաժողովներում,<br>▪ Պետական կամ միջազգային ֆինանսավորման ներկայացված 1 հետազոտական դրամաշնորհի/ նախագծի հայտի հեղինակ կամ համահեղինակ,<br>▪ Առնվազն 2 թեկնածուական ատենախոսության ղեկավարում: | գիտական ոլորտում, ինչը հաստատվում է հետևյալներից երկուսով, օրինակ.<br>▪ Գրախոսված 3 կամ ավելի հրատարակության հեղինակ կամ համահեղինակ, կամ համարժեք հրատարակություն (օրինակ՝ գյուտի արտոնագրեր, գրքի գլուխներ, հրատարակված զեկույցներ և այլն), որոնցից առնվազն մեկն առանց համահեղինակների, կամ ազդեցության գործակցով հանդեսում,<br>▪ Առնվազն 2 զեկուցում հանրապետական կամ տարածաշրջանային և 2 զեկուցում՝ միջազգային գիտաժողովներում,<br>▪ Պետական կամ միջազգային ֆինանսավորման ներկայացված առնվազն 2 հետազոտական դրամաշնորհի/նախագծի հայտի հեղինակ կամ՝ ղեկավար/գլխավոր կատարող,<br>▪ 3 և ավելի թեկնածուական ատենախոսության ղեկավարում: |
| III. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | | | | |

©Երևանի պետական համալսարան, 2013

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դասախոսը չի բավարարում աջ կողմի սյունակի նույն վանդակում ներկայացված պահանջներից ոչ մեկին: | Հասարակական/վարչական աշխատանք՝ հաստատված հետևյալներից մեկով, օրինակ.<br>▪ Ներգրավում ամբիոնի կամ ֆակուլտետի հանձնաժողովներից 1-ում,<br>▪ Մասնակցություն դիմորդների կողմնորոշման կամ ուսանողների հավաքագրման աշխատանքներին,<br>▪ Ֆակուլտետի կամ ամբիոնի համար ֆոնդերի հավաքագրում,<br>▪ Մասնակցություն ուսումնական ծրագրի մշակման աշխատանքներին,<br>▪ Մասնակցություն ուսումնական ծրագրի գնահատման աշխատանքներին (ծրագրի ընթացիկ մոնիթորինգ կամ պարբերական վերանայում),<br>▪ Մասնակցություն համալսարանի կամ նրա կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացներին: | Զգալի հասարակական/ վարչական աշխատանք՝ հաստատված հետևյալներից երկուսով, օրինակ.<br>▪ Ներգրավում ամբիոնի, ֆակուլտետի կամ համալսարանի հանձնաժողովներից առնվազն 1-ում,<br>▪ Աշխատանք 1 պետական/ ազգային մակարդակի հանձնաժողովում, կամ՝ մասնագիտական ընկերակցությունում,<br>▪ Մասնակցություն դիմորդների կողմնորոշման կամ ուսանողների հավաքագրման աշխատանքներին,<br>▪ Համալսարանի, ֆակուլտետի կամ ամբիոնի համար ֆոնդերի հավաքագրում,<br>▪ Հանրության շրջանում համալսարանի կամ ֆակուլտետի հեղինակության բարձրացմանն ուղղված գործունեություն,<br>▪ Ուսումնական ծրագրի համակարգող,<br>▪ Մասնակցություն ուսումնական ծրագրի մշակման աշխատանքներին,<br>▪ Մասնակցություն ուսումնական ծրագրի գնահատման | Ակտիվ հասարակական/վարչական աշխատանք՝ հաստատված հետևյալներից երեքով, օրինակ.<br>▪ Ղեկավար դեր ամբիոնի, ֆակուլտետի կամ համալսարանի հանձնաժողովներից առնվազն 1-ում,<br>▪ Ղեկավար դեր կամ աշխատանք 1 պետական/ազգային մակարդակի հանձնաժողովում, կամ՝ մասնագիտական ընկերակցությունում,<br>▪ Մասնակցություն դիմորդների կողմնորոշման կամ ուսանողների հավաքագրման աշխատանքներին,<br>▪ Համալսարանի, ֆակուլտետի կամ ամբիոնի համար ֆոնդերի հավաքագրում,<br>▪ Հանրության շրջանում համալսարանի կամ ֆակուլտետի հեղինակության բարձրացմանն ուղղված գործունեություն,<br>▪ Մասնագիտական հանդեսի գլխավոր խմբագիր կամ խմբագրի տեղակալ,<br>▪ Ուսումնական ծրագրի համակարգող,<br>▪ Ուսումնական ծրագրի մշակման | Ինտենսիվ հասարակական/վարչական աշխատանք՝ հաստատված հետևյալներից չորսով, օրինակ.<br>▪ Ղեկավար դեր ամբիոնի, ֆակուլտետի կամ համալսարանի հանձնաժողովներից առնվազն 1-ում,<br>▪ Ղեկավար դեր կամ աշխատանք 2 պետական/ազգային մակարդակի հանձնաժողովներում, կամ՝ մասնագիտական ընկերակցություններում,<br>▪ Դիմորդների կողմնորոշման կամ ուսանողների հավաքագրման աշխատանքների ղեկավարում,<br>▪ Համալսարանի, ֆակուլտետի կամ ամբիոնի համար զգալի ֆոնդերի հավաքագրում,<br>▪ Հանրության շրջանում համալսարանի կամ ֆակուլտետի հեղինակության բարձրացմանն ուղղված նշանակալի գործունեություն,<br>▪ Մասնագիտական հանդեսի գլխավոր խմբագիր,<br>▪ Ուսումնական ծրագրի համակարգող,<br>▪ Ուսումնական ծրագրի մշակման աշխատանքային խմբի ղեկավար, |

©Երևանի պետական համալսարան, 2013

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | աշխատանք-ներին (ծրագրի ընթացիկ մոնի-թորինգ կամ պարբերական վերանայում),<br>▪ Մասնակցություն համալսարանի կամ նրա կրթա-կան ծրագրերի հավատարմա-գրման գործըն-թացներին: | աշխատանքային խմբի ղեկավար,<br>▪ Մասնակցություն ուսումնական ծրագրի գնահատման աշխատանքերին (ծրագրի ընթա-ցիկ մոնիթորինգ կամ պարբե-րական վերա-նայում),<br>▪ Մասնակցություն համալսարանի կամ նրա կրթա-կան ծրագրերի հավատարմա-գրման գործըն-թացներին: | ▪ Ուսումնական ծրագրի գնա-հատման աշխա-տանքերի (ծրա-գրի ընթացիկ մոնիթորինգ կամ պարբերական վերանայում) ղեկավարում,<br>▪ Ակտիվ մասնակ-ցություն համալ-սարանի կամ նրա կրթական ծրագրերի հավատարմա-գրման գործըն-թացներին: |

# 4.4. Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Երևանի պետական համալսարանում դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքի և բովանդակության նորացումը պայմանավորված է ԵՊՀ 2010 - 2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մի շարք խնդիրների (խնդիր I գ՝ "Ապահովել կրեդիտային համակարգի ընդլայնված կիրառությունը Համալսարանի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում", խնդիր IV ա՝ "Համալրել — բարելավել դասախոսական կազմը՝ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան") լուծման անհրաժեշտությամբ:

1.2. Նորացված ծրագրում դասախոսական կազմի որակավորման բարձրացումը դիտարկվում է թե՛ որպես դասախոսի հարատև կրթության բաղադրիչ՝ նրա մասնագիտական կոմպետենցիաների շարունակական զարգացմամբ, թե՛ որպես համալսարանական կրթության որակի ներքին ապահովման համակարգի կարևորագույն կառուցամաս:

1.3. Ծրագիրը ԵՊՀ դասախոսական կազմին հնարավորություն է տալիս ձեռք բերելու անհատական հետաքրքրություններով ու կարիքներով կամ մասնագիտության ոլորտի նոր պահանջներով պայմանավորված կոմպետենցիաներ՝ դասախոսի համար առավել հարմար ժամկետներում:

1.4. "Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը" մեթոդական փաստաթուղթը սահմանում է այդ ծրագրի կառուցվածքը, բովանդակությունը, կրթական և հետազոտական-մեթոդական մոդուլների ու դասընթացների կազմը և դրանց՝ ECTS կրեդիտներով արտահայտված աշխատածավալները:

©Երևանի պետական համալսարան, 2013

## 2. ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1. Կրեդիտային համակարգով կառուցված որակավորման բարձրացման ծրագիրը դասախոսին հնարավորություն է տալիս բարձրացնելու իր որակավորումը ուսուցման անհատական ծրագրով՝ կրթական և հետազոտական-մեթոդական մոդուլների հարաբերակցության ընտրությամբ ապահովելով իր համար նախընտրելի կոմպետենցիաների զարգացումը:

2.2. Դասախոսի որակավորման բարձրացման ծրագիրը բաղկացած է երկու հիմնական կառուցամասից՝ կրթական և հետազոտական-մեթոդական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են հնգամյա ժամկետում՝ համաձայն ունկնդրի որակավորման բարձրացման անհատական ծրագրի՝ պահպանելով սույն ծրագրում սահմանված ավարտական պահանջները (աղ. 1): Ելնելով իր նախասիրություններից՝ ունկնդիր դասախոսն ինքն է որոշում կրթական ու հետազոտական-մեթոդական կառուցամասերի հարաբերակցությունը և բովանդակությունը՝ արտացոլելով դրանք իր անհատական ծրագրում:

**Աղյուսակ 1**. Դասախոսների որակավորման բարձրացման

կրթագիտական ծրագրի ընդհանուր կառուցվածքը

| Հ/հ | Ծրագրի բաղադրիչի անվանումը | Ունկնդրի կրեդիտային բեռնվածությունը | |
|---|---|---|---|
| | | պարտադիր | առավելագույն |
| Ա | ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ | 10 | 27 |
| 1. | **Ընդհանուր պատրաստություն** | 7 | 17 |
| 2. | **Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն** | 1 | 4 |
| 3. | **Մասնագիտական պատրաստություն** | 2 | 6 |
| 4. | **Որակավորման բարձրացման այլ ձևեր** | - | - |
| Բ | ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ - ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ | 3 | 20 |
| 1. | **Հրատարակումներ** | 2 | - |
| 2. | **Զեկուցում համաժողովում** (աշխատաժողովում կամ գիտաժողովում) | 1 | - |

©Երևանի պետական համալսարան, 2013

| | | | |
|---|---|---|---|
| 3. | Առեռնախոսության պաշտպանություն | - | - |
| | 5 ՏԱՐՈՒՄ ԴԱՍԱԽՈՍԻ ՎԱՍՏԱԿԱԾ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ՝ 30 | | |

2.3. Ծրագրի ընդհանուր աշխատածավալը 30 կրեդիտ է, որից 10 ¼ 27-ը կազմում է կրթական բեռնվածությունը, 3 ¼ 20-ը՝ հետազոտական-մեթոդական:

2.4. Կրթական կառուցամասի առավելագույն բեռնվածությունը սահմանվում է 27 կրեդիտ, որից 10-ը՝ պարտադիր: Հետազոտական-մեթոդական կառուցամասից ունկնդիրը կարող է հավաքել առավելագույնը 20 կրեդիտ, որից 3-ը՝ պարտադիր: Դասախոսը 13 կրեդիտ պարտադիր բեռնվածությանը, իր ընտրությամբ, ավելացնում է ևս 17-ը՝ լրացնելով պահանջվող կրեդիտային աշխատածավալը:

## 3. ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դասախոսի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կրթական ու հետազոտական-մեթոդական կառուցամասերի բովանդակությունը, բաղադրիչ մոդուլների կրեդիտատարությունը և գնահատման ձևերը տրված են *հավելվածում:*

### 3.1. Կրթական կառուցամաս

Ծրագրի կրթական կառուցամասի առավելագույն բեռնվածությունը 27 կրեդիտ է (որից 10 կրեդիտը կազմում են պարտադիր դասընթացները): Կառուցամասը ներառում է հետևյալ **4 բաղադրիչները՝** ***ընդհանուր, մանկավարժական-հոգեբանական ու մասնագիտական պատրաստության կրթամասեր և որակավորման բարձրացման այլ ձևեր:*** Առաջին կրթամասը ծառայում է օտար լեզվով դասավանդելու և ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու հմտությունների ձևավորմանը, երկրորդը՝ մանկավարժական և հոգեբանական հմտությունների զարգացմանը, երրորդը՝ մասնագիտական գիտելիքների նորացմանը: Կրթական չորրորդ բաղադրիչը՝ ***որակավորման բարձրացման այլ ձևերը,*** ներառում է հիմնական ծրագրից դուրս դասախոսի դրսևորած ակտիվությունը՝ վերապատրաստում, ստաժավորում, մասնակցություն ամառային դպրոցներին և այլն:

3.1.1. ***Ընդհանուր պատրաստության*** **կրթամասի** առավելագույն բեռնվածությունը 17 կրեդիտ է (որից 7 կրեդիտը կազմում են պարտադիր մոդուլները): Կրթամասը ներառում է 7 մոդուլ (որից 3-ը՝ պարտադիր). անգլերենի իմացության տարբեր մակարդակների 3 մոդուլ (որից 1-ը՝ պարտադիր)՝

©Երևանի պետական համալսարան, 2013

յուրաքանչյուրը 3-ական կրեդիտ աշխատածավալով, տեղեկատվական տեխնոլոգիաների 4 մոդուլ (որից 2-ը՝ պարտադիր)՝ յուրաքանչյուրը 2-ական կրեդիտ աշխատածավալով: Կրթամասի դասընթացները նպատակաուղղված են ակադեմիական միջավայրում անգլերենի գործածությանը և ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը:

3.1.2. ***Մանկավարժական և հոգեբանական պատրաստության կրթամասի*** առավելագույն բեռնվածությունը 4 կրեդիտ է (որից 1 կրեդիտը կազմում է պարտադիր դասընթացը): Կրթամասն ընդգրկում է 4 մոդուլ (որից 1-ը՝ պարտադիր)՝ յուրաքանչյուրը 1-ական կրեդիտ աշխատածավալով: Կրթամասի դասընթացները նպատակաուղղված են դասավանդման, ուսումնառության ու գնահատման ժամանակակից մեթոդների յուրացմանը և մանկավարժական ու հոգեբանական անհրաժեշտ հմտությունների զարգացմանը:

3.1.3. ***Մասնագիտական պատրաստության կրթամասի*** առավելագույն բեռնվածությունը 6 կրեդիտ է (որից 2 կրեդիտը կազմում է պարտադիր դասընթացը): Կրթամասը ներառում է 3 մոդուլ (որից 1-ը՝ պարտադիր)՝ յուրաքանչյուրը 2-ական կրեդիտ աշխատածավալով: Դասընթացները նպատակաուղղված են դասախոսի մասնագիտական գիտելիքների արդիականացմանը:

3.1.4. Որակավորման բարձրացման այլ ձևերով նախատեսված յուրաքանչյուր ձևի նվազագույն աշխատածավալը 1 կրեդիտ է, առավելագույնը՝ 5: Ծրագրի այս բաղադրիչի ընդհանուր բեռնվածությունը չի սահմանափակվում: Նրա նպատակն է հաշվառել և կրեդիտավորել որակավորման բարձրացման հիմնական կրթական ծրագրից դուրս ունկնդրի դրսևորած ակտիվությունը:

3.1.5. ԵՊՀ-ից դուրս (հանրապետությունում կամ արտերկրում) դասախոսի որակավորման բարձրացման, վերապատրաստման կամ կատարելագործման արդյունքները կարող են ճանաչվել՝ հաշվարկվելով սույն ծրագրի համապատասխան բաղադրիչի համար սահմանված կրեդիտների շնորհմամբ:

3.1.6. Ընդհանուր պատրաստության կրթամասի որևէ բաղադրիչից (բաղադրիչներից) ավարտական պահանջներին բավարարող ընդհանուր պատրաստություն ունենալու և այն ընդունված կարգով փաստելու դեպքում ունկնդիրը ստանում է սահմանված կրեդիտները՝ առանց մասնակցելու դասընթացին:

## 3.2. Հետազոտական-մեթոդական կառուցամաս

3.2.1. Ծրագրի հետազոտական-մեթոդական կառուցամասի առավելագույն բեռնվածությունը կարող է կազմել մինչև 20 կրեդիտ (որից 3-ը՝ պարտադիր): Այն ներառում է հետևյալ 3 բաղադրիչները՝ ***հրատարակումներ, զեկուցում համաժողովում (աշխատաժողովում, գիտաժողովում) և ատենախոսության պաշտպանություն:***

3.2.2. Հրատարակումներ են գիտական հոդվածը, ուսումնամեթոդական աշխատանքը, ուսումնական ձեռնարկը, դասագիրքը և մենագրությունը: Մեկ գիտական հոդվածի համար դասախոսը ստանում է 3 կրեդիտ, եթե այն հրապարակվել է միջազգային գրախոսվող հանդեսում, և 1 կրեդիտ, եթե այն լույս է տեսել ՀՀ ԲՈՀ-ի հաստատած ցանկի հանդեսում: Մեկ ուսումնամեթոդական աշխատանքը գնահատվում է 1 կրեդիտ, ուսումնական ձեռնարկը՝ 5, իսկ դասագիրքը և մենագրությունը՝ յուրաքանչյուրը 10-ական: Մեկ գիտական հոդվածի հրատարակումը և մեկ ուսումնամեթոդական աշխատանքի կազմումը պարտադիր են դասախոսի հնգամյա աշխատանքային շրջափուլի համար (ինչը կազմում է նվազագույնը 2 կրեդիտ):

3.2.3. Համաժողովում (աշխատաժողովում կամ գիտաժողովում) զեկուցման համար դասախոսը ստանում է 1 կրեդիտ, ինչը նույնպես պարտադիր է վերոնշյալ ժամկետի համար:

3.2.4. Թեկնածուական և դոկտորական ատենախոսության հնարավոր պաշտպանության համար նախատեսվում են 6 և 10 կրեդիտ աշխատածավալներ համապատասխանաբար:

3.2.5. Այսպիսով, հետազոտական-մեթոդական կառուցամասից 3 կրեդիտ պարտադիր բեռնվածությունը սահմանվում է գիտական հոդվածի, ուսումնամեթոդական աշխատանքի և համաժողովում զեկուցման համար՝ յուրաքանչյուրը 1-ական կրեդիտ աշխատածավալով: Մնացած 17 կրեդիտը դասախոսը կարող է կուտակել հետազոտական-մեթոդական կառուցամասի տարբեր բաղադրիչներից՝ իր հետազոտական նախասիրություններին համապատասխան:

## 4. ԾՐԱԳՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4.1. Որակավորման բարձրացումը հավաստելու համար ունկնդիրը հնգամյա ծրագրի կատարման արդյունքում պետք է կուտակի առնվազն 30 կրեդիտ, որը ներառում է ծրագրի ինչպես կրթական, այնպես էլ հետազոտական-մեթոդական կառուցամասերը:

4.2. Դասախոսի որակավորման բարձրացման անհատական ծրագրի կրթական կառուցամասի առավելագույն բեռնվածությունը կարող է կազմել առավելագույնը 27 կրեդիտ, իսկ նվազագույնը՝ 10: Ընդ որում, մինչև 17 կրեդիտ (որից 7-ը՝ պարտադիր)՝ ընդհանուր, 4-ը (որից 1-ը՝ պարտադիր)՝ մանկավարժական-հոգեբանական, 6-ը (որից 2-ը՝ պարտադիր)՝ մասնագիտական պատրաստությունից:

©Երևանի պետական համալսարան, 2013

4.3. Ծրագրի հետազոտական-մեթոդական կառուցամասի առավելագույն բեռնվածությունը կարող է կազմել 20 կրեդիտ, իսկ նվազագույնը՝ 3: Ընդ որում, 3 կրեդիտ պարտադիր բեռնվածությունը ձևավորվում է 1 գիտական հոդվածի, 1 ուսումնամեթոդական աշխատանքի և համաժողովում 1 զեկուցման համար:

4.4. Ամփոփիչ ատեստավորման հիմնական չափանիշ է որակավորման բարձրացման համար սահմանված հետևյալ պահանջների կատարումը, համաձայն որի՝ որակավորման բարձրացում անցած են համարվում այն դասախոսները, որոնք՝

- ձեռք են բերել ակադեմիական միջավայրում անգլերենով հաղորդակցվելու բավարար հմտություն,
- տիրապետում են տեղեկատվական տեխնոլոգիաների և կարողանում են դրանք օգտագործել ուսումնական գործընթացում,
- տիրապետում են դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներին և ունեն հոգեբանական անհրաժեշտ հմտություններ,
- քաջատեղյակ են կրթագիտական տվյալ բնագավառի զարգացման գերակա ուղղություններին,
- ձեռք են բերել համակարգված ու նորացված տեսական և գործնական գիտելիքներ՝ կապված իրենց որակավորմանը ներկայացվող նոր պահանջների հետ,
- հետևողականորեն զբաղվում են մեթոդական ու հետազոտական աշխատանքներով և որոշակի ներդրում ունեն գիտության իրենց բնագավառում,
- ձեռք բերած գիտական արդյունքները կիրառում են կրթական գործընթացում:

©Երևանի պետական համալսարան, 2013

<u>Հավելված</u>

## Դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի

## կրթական ու հետազոտական-մեթոդական կառուցամասերի բովանդակությունը

| Կրթական/հետազոտական-մեթոդական մոդուլը | Միավոր մոդուլի համար սահմանված կրեդիտը | Ունկնդրի կրեդիտային բեռնվածությունը | | Ժամաքանակը (լս./ինքն.) | Գնահատման ձևը |
|---|---|---|---|---|---|
| | | պարտադիր | առավելագույն | | |
| **Ա. ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (10 - 27 կրեդիտ)** | | **10** | **27** | **360/450** | |
| **1. Ընդհանուր պատրաստություն** | | **7** | **17** | **260/250** | |
| ***Անգլերենը ակադեմիական միջավայրում*** | | **3** | **9** | **180/90** | քննություն |
| • *1-ին մակարդակ* | 3 | | | 60/30 | |
| • *2-րդ մակարդակ* | 3 | | | 60/30 | |
| • *3-րդ մակարդակ* | 3 | | | 60/30 | |
| ***Տեղեկատվական տեխնոլոգիաներ*** | | **4** | **8** | **80/160** | ստուգարք |
| • *Համակարգչային գրագիտություն (կիրառական ծրագրեր՝ Word, Excel, Internet Explorer և այլն)* | 2 | | | 20/40 | |
| • *Լսարանային ցուցադրությունների պատրաստում (PowerPoint և այլն)* | 2 | | | 20/40 | |
| • *Կիրառական ծրագրային փաթեթներ (MATLAB, LabVIEW և այլն)* | 2 | | | 20/40 | |
| • *Ուսուցողական Case-փաթեթների պատրաստում* | 2 | | | 20/40 | |
| **2. Մանկավարժական – հոգեբանական պատրաստություն** | | **1** | **4** | **40/80** | ստուգարք |
| • *Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ* | 1 | | | 10/20 | |
| • *Կրթական ծրագրերի մշակման հիմունքներ* | 1 | | | 10/20 | |
| • *Մանկավարժական հոգեբանություն* | 1 | | | 10/20 | |
| • *Խոսքի մշակույթ* | 1 | | | 10/20 | |
| **3. Մասնագիտական պատրաստություն** | **6** | **2** | **6** | **60/120** | ստուգարք |
| • *1-ին՝ Մասնագիտության արդի հիմնախնդիրները* | 2 | | | 20/40 | |
| • *2-րդ* | 2 | | | 20/40 | |
| • *3-րդ* | 2 | | | 20/40 | |
| **4. Որակավորման բարձրացման այլ ձևեր** (վերապատրաստում, ստաժավորում, ամառային դպրոց և այլն) | **1 - 5** | **-** | **-** | | մասնակցության հավաստում/ տեղեկանք |
| **Բ. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ - ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (3 - 20 կրեդիտ)** | | **3** | **20** | | հավաստող փաստաթղթի տրամադրում |
| **1. Հրատարակումներ** | | 2 | | | |
| • *Գիտական հոդված* | | 1 | | | |
| *- միջազգային գրախոսվող հանդեսներում* | 3 | | | | |
| *- ՀՀ ԲՈՀ-ի հաստատած ցանկի հանդեսներում* | 1 | | | | |
| • *Ուսումնամեթոդական աշխատանք* | 1 | 1 | | | |
| • *Ուսումնական ձեռնարկ* | 5 | | | | |
| • *Դասագիրք* | 10 | | | | |
| • *Մենագրություն* | 10 | | | | |

©Երևանի պետական համալսարան, 2013

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. Զեկուցում համաժողովում (աշխատա-ժողովում կամ գիտաժողովում) | 1 | 1 | | | |
| 3. Ատենախոսության պաշտպանություն | | - | | | |
| • *դոկտորական* | 10 | | | | |
| • *թեկնածուական* | 6 | | | | |
| 5 ՏԱՐՈՒՄ ԴԱՍԱԽՈՍԻ ՎԱՍՏԱԿԱԾ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ՝ 30 | | | | | |

©Երևանի պետական համալսարան, 2013

# 4.5. Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի իրականացման կանոնակարգը

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն փաստաթղթով սահմանվում է Երևանի պետական համալսարանում (այսուհետ՝ ԵՊՀ) պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման (այսուհետ՝ ՈԲ) ծրագիրը կրեդիտային համակարգով կազմակերպելու կարգը:

1.2. Կանոնակարգը մշակված է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներին, ինչպես նաև ԵՊՀ կանոնադրությանը և ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան:

1.3. ԵՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի ՈԲ ծրագիրը կազմակերպվում է ըստ «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» մեթոդական փաստաթղթի:

1.4. ՈԲ-ն դասախոսների տեսական ու գործնական գիտելիքների համակարգումը և նորացումն է՝ կապված նրանց որակավորման մակարդակին ներկայացվող պահանջների բարձրացման և մասնագիտական ու մանկավարժական խնդիրների լուծման ժամանակակից մեթոդների յուրացման անհրաժեշտության հետ:

1.5. Կրեդիտային համակարգով ՈԲ ծրագրի նպատակն է՝ համալրել ու բարելավել ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան և ապահովել դասախոսների ընդհանուր ու մասնագիտական կոմպետենցիաների շարունակական զարգացումը:

1.6. Դասախոսների ՈԲ ծրագրի խնդիրներն են՝ ապահովել նրանց ակադեմիական շարժունությունը, ստեղծել որակի հավաստման ներքին մեխանիզմներ և ընդլայնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում:

1.7. ՈԲ-ն (հնգամյա շրջափուլով) համարվում է պարտադիր ԵՊՀ վաթսուն տարին չլրացած հիմնական դասախոսների համար մանկավարժական առնվազն երկու տարվա անընդհատ ստաժի դեպքում: ԵՊՀ մյուս դասախոսները ՈԲ ծրագրին կարող են մասնակցել կամընտրաբար՝ գործատուի համաձայնությամբ:

1.7.1. Հանրապետության մյուս բուհերի դասախոսները ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի համար կազմակերպվող ՈԲ ծրագրին կարող են մասնակցել նրա կրթական կառուցամասով կամ ըստ գործատուի պահանջի՝ լրացուցիչ կրթության այլ ծրագրով (տե՛ս «ԵՊՀ-ում հետբուհական լրացուցիչ կրթության կազմակերպման հայեցակարգ»):

1.8. ԵՊՀ դասախոսների ՈԲ ծրագիրը ֆինանսավորվում է ԵՊՀ կենտրոնացված միջոցների հաշվին, այլ բուհերի դասախոսներինը՝ վճարովի հիմունքով, ինչը սահմանվում է ռեկտորի հրամանով:

1.9. Կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

- **դասախոսների որակավորման բարձրացման հենքային ծրագիր (այսուհետ՝ Հենքային ծրագիր)**՝ «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիր»,
- **դասախոսի որակավորման բարձրացման անհատական ծրագիր (այսուհետ՝ Անհատական ծրագիր)**՝ ԵՊՀ դասախոսի՝ Հենքային ծրագրի հիման վրա իր նախասիրություններին և մասնագիտության ոլորտի նոր պահանջներին համապատասխան կազմած ծրագիր:

## 2. Դասախոսի որակավորման բարձրացման անհատական ծրագրի ձևավորումը

2.1. Դասախոսը ՈԲ է անցնում հնգամյա ժամկետում (2011/2012 ուսումնական տարվա առաջին կիսամյակից սկսած)՝ Անհատական ծրագրով, որը ձևավորվում է Հենքային ծրագրի հիման վրա:

2.1.1. Այլ ժամկետում ծրագրին միանալու դեպքում դասախոսի ՈԲ հնգամյա շրջափուլը հաշվարկվում է տվյալ կիսամյակից սկսած:

2.2. Դասախոսի Անհատական ծրագրի հնգամյա բեռնվածությունը կազմում է 30 կրեդիտ, որից 13-ը նա հավաքում է պարտադիր մոդուլներից, 17-ը՝ ընտրողաբար:

©Երևանի պետական համալսարան, 2013

Պարտադիր բեռնվածությունն ունի հետևյալ բաշխվածությունը.

| Մոդուլի անվանումը | Սահման-ված կրեդիտը | Ժամաքանակը լսար./ինքն. | Գնահատման ձևը |
|---|---|---|---|
| Ա. ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ | **10** | | |
| 1. Անգլերենը ակադեմիական միջավայրում (սահմանված վեց մակարդակից մեկը) | 3 | 60/30 | քննություն |
| 2.Համակարգչային գրագիտություն (կիրառական ծրագրեր՝ Word, Excel, Internet Explorer և այլն) | 2 | 20/40 | ստուգարք |
| 3. Լսարանային ցուցադրությունների պատրաստում (PowerPoint և այլն) | 2 | 20/40 | ստուգարք |
| 4. Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ | 1 | 10/20 | ստուգարք |
| 5. Մասնագիտության արդի հիմնախնդիրները | 2 | 20/40 | ստուգարք |
| Բ.ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ–ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ | **3** | | հավաստա-գրում |
| 1. Գիտական հոդված | 1 | | |
| 2. Ուսումնամեթոդական աշխատանք | 1 | | |
| 3. Զեկուցում համաժողովում (աշխատաժողովում կամ գիտաժողովում) | 1 | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **13** | **130/170** | |

2.3. 13 կրեդիտ պարտադիր բեռնվածությանը դասախոսն ըստ իր նախասիրությունների ավելացնում է ևս 17-ը՝ լրացնելով պահանջվող կրեդիտային աշխատածավալը:

2.3.1. Կրթական կառուցամասի առաջին՝ «Անգլերենը ակադեմիական միջավայրում» մոդուլն ունի 6 մակարդակ՝ 3-ական կրեդիտ բեռնվածությամբ: ՈԲ ծրագրի հնգամյա շրջափուլում ունկնդրի համար պարտադիր է մեկ մակարդակի ուսումնասիրումը և յուրացումը՝ 3 կրեդիտ բեռնվածությամբ: Ըստ դասախոսի մասնագիտության և պատրաստության՝ պարտադիր բեռնվածություն է սահմանվում տարբեր մակարդակներից:

Այլ մասնագիտությամբ դասախոսը հնգամյա շրջափուլում սույն մոդուլից կարող է ձեռք բերել 3 – 9 կրեդիտ: Եթե նա ունի անգլերենից որոշակի նախորդող պատրաստություն, սկզբում, առանց որևէ դասընթացի մասնակցելու, անցնում է թեստավորում՝ փաստելու, թե մոդուլի 6 մակարդակներից որին է տիրապետում ըստ սահմանված պահանջների: Տվյալ՝ սահմանային մակարդակի իմացության համար ունկնդիրը միայն քննությամբ կարող է վաստակել լրացուցիչ 3 կրեդիտ, բայց այս դեպքում նրա համար պարտադիր

©Երևանի պետական համալսարան, 2013

(շեմային) է դառնում հաջորդ մակարդակի յուրացումը՝ ձեռք բերելու պահանջվող 3 կրեդիտը: Իր նախաձեռնությամբ դասախոսը կարող է յուրացնել ևս մեկ մակարդակ՝ ստանալով լրացուցիչ 3 կրեդիտ:

2.3.1.1. «Անգլերեն լեզու» մասնագիտությամբ դասախոսի համար շեմային է 5-րդ մակարդակը, նվազագույն բեռնվածությունը՝ 3 կրեդիտ, առավելագույնը՝ 6: Եթե նա ունի 5-րդ մակարդակի համար նախորդող բավարար պատրաստություն, կարող է միայն քննությունը հանձնել՝ վաստակելով լրացուցիչ 3 կրեդիտ: Այս դեպքում ունկնդրի համար պարտադիր է դառնում հաջորդ՝ 6-րդ մակարդակի յուրացումը՝ ձեռք բերելու պահանջվող 3 կրեդիտը:

2.4. «Մասնագիտական պատրաստություն» կրթամասից պարտադիր է առաջին մոդուլի յուրացումը: Կրթամասի մյուս մոդուլները դասախոսը իր նախասիրությամբ է ընտրում՝ ըստ մասնագիտության կամ մասնագիտացման:

## 3. Որակավորման բարձրացման ծրագրի կառավարումը

3.1. Ծրագրի իրականացումն ապահովելու և համալսարանական ու ֆակուլտետային գործընթացները համադրելու նպատակով ռեկտորի հրամանով ստեղծվում է ՈԲ ծրագրի պատասխանատուի ինստիտուտ՝ ըստ ֆակուլտետների, համահամալսարանական ամբիոնների և Իջևանի մասնաճյուղի.

3.1.1. Ծրագրի կազմակերպական հարցերով ընդհանուր պատասխանատվությունը և համակարգումը վերապահվում են Հետբուհական լրացուցիչ կրթության վարչությանը (այսուհետ՝ ՀԼԿՎ),

3.1.1. Ծրագրի բովանդակային հարցերով՝

3.1.1.1. Ընդհանուր պատասխանատվություն են կրում ԵՊՀ համապատասխան ստորաբաժանումները և նրանց ղեկավարները,

3.1.1.2. Հենքային ծրագրի առաջին և երկրորդ կրթամասերի համար՝ համապատասխան ֆակուլտետների պատասխանատուները,

3.1.1.3. Երրորդ և չորրորդ կրթամասերի համար՝ յուրաքանչյուր ֆակուլտետի պատասխանատու:

3.1.2. Ֆակուլտետի պատասխանատուին է վերապահվում նաև ծրագրի հետազոտական-մեթոդական կառուցամասի իրականացման ուղղորդումը:

3.1.3. Ծրագրի պատասխանատուի համար սահմանվում է տարեկան 30 ժամ լրացուցիչ բեռնվածություն:

3.1.4. ՀԼԿՎ պետը և պատասխանատուները ձևավորում են համապատասխան ՈԲ խորհուրդ՝ ԵՊՀ ուսումնական աշխատանքների և գիտական քաղաքականության

ու միջազգային համագործակցության գծով պրոռեկտորների համանախագահությամբ։

3.2. ՈԲ-ի համակարգում ապահովվում է նաև բաց տեղեկատվություն՝ ԵՊՀ կայքէջի միջոցով։ ՈԲ ծրագրի և գործընթացի մասին տեղադրվում է մշտապես թարմացվող տեղեկատվություն, որից յուրաքանչյուր դասախոս կարող է իրազեկ դառնալ իր կուտակած կրեդիտների գրանցված լինելուն։

3.3. Ծրագրի կատարման շահագրգիռ անձը և գլխավոր պատասխանատուն ունկնդիր դասախոսն է։ Յուրաքանչյուր ունկնդիր վարում է «Դասախոսի որակավորման բարձրացման անհատական ծրագրի իրականացման օրագիր»՝ ինքնավերահսկելով իր իսկ ծրագրի կատարումը։ Նա ինքը պետք է ժամանակին իրազեկի ՀԼԿՎ-ին հիմնական կրթական ծրագրից դուրս (որակավորման բարձրացման այլ ձևերով) իր վաստակած կրեդիտների մասին՝ ներկայացնելով համապատասխան փաստաթուղթ, և հավաստիանա, որ այդ կրեդիտները գրանցվել են իր հաշվին։

3.4. Ամբիոնները և ֆակուլտետները նույնպես պետք է վերահսկեն իրենց դասախոսական համակազմի կողմից ծրագրի կատարումը՝ նկատի ունենալով, որ այդ մասին ամենամյա տեղեկատվություն է ներկայացվում գիտխորհուրդ։

## 4. Որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպումը

4.1. Սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ ԵՊՀ ռեկտորի հրամանով հաստատվում են՝

4.1.1. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ՈԲ հնգամյա հեռանկարային պլանը,

4.1.2. ՈԲ ծրագրի ֆակուլտետային պատասխանատուների կազմը,

4.1.3. ԵՊՀ ՈԲ խորհրդի կազմը,

4.1.4. կանոնակարգային փաստաթղթերի ձևերը։

4.2. Կրթական մոդուլների ուսումնական ծրագրերը մշակում են պատասխանատու ստորաբաժանումները (ֆակուլտետ կամ ամբիոն), և իրականացնում՝ ՀԼԿՎ-ն՝ պատասխանատուների հետ համատեղ։

4.3. Մանկավարժական առնվազն երկու տարվա անընդհատ ստաժ ունեցող և 60 տարին չլրացած ԵՊՀ հիմնական դասախոսները 2011 թ. սեպտեմբերի ընթացքում ձեռք են բերում (ֆակուլտետային պատասխանատուից, ՀԼԿՎ-ից կամ ԵՊՀ կայքէջից) «Դասախոսի որակավորման բարձրացման անհատական ծրագրի

իրականացման օրագիրը»՝ դառնալով ՌԲ ծրագրի առաջին շրջափուլի ունկնդիրներ:

4.4. Ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի առաջին շաբաթվա վերջին օրը նախատեսվող դասընթացների ժամանակացույցը տեղադրվում է ԵՊՀ կայքէջում, ինչպես նաև ուղարկվում ֆակուլտետներ: Տեղադրվում են նաև ուսումնական ծրագրերը:

4.5. Դասախոսը, ծանոթանալով ժամանակացույցին, ընտրում է տվյալ կիսամյակում լսելիք դասընթացը (դասընթացները) և կիսամյակի երկրորդ շաբաթվա ընթացքում ՀԼԿՎ ներկայացնում մասնակցության հայտ՝ էլեկտրոնային ձևով (doc ձևաչափով) կամ թղթային տարբերակով:

4.5.1. Հայտի բոլոր տողերի լրացումը պարտադիր է: Ոչ լրիվ կամ ոչ ճիշտ լրացված հայտը չի ընդունվում:

4.5.2. Հայտի բովանդակության փոփոխությունը հնարավոր է միայն մինչ հայտերի ներկայացման հայտարարված ժամկետի ավարտը:

4.5.3. Վճարովի հիմունքով մասնակցության հայտում պետք է նշվի նաև ֆինանսավորման աղբյուրը:

4.6. Ներկայացված հայտերի կազմակերպական-տեխնիկական ընտրությունն իրականացնում է ՀԼԿՎ-ն կիսամյակի երրորդ շաբաթվա ընթացքում: Հայտը համարվում է ընդունված, եթե այն գրանցվում է, և նրան տրվում է գրանցման համար: Ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվում:

4.7. Հայտարարված դասընթացը կազմակերպվում է, եթե նրան մասնակցելու հայտ են ներկայացրել սահմանված թվակազմով ունկնդիրներ (8 – 15՝ ըստ դասընթացների): Ճշգրտված ժամանակացույցը հաստատվում է պրոռեկտորի կողմից և տեղադրվում ԵՊՀ կայքէջում, ինչպես նաև ուղարկվում մասնակից ունկնդիրներին:

4.8. Խմբերի ձևավորումը, ունկնդիրների ցուցակը և պարապմունքների սկիզբն ու ավարտը ձևակերպվում են պրոռեկտորի հրամանով: Պարապմունքներն սկսվում են կիսամյակի չորրորդ շաբաթվանից:

4.9. Դասընթացի յուրացումն ավարտվում է ատեստավորումով (քննությամբ կամ ստուգարքով):

4.9.1. Պարապմունքներին մասնակցած, բայց ատեստավորում չանցած ունկնդիրը քննությունը կամ ստուգարքը կարող է նորից հանձնել՝ կրկնելով դասընթացը:

4.9.2. Ընդհանուր պատրաստության կրթամասի որևէ բաղադրիչից բավարար պատրաստություն ունենալու և այն ընդունված կարգով փաստելու դեպքում (ճանաչ-

վում է ներկայացված փաստաթուղթը, կամ անցնում է ատեստավորում) ունկնդիրը ստանում է սահմանված կրեդիտները՝ առանց մասնակցելու դասընթացին:

4.9.3. ԵՊՀ-ից դուրս (հանրապետությունում կամ արտերկրում) դասախոսի որակավորման բարձրացման, վերապատրաստման կամ կատարելագործման արդյունքները կարող են ճանաչվել՝ հաշվարկվելով Հենքային ծրագրի համապատասխան բաղադրիչի համար սահմանված կրեդիտների շնորհիմամբ:

4.10. Կրթական կառուցամասի չորրորդ կրթամասից («Որակավորման բարձրացման այլ ձևեր») և հետազոտական-մեթոդական կառուցամասից ունկնդիրը կրեդիտներ է կուտակում միայն ՈԲ ծրագրի հնգամյա շրջափուլում կատարած աշխատանքի համար:

## 5. Որակավորման բարձրացման ծրագրի արդյունքների ամփոփում

5.1. Դասախոսի Անհատական ծրագիրն ավարտվում է ամփոփիչ ատեստավորմամբ, որի համար հիմնական չափանիշ է Հենքային ծրագրով սահմանված պահանջների կատարումը:

5.2. Շրջանավարտ ունկնդիրը լրացնում է ՈԲ ծրագրի կատարման մասին հաշվետվության ձևաթուղթը՝ կցելով հավաստող փաստաթղթերը, և ներկայացնում ՀԼԿՎ:

5.3. ՀԼԿՎ-ն ստացած հաշվետվությունների վերլուծությամբ ճշգրտում է ներկայացված փաստաթղթերի իսկությունը, հավաստում ունկնդիրների մասնակցությունը և ընդհանուր հաշվետվություն ներկայացնում ՈԲ խորհուրդ՝ ամփոփիչ (փաստաթղթային) ատեստավորման:

5.4. ՈԲ ծրագիրն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած դասախոսին խորհրդի որոշմամբ տրվում է սահմանված նմուշի փաստաթուղթ՝ վկայական: Ամփոփիչ ատեստավորում չանցածները ստանում են տեղեկանք ծրագրին մասնակցելու մասին՝ կատարման ծավալի նշումով:

5.4.1. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ՈԲ ծրագրի համամասնակից այլ բուհերի ունկնդիր դասախոսներին տրվում է հավաստագիր՝ կրթական կառուցամասով ծրագրի կատարման ծավալի նշումով:

©Երևանի պետական համալսարան, 2013

# 5. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

©Երևանի պետական համալսարան, 2013

## 5.1. Ուսումնառության ռեսուրսները, գնահատումը և բարելավման ռազմավարությունը

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որակի ապահովման եվրոպական չափորոշիչները և ուղենիշները պահանջում են, որ բուհում ուսումնառության ռեսուրսները և ուսանողների աջակցության ծառայությունները լինեն համարժեք և համապատասխան իրականացվող կրթական ծրագրերի պահանջներին:

Ըստ այդմ, համապատասխան եվրոպական չափորոշիչը առաջարկում է հետևյալ ուղենիշները.

1) Բացի դասախոսներից, ուսանողները կարիք ունեն ուսումնառությանն օժանդակող մի շարք ռեսուրսների՝ սկսած ֆիզիկական ռեսուրսներից, ինչպես, օրինակ, գրադարանները և համակարգչային տեխնիկան, մինչև զուտ մարդկային աջակցությունը՝ անհատականացված ուսուցման, կուրատորների կամ խորհրդատուների օգտագործմամբ:
2) Ուսումնառության ռեսուրսները և մյուս օժանդակ ծառայությունները պետք է հեշտությամբ հասանելի լինեն ուսանողներին, կառուցվեն՝ հաշվի առնելով նրանց կարիքները, հետադարձ կապով արձագանքեն ծառայություններից օգտվողների կարիքներին:
3) Բուհերը պետք է մշտապես հսկեն, գնահատեն և բարելավեն նաև իրենց ուսանողների աջակցության ծառայությունների արդյունավետությունը:

Ելնելով սեփական առաքելությունից, ռազմավարական նպատակներից և առաջնորդվելով վերը բերված ուղենիշներով՝ ԵՊՀՆ-ն մշակում է ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների պլանավորման, գնահատման և բարելավման իր ռազմավարությունը, որը որակի ապահովման և շարունակական բարելավման ԵՊՀ ընդհանուր քաղաքականության բաղադրիչն է:

©Երևանի պետական համալսարան, 2013

# 1. ԵՊՀ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

## 1.1. Ուսումնառության ռեսուրսների նպատակը և կազմը

Ուսումնառության ռեսուրսները ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչն են: Ուսումնառության ռեսուրսները կրթական նպատակներով կիրառվող, ցանկացած ձևաչափի, իրական կամ վիրտուալ ռեսուրսներն են, որոնք լուսաբանում են ուսումնառության բաղադրամասերը և նպաստում դրանց յուրացմանը ուսանողների կողմից, հարստացնում են ուսանողի և դասախոսի կրթական փորձը: Դրանք նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետ կերպով իրականացմանը: Ուսումնառության ռեսուրսները ենթադրում են նյութեր, ուղեցույցներ, սարքավորումներ, ենթակառուցվածք և համապատասխան տեղեկատվություն, որոնք օգնում են ուսանողներին հաջողությամբ ձեռք բերել ծրագրի կամ դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքները:

Անհատական կարողություններին, կարիքներին և հետաքրքրություններին համապատասխան ռեսուրսների ընտրությունը մեծապես նպաստում է ուսանողների բարձր առաջադիմությանը: Ուսումնառության բարձրորակ ռեսուրսներով ապահովումը ու դրանց արդյունավետ օգտագործումը նպաստում է ուսանողների այնպիսի ունակությունների զարգացմանը, ինչպիսիք են կիրառելը, հետազոտելը, կազմակերպելը, վերլուծելը, սինթեզելը, գնահատելը և այլն:

Ուսումնառության ռեսուրսները կարող են տեղակայված լինել ինչպես բուհի կենտրոնական կառույցներում, այնպես էլ առանձին ստորաբաժանումներում (ֆակուլտետներ, ամբիոններ, կենտրոններ և այլն): Ուսումնառության ռեսուրսները ներառում են այդ կենտրոններում ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասանելի ողջ տեղեկատվական նյութերը: Ուսումնառության հիմնական ռեսուրսները լինում են տպագիր գրադարանային և էլեկտրոնային:

Ուսումնառության կարևորագույն ռեսուրսներ են գրադարանները, ընթերցասրահները, ընդհանուր օգտագործման և մասնագիտացված լսարանները, տեխնոլոգիապես հագեցած լսարանները, ուսումնական և հետազոտական լաբորատորիաները, ուսումնական-համակարգչային սրահները, լինգաֆոնային և թարգմանության սրահները, ազատ Wi-Fi գոտիները, հեռահաղորդակցության ցանցերը, էլեկտրոնային փոստը, հեռարձակման ուսուցողական միջոցները, ուսումնառության տեսաձայնային միջոցները՝ սկավառակներ, ֆիլմեր, սլայդեր, աուդիոդասախոսություններ և այլն:

ԵՊՀ ուսումնառության ռեսուրսների կազմը ներկայացված է ստորև.

**1) Ուսումնառության տպագիր ռեսուրսներ.**

1. դասագրքեր,
2. ուսումնական ձեռնարկներ,

3. դասախոսությունների տեքստեր,
4. լաբորատոր աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ,
5. մասնագիտական գրականություն,
6. բառարաններ, հանրագիտարաններ, տեղեկագրքեր,
7. ուսումնական պլակատներ և քարտեզներ,
8. թերթեր, ամսագրեր, ինֆորմացիոն բրոշյուրներ:

**2) Ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներ.**

9. էլեկտրոնային գրքեր և գրականություն,
10. էլեկտրոնային ամսագրեր, պարբերականներ,
11. կայքեր, պորտալներ,
12. էլեկտրոնային փոստ:

**3) Ուսումնական ենթակառուցվածքներ.**

13. գրադարաններ (ամբիոնային, ֆակուլտետային, կենտրոնական),
14. ընթերցասրահներ,
15. ընդհանուր օգտագործման, մասնագիտացված և տեխնոլոգիապես հագեցված լսարաններ,
16. ուսումնական լաբորատորիաներ,
17. համակարգչային սրահներ:

**4) Ուսումնառության համացանցային ռեսուրսներ.**

18. հեռահաղորդակցության ցանցեր,
19. հեռարձակման ուսուցողական միջոցներ,
20. ազատ Wi-Fi գոտիներ:

**5) Ուսումնառության տեսաձայնային միջոցներ.**

21. տեսասկավառակներ, ֆիլմեր, սլայդեր և այլն,
22. աուդիոդասախոսություններ:

Այս ռեսուրսների մի մասը նախատեսված է ընդհանուր օգտագործման համար և սպասարկում է համալսարանի բոլոր կրթական ծրագրերի կարիքները, մյուս մասը պատկանում է ԵՊՀ տարբեր ուսումնական ստորաբաժանումներին և ուղղված է նրանց կրթական ծրագրերի առանձնահատուկ կարիքները հոգալուն:

Կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումն ու որակի ապահովումը կարող են պահանջել նաև առանձնահատուկ ռեսուրսներ, որոնց կազմը կախված է ծրագրի նպատակներից ու առանձնահատկություններից և որոշվում է ծրագրի մշակման և իրականացման ընթացքում:

## 1.2. Ուսումնառության ռեսուրսների պլանավորումը

Ուսումնառության ռեսուրսների առկայությունը դեռևս չի երաշխավորում դրանց միջոցով ուսումնառությանը և դասավանդմանը օժանդակելու բուհի կարողությունը: Քանի դեռ այդ ռեսուրսները լիարժեք չեն օգտագործվում ուսանողների և դասախոսների կողմից, իսկ դրանց արդյունավետությունը պատշաճ չի գնահատվում՝ այդ ռեսուրսների ներգործությունը ուսումնառության արդյունավետության վրա մնում է անորոշ: Ուստի, ուսումնառության ռեսուրսների պլանավորման համար ԵՊՀ-ն պետք է գնահատի ուսանողների և դասախոսների կողմից դրանց փաստացի օգտագործման մակարդակը և ունենա ուսումնառության ռեսուրսների պլանավորման կանոնակարգված գործընթաց: Ուսումնառության ռեսուրսների պլանավորման գործընթացին ներկայացվող հիմնական պահանջներն են.

- պլանավորման գործընթացը հենվում է կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային կարիքների բացահայտման և գնահատման վրա, որոնք իրականացվում են կրթական ծրագրերի արտոնման, հաստատման, ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման փուլերում, և միտված է դասավանդման և ուսումնառության գործընթացներին արդյունավետ օժանդակելուն,
- ուսումնառության ռեսուրսների պլանավորումը պետք է հաշվի առնի ԵՊՀ ուսանողական համակազմի կառուցվածքը (տարբերակումն ըստ կրթական աստիճանների և ուսումնառության ձևերի), առանձնահատկությունները և ուղղվի ուսանողական տարբերացված համակազմի ուսումնառության առանձնահատուկ կարիքների առավելագույն բավարարմանը,
- ուսումնառության ռեսուրսների պլանավորման գործընթացը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի ԵՊՀ-ում կիրառվող դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերին ու մեթոդներին և խթանի դրանց նորացումն ու արդիականացումը,

©Երևանի պետական համալսարան, 2013

– ուսումնառության ռեսուրսների պլանավորման ժամանակ հարկավոր է ուշադրություն դարձնել նաև դրանց կառավարման և տեխնիկական հարցերին:

ԵՊՀ ուսումնառության ռեսուրսները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

– ուսումնառության ռեսուրսներն ընտրվում, համակարգվում և նախապատրաստվում են կրթական ծրագրերի իրականացմանն արդյունավետ կերպով օժանդակելու համար,
– ուսումնառության ռեսուրսները հարմարեցված են ուսանողների և դասախոսների կողմից ինքնուրույնաբար և արդյունավետորեն օգտագործելուն,
– ուսումնառության ռեսուրսների օգտագործումն ամբողջությամբ ինտեգրված է կրթական գործընթացում,
– ուսումնառության ռեսուրսների շարունակական զարգացման ռազմավարությունը, օգտագործման կանոնները և ընթացակարգերը մշտապես նորացվում են, փաստաթղթավորված են և հասանելի շահառուներին,
– ուսումնառության ռեսուրսների պլանավորումն իրականացվում է ինստիտուցիոնալ մակարդակով (ընդհանուր օգտագործման ռեսուրսների դեպքում) և ըստ առանձին կրթական ծրագրերի՝ դրանք իրականացնող ուսումնական ստորաբաժանումների կողմից,
– ուսանողները, դասախոսները և վարչական կազմը հնարավորություն ունեն մասնակցելու ուսումնառության ռեսուրսների պլանավորման և զարգացման աշխատանքներին,
– ուսումնառության ռեսուրսների մատչելիությունը և օգտագործման հնարավորությունները ընդլայնելու նպատակով ԵՊՀ-ն կիրառում է հեռահաղորդակցման ժամանակակից միջոցներ:

## 1.3. Ուսումնառության ռեսուրսներին ներկայացվող պահանջները

ԵՊՀ-ն տրամադրում է նաև համարժեք նյութական միջոցներ և սպասարկող անձնակազմ՝ուսումնառության ռեսուրսները կառավարելու և դրանց մատչելիությունն ապահովելու համար.

– ուսումնառության ռեսուրսները (ներառյալ գրադարանային և տեղեկատվական ռեսուրսները) պետք է լինեն հեշտ հասանելի բոլոր ուսանող-

ներին և դասախոսներին՝ ինչպես ուսումնական մասնաշենքերում, այնպես էլ դրսից,

– ուսումնառության բոլոր ռեսուրսները և ուսանողների օժանդակության ծառայությունները իրենց որակով, բազմազանությամբ և քանակով պետք է բավարարեն կրթական ծրագրերի առանձնահատուկ կարիքները և նպաստեն դրանց որակի ապահովմանը,

– այլ կազմակերպությունների և բուհերի (այդ թվում միջազգային) գրադարանային և տեղեկատվական ռեսուրսների համատեղ օգտագործման դեպքում դրանք լրացնում, այլ ոչ թե փոխարինում են ԵՊՀ սեփական ռեսուրսները:

Ուսումնառության ռեսուրսների շարունակական զարգացման և արդյունավետ օգտագործման համար ԵՊՀ-ն ունի անհրաժեշտ վարչական կառույցներ, տեխնիկական ծառայություններ և բավարար թվակազմով ու մասնագիտական կարողություններով օժտված սպասարկող հաստիքակազմ, որին ներկայացվում են հետևյալ հիմնական պահանջները.

– ուսումնառության ռեսուրսների համար պատասխանատու կառույցների և դրանց սպասարկող անձնակազմի որակավորման պահանջները և պարտականությունները հստակորեն սահմանված են,

– ուսումնառության ռեսուրսների սպասարկող անձնակազմին տրամադրվում է մասնագիտական կատարելագործման հնարավորություններ,

– կրթական ծրագրերը մշակելիս համապատասխան ուսումնական ստորաբաժանումը խորհրդակցում է ուսումնառության ռեսուրսների ապահովման և զարգացման համար պատասխանատու ԵՊՀ կառույցների (գրադարան, ուսումնամեթոդական վարչություն, որակի ապահովման կենտրոն և այլն) հետ,

– ուսումնառության ռեսուրսների ու ուսանողների օժանդակության ծառայությունների պահպանման ու զարգացման համար ԵՊՀ-ն տրամադրում է բավարար ֆինանսական ու նյութական միջոցներ, ինչպես նաև մարդկային ռեսուրսներ:

## 1.4. Ուսումնառության ռեսուրսների գնահատումը

Ուսումնառության ռեսուրսների գնահատումը ներառված է ԵՊՀ որակի ներքին ապահովման ընդհանուր գործընթացներում: Այն որակի ապահովման կարևորագույն բաղադրիչն է, քանի որ գնահատման գործընթացը կարող է նշանակալիորեն նպաստել ուսումնառության ռեսուրսների որակի բարձրացմանը:

Ուսումնառության ռեսուրսների գնահատման հիմնական նպատակն է պարզել, թե որքանով են դրանք նպաստում կրթական ծրագրերի կամ առանձին վերցրած դասընթացների/ուսումնական մոդուլների ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը ուսանողների կողմից:

Ուսումնառության ռեսուրսների գնահատումը կարող է իրականացվել ինչպես դրանց ձևավորման ու մշակման (կրթական ծրագրի արտոնման և պաշտոնական հաստատման գործընթացներում), այնպես էլ ուսանողների կողմից դրանց օգտագործման փուլերում (կրթական ծրագրի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացներում):

Ուսանողների արձագանքը ուսումնառության ռեսուրսների արդյունավետության և հասանելիության վերաբերյալ դրանց արժեքի մասին հիմնական և համապարփակ գնահատականն է: Գնահատման կիրառվող ձևերը կախված են գնահատման նպատակից: ԵՊՀ-ում օգտագործվում են ուսումնառության ռեսուրսների գնահատման հետևյալ ձևերը.

1. *Հարցումներ* հատուկ կազմված հարցաշարերով, որոնք կիրառվում են տարբեր խմբերի հետ: Սա գնահատման ամենակիրառվող ձևն է, որը տալիս է ինչպես որակական, այնպես էլ քանակական գնահատականներ: Գնահատման այս մեթոդը կարևորում է ուսանողի անհատական փորձը, կոնկրետ ուսումնառության ռեսուրսի ազդեցությունը այդ փորձի վրա և հնարավորություն տալիս արտահայտել իր բավարարվածությունը տվյալ ռեսուրսից: Գնահատման այս ձևն առավել նախընտրելի է ուսանողների համար, քանի որ այն հնարավորություն է տալիս անանուն և անհատական արձագանքների տրամադրմանը:

2. *Ֆոկուս խմբեր*, որոնք մի շարք օգտակար տեղեկատվություն ստանալու հնարավորություն են տալիս թե՛ ռեսուրսների պլանավորման և թե՛ դրանց կիրառման փուլերում: Խմբում պետք է ներառված լինեն թիրախային լսարանի ներկայացուցիչներ: Գնահատման այս մեթոդը հնարավորություն է տալիս պարզելու, թե ուսումնառության ինչպիսի ռեսուրսների կարիք ունի տվյալ թիրախային խումբը, ինչպես կարելի է բարելավել առկա ռեսուրսները, որքանով են դրանք իրականում հասանելի և ինչպես կարող են լավագույն ձևով գործածվել: Գնահատման այս ձևն ավելի օբյեկտիվ բնույթ ունի, քանի որ արտահայտում է միասնական կարծիք:

3. *Հարցազրույցներ*, որոնք ուսումնառության ռեսուրսներ մշակողները օգտագործում են որոշակի ոլորտներ ուսումնասիրելու համար: Դա հնարավորություն է տալիս ճշգրիտ որոշել ուսանողների վարքագիծը որոշակի ոլորտներում, ինչպես օրինակ՝ ուսանողի և ուսումնական ռեսուրսների փոխազդեցությունը. ուսանողների քանի՞ տոկոսն է կիրառում ուսումնառության այս կամ այն

ռեսուրսը և դրանով նախատեսված գործընթացները, ո՞րոնք են բաց թողնվում և ո՞րոնք են դժվարություններ առաջացնում: Այս մեթոդը մյուսների համեմատ ավելի ժամանակատար է և ի տարբերություն հարցումների, ուսանողները այդքան էլ հակված չեն ազատորեն արտահայտվել մեկ այլ անձի ներկայությամբ, անգամ եթե հարցազրույցն անանուն է: Ուստի այս մեթոդը նվազ կիրառելի է:

## 1.5. Ուսումնառության ռեսուրսների բարելավման խնդիրները և միջոցառումների ծրագիրը

ԵՊՀ ուսումնառության ռեսուրսների բարելավման հիմնական խնդիրները և համապատասխան միջոցառումների ծրագիրը առաջիկա երեք տարիների համար ներկայացված են ստորև:

**Խնդիր 1. Զարգացնել կրթական ծրագրերի պահանջներին համարժեք և մատչելի ուսումնառության ռեսուրսներ, ապահովել դրանց լիարժեք և արդյունավետ օգտագործումը ԵՊՀ ուսանողների և դասախոսների կողմից:**

**Միջոցառումների ծրագիր.**

Միջոցառում 1.1. Ձևավորել ուսանողների ուսումնառության տարբերացված կարիքներին և այլընտրանքային ուղեգծերին հարմարունակ տեղեկատվական ենթակառուցվածք:

Միջոցառում 1.2. Զարգացնել կրթական ծրագրերի նպատակներին և ելքային պահանջներին համապատասխանող ուսումնական և լաբորատոր բազա, ինչպես նաև տեխնիկական ծառայություններ:

Միջոցառում 1.3. Ապահովել ուսումնառության տեղեկատվական, տեխնիկական և այլ ռեսուրսների ու ծառայությունների մատչելիությունն ու լիարժեք օգտագործումն ուսանողների և դասախոսների կողմից:

**Խնդիր 2. Ստեղծել ժամանակակից ուսումնական միջավայր՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությունը խթանելու համար, ապահովել ՏՀՏ-երի ընդլայնված և արդյունավետ օգտագործումը ԵՊՀ ուսումնական գործընթացում:**

Միջոցառում 2.1. Ձևավորել տեխնոլոգիական կարողությամբ և առցանց էլեկտրոնային ուսուցման լսարանների ցանց, խթանել վիրտուալ լաբորա-

տորիաների ստեղծումը և օգտագործումը ԵՊՀ ուսումնական գործընթացում:

Միջոցառում 2.2. Ստեղծել նպաստավոր պայմաններ և ներդնել խրախուսման մեխանիզմներ՝ դասավանդման գործընթացում ՏՀՏ-ների լայնամասշտաբ կիրառման համար, ապահովել դասախոսական կազմի վերապատրաստումը էլեկտրոնային ուսուցման դասընթացների (էլեկտրոնային դասագրքեր և դասախոսությունների տեքստեր, ուսումնական քեյս-փաթեթներ, առարկայական ծրագրեր, թեստավորման փաթեթներ և այլն) մշակման և իրականացման համար:

Միջոցառում 2.3. Ձևավորել անհրաժեշտ կադրային, տեխնոլոգիական և մեթոդական ռեսուրսներ՝ էլեկտրոնային եղանակով ուսուցման դասընթացների մշակման և ներդրման համար:

Միջոցառում 2.4. Ձեռք բերել և ներդնել առցանց ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգեր՝ աստիճանաբար անցնելով դասընթացների և ուսումնական նյութերի առցանց մատուցմանը:

Միջոցառում 2.5. Ապահովել հեռակա ուսուցման համակարգի դասընթացները էլեկտրոնային ուսուցման ուսումնամեթոդական նյութերով:

Միջոցառում 2.6. Ապահովել ուսումնառության, դասավանդման, խորհրդատվության և գնահատման գործընթացների էլեկտրոնային ռեսուրսների առկայությունը և դրանց հասանելիությունը ԵՊՀ բոլոր ուսանողների համար:

Միջոցառում 2.7. Ապահովել ուսումնական ենթակառուցվածքների հետագա բարելավումն ու արդիականացումը, դրանց միջև կապերի ամրապնդումը, որակյալ դասավանդման մեթոդական հենքի, տեխնոլոգիական ռեսուրսների, այդ թվում՝ տեխնոլոգիական կարողությամբ լսարանների ցանցի զարգացումը:

**Նպատակ 3. Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել ԵՊՀ ուսումնական և լաբորատոր բազան՝ կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան:**

Միջոցառում 3.1. Գնահատել ԵՊՀ լսարանային ֆոնդի և ուսումնական լաբորատոր բազայի առկա վիճակը և իրականացնել դրանց փուլային արդիա-

կանացում՝ կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի նոր կարիքներին համապատասխան:

Միջոցառում 3.2. Ապահովել լսարանային և լաբորատոր բազայի վերազինումն ու արդիականացումը՝ այդ նպատակով ավելացնելով ԵՊՀ բյուջեից համապատասխան հատկացումները:

Միջոցառում 3.3. Ստեղծել նոր ուսումնական լաբորատորիաներ՝ կրթական ծրագրերի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան:

Միջոցառում 3.4. Ակտիվացնել և ընդլայնել համագործակցությունը ԵՊՀ հիմնական գործատու և նվիրատու կազմակերպությունների հետ՝ ուսումնական և լաբորատոր բազաների համատեղ վերազինման և նորերի ստեղծման ուղղությամբ:

Միջոցառում 3.5. Ստեղծել տեխնոլոգիական կարողությամբ 20 հոսքային լսարաններ՝ ապահոված ինտերնետային կապով, համակարգչային տեխնիկայով, ցուցադրման թվային սարքով, ինտերակտիվ գրատախտակով և այլ անհրաժեշտ պարագաներով:

Միջոցառում 3.6. Ապահովել ուսումնական և լաբորատոր տարածքների առավել արդյունավետ օգտագործումը՝ ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման կատարելագործման միջոցով:

## 5.2. Ուսանողների աջակցության ծառայություններ, գնահատումը և բարելավման ռազմավարությունը

### Ուսանողների աջակցության ծառայությունների նպատակը և կազմը

Ուսանողների աջակցության ԵՊՀ ծառայությունները կրթական գործընթացի անքակտելի մասն են: Դրանց նպատակն է օժանդակել ուսանողների համակողմանի զարգացմանը և օգնել նրանց՝ սահմանված ժամկետներում ձեռք բերելու ուսումնական ծրագրով սահմանված կրթական վերջնարդյունքները: Աջակցության ծառայությունները մասնագիտական և վարչական բնույթի ծառայություններ են, որոնք ուղղորդում և աջակցում են ուսանողներին:

ԵՊՀ-ն տրամադրում է ֆինանսական օգնության տարբեր ծրագրեր՝ համահունչ իր ուսանողների կարիքներին և սեփական ռեսուրսներին: Ֆինանսական աջակցության տեսակների (կրթաթոշակներ, ուսումնական նպաստներ, ուսման վարձի լրիվ կամ մասնակի զեղչեր և այլն) վերաբերյալ տեղեկատվությունը և դրանց հատկացման կանոնները հրապարակվում և հասանելի են դարձվում բոլոր ուսանողներին և դիմորդներին:

Նոր ընդունված ուսանողների (ներառյալ՝ հատուկ կարիքներով ուսանողները) համար ԵՊՀ-ն տրամադրում է մասնագիտական կողմնորոշման ծրագրեր՝ հատկապես բակալավրի կրթական մակարդակում:

ԵՊՀ-ն իր կրթական ծրագրերի կարիքներին համապատասխան ուսանողներին տրամադրում է խորհրդատվական ծառայություններ: Ուսումնական խորհրդատուների (կուրատորների) պարտականությունները հստակ սահմանված, հրապարակված և ուսանողներին հասանելի են: Խորհրդատուները օգնում են ուսանողներին՝ ուսումնառության և հետագա կարիերայի ուղիների ընտրության հարցերում:

ԵՊՀ-ն ունի կարիերայի խորհրդատվության, աշխատատեղերի որոնման և աշխատանքի տեղավորմանն աջակցող ծառայություններ (շրջանավարտների և կարիերայի կենտրոնի միջոցով), որոնք համապատասխանում են ուսանողների կարիքներին և ԵՊՀ առաքելությանը:

ԵՊՀ-ն իրականացնում է նաև միջոցառումներ և ծրագրեր, որոնք խթանում են ուսանողների մտավոր և անձնային կարողությունների զարգացումը և ապահովում դրանց մատչելիությունն ու մասնակցության հավասար հնարավորությունները բոլոր

ուսանողների համար: Այդ ծրագրերը ներառում են ադապտացման զանազան միջոցառումներ առաջին կուրսեցիների, օտարերկրյա ուսանողների և հեռակա ուսուցման ձևերում ընդգրկված սովորողների համար:

ԵՊՀ-ն հրատարակում և իր դիմորդներին ու ուսանողներին հասանելի է դարձնում իր տեղեկագիրքը (կատալոգը), որը ներառում է տեղեկատվություն ԵՊՀ առաքելության, ընդունելության պայմանների և ընթացակարգերի, ուսանողների իրավունքների ու պարտականությունների, ուսումնառության կարգի, կրթական ծրագրերի և դրանց ավարտական պահանջների, առանձին դասընթացների, ուսման վարձավճարների և դրանց զեղչման ու վճարման կարգի, հաճախումների և բուհից ազատման հետ կապված այլ դրույթների վերաբերյալ:

Ի լրումն տեղեկագրքի` հրատարակվում և ուսանողներին է բաժանվում ուսանողի ուղեցույցը, որը տեղեկատվություն է պարունակում ուսանողի վարքի, ակադեմիական ազնվության կանոնների, բողոքարկումների կարգի, ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության, ուսանողական կազմակերպությունների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն) ու ծառայությունների, ուսանողներին ֆինանսական օգնության տրամադրման, սպորտով զբաղվելու և ԵՊՀ ընձեռած այլ հնարավորությունների վերաբերյալ:

ԵՊՀ-ն ունի նաև մասնագիտացված գրախանութ, որն օժանդակում է ուսումնառության գործընթացի տեղեկատվական մեթոդական ապահովմանը:

ԵՊՀ ուսանողների աջակցության ծառայությունների ամբողջական կազմը ներկայացված է ստորև.

1. Ուսանողների խորհրդատվություն (կուրատորություն),
2. Կարիերայի խորհրդատվության և աշխատատեղերի որոնում,
3. Ֆինանսական աջակցության ծրագրեր,
4. Դիմորդների ընդունելության նախապատրաստում և մասնագիտական կողմնորոշում,
5. Գրադարանային ծառայություններ,
6. Սոցիալական, մշակութային և սպորտային ծրագրեր,
7. Ուսանողների իրավունքների պաշտպանություն,
8. Առողջապահական ծառայություններ,
9. Պահպանության և անվտանգության ծառայություն,
10. Ուսանողների կեցության ապահովում,
11. Տեղեկատվական ծառայություններ,

12. Վարչական աջակցություն,

13. Ուսանողական սնունդ,

14. Ուսանողների հանգստի կազմակերպում,

15. Արտասահմանյան ուսանողների ադապտացման ծրագրեր:

1) *Ուսանողների խորհրդատվություն (կուրատորություն)*

Հիմնական նպատակը ուսանողների առաջադիմությանը նպաստելն է: Ուսանողներին ուսման գործընթացում աջակցելու նպատակով ֆակուլտետները կազմակերպում են ուսումնական խորհրդատուների (կուրատորների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ: Նրանց թիվը սահմանում է ֆակուլտետը՝ ելնելով տարբեր կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների թվի և ֆակուլտետի դասախոսական ներուժի համադրումից: Կուրատորը ուսումնական խորհրդատվությունն իրականացնում է տվյալ ուսումնական ծրագրի շրջանակներում և հսկում է իրեն ամրագրված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ ընթացքում: Նա ներկայացնում է ուսանողների ուսումնական և դրա հետ առնչվող այլ շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ, օգնում կամընտրական դասընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում:

2) *Կարիերայի խորհրդատվության և աշխատատեղերի որոնում*

Նպատակն է նպաստել աշխատաշուկայում ԵՊՀ ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, համալսարանի և հիմնական գործատու կազմակերպությունների փոխգործակցությանը, համալսարանի և նրա շրջանավարտների միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության աճին: Այս ծառայությունն իր մեջ ներառում է.

- կարիերայի զարգացում,
- ուսանողների և շրջանավարտների աջակցություն աշխատատեղերի որոնման հարցում,
- ուսանողների և շրջանավարտների աջակցություն աշխատանքի տեղավորման հարցում,
- ուսանողներին և շրջանավարտներին գործատուների համապարփակ առցանց տվյալների բազայի տրամադրում (վեբ-կայք),

– տեղեկատվություն բուհում գործող այլ ծառայությունների և աշխատանքի հնարավորությունների մասին:

Կարիերայի խորհրդատվության և աշխատատեղերի որոնման ծառայություններն իրազեկում են ուսանողներին տարբեր աշխատանքներում ներգրավվելու հնարավորությունների մասին, օգնում են նրանց կատարել աշխատանքի ճիշտ ընտրություն, հաստատում և զարգացնում են կապեր մի շարք գործատու կազմակերպությունների հետ, որոնք ավարտական կուրսի ուսանողներին կարող են մասնակի բեռնվածությամբ աշխատանքի հնարավորություններ ընձեռել:

3) *Ֆինանսական աջակցության ծրագրեր*

Այս ծրագրերի նպատակն է խրախուսել ուսանողների բարձր առաջադիմությունը և աջակցել ֆինանսապես անապահով և առաջադիմությամբ աչքի ընկնող կարիքավոր ուսանողներին:

Ցուցաբերում են տարաբնույթ ֆինանսական օգնություն անապահով ուսանողներին: Դրանք ներառում են ուսումնական նպաստների և վարկերի տարբեր ձևեր, պետական, մասնավոր և ներբուհական կրթաթոշակների տրամադրում՝ ներառյալ տարբեր անվանական կրթաթոշակները, ուսման վարձավճարների լրիվ կամ մասնակի փոխհատուցում՝ ճկուն զեղչային համակարգի օհնությամբ: Ֆինանսական աջակցության ծրագրերը նաև ներառում են մասնավոր կազմակերպություններից և դոնորներից ստացված նպատակային ֆոնդերը:

4) *Դիմորդների ընդունելության նախապատրաստում և մասնագիտական կողմնորոշում*

Նպատակն է համակարգել ԵՊՀ ընդունելության և դիմորդների նախապատրաստման ուղղությամբ համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը, ապահովել ԵՊՀ և հանրակրթական դպրոցների միջև փոխադարձ կապը, դպրոցից բուհ անցման շարունակականությունը, առկա և հեռակա համակարգերի դիմորդների հետ իրականացնել շուրջտարյա տեղեկատվական և կազմակերպական աշխատանքներ, կազմակերպել տարբեր նախապատրաստական դասընթացներ: Այս ծառայության հիմնական գործառույթներն են.

– ԵՊՀ կրթական ծրագրերի և մասնագիտությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում՝ տարբեր ուղեցույցների և ֆակուլտետների մասին պատմող տեսասկավառակների տեսքով,

©Երևանի պետական համալսարան, 2013

- –հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտներին ԵՊՀ կրթական ծրագրերի և ուսումնական ենթակառուցվածքներին ծանոթացում և մասնագիտական կողմնորոշում,
- –ԵՊՀ կառուցվածքում հենակետային վարժարանի (քոլեջի) գործունեության ապահովում, հանրակրթական ավագ դպրոցներում բազային դասարանների ստեղծում,
- –գործող ավագ դպրոցների և վարժարանների հետ համատեղ կրթական գործունեություն իրականացնելու վերաբերյալ երկարաժամկետ համաձայնագրերի կնքում,
- –ԵՊՀ դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով մարզային հենակետերի (հավաքագրման մշտական ծառայությունների) աշխատանքի ապահովում,
- –երկարաժամկետ և արագացված նախապատրաստական դասընթացների կազմակերպում և դրանցում դիմորդների հավաքագրում:

5) *Գրադարանային ծառայություններ*

Ուսանողներին ապահովում է համապատասխան մասնագիտական և ոչ մասնագիտական գրականությամբ, տպագիր և ոչ տպագիր նյութերով, ժամանակակից հարմարություններով, այն է՝ համակարգչային սրահներ ինտերնետային կապով, ընդհանուր օգտագործման ընթերցասրահներ, անլար Wi-Fi ինտերնետային կապ և այլն: Գրադարանի գործառույթներն են.

- –ընթերցողների տեղեկատվական սպասարկում՝ կրթական ծրագրերի պահանջներին և արդի գրադարանավարության չափանիշներին համապատասխան,
- –գրադարանային ֆոնդերի ձևավորում և նպատակաուղղված համալրում՝ համալսարանում գործող կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան,
- –տեղեկատու ապարատի (քարտարան) կազմակերպում և ավտոմատացում,
- –անմիջական օգնություն ընթերցողին՝ գրականություն որոնելու, ընտրելու, նորույթներին իրազեկ դառնալու գործընթացներում,
- –ամբիոնների մասնակցությամբ ֆոնդերի պարբերական վերլուծություն և ուսումնական գրականության ձեռքբերում:

6) *Սոցիալական, մշակութային և սպորտային ծրագրեր*

Հիմնական կրթական ծրագրերից դուրս կազմակերպում են տարբեր միջոցառումներ ուսանողների սոցիալական և մշակութային զարգացվածությանը նպաստելու համար: Այս ծրագրերը մատուցում են ուսանողական կազմակերպությունները՝ ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը,

մշակույթի կենտրոնը: Դրանք ուղղված են նաև ուսանողների ժամանցի հետաքրքիր և արդյունավետ անցկացմանը:

Այս ծրագրերի նպատակն է.

–ուսումնական գործընթացին զուգահեռ նպաստել ուսանողների մշակութային ունակությունների զարգացմանը,
–մշակույթի միջոցով ուսանողների կապի ապահովումը տարբեր երկրների ուսանողների հետ,
–ներբուհական, միջբուհական և հանրապետական մշակութային մրցույթների, փառատոների անցկացում,
–ուսանողների համար ցուցահանդեսների, համերգների և ներկայացումների կազմակերպում,
–մշակութային դասախոսությունների, սեմինարների, կլոր սեղանների կազմակերպում,
–ֆիլմերի և ներկայացումների դիտումների, քննարկումների, ինչպես նաև նշանավոր մարդկանց հետ հանդիպումների միջոցով ուսանողների մեջ ճաշակի ձևավորում,
–միջբուհական և հանրապետական մրցույթների ու փառատոնների կազմակերպման և միջբուհական մշակութային կապերի ստեղծման միջոցով տաղանդավոր և շնորհալի ուսանողների հայտնաբերում:

7) *Ուսանողների իրավունքների պաշտպանություն*

Իրականցնում է ուսանողական խորհուրդը: Ուսանողների իրավունքների պաշտպանության նպատակներն են.

–պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
–ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը,
–համալսարանի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանը հուզող խնդիրները,
–իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին:

8) *Առողջապահական ծառայություններ*

Նպաստում է ուսանողների ֆիզիկական առողջության ամրապնդմանը: Այն ապահովում է առաջին օգնություն տրամադրում, առողջության ամրապնդում և հետևողականություն առողջության պահպանման հարցերում: Այն համարվում է ուսանողների «*լավ ինքնազգացողության*» ծառայություն և առաջարկում է մի շարք ծառայություններ, որոնք օգնում են ուսանողներին ամրապնդել իրենց առողջու-

թյունը: Դրանք են՝ առողջության ամրապնդում, բժշկական խորհրդատվություն, առաջին օգնություն, խնամքի տրամադրում, հիգիենայի պահպանման խորհրդատվություն:

Առողջապահական ծառայությունների նպատակն է՝

– բարձրացնել առողջության մասին իրազեկությունն ու գիտելիքները, ինչպես, օրինակ, սեռական առողջության, սննդի, սթրեսի, քնի, ալկոհոլի, ծխախոտի և այլ թմրամիջոցների մասին,
– նպաստել առողջ ապրելակերպի ընտրությանը,
– գործողություններ ձեռնարկել տարբեր հիվանդությունների կանխարգելման համար,
– ապահովել ուսանողների առողջության մասին տեղեկատվություն և նյութեր:

### 9) *Պահպանության և անվտանգության ծառայություն*

Նպատակ ունի ապահովել հնարավորինս անվտանգ, հուսալի և ընկերական միջավայր ուսանողների, դասախոսական կազմի և այցելուների համար՝ հեռու պահելով նրանց վնասվածքներից, ահաբեկումներից, անձնական սպառնալիքներից, վնասներից և գողություններից:

### 10) *Ուսանողների կեցության ապահովում*

Ապահովում է անվտանգ և մաքուր բնակելի միջավայր ոչ տեղացի ուսանողների համար: Ծառայության նպատակն է տրամադրել պատշաճ բնակելի հարմարություններ այն ուսանողների համար, ովքեր ունեն դրա կարիքը, մասնավորապես՝ օտարերկրյա և մարզերից եկած ուսանողների համար:

### 11) *Տեղեկատվական ծառայություններ*

Յուրաքանչյուր ուսանողի ապահովում է համապատասխան տեղեկատվությամբ համալսարանական գործընթացների, ծրագրերի, կառույցների և ուսանողներին հուզող այլ հարցերի շուրջ:

### 12) *Վարչական աջակցություն*

Մատուցվում է համահամալսարանական և ֆակուլտետային համապատասխան ստորաբաժանումների՝ վարչությունների, կենտրոնների, բաժինների, դեկանատների և ամբիոնների կողմից:

13) *Ուսանողական սնունդ*

Նպատակն է ուսանողների համար ապահովել որակյալ, սանիտարահիգիենիկ և մատչելի սնունդ, հետևաբար և դրանց համար նպաստավոր պայմաններ՝ ուսանողների կարիքներին և պահանջներին համապատասխան:

14) *Ուսանողների հանգստի կազմակերպում*

Ապահովում է ուսանողների և աշխատակիցների անվտանգ, մատչելի և հետաքրքիր հանգստի կազմակերպումը: Այս ծառայությունը հիմնականում մատուցում են արհմիությունները և ուսանողական կառույցները:

15) *Արտասահմանյան ուսանողների ադապտացման ծրագրեր*

Նախատեսված են օգնելու արտասահմանյան ուսանողներին՝ հարմարվելու հայաստանյան կյանքին և ԵՊՀ միջավայրին: Տրամադրում են տարբեր տիպի սոցիալական, մշակութային և ճանաչողական ծրագրեր, ինչպես նաև կենցաղի կազմակերպման խորհրդատվություն:

## 3.7. Ուսանողների աջակցության ծառայությունների պլանավորումը

ԵՊՀ-ն պետք է համակարգված կերպով բացահայտի իր ուսանողական համակազմի բնութագրերը և կառուցվածքային առանձնահատկությունները, ուսանողների կրթական և անհատական այլ կարիքները, պլանավորի և ձեռնարկի համապատասխան միջոցառումներ՝ այդ կարիքները հոգալու համար, ուշադրության կենտրոնում պահելով ուսանողների կրթական նպատակների իրագործմանն օժանդակելը:

Ուսանողների աջակցության ծառայությունների և ծրագրերի արդյունավետ իրագործման համար պահանջվող մարդկային, նյութական, ֆինանսական և մեթոդական ռեսուրսները հատկացվում են ուսանողական համակազմի ուսման տարբերացված կարիքների վերլուծության հիման վրա՝ հաշվի առնելով ուսանողության սոցիալական կազմի և կրթական պատրաստականության մակարդակն ու բազմազանությունը: Ուսանողների ուսումնառության տարբերացված կարիքների վերլուծության հիման վրա ԵՊՀ-ն ստեղծում և իրականացնում է ուսանողների աջակցության համալիր ծրագրեր:

Ուսանողների աջակցության ծառայությունների տեսականին պետք է լինի ճկուն և ենթարկվի փոփոխությունների՝ պայմանավորված ԵՊՀ առաքելությամբ, կրթական գործընթացի իրականացման ռազմավարությամբ, ուսանողական համակազմի կառուցվածքով, իրականացվող կրթական ծրագրերի առանձնահատկություններով, ուսուցման կիրառվող ձևերով, դասավանդման մեթոդներով ու տեխնոլոգիաներով:

©Երևանի պետական համալսարան, 2013

## 3.8. Ուսանողների աջակցության ծառայություններին ներկայացվող պահանջները

ԵՊՀ ուսանողների աջակցության ծառայություններին ներկայացվում են հետևյալ պահանջները.

- ուսանողների աջակցության ծառայությունները և ծրագրերը պետք է համապատասխանեն ԵՊՀ առաքելությանը, կրթական ծրագրերի նպատակներին և օժանդակեն դրանց իրագործմանը,
- ԵՊՀ-ն իր ուսանողներին աջակցության ծառայություններ է տրամադրում՝ կրթական ծրագրերի իրականացման եղանակներին և ուսուցման ձևերին համահունչ,
- ուսանողների աջակցության ծառայություններից օգտվելու համար ԵՊՀ-ն սահմանում է հստակ կանոններ և ընթացակարգեր,
- ուսանողների աջակցության ծառայությունները և ծրագրերը պետք է համալրվեն որակյալ կադրերով, որոնց մասնագիտական որակավորումը և փորձառությունը համապատասխանում է նրանց պաշտոնական պարտականություններին ներկայացվող պահանջներին,
- ԵՊՀ-ն պարբերաբար և կանոնավոր կերպով գնահատում է ուսանողների աջակցության ծառայությունների արդյունավետությունը, դրանց համապատասխանությունը և համարժեքությունը կրթական ծրագրերի պահանջներին և ուսումնառության ձևերին, և հիմք է ընդունում գնահատման արդյունքներն՝ այդ ծառայությունների հետագա բարելավման և կատարելագործման համար:

## 3.9. Ուսանողների աջակցության ծառայությունների գնահատումը

Ուսանողների աջակցության ծառայությունների գնահատման հիմնական նպատակը գործող ծառայությունների որակի բարելավումն է: Գնահատումն արտացոլում է ակնկալվող ցանկալի իրավիճակի և առկա իրականության տարբերությունը:

Այս ծառայությունների գնահատումը չպետք է կրի միայն հաշվետվողականության բնույթ: Այն պետք է գնահատի ոչ միայն ուսանողների բավարարվածությունը, այլև տրամադրվող ծառայությունների արդյունավետությունն ու օգտակարությունը: Այս մոտեցումը թույլ է տալիս ծառայություններից բավարարվածության և դրանց օգտագործման հաճախության տվյալները ստանալուց բացի նաև բացահայտել, թե ինչպիսի բարելավող միջոցառումներ և քայլեր պետք է ձեռնարկել:

Գնահատումը պետք է բացահայտի նաև, թե ինչպես է այս կամ այն աջակցության ծառայությունը նպաստել, որ ուսանողները առաջադիմեն և ձեռքբերեն ուսումնառության ակնկալող վերջնարդյունքները:

Այսպիսով, ուսանողների աջակցության ծառայությունների պարբերաբար գնահատումն անհրաժեշտ է իրականացնել, որպեսզի՝

- համոզվել, որ տվյալ ծառայության նպատակներն իրագործվում են,
- համոզվել, որ այդ ծառայությունները անհրաժեշտ որակի են և ծառայում են ուսանողների կարիքներին,
- ստանալ հետադարձ կապ և անհրաժեշտության դեպքում կատարել բարելավումներ:

Ուսանողների աջակցության ծառայությունների համալիր գնահատումը նաև արդյունավետ միջոց է համալսարանի և ուսանողների ուշադրությունը կենտրոնացնելու այդ ծառայությունների՝ ինստիտուցիոնալ և անհատական մակարդակով ունեցած ազդեցության վրա: Գնահատման օգնությամբ ակնհայտ է դառնում, թե որքանով են աջակցության ծառայությունները նպաստում ուսանողների ակադեմիական առաջընթացին:

Այս ծառայությունների գնահատման մեթոդներին ցուցաբերվում է խառը մոտեցում, ինչը թույլ է տալիս միաժամանակ ստանալ ինչպես քանակական տվյալներ՝ օգտագործելով իրազեկվածության, կիրառելիության և բավարարվածության մասին հարցեր, ինչպես նաև որակական տվյալներ՝ հարցաշարերի վերջում ներառելով բաց հարցեր, ինչպես նաև կիրառելով ֆոկուս խմբերի մեթոդը: Ուստի, գնահատումը հիմնականում ուղղված է պարզելու.

- ծառայությունների մասին իրազեկվածությունը,
- ծառայությունների կիրառելիությունը,
- ծառայություններից բավարարվածությունը,
- հետագա բարելավման համար առաջարկությունները:

Արդյունքում պատրաստվում է ԵՊՀ ուսանողների աջակցության ծառայությունների գնահատման ընդհանրական զեկույց, որը պարունակում է ինչպես քանակական, այնպես էլ որակական վերլուծություններ, համեմատում տվյալները նախորդ գնահատման արդյունքների հետ:

Գնահատելիս դժվար է սահմանել, թե հատկապես որոնք են ուսանողների աջակցության ծառայությունների որակի ցուցանիշները: Դրանք կարող են լինել ուսանողների ինքնավստահության բարձրացումը, կարողությունների զարգացումը, նոր հմտությունների ձեռքբերումը, աշխարհայացքի փոփոխությունը, նոր համոզմունքների ձևավորումը, ապագայում կիրառվելիք տեղեկատվությունը, ավելի լավ

առողջական և նյութական կարգավիճակը, արժևորվածության զգացումը, անձնական խնդիրների լուծումը և այլն: Սակայն, դրանք բոլորը պետք է ուղղված լինեն ուսանողների ուսումնառության արդյունավետության բարձրացմանը: Ծառայության որակը կարող է դրսևորվել տարբեր տեսանկյուններից՝ արտաքին (ինչպիսին է միջավայրը ուսանողների համար), վստահելիության (ծառայությունների մատուցման հետևողականությունն ու հուսալիությունը), պատասխանատվության, երաշխիքի (ծառայությունը մատուցողների գիտելիքն ու կարողությունները, համոզելու և վստահություն ներշնչելու նրանց ունակությունը), հոգատարության (հոգածություն և անհատական վերաբերմունք): Այս հինգ տեսանկյուններից դատելով՝ ուսանողների աջակցության որակյալ ծառայությունները պետք է.

- շահեն ուսանողների վստահությունը՝ ծառայությունները մատուցելով հմուտ և գիտակ ձևով,
- կիրառեն միջանձնային հարաբերությունների վրա հիմնված, ուսանողների համար նպաստավոր ռազմավարություն և պրակտիկա, որի արդյունքում կդրսևորվի հոգատարություն և անհատական վերաբերմունք,
- ցուցաբերեն պատասխանատվություն և ջանքեր՝ ուղղված ուսանողների անհատական և տարբերացված կարիքների բավարարմանը:

## 3.10. Ուսանողների աջակցության ծառայությունների գնահատման չափանիշները

## 3.11. Ուսանողների աջակցության ծառայությունների բարելավման խնդիրները և միջոցառումների ծրագիրը

ԵՊՀ ուսանողների աջակցության ծառայությունների բարելավման հիմնական խնդիրները և համապատասխան միջոցառումների ծրագիրը առաջիկա երեք տարիների համար ներկայացված են ստորև:

**Խնդիր 1. Տրամադրել նպատակային և տարբերացված աջակցություն ուսանողների՝ պատրաստականությամբ և ուսուցման ձևերով տարբերվող խմբերին՝ ուսումնական պատշաճ առաջադիմության, ուսանողական համակազմի պահպանման և նախատեսված ժամկետներում շրջանավարտության ապահովման համար:**

©Երևանի պետական համալսարան, 2013

Միջոցառում 1.1. Ձևավորել ուսանողների աջակցության բուհական համալիր ծրագիր՝ նպատակաուղղված ուսանողների ուսումնառության անհատական կարիքների բավարարմանը:

Միջոցառում 1.2. Զարգացնել ուսումնառության աջակցության գործուն միջոցառումներ և ծառայություններ, որոնք կօժանդակեն պատրաստվածությամբ և ուսուցման ձևերով տարբերվող ուսանողների ուսումնական առաջադիմության ապահովմանն ու կրթական ծրագրերի լիարժեք յուրացմանը:

Միջոցառում 1.3. Ինտենսիֆիկացնել և արդիականացնել ուսանողների կարիերայի նախապատրաստման, աշխատատեղերի որոնման օժանդակության և մասնագիտական կողմնորոշման ԵՊՀ ծառայությունները:

Միջոցառում 1.4. Զարգացնել և ընդլայնել ուսանողների ֆինանսական օժանդակության և ուսումնական առաջադիմության խթանման ներբուհական ձևերը:

**Խնդիր 2. Տրամադրել բարձրորակ և արդյունավետ աջակցության ծառայություններ՝ միտված ուսանողների կրթական, մասնագիտական և սոցիալական կարիքների լիարժեք բավարարմանը՝ առավելագույնի հասցնելով ուսումնառությունը հաջողությամբ ավարտելու նրանց հնարավորությունները:**

Միջոցառում 2.1. Բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ուսանողաների աջակցության ծառայություններից: Այդ նպատակով մշակել գնահատման համապատասխան չափանիշներ և պարբերաբար գնահատել ուսանողների բավարարվածությունը այդ ծառայություններից:

Միջոցառում 2.2. Հետևել միջազգային լավագույն փորձին ուսանողների աջակցության ծառայությունների մատուցման ասպարեզում: Պլանավորել, կանոնակարգել և իրականացնել շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքման գործընթաց՝ շրջանավարտների և հիմնական գործատուների հետ ստեղծելով հետադարձ կապի մեխանիզմներ:

Միջոցառում 2.3. Բարելավել ԵՊՀ ուսանողների գործնական պատրաստականությունը, կատարելագործել և առավել արդյունավետ դարձնել պրակտիկաները, ընդլայնել հիմնական գործատու կազմակերպություններում բարձր կուրսերի ուսանողների՝ ուսուցմանը զուգահեռ պրակտիկ փորձառության հնարավորությունները:

Միջոցառում 2.4. Զարգացնել կրթական ծրագրերի պահանջներին համարժեք և մատչելի ուսումնառության աջակցության ռեսուրսներ, ապահովել դրանց լիարժեք և արդյունավետ օգտագործումը:

Միջոցառում 2.5. Համակողմանիորեն զարգացնել ուսանողների տեղեկատվական, խորհրդատվական, կարիերայի նախապատրաստման, աշխատատեղերի որոնման օժանդակության և մասնագիտական կողմնորոշման ծառայությունները:

Միջոցառում 2.6. Զարգացնել ուսանողների ֆինանսական օգնության և ուսումնական առաջադիմության նյութական խրախուսման ներհամալսարանական և արտահամալսարանական ձևերը և մեծացնել տրամադրվող ֆոնդերը՝ ապահովելով առաջադիմող և կարիքավոր բոլոր ուսանողների անընդմեջ ուսումնառությունն ու սահմանված ժամկետներում շրջանավարտությունը:

Միջոցառում 2.7. Մշակել համապատասխան քաղաքականություն և կոնկրետ միջոցառումներ՝ պետական, մասնավոր և ներբուհական կրթաթոշակների, ուսանողական նպաստների ու վարկերի համակարգերի հնարավորություններն առավել արդյունավետ օգտագործելու համար:

**Խնդիր 3. Զարգացնել ԵՊՀ տեղեկատվական ռեսուրսները՝ ժամանակակից չափանիշներին համապատասխան, ապահովել դրանց արդյունավետ օգտագործումն ու մատչելիությունը:**

Միջոցառում 3.1. Իրականացնել ԵՊՀ տեղեկատվական ռեսուրսների (ներառյալ էլեկտրոնային) վիճակի ուսումնասիրություն և պլանավորել դրանց հետագա զարգացման առաջնահերթ ուղղությունները՝ հենվելով ուսումնական գործընթացների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային կարիքների բացահայտման և գնահատման վրա: Ձևավորել և իրականացնել ԵՊՀ տեղեկատվական ռեսուրսների զարգացման հեռանկարային ծրագիր:

Միջոցառում 3.2. Բարձրացնել տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը և դրանց օգտագործման արդյունավետությունը, ընդլայնել ԵՊՀ գրադարանի էլեկտրոնային ընթերցասրահը և ստեղծել էլեկտրոնային ռեսուրսների համալսարանական պորտալ: Շարունակաբար զարգացնել տեղեկատվական ռեսուրսների էլեկտրոնային քարտարանի գործառնական հնարավորությունները:

Միջոցառում 3.3. Ընդլայնել ԵՊՀ մասնակցությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին, ապահովել արտաքին տե-

©Երևանի պետական համալսարան, 2013

ղեկատվական ռեսուրսների մատչելիությունը ԵՊՀ ուսանողների և գիտամանկավարժական կազմի համար:

Միջոցառում 3.4. Ապահովել ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցության հնարավորությունը տեղեկատվական ռեսուրսների պլանավորման և զարգացման աշխատանքներին: Ակտիվացնել ԵՊՀ նորաստեղծ գրադարանային խորհրդի աշխատանքները՝ գրադարանի և համալսարանի ուսումնական և հետազոտական ստորաբաժանումների փոխադարձ կապն ու արդյունավետ համագործակցությունն ապահովելու համար:

## 4. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՓԱԹԵԹԸ

ԵՊՀ ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծրագրերի պատշաճ օգտագործման և շարունակական բարելավման նպատակներով երաշխավորվում է դրանց փաստաթղթային փաթեթի հետևյալ կազմը.

1) Ռազմավարություն ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների զարգացման վերաբերյալ՝ հստակ սահմանված նպատակներով, խնդիրներով և դրանց իրականացման համար անհրաժեշտ կոնկրետ գործողությունների պլանով:
2) Ուսանողի ուղեցույց՝ առաջարկվող աջակցության ծառայությունների նկարագրությամբ (հատկապես ֆինանսական օգնության, խորհրդատվական, կարիերայի աջակցության, սոցիալական, մշակութային և այլ ոլորտներում):
3) Կանոնակարգ ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների (գրադարան, շրջանավարտների և կարիերայի կենտրոն և այլն) մասին և համապատասխան տեղեկաթերթ՝ մատուցվող ծառայությունների մանրամասն նկարագրությամբ:
4) Գրանցամատյան՝ ուսումնառության ռեսուրսների և ուսանողների օժանդակության ծառայությունների աշխատանքի վերաբերյալ բողոքների և առաջարկությունների գրանցման համար:
5) Տեղեկաթերթ ԵՊՀ-ում առկա էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների (էլեկտրոնային գրականություն, դասընթացների քեյս-փաթեթներ, ինքնագնահատման թեստեր և այլն) վերաբերյալ:
6) Կանոնակարգ ուսանողների ֆինանսական օգնության ձևերի, ուսման վարձերի լրիվ կամ մասնակի փոխհատուցման և դրանց պայմանների վերաբերյալ:
7) Կանոնադրական և կանոնակարգային փաստաթղթեր ուսանողական ինքնակառավարման սկզբունքների և մարմինների գործունեության վերաբերյալ:

©Երևանի պետական համալսարան, 2013

# 6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՇԱՀԵԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

# 6.1. ԵՊՀ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման (այսուհետև՝ ուսանողական հարցման) կանոնակարգը սահմանում է ԵՊՀ ուսանողության կողմից համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:

1.2. Ուսանողական հարցումն անցկացվում է "Կրթության մասին" ՀՀ օրենքի և ԵՊՀ կանոնադրության պահանջների հիման վրա և համարվում է ԵՊՀ ուսանողության՝ ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:

1.3. Ուսանողական հարցման կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարում է ԵՊՀ գիտական խորհուրդը:

## 2. Ուսանողական հարցման անցկացումը

2.1. Առկա ուսուցման համակարգում ուսանողական հարցումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո սեպտեմբեր-հոկտեմբեր, փետրվար-մարտ ամիսներին, հեռակա ուսուցման համակարգում՝ նախորդ ուստարվա տվյալների հիման վրա՝ նոյեմբեր ամսին: Ավարտական կուրսերում 2-րդ կիսամյակի վերաբերյալ հարցումն իրականացվում է քննաշրջանի ավարտից հետո՝ մինչև պետական քննությունների սկիզբը:

2.2. Ուսանողական հարցումն իրականացվում է համալսարանի ուսումնամեթոդական վարչության կողմից՝ դեկանատների օժանդակությամբ:

2.3. Ուսանողական հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (հավելված 1), որում ուսանողը 5 միավորից բաղկացած սանդղակով գնահատում է առաջադրված հարցերը:

2.4. Գնահատման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր դասախոսի (դասընթացի) համար հաշվարկված գնահատականների միջին թվաբանականով[35] և միջին քառակուսային շեղումով[36], որտեղ միջին թվաբանականը արտացոլում է միջին խմբային արձագանքը, իսկ միջին քառակուսային շեղումը՝ խմբի ներսում (գնահատման մասնակիցների միջև) փոխհամաձայնության աստիճանը:

2.5. Հարցաթերթն ունի նաև տեղեկատվության հատված, որի հարցերը յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում են ռեկտորի կողմից:

2.6. Ուսանողական հարցումն անանուն է:

2.7. Ուսանողական հարցումն անց է կացվում ուսումնամեթոդական վարչության կողմից սահմանված և դեկանատների կողմից նախապես ներկայացված ժամանակացույցի համաձայն՝ դասաժամերին, հոսքի/խմբի ուսանողների առնվազն երկու երրորդի մասնակցության պայմաններում: Հակառակ դեպքում դեկանատը պարտավոր է հաջորդող աշխատանքային 3 օրվա ընթացքում ապահովել ուսանողների ներկայությունը՝ չկայացած հարցումն ացկացնելու համար:

2.8. Հարցումից հետո հարցաթերթերը կնքվում են դեկանատի, ուսումնամեթոդական վարչության, իսկ մշակումից հետո տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական (այսուհետև՝ ՏՏԿՀ) կենտրոնի կնիքներով:

### 3. Ուսանողական հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

3.1. Ուսանողական հարցման արդյունքները մշակվում են ՏՏԿՀ կենտրոնում և ուսումնամեթոդական վարչությունում:

3.2. Հարցաթերթում կատարված ուղղումները չեն հաշվարկվում:

3.3. Ուսանողական հարցման արդյունքները 5 տարի պահվում են դեկանատում և ուսումնամեթոդական վարչությունում, իսկ գնահատված հարցաթերթերը 3 տարի՝ դեկանատներում:

### 4. Ուսանողական հարցման արդյունքների օգտագործումը

1. Միջին թվաբանականը հաշվարկվում է ըստ առանձին դասընթացների և հարցերի, որի բարձր արժեքը մատնանշում է տվյալ դասախոսի բարձր վարկանիշը հարցման մասնակիցների տվյալ խմբում:
2. Միջին քառակուսային շեղումը ցույց է տալիս գնահատումների շեղման չափը միջին թվաբանականից, որքան մեծ է միջին քառակուսային շեղումը, այնքան հարցման մասնակիցների անհատական գնահատումները ավելի լայն տիրույթում են ցրված:

©Երևանի պետական համալսարան, 2013

4.1. Ուսանողական հարցման արդյունքները ուսումնամեթոդական վարչու-թյունը ներկայացնում է համապատասխան ֆակուլտետ:

4.2. Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համա-պատասխան ամբիոնում, այնուհետև՝ ֆակուլտետի խորհրդի նիստում: Ուսանողների գրավոր կարծիքները քննարկվում են դեկանատի նիստում: Քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություն-ներ և երաշխավորություններ՝ ուղղված դասախոսի դասավանդման որակի բարելավմանը:

4.3. Ֆակուլտետի դեկանը պարտավոր է կազմակերպել հարցման արդյունք-ների քննարկում դասախոսների և ուսանողների շրջանում՝ մեկ ամսվա ընթացքում:

4.4. Դասախոսն իրավունք ունի դեկանի ներկայությամբ ծանոթանալու հարց-ման՝ իրեն վերաբերող կարծիքներին:

4.5. Ուսանողական հարցման անհատական արդյունքները հրապարակվում են միայն տվյալ ֆակուլտետում:

4.6. Ուսանողական հարցման արդյունքներն օգտագործվում են՝

- աջակցելու դասախոսներին վերլուծելու, զարգացնելու իրենց դասա-վանդման մոտեցումները և կիրառվող մեթոդները,
- դասախոսների պաշտոնակալման, առաջխաղացման և խրախուսման նպատակով:

©Երևանի պետական համալսարան, 2013

## 6.2. ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգը

### 1. Ընդհանուր դրույթներ

1.1. ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման (այսուհետև՝ շրջանավարտների հարցման) կանոնակարգը սահմանում է ԵՊՀ շրջանավարտների կողմից համալսարանում ստացած կրթության արդյունավետության և կրթական ծառայությունների որակի գնահատման կարգը:

1.2. Շրջանավարտների հարցումը հանդիսանում է ԵՊՀ որակի ապահովման ներքին համակարգի կարևորագույն բաղադրիչը:

1.3. Շրջանավարտների հարցման կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ է կատարում ԵՊՀ գիտական խորհուրդը:

### 2. Շրջանավարտների հարցման անցկացումը

2.1. Շրջանավարտների հարցումն իրականացվում է բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական ուսումնական տարվա վերջում (հունիս-հուլիս ամիսներին):

2.2. Շրջանավարտների հարցումն իրականացվում է համալսարանի ուսումնամեթոդական վարչության կողմից:

2.3. Շրջանավարտները իրենց ֆակուլտետի դեկանատից ստանում են հարցաթերթը, լրացնում և դիպլոմները ստանալիս հանձնում են ուսումնամեթոդական վարչության կազմակերպչական բաժին:

2.4. Շրջանավարտների հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (հավելված 1), որում շրջանավարտը 5 միավորանոց սանդղակով գնահատում է առաջադրված հարցերը:

2.5. Շրջանավարտների հարցումն անանուն է:

### 3. Շրջանավարտների հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

3.1. Շրջանավարտների հարցման արդյունքները մշակվում են Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնում:

3.2. Հարցաթերթում կատարված ուղղումները չեն հաշվարկվում:

## 4. Շրջանավարտների հարցման արդյունքների օգտագործումը

4.1. Շրջանավարտների հարցման արդյունքները քննարկվում են ֆակուլտետների խորհուրդներում, այնուհետև Համալսարանի գիտական խորհրդում՝ Համալսարանի գործունեության տարբեր ասպեկտների որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ մշակելու և իրականացնելու նպատակով:

©Երևանի պետական համալսարան, 2013

## 6.3. ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերի որակի առցանց կառավարման համակարգը և ռեսուրս շտեմարանը

Սույն տեխնիկական բնութագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից.

1. ՈԿՀ համակարգի նպատակի և հիմնական խնդիրների նկարագրություն,
2. ՈԿՀ համակարգի գործառույթների, հաշվետվությունների և օգտվողների նկարագրություն,
3. ՈԿՀ համակարգի կառուցվածքի նկարագրություն,
4. ԵՊՀ էլեկտրոնային ռեսուրսների (բազաների) հետ ՈԿՀ համակարգի համատեղելիության պահանջները,
5. ՈԿՀ համակարգի ստեղծման ժամկետները նգինը:

### 1. Համակարգի նպատակը և հիմնական խնդիրները

ՈԿՀ համակարգի (այսուհետ՝ համակարգ) հիմնական նպատակը ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերիորակի և արդյունավետությանգնահատման հետադարձ կապի առցանց մեխանիզմների (ուսանողական հարցումներ և այլն)ապահովումը,ծրագրերի և դասընթացների որակի բարելավմանն ուղղված միջոցառումների նդրանց արդյունքների վերաբերյալ ԵՊՀ և լայն հանրությանիրազեկումն է:

Համակարգի խնդիրներն են.

1. Առանձին դասընթացների որակի և արդյունավետությանառցանցգնահատում ուսանողական հարցումների օգնությամբ,
2. Կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատում՝ բաղկացուցիչ դասընթացների գնահատման արդյունքների հիման վրա,
3. Դասընթացների և ծրագրերի գնահատման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների կազմում և համապատասխանօգտվողներին առցանց իրազեկում,

4. Դասընթացների և ծրագրերի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների և/կամ գործողությունների պլանի առցանց կազմում և հրապարակում,
5. ԵՊՀ որակի ապահովման և հավատարմագրման գործընթացների արդյունավետ իրականացման համար վիրտուալ ռեսուրս-շտեմարանի տրամադրում:

## 2. Համակարգի գործառույթները, հաշվետվությունները և օգտվողները

Համակարգի գործառույթներն ըստ առանձին խնդիրներիհետևյալն են (պատկեր 1).

Խնդիր 1.

1.1. Յուրաքանչյուր կրթական մակարդակի (բակալավրի և մագիստրոսի) ուսանող կարող է առցանց դիտել իր կրթական ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)՝ սահմանված ձևաչափով:
1.2. Մասնագիրը պարունակում է կրթական ծրագրի բաղադրիչ ուսումնական մոդուլների/դասընթացների ինտերակտիվ ցանկը, որին սեղմելիս բացվում է այդ դասընթացի համառոտագիրը՝ ներկայացված համապատասխան ձևաչափով:
1.3. Դասընթացի պարապմունքի ձևերով պայմանավորված(դասախոսություն, գործնական կամ սեմինար պարապմունք, լաբորատոր աշխատանք և այլն)ուսանողն ընտրում է համապատասխան ձևաչափի(A, B կամ C) հարցման (գնահատման) ինտերակտիվ առցանց հարցաթերթը (հավելված 1) ևառցանց լրացնում այն:
1.4. Գնահատման արդյունքները հաղորդվում և պահպանվում են տվյալ դասընթացի (ուսումնական մոդուլի) գնահատումների տվյալների բազայում:Դասընթացի գնահատման ցուցանիշները (ցուցիչները) կամ տրվող հարցերի քանակը n հատ են՝ պայմանավորված A, B և C ձևաչափերով և խմբավորված N (հատ) չափանիշներում (խմբերում):

**Պատկեր 1.** ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերի որակի առցանց կառավարման համակարգի գործառույթների (ֆունկցիոնալ) սխեման:

©Երևանի պետական համալսարան, 2013



©Երևանի պետական համալսարան, 2013

Խնդիր 2.

2.1. Բաղկացուցիչ բոլոր դասընթացների (ուսումնական մոդուլների) գնահատման հանրագումարային արդյունքների հիման վրա համակարգն ավտոմատ կերպով հաշվարկում է տվյալ կրթական ծրագրի որակի/արդյունավետության գնահատականը՝ ըստ N (հատ) չափանիշների:

2.2. Գնահատման արդյունքները հաղորդվում և պահպանվում են տվյալ կրթական ծրագրի գնահատումներիտվյալների բազայում:

Խնդիր 3.

3.1. Համակարգը դասընթացի գնահատման արդյունքների վերաբերյալ կազմում է համապատասխան ձևաչափի հաշվետվություն,որը պարունակում է հետևյալ քանակական/թվային և գրաֆիկական տեղեկատվությունը.

ա) միջին վիճակագրական տվյալներ հարցմանը մասնակցած ուսանողների վերաբերյալ (մասնակիցների քանակը և %-ը, կուրսը, կրթական մակարդակը, սեռը և այլն);

բ) n ցուցիչներից (հարցերից) յուրաքանչյուրի գծով գնահատումների միջին թվաբանականը և միջին քառակուսային շեղումը, որտեղ միջին թվաբանականը արտացոլում է հարցման մասնակիցների տված գնահատականների միջին արժեքը, իսկ միջին քառակուսային շեղումը ցույց է տալիս գնահատումների շեղման չափը միջին թվաբանականից: Հաշվետվության մեջ այս տվյալները յուրաքանչյուր n-րդ ցուցիչի (հարցի) համարգրաֆիկորեն պատկերվում են հետևյալ կերպ.




գ) n ցուցիչներից (հարցերից) յուրաքանչյուրի գծով դասընթացի որակի ինդեքսը պատկերված է գունավոր լուսացույցի տեսքով, որի համապատասխան «վառվող» լույսը ցույց է տալիս տվյալ ցուցիչի գծով գնահատման արդյունքների միջին արժեքի մակարդակը (որակի) սահմանված և թույլատրելի նվազագույն շեմի նկատմամբ՝

©Երևանի պետական համալսարան, 2013



*(միջին արժեքը ցածր է որակի նվազագույն տիրույթից)*

*(միջին արժեքը որակի թույլատրելի տիրույթում է)*

*(միջին արժեքը որակի սահմանված տիրույթում է)*

դ) n ցուցիչներից (հարցերից) յուրաքանչյուրի գծով գնահատման միջին արժեքի գրաֆիկական համեմատությունը նախորդ ուստարվա արժեքի հետ և համապատասխան բարելավումը (վատթարացումը)՝ արտահայտված %-ներով՝



| N | Չափանիշի անվանումը | | | | | | 2013 | 2012 | % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | | | |
| n1 | – | | | | | + | միջ.=4,25<br>պատ.=35 | միջ.=3,75<br>պատ.=42 | +13,3 |
| n2 | – | | | | | + | միջ.=<br>պատ.= | միջ.=<br>պատ.= | -10,5 |
| n3 | – | | | | | + | միջ.=<br>պատ.= | միջ.=<br>պատ.= | +22,3 |
| ..... | – | | | | | + | միջ.=<br>պատ.= | միջ.=<br>պատ.= | +5.6 |
| nn | – | | | | | + | միջ.=<br>պատ.= | միջ.=<br>պատ.= | -24,6 |

ե) դասընթացի ինտեգրալ (հանրագումարային) գնահատականը՝ բոլոր n ցուցիչների և N չափանիշներիգծովգումարայինմիջինգնահատականը և միջին քառակուսային շեղումը (*միջ., շեղ.*);

զ) ուսանողների կարծիքները, մեկնաբանությունները, առաջարկություններն և դիտողությունները տվյալ դասընթացի վերաբերյալ:

3.2. Համակարգը կրթական ծրագրի գնահատման արդյունքների վերաբերյալ կազմում է համապատասխան ձևաչափի հաշվետվություն, որը պարունակում է հետևյալ քանակական/թվային և գրաֆիկական տեղեկատվությունը.

ա) 3.1 կետի բ) ենթաբաժնում նկարագրված տվյալները՝ կրթական ծրագրի գնահատման N չափանիշների համար;

բ) 3.1 կետի գ) ենթաբաժնում նկարագրված տվյալները՝ կրթական ծրագրի գնահատման N չափանիշների համար;

գ) 3.1 կետի դ) ենթաբաժնում նկարագրված տվյալները՝ կրթականծրագրի գնահատման Nչափանիշների համար;

դ) 3.1 կետի ե)ենթաբաժնում նկարագրված տվյալները՝ հաշվարկված կրթականծրագրի համար:

3.3. Համակարգը դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման վերաբերյալ հաշվետվություններն առցանց հասանելի է դարձնում (HTML ձևաչափով, ինչպես նաև PDF ձևաչափով ներբեռնելու հնարավորությամբ) համապատասխան ներքին (ուսանողներ, դասախոսներ, ամբիոնի վարիչներ, ֆակուլտետի դեկան և տեղակալ, ֆակուլտետի ԳԽ ՌԱ հանձնաժողովի նախագահ և անդամներ, ԵՊՀ կենտրոնական վարչական կառույցներ և ՌԱ կենտրոն) և արտաքին (դիմորդներ և նրանց ծնողներ, արտաքին գնահատող/հավատարմագրող կառույցներ, ԿԳՆ և այլն) շահեկիցներին, որոնցից յուրաքանչյուրին վերապահված է հասանելիության համապատասխան տիրույթ՝ համաձայն հետևյալ աղյուսակի.

**Աղյուսակ 1.** Հաշվետվությունների հասանելիությունը համալսարանի ներքին և արտաքին շահեկիցներին

| **Ներքին շահեկիցներ (օգտվողներ)** | **Հասանելի հաշվետվությունը և միջոցառումների ծրագիրը** |
|---|---|
| Ուսանողներ | Միայն իրենց գնահատած դասընթացների և այն կրթական ծրագրերի, որտեղ նրանք ընդգրկված են |
| Դասախոսներ | Միայն իրենց վարած դասընթացների և այն կրթական ծրագրերի, որտեղ նրանք դասավանդում են |
| Ամբիոնի վարիչներ | Ամբիոնի կողմից վարվող բոլոր դասընթացների և կրթական ծրագրերի |
| Ֆակուլտետի դեկան և տեղակալ | Ֆակուլտետի բոլոր կրթական ծրագրերի |
| Ֆակուլտետի ԳԽ ՌԱ հանձնաժողովի նախագահ և անդամներ | Ինչպես նախորդում |
| ԵՊՀ կենտրոնական | ԵՊՀ բոլոր դասընթացների և կրթական |

| | |
|---|---|
| վարչական կառույցներ (ռեկտոր, պրոռեկտոր-ներ, ՈւՄՎ պետ և այլն) | ծրագրերի |
| ՈԱ կենտրոն | Ինչպես նախորդում, միաժամանակ ՈԱ կենտրոնը հանդես է գալիս նաև որպես համակարգի ադմինիստրատոր: |

Խնդիր 4.

4.1. Ուսումնական տարվա գնահատումների արդյունքներով ամբիոնի վարիչը (կամ տվյալ կրթական ծրագրի պատասխանատուն) դասըն-թացը վարող դասախոսի հետմիասինառցանց կազմում և հրապա-րակում են որակի սահմանված չափանիշներին չբավարարող դասըն-թացների բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագիրը (գործո-ղությունների պլանը), որը համաձայն աղյուսակ 1-ի՝ հասանելի էդարձվում շահեկիցներին:

4.2. Ուսումնական տարվա գնահատումների արդյունքներով ֆակուլտե-տի դեկանը (կամ ֆակուլտետի ԳԽ ՈԱ մշտական հանձնաժողովի նա-խագահը) կրթական ծրագրի պատասխանատուի հետմիասինառցանց կազմում և հրապարակում են որակի սահմանված չափանիշներին չբավարարող կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված միջո-ցառումների ծրագիրը (գործողությունների պլանը),որը համաձայն Աղ.1-ի՝ հասանելի է դարձվում շահեկիցներին:

Խնդիր 5.

Որակի ապահովման և հավատարմագրման վիրտուալ ռեսուրս-շտե-մարանի օգնությամբ որակի ապահովմանն ու բարելավմանն առնչ-վողԵՊՀ բոլոր պաշտոնական փաստաթղթերի (մեթոդական, նոր-մատիվ, կարգավորող, կանոնակարգային, հայեցակարգային և այլն), առցանց և թղթային ձևերով անցկացված տարբեր ուսանողական հարցումների (դասավանդման արդյունավետության, դասընթացի գնահատման, շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ և այլն), այդ հարցումների արդյունքների վերաբերյալ տարբեր հաշվետ-վությունների ու զեկույցների, առանձին դասընթացների ու կրթական ծրագրերիբարելավմանն ուղղված միջոցառումների ծրագրերի կամ գործողությունների պլանի առցանցհրապարակում՝ ԵՊՀ հանրությա-նը հասանելի դարձնելու նպատակով:

### 3. Համակարգի հիմնական տարրերը և կառուցվածքը

1. Համակարգը բաղկացած է տվյալների հենքերից և ծրագրային միջոցներից: Համակարգի հետ աշխատանքը վերջնական օգտագործողների (end-user) և այլ անձանց կողմից ապահովվում է հայտնի Web-browser-ների օգնությամբ (Internet Explorer, Google Chrome, Opera, Firefox և այլնն)՝ ինչպես ցույց է տրված պատկեր 2-ում:

    1.1. Համակարգի հիմնական վերջնական օգտագործողները (end-user) ԵՊՀ սովորողներն են, ովքեր համապատասխան ինտերնետային հասցեով մուտք են գործելու ՌԿՀ: Համակարգի նախագծման ժամանակ պետք է նախատեսել շուրջ 20000 վերջնական օգտագործողների աշխատանքի հնարավորություն: Համակարգը պետք է հնարավորինս ինտեգրված լինի ԵՊՀ գործող տվյալների շտեմարանի հետ՝ ապահովելով սովորողի մասին համապատասխան տեղեկատվության հասանելիությունը: Համակարգը պետք է ունենա նաև այլ օգտագործողներ (դասախոսներ, վարչական կազմ և այլն), ովքեր հնարավորություն կունենան օգտվելու համապատասխան արդյունքներից:

    1.2. Սովորողները, մուտք գործելով ՌԿՀ, հնարավորություն են ունենում գնահատելու իրենց կողմից անցած դասընթացները (նախորդ կիսամյակ) ըստ սահմանված հարցերի: Կատարված գնահատականները պահվում են ՌԿՀ-ում ըստ տարիների:

    1.3. Սովորողների կողմից կատարած գնահատումները պետք է ենթարկվեն վիճակագրական վերլուծության՝ ըստ սահմանված մեթոդաբանության և ձևաչափերի: Վերլուծության արդյունքները պետք է ներկայացվեն ըստ տարբեր (նախորոք սահմանված) չափանիշների:

    1.4. Համակարգը պետք է նախագծվի հաշվի առնելով հետագա զարգացման և ընդլայնման միտումներն ու հնարավորությունները, մասնավորապես, ուսանողները ավարտելով ուսումնառությունը պետք է շարունակեն հանդիսանալ համակարգի վերջնական օգտագործող՝ շրջանավարտի կարգավիճակով: Միաժամանակ համակարգը ընդլայնվելով հետագայում որպես գնահատող պետք է ներգրավի նաև դասախոսական կազմին (շուրջ 2000 դասախոս):

©Երևանի պետական համալսարան, 2013

2. Համակարգում հարցման մասնակից ուսանողները դասակարգվում են հետևյալ կերպ՝




3. Համակարգում գնահատվող դասընթացները դասակարգվում են հետև-յալ կերպ՝



**Պատկեր 2.** ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերի որակի առցանց կառավարման համակարգի կառուցվածքային սխեման



## 4. Համակարգի համատեղելիությունը ԵՊՀ-ում առկա էլեկտրոնային ռեսուրսների (բազաների) հետ

Նպատակ ունենալով ապահովել ԵՊՀ-ում օգտագործվող կառավարման և տեղեկատվական ծրագրային համակարգերի միասնականությունն ու ամբողջականությունը ՌԿՀ համակարգի ընդհանուր նախագծման գործընթացում՝ պետք է նախատեսել ՌԿՀ համակարգի ծրագրային տվյալների հենքերի առավելագույն համատեղելիություն ԵՊՀ-ում արդեն իսկ գործող հարակից տեղեկատվական կառավարման համակարգերի (տվյալների բազաների) հետ:

ԵՊՀ-ում գործում են մի շարք տեղեկատվական համակարգեր: Տվյալ առաջադրանքի կատարման համար առավել էական են հետևյալ համակարգերը.

- Ուսանողների տվյալների շտեմարան. ստեղծված է Access համակարգով:
- Ուսանողների ակադեմիական առաջադիմության տվյալների բազա:

## 5. Ժամկետներ

Համակարգի մշակման, փորձարկման և տեղադրման համար նախատեսված է երեք (3) ամիս: Աշխատանքի ավարտը՝ 17 դեկտեմբերի, 2013թ.:

<u>Հավելված 1. Դասընթացի գնահատման հարցաշարի օրինակ</u>

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Սիրելի ՛ուսանող, քո անկեղծ և օբյեկտիվ պատասխաններն ու կարծիքները կօգնեն մեզ Բարելավելու գնահատվող դասընթացի որակը: Հարցումն անանունէ, իսկ ստացված արդյունքները կտեղադրվեն ԵՊՀկայքում:
Խնդրում ենք նշել, թե որքանով եք համաձայն գնահատվող դասընթացի մասին հետևյալ պնդումներին:

<u>Հնարավորպատասխաններ.</u>

0 = կիրառելիչէ
1 = կտրականապեսհամաձայնչեմ
2 = համաձայնչեմ
3 = չունեմհստակպատասխան
4 = համաձայնեմմասամբ
5 = լիովինհամաձայն եմ

*Կրթ. Աստիճանը* բակալավրմագիստրոս

*Ֆակուլտետ* ---------------------------------------------

*Ամբիոն* ---------------------------------------------

*Մասնագիտություն* ---------------------------------------------

*Դասընթաց/* ---------------------------------------------

*Ուսումնականմոդուլ* ---------------------------------------------

**Դասավանդումը և ուսումնառությունը(չափանիշN1)**

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Կիսամյակիսկզբումտրամադրվելէդասընթացիօրացուցայինպլանը (աշխատանքայինծրագիրը), որտեղներկայացվածենդասընթացինպատակը, ակնկալվողարդյունքները, յուրաքանչյուրդասիբովանդակությունը, հանձնարարվողգրականությունըընթացիկուեզրափակիչքննություններիհարցաշարերը | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |
| 2. | Ընտրվածպարապմունքիձևերը (դասախոսություններ, գործնականսեմինարպարապմունքներ, լաբորատորաշխատանքներևայլն) նպաստումէինուսումնառությանակնկալվողարդյունքներիձեռքբերմանը | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |
| 3. | Լսարանում մատուցվող հիմնական նյութը բավարար էր դասընթացը հաջողությամբ յուրացնելու համար | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |
| 4. | Դասավանդման ընթացքում տրամադրվում կամ ցուցադրվում էին լրացուցիչ լուսաբանող նյութեր (օրինակներ, սլայդեր, նկարներ, տեսաֆիլմեր և այլն) | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |
| 5. | Հանձնարարված առաջադրանքները նպաստում էիննյութըլավյուրացնելուն | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |
| 6. | Հանձնարարված գրականությունը նպաստում էր նյութի առավել խորը ընկալմանը և ինքնուրույն աշխատանքին | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |
| 7. | Դասավանդմանկիրառվող մեթոդներըխմբայինքննարկումներևհարցերտալուհնարավորությունէինընձեռում | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |

©Երևանի պետական համալսարան, 2013

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8. Դասընթացի շրջանակներում հնարավորություն էր ընձեռված լսարանից դուրս հարցադրումներ անելու և խորհրդատվություն ստանալու | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **Գնահատումը** (չափանիշ N2) | | | | | | |
| 9. Գնահատման պահանջները (չափանիշները) նախապես հայտնի էին և լիովին հասկանալի | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 10. Գնահատման ընթացքում դասախոսները պահպանում էին սահմանված գնահատման չափանիշները | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 11. Քննություններին իմ ցուցաբերած արդյունքները լիովին արտացոլում են իմ գիտելիքների իրական մակարդակը | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **Դասընթացի աշխատածավալը** (չափանիշ N3) | | | | | | |
| 12. Դասընթացում իմ ծանրաբեռնվածությունը չափից ավելի բարձր էր | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 13. Դասընթացը հաջողությամբ յուրացնելու համար լսարանից դուրս տրամադրել եմ շաբաթական ------- ժամ | - | - | - | - | - | - |
| **Ուսումնականնյութերըևռեսուրսները** (չափանիշ N4) | | | | | | |
| 14. Դասընթացիշրջանակներում հանձնարարված գրականությունըառկաէրգրադարանումևհասանելի | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 15. Դասընթացն ապահովված էր անհրաժեշտ ուսումնական և մեթոդական նյութերով | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 16. Առկա գրականությունը և ուսումնական նյութերը հայերեն էին | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 17. Լաբորատոր պարապմունքներն ապահովված էին անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 18. Դասընթացն ապահովված էր օժանդակ տեղեկատվական և էլեկտրոնային նյութերով (դասախոսությունների տեքստեր, գործնական առաջադրանքներ և այլն) | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **Դասընթացիընդհանուրգնահատականը**(չափանիշ N5) | | | | | | |
| 19. Իմ անցած դասընթացները բավարար էին տվյալ դասընթացը հաջողությամբ յուրացնելու համար | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 20. Դասընթացի արդյունքում ստացած գիտելիքները և/կամ գործնական կարողությունները համարում եմ օգտակար | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 21. Պարտաճանաչ հաճախել եմ դասընթացին | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 22. Ընդհանուր առմամբ բավարարված եմ տվյալ դասընթացից | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |

**Ցուցանիշներ (ցուցիչներ)՝ $n_1 – n_{22}$**

| Լրացուցիչ հարցեր (անհրաժեշտության դեպքում) | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 23. | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |
| 24. | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |

25. Նշել դասընթացի 3 ամենադրական կողմերը
    1.
    2.
    3.

26. Նշել դասընթացի 3 ամենաբացասական կողմերը
    1.
    2.
    3.

27. Լրացուցիչ մեկնաբանություններ և առաջարկություններ

*«Հաստատում եմ»*

Ծրագրի ղեկավար՝ Ա.Կ. Գրիգորյան

*15.07.2013թ.*

©Երևանի պետական համալսարան, 2013

# 7. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ

©Երևանի պետական համալսարան, 2013

## 7.1. ԵՊՀ ինքնագնահատման ուղեցույցը

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ձեռնարկի (Ուղեցույցի) հիմնական նպատակն է ներկայացնել հավատարմագրման գործընթացը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում, մասնավորապես Երևանի պետական համալսարանում, ինչպես նաև նկարագրել և բացատրել ինքնագնահատման գործընթացը: Այն չի կենտրոնանում միայն փաստաթղթի պատրաստման վրա, որն անհրաժեշտ է նախնական կամ շարունակական հավատարմագրման համար: ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխանության որոշման ընթացքում կատարվող ինքնավերլուծության արդյունքում պետք է ստեղծվի հաստատության կամ ծրագրի բարելավման ռազմավարական պլան: Այսպիսով, ինքնավերլուծական զեկույցը պետք է ծառայի հետևյալ երեք հիմնական նպատակներին՝

1.Նպաստել, որ հաստատությունը/ծրագիրն ինքն իրեն հասկանա ու կատարելագործվի:

2.Ապացուցել կառույցներին ինչպիսիք են ՈԱԱԿ-ը, և փորձագիտական խմբերին, ինչպես նաև լայն հասարակությանը, որ հաստատությունը/ծրագիրը համապատասխանում է որակյալ կրթության և ուսուցման ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին:

3.Ապացուցել, որ ուսումնական հաստատության ծրագիրը և արդյունքում ուսանողի կրթությունը արտացոլում են ազգային և հասարակական չափանիշները, ինչպես նաև պետական քաղաքականության պատկերացումները բարձրագույն կրթության համակարգի շրջանակներում բազմապրոֆիլ կրթության առնչությամբ:

Որպեսզի ուսումնական հաստատությունը կամ ծրագիրը ապացուցի իր արդյունավետությունը չափանիշների պահպանման տեսանկյունից՝ այն պետք է մշտապես և կանոնավոր կերպով հավաքի և զարգացնի հաստատության կամ ծրագրի համար կարևոր տվյալները: Սակայն հաստատության և ծրագրի ուսումնասիրությունների կարևորությունը չպետք է գերագնահատվի:

Ինքնավերլուծական զեկույցն ավելի օգտակար է, երբ այն կենտրոնանում է հաստատության և ծրագրի տվյալների վերլուծության վրա, որոնք էլ իրենց հերթին արտացոլում են գտնում ծրագրերում և արդյունքում նաև ուսանողների կրթությունում:

Քանի որ ուսումնական հաստատության կամ ծրագրի մասին բավականաչափ տեղեկատվություն կարելի է հեշտությամբ գտնել կատալոգներում և հաստատության այլ փաստաթղթերում, հետևաբար ինքնավերլուծությունը չպետք է նկարագրական լինի, այլ այն պետք է բացահայտի այն խնդիրները, որոնք պահանջում են ուշադրություն և

որոնք ստեղծում են անհրաժեշտություն, որ ինքնավերլուծական ուղեցույցը զարգանա, ինչպես նաև որ ստեղծվի կատարելագործման հստակ պլան:

Այսպիսով, արդյունավետ ինքնավերլուծական զեկույցը կտա հիմնավոր ապացույցներ, որ հաստատությունը/ծրագիրը իրականացնում է իր առաքելությունը, խնդիրները և նպատակները:

Ի տարբերություն արդեն հավատարմագրված ուսումնական հաստատություն-ների/ծրագրերի, որոնք նպատակ ունեն վերահավատարմագրվել, հավատարմագրման հավակնող հաստատությունները և ծրագրերը, որոնք սկզբնական հավատարմագրում են փնտրում լրացուցիչ պատասխանատվություն են կրում շտկելու թեկնածության ընթացում բացահայտված այն ոլորտները, որոնք լրացուցիչ կայունացման և զարգացման կարիք ունեն:

## Նպատակները և խնդիրները

ՀՀ բարձրագույն կրթության համակարգում հավատարմագրման հիմնական նպատակը պետական հավատարմագրող կառույցի կողմից համակարգված և պարբերաբար իրականացվող գործընթացների միջոցով բուհի կամ նրա կրթական ծրագրերի որակի գնահատումն է՝ նախանշված նվազագույն չափանիշներին և չափորոշիչներին դրանց համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու համար:

Հավատարմագրման հիմնական խնդիրներն են.

**Որակի ապահովում և շարունակական բարելավում**. Հավատարմագրումն այն հիմնական ձևն է, որի միջոցով բուհերը և կրթական ծրագրերը հավաստում են իրենց որակը ուսանողներին, նրանց ծնողներին, գործատուներին, շահագրգիռ այլ կողմերին և ընդհանրապես հասարակությանը: Հավատարմագրված կարգավիճակը ազդանշան է հանդիսանում/հավաստում է ուսանողներին և հասարակությանը, որ տվյալ բուհը կամ կրթական ծրագիրն առնվազն բավարարում է իր դասախոսական կազմին, ծրա-գրերին/դասընթացներին, ուսանողական ծառայություններին և ուսումնառության ռեսուրսներին (գրադարան և այլն) ներկայացվող նվազագույն պահանջները:

**Պետական ֆինանսավորման տրամադրում.** Հավատարմագրումը պարտադիր պահանջ է հանդիսանում պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու համար, մասնա-վորապես՝ պետության կողմից սովորողի ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման և պետական այլ ծրագրերը ֆինանսավորելու համար (գիտության թեմատիկ և բազային ֆինանսավորում և այլն):

**Գործատուների վստահության ապահովում**. Բուհի կամ կրթական ծրագրի հավատարմագրված կարգավիճակը կարևոր գործոն է նաև գործատուների համար, երբ վերջիններիս կողմից գնահատվում է աշխատատեղի հավակնորդի կրթական

ձեռքբերումների որակը կամ քննարկվում է՝ աշխատանքից չկտրված (լրացուցիչ) կրթություն ստացող աշխատակցի ուսման վարձը վճարելու հնարավորությունը:

**Կրեդիտների փոխանցման դյուրացում.** Բուհի կամ ծրագրի հավատարմագրված լինելը կարևոր հանգամանք է ուսանողների համար՝ իրենց ուսումնառության արդյունքները (կրեդիտները) բուհից բուհ կամ ծրագրից ծրագիր հեշտությամբ փոխանցելու համար, քանի որ ընդունող բուհը ստուգում է՝ արդյոք կրեդիտները, որն ուսանողը ցանկանում է փոխանցել, ստացվել են հավատարմագրված բուհից կամ ծրագրից, թե՝ ոչ:

## ԳԼՈՒԽ 1. ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՀՀ կառավարությունը 2011 թվականի հունիսի 30-ի որոշմամբ հաստատել է Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը:

ՀՀ-ում հավատարմագրման գործընթացն իրականացվում է միջազգային լավագույն փորձի կիրառմամբ: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ է իրականացվում պետական հավատարմագրում, այս կարգով հստակ սահմանվում է միջին և բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հավատարմագրման ձևը՝ անկախ դրանց գերատեսչական ենթակայությունից և կազմակերպաիրավական ձևից:

Համաձայն նշված կարգի իրականացվում է 2 տեսակ հավատարմագրում՝

1. Ինստիտուցիոնալ
2. Ծրագրային:

Գործող կարգի համաձայն ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարբերաբար կրկնվող պարտադիր գործընթաց է հանրապետությունում գործող բոլոր ուսումնական հաստատությունների համար: Ի տարբերություն այս գործընթացի, ծրագրային հավատարմագրումն իրականացվում է միայն ինստիտուցիոնալ հավատարմագրման դրական եզրակացության դեպքում և միայն ըստ ուսումնական հաստատության ցանկության:

Ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումը կազմակերպում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ):

Ինչպես արդեն նշվեց ուսումնական հաստատությունների համար կարևորագույն գործընթաց է համարվում ինստիտուցիոնալ հավատարմագրումը, քանի որ այն էական

նշանակություն ունի տվյալ ուսումնական հաստատության հետագա զարգացման համար: Յուրաքանչյուր ուսումնական հաստատություն շահագրգռված է ձեռք բերելու պետական հավատարմագրում, քանի որ այն լրացուցիչ վստահության հավաստի աղբյուր է: Սակայն այս գործընթացը ցույց է տալիս, որ հաստատության ընդհանուր որակի բարելավումը հավատարմագրման գործընթացի ամենամեծ առավելությունն է, ուստի այն պետք է դիտվի որպես «հարատև ճամփորդություն», այլ ոչ՝ «նպատակակետ»:

Ինստիտուցիոնալ (հաստատութենական) հավատարմագրումը ՀՀ-ում իրականացվում է երեք փուլով (**Նկ.1**):




**Նկ.1.** Հավատարմագրման գործընթացը ՀՀ-ում

*Առաջին փուլում* ուսումնական հաստատությունն ըստ ՈԱԱԿ-ի սահմանած ձևաչափի իրականացնում է ինստիտուցիոնալ կարողությունների ներքին գնահատում: Այսինքն, տվյալ բուհն իրականացնում է ինքնավերլուծություն, որը ներառում է տվյալ ուսումնական հաստատության բոլոր ենթակառուցվածքների և ռեսուրսների մանրամասն վերլուծությունը, ինչպես նաև ուժեղ և թույլ կողմերի վերհանումը. այն ենթադրում է ամբողջ հաստատության գնահատումը: Այս գործընթացը պետք է իրականացվի համաձայն ՈԱԱԿ-ի սահմանած չափանիշների և ամբողջ ուսումնական

©Երևանի պետական համալսարան, 2013

հաստատությունը պետք է վերանայվի այդ չափանիշների համատեքստում: Այդ իսկ պատճառով, ինքնավերլուծության զեկույցը պատրաստելիս անհրաժեշտ է առաջնորդվել այդ չափանիշներով և համապատասխան չափորոշիչներով, որպեսզի այն լինի հստակ, կրի վերլուծական բնույթ և արտացոլի բոլոր կողմերը: Այդ չափանիշներն արտացոլում են, թե որքանով են ՀՀ ուսումնական հաստատությունների բոլոր ենթակառուցվածքների գործառույթները համապատասխանում հստատության առաքելությանը և սահմանված նպատակներին: Ինքնավերլուծության զեկույցի պատրաստումը հանդիսանում է այս գործընթացի կարևորագույն փուլը, քանի որ ուսումնական հաստատությունները գնահատում են իրենց բոլոր կարողություններն ու հնարավորությունները: Զեկույցը պետք է տա հաստատության պարզ, հակիրճ և ճշգրիտ պատկերը՝ իր պատմությամբ, ներկա գործունեությամբ և ապագայի հեռանկարով: Ինքնավերլուծությունը նաև ինտենսիվ գործընթաց է, որն ապացուցում է, որ հաստատությունը կարող է հրապարակային մտորել իր թույլ և ուժեղ կողմերի շուրջ և իր վերլուծություններն օգտագործել դրանց բարելավման համար: Ըստ էության, ինքնավերլուծությունը պետք է լինի ընթացիկ պլանավորման և գնահատման գործողությունների մի ամբողջություն, այլ ոչ առանձին մի երևույթ, որի մասին հիշում են միայն այն ժամանակ, երբ գնահատող թիմ է սպասվում:

*Երկրորդ փուլում* փորձագիտական խմբի կողմից իրականացվում է տվյալ ուսումնական հաստատության ինքնավերլուծության, կրթական և որակի ապահովման գործընթացների իրականացման արտաքին գնահատում՝ համաձայն օրենքով սահմանված ուսումնական հաստատությունների տեսակին ներկայացվող պահանջների, մասնագիտությունների կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչների և ՀՀ կառավարության սահմանած ինստիտուցիոնալ հավատարմագրման չափորոշիչների:

Մինչ փորձագիտական խմբի այցը՝ բուհի ինստիտուցիոնալ կարողությունների կամ մասնագիտական կրթական ծրագրի արտաքին գնահատման գործընթացի իրականացման համար ՈԱԱԿ-ը ձևավորում է փորձագիտական խումբ: Խմբի աշխատանքները ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար ՈԱԱԿ-ի կողմից նշանակվում է ղեկավար և համակարգող: Փորձագիտական խմբի կազմավորման կարևորագույն քայլերից մեկը՝ համապատասխան ուսումնական հաստատության հետ խմբի նախնական կազմի համաձայնեցումն է: Այս պարագայում կարևորվում է ուսումնական հաստատության հավաստումը (համաձայնությունը):

Փորձագիտական խումբն իր աշխատանքներն իրականացնում է՝ առաջնորդվելով հետևյալ փաստաթղթերով՝

— ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնա-

գիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու մասին»,

— ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին»,

— Պետական կրթական չափորոշիչները և այլ իրավական ակտեր:

Փորձաքննության (արտաքին գնահատման) հիմնական նպատակն է իրականացնել հավատարմագրման համար դիմած ուսումնական հաստատության և նրա ստորաբաժանումների, ենթակառուցվածքների, բոլոր գործընթացների արտաքին գնահատում, ապա պատրաստել փորձագիտական զեկույց ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովին ներկայացնելու համար:

Փորձաքննության չորս հիմնական քայլերն են՝

— Փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն: Փորձագիտական խումբը ծանոթանում է ԲՈՒՀ-ի ներկայացրած ինքնավերլուծությանը և փաստաթղթերի փաթեթին:

— Փորձագիտական այց: Փորձագիտական խումբը կատարում է այց մասնագիտական ուսումնական հաստատություն՝ դիտարկվող կառուցվածքային միավորների ուսումնասիրության համար:

— Հաշվետվության պատրաստում: Փորձագիտական խումբը պատրաստում է զեկույց, որը ներառում է իրավիճակի վերլուծությունը, ձեռքբերումների հավաստումը և հետագա բարելավման համար խորհրդատվությունը:

— Որոշման կայացում: Հավատարմագրման հանձնաժողովը փորձագիտական գնահատման արդյունքների հիման վրա որոշում է կայացնում, և ՈԱԱԿ-ն իր պաշտոնական համացանցային կայքէջում հրապարակում է եզրակացությունը և Հավատարմագրման հանձնաժողովի որոշումը:

Ուսումնական հաստատության համար կարևորագույն փուլ է հանդիսանում փորձագիտական այցը: Այն կատարվում է երկու իրարահաջորդ փուլերով՝ նախապատրաստական այց և հիմնական փորձագիտական այց:

Նախապատրաստական այցի հիմնական նպատակը փորձագիտական այցի ժամանակացույցի ճշտումն է: Այս ընթացքում նաև տեղի է ունենում ՈԱԱԿ-ի համակարգողի և փորձագիտական խմբի ղեկավարի հանդիպումը բուհի ռեկտորի և կոնտակտային անձի և/կամ որակի ապահովման խմբի հետ: Բուհը պետք է տեղյակ լինի փորձագիտական այցի բոլոր մանրամասներին և միաժամանակ պետք է իրազեկի բոլորին, որ այցի շրջանակներում փորձագետները կարող են տալ ցանկացած հարց ցանկացած դասախոսի, աշխատակցի կամ ուսանողի: Բոլոր դեպքերում տրված

©Երևանի պետական համալսարան, 2013

պատասխանները մնում են գաղտնի: Այդ թվում բուհի բոլոր ենթակառուցվածքների և ստորաբաժանումների ղեկավարները պետք է տեղյակ լինեն, որ պարտավոր են փորձաքննության ընթացքում խմբի անդամներին տրամադրելու ցանկացած տեղեկատվություն, ինչպես նաև դրանց կրկնօրինակները:

Նախապատրաստական այցն ունի չորս հիմնական նպատակ՝ բուհի հետ համաձայնեցնել փորձագիտական այցի ծրագիրը և ժամանակացույցը, քննարկել փորձագիտական խմբին անհրաժեշտ հավելյալ տեղեկատվությունը, ստուգել առանձնահատկությունները և բուհի նախապատրաստվածությունը փորձագիտական այցին:

Փորձագիտական այցի շրջանակներում փորձագիտական խումբը այց է կատարում տվյալ ուսումնական հաստատություն: Փորձագիտական այցի հիմնական նպատակներն են՝ պարզել ինքնավերլուծության մեջ նշված փաստերի և տեղեկատվության հավաստիությունը, ձեռք բերել լրացուցիչ տեղեկատվություն հանդիպումների և հարցումների միջոցով, ուսումնասիրել կրթական գործընթացները և լրացուցիչ փաստաթղթեր, ավելի լավ պատկերացում կազմելու փորձաքննության ենթակա ուսումնական հաստատության գործունեության վերաբերյալ: Սովորաբար այցը տևում է 3-7 օր՝ կախված փորձաքննության ենթակա ուսումնական հաստատության ծավալից և առանձնահատկություններից, ինչպես նաև հավատարմագրման տեսակից:

Փորձագիտական այցի ընթացքում նախատեսվում են մի շարք հանդիպումներ, այդ թվում՝ ժամանակացույցով նախատեսված, բուհի ստորաբաժանումներում, փակ, բաց և ամփոփիչ: Հանդիպումներին հաջորդում է փորձագիտական զեկույցի պատրաստումը, որն ընթանում է մի քանի փուլերով: Զեկույցի վերջնական տարբերակն ուղարկվում է Հավատարմագրման հանձնաժողով որոշման կայացման համար: Ընդունված կարգի համաձայն, եթե զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ուսումնական հաստատությունն ունի դիտողություններ և առաջարկություններ, ապա պետք է հիմնավորի՝ մանրամասն բացատրելով խնդրահարույց կետերը, հղումներ կատարելով փորձագիտական զեկույցի համապատասխան բաժիններին և վերաշարադրելով անհրաժեշտ հատվածները: Ըստ այդմ, բուհը կարող է առարկել կամ դիտարկել միայն հաստատությանը վերաբերող փաստաթղթերի և տեղեկատվության վերաբերյալ: Փորձագիտական զեկույցի ձևաչափում նախատեսված է հատուկ բաժին բուհի արձագանքի համար, որպեսզի Հավատարմագրման հանձնաժողովը պատկերացում կազմի դիտողությունների վերաբերյալ: Փորձագիտական խմբի վերջնական զեկույցը ներառում է հավատարմագրման յուրաքանչյուր չափանիշի և չափորոշիչի ուժեղ և թույլ կողմերի գնահատումը, ձեռքբերումների հավաստումը, ինչպես նաև հավատարմագրման որոշման մասին գաղտնի խորհրդատվությունը, ինչը պետք է ներկայացվի Հավատարմագրման հանձնաժողովին: Վերջնական զեկույցը համարվում է գաղտնի մինչև հավատարմագրման հանձնաժողովի կողմից որոշման կայացումը: Այն չպետք է

հասանելի լինի երրորդ կողմի անձանց կամ կազմակերպություններին, բացառությամբ տվյալ ուսումնական հաստատության կողմից լիազորվածների:

Ուսումնական հաստատության ինքնավերլուծության, փորձագիտական խմբի հաշվետվության և հաստատված վերջնական փորձագիտական զեկույցի հիման վրա ՈԱԱԿ-ի համակարգողը և խմբի ղեկավարը, հավատարմագրման կարգով սահմանված ժամկետներում, պատրաստում են ՈԱԱԿ-ի եզրակացության նախնական տարբերակը: Փորձագիտական զեկույցը և ՈԱԱԿ-ի եզրակացությունն ուղարկվում են նաև ուսումնական հաստատություն՝ Հավատարմագրման հանձնաժողովի նիստի քննարկմանը պատրաստվելու համար:

*Երրորդ փուլում* ինքնավերլուծության և փորձաքննության արդյունքների հիման վրա ՈԱԱԿ-ի հավատարմագրման խորհուրդը դրական կամ բացասական եզրակացության մասին ընդունում է համապատասխան որոշում:

Հավատարմագրման հանձնաժողովի որոշման կայացման ընթացակարգը սահմանվում է «Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով»:

Փորձագիտական զեկույցը և այլ փաստաթղթեր ուսումնասիրելուց հետո Հավատարմագրման հանձնաժողովը կայացնում է հավատարմագրման մասին որոշում, որը կարող է լինել՝

— Ենթակա է հավատարմագրման. եթե բավարարում է հավատարմագրման բոլոր չափանիշներին,

— Ենթակա է պայմանական հավատարմագրման. եթե մասնակի բավարարում է հավատարմագրման չափանիշներին, և նշված թերությունները հնարավոր է շտկել ոչ ավել, քան 2 տարվա ընթացքում,

— Ենթակա չէ հավատարմագրման. եթե չի բավարարում հավատարմագրման չափանիշներին, և առկա ռեսուրսներով նշված թերությունները հնարավոր չէ շտկել 2 տարվա ընթացքում:

ՈԱԱԿ-ի հավատարմագրման մասին ընդունված որոշումը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներով: Այնուհետև, ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի ընդունած որոշումը հավատարմագրման վկայականի և ներդիրի ձևաթղթերի հետ միասին ուղարկվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմին, որտեղ և հաստատվում է որպես անհատական զերատեսչական ակտ: Հավատարմագրման կարգով սահմանված ժամկետներում նախարարությունն ուսումնասիրում է Հավատարմագրման հանձնաժողովի կողմից ներկայացված նյութերը, ընդունում որոշում պետական հավատարմագրման մասին, որի հիման վրա ուսումնական հաստատությանն ինստիտուցիոնալ հավատարմագրման դեպքում

©Երևանի պետական համալսարան, 2013

տրվում է պետական հավատարմագրման վկայական, իսկ ծրագրային հավատարմագրման դեպքում՝ վկայականի ներդիր:

ՀՀ կրթության և գիտության նախարարության համապատասխան որոշումից հետո ՌԱԱԿ-ը գրանցում է կատարում Հավատարմագրման պետական գրանցամատյանում:

# ԳԼՈՒԽ 2. ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական հավատարմագրման չափանիշները և չափորոշիչները նախատեսված են ուսումնական հաստատությունների կողմից հաստատության գործունեության և մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման ընթացքի ինքնավերլուծություն կատարելու համար:

Նշված չափանիշները ձևակերպված են միջազգային նորմերին համապատախան և միաժամանակ արտացոլում են ՀՀ ուսումնական հաստատությունների բոլոր գերակա ոլորտները: Սահմանված չափանիշները ներառում են որակի ապահովման բոլոր ենթաշերտերը և միաժամանակ ենթադրում որակ ինքնակառավարման ողջ համակարգում: Չափանիշների սահմանման հիմնական նպատակն է հնարավորություն տալ հաստատություններին լինել կրեատիվ, նորարար և հաստատության բարելավման նպատակով պատրաստ լինել համագործակցության ինքնահետազոտության և ինքնավերլուծության գործընթացի ժամանակ: Թե ինստիտուցիոնալ, թե ծրագրային հավատարմագրում անցնելու համար ուսումնական հաստատությունները պետք է գնահատվեն վերոնշյալ չափանիշներով:

*Չափանիշները հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:*

*Չափորոշիչները ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանության չափը և անաչառ գնահատելու անհրաժեշտ պայմանները:*

Պետական հավատարմագրման չափանիշները սահմանված են և ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման համար:

## <u>Ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշները</u>

**Ընդհանուր սկզբունք**

Մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման գործընթացները միտված են ուսուցման, գիտական և հասարակությանը մատուցվող այլ ծառայությունների շարունակական բարելավմանը և հետապնդում են հետևյալ նպատակները՝

1. ձևավորել որակի մշակույթ,

2. ձևավորել կազմակերպչական մշակույթ, որը կնպաստի շրջանավարտների մոտ փոխանցելի գիտելիքների և հմտությունների ձևավորմանը՝ հարափոփոխ միջավայրին համապատասխան,

3. բարձրացել մասնագիտական ուսումնական հաստատության արդյունավետությունը և աջակցել հաստատության հաշվետվողականությանը,

4. նպաստել որակավորման աստիճանների համադրելիությանը, մրցակցությանը և մատուցվող ծառայությունների թափանցիկությանը ազգային և միջազգային մակարդակներում:

Ընդհանուր առմամբ, ուսումնական հաստատությունը պետք է գնահատվի ՈԱԱԿ-ի միասնական բազմակողմանի այս չափանիշների համատեքստում: Ինքնա-գնահատումն ըստ պետական հավատարմագրման չափանիշների հնարավորություն է տալիս վերլուծելու և գնահատելու բոլոր գործընթացները, ենթակառուցվածքները և ստորաբաժանումները, գործունեությունը և ռեսուրսները՝ առաքելությանը, նպա-տակներին և իրականացմանը հասնելու, ինչպես նաև ուսանողի կրթության որակը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար:

## 1. Առաքելությունը և նպատակները

*Չափանիշ 1.* Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

*Չափորոշիչներ*

1.1. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

## 2. Կառավարումն ու վարչարությունը

*Չափանիշ 2.* ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունը արդյունավետեն և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

*Չափորոշիչներ*

2.1. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համարանհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

2.2. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

2.3. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

2.4. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

2.6. ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

2.7. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

## 3. Մասնագիտության կրթական ծրագրերը

*Չափանիշ 3.* ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

©Երևանի պետական համալսարան, 2013

*Չափորոշիչներ*

3.1. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների։

3.2. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում ուսանողակենտրոն ուսուցմանը։

3.3. ՄՈՒՀ-ը ծրագրում է ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը։

3.4. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը։

3.5. ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն։

## 4. Ուսանողները

*Չափանիշ 4.* ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով։

*Չափորոշիչներ*

4.1. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ։

4.2. ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր։

4.3. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար։

©Երևանի պետական համալսարան, 2013

4.4. ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

4.5. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

4.6. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

4.7. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

4.8. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

## 5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

*Չափանիշ 5.* ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

*Չափորոշիչներ*

5.1. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

5.2. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

5.3. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար,

5.4. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

5.5. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

5.6. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

5.7. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

## 6. Հետազոտությունը և զարգացումը

*Չափանիշ 6. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:*

*Չափորոշիչներ*

6.1. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

6.2. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

6.3. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

6.4. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

6.5. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

## 7. Ենթակառուցվածքը և ռեսուրսները

*Չափանիշ 7.* ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

*Չափորոշիչներ*

7.1. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

7.2. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

7.3. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

7.4. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մաս-նագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

7.5. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

7.6. ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

7.7. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատ-ման մեխանիզմներ:

## 8. Հասարակական պատասխանատվությունը

*Չափանիշ 8.* ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

*Չափորոշիչներ*

8.1. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

8.2. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

8.3. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

8.4. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

©Երևանի պետական համալսարան, 2013

## 9. Արտաքին կապերը և միջազգայնացումը

*Չափանիշ 9.* Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

*Չափորոշիչներ*

9.1. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

9.2. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

9.3. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

9.4. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

## 10. Որակի ներքին ապահովման համակարգը

*Չափանիշ 10.* ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

*Չափորոշիչներ*

10.1. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

10.2. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

10.3. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

10.4. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

10.5. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

10.6. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

# *ԳԼՈՒԽ 3. ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԲՈՒՀ-ՈՒՄ*

## *3.1. ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄԸ*

Ինքնագնահատման գործընթացին նախապատրաստվելիս ԲՈՒՀ –ը պետք է հիմք ընդունի առկա ռեսուրսները: Այս գործընթացի արդյունավետ կազմակերպման և իրականացման համար ԲՈՒՀ-ը պետք է կենտրոնացնի իր ողջ ներուժը՝ ներառյալ պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական կազմերը, ինչպես նաև ուսանողները: Ինքնավելուծության գործընթացը հաջողությամբ իրականացնելու հիմնական նախապայմաններն են՝ ըստ հավատարմագրման չափանիշների ապացուցելի փաստերը, ռեսուրսները, ԲՈՒՀ-ում բոլոր ստորաբաժանումների և ուսանողների միջև հաղորդակցութունը, գործընթացների պլանավորումն ու գնահատումը :

1. **Ապացույցներ:** Հավատարմագրման հանձնաժողովն ակնկալում է ԲՈՒՀ-ից ապացուցելի փաստերի վերլուծական նկարագրություն համաձայն ԲՈՒՀ-ի առաքելության ու նպատակների և ըստ պետական հավատարմագրման չափանիշների:
2. **Ռեսուրսներ:** Ինքնավերլուծության արդյունավետ գործընթացի կազմակերպումը պահանջում է ԲՈՒՀ-ի ռեսուրսների զգալի ներդրումներ: Որպես այդպիսին, ինքնագնահատման գործընթացներում ԲՈՒՀ-ը կանոնավորում է վարչական կառույցների և պրոֆեսորադասախոսական կազմի պարտավորությունները և ընդգրկվածությունը՝ կազմելով համապատասխան աշխատանքային խմբեր: Միաժամանակ, աշխատանքային խմբերին հատկացվում են համապատասխան ռեսուրսներ, ժամանակ և մեթոդական խարհրդատվություն ինքնագնահատման համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքելու և վերլուծելու համար:
3. **Հաղորդակցություն և պարտավորություններ:** Աշխատանքային խմբերի միջև հաղորդակցությունը և պարտավորությունների ճիշտ բաշխումը կարևորագույն նախապայման են հանդիսանում ինքնագնահատման գործընթացի հաջող իրականացման համար: Ինքնագնահատման հաջող զեկույցի պատրաստումը պահանջում է աշխատանքային խմբերից համալսարանի գործունեության և գերակայությունների իմացություն, ինչպես նաև դրված նպատակներին հասնելու հանձնառություն:
4. **Պլանավորում և գնահատում:** Ինքնագնահատման գործընթացում հիմնարար նշանակություն ունեն պլանավորումը, համալսասրանի ձեռքբերումների

հետազոտությունը և դրանց գնահատումը: Հավատարմագրման չափանիշներում կարևորվում է համալսարանի գործունեության ընթացիկ պլանավորումը, չափելի նպատակների հաստատումը, ինչպես նաև ինստիտուցիոնալ եւ կրթական արդյունքների գնահատումը: Հաջողված ինքնագնահատման զեկույցը չպետք է ներառի միայն ներկա իրավիճակի և ապագա գործունեության նկարագրությունը, այլև պետք է ուղղված լինի ներկա իրավիճակի վերլուծությանը և դրա հիման վրա համապատասխան միջոցառումների իրականացմանը:

### *3.2. ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ԿԱԶՄՈՒՄԸ*

Ինքնագնահատման գործընթացի ժամանակցույցի կազմումը կարևորագույն փուլ է հանդիսանում անհրաժեշտ ուսումնասիրությունների կազմակերպման և զեկույցի կազմման համար: Ժամանակացույցը պետք է կազմել նախապես և ներառել ինքնագնահատման պլանավորման նախագծում: Ժամանակացույցը պետք է լինի իրատեսական՝ հաշվի առնելով ուսումնական տարվա օրացույցը և բոլոր այն միջոցառումները, որոնք կարող են ընդհատել ինքնագնահատման գործընթացը: Այն մշակվում է ելնելով ինքնագնահատման զեկույցը կազմելու մոդելից, որտեղ անհրաժեշտ է նախատեսել ժամանակ յուրաքանչյուր չափանիշի և չափորոշիչի նկարագրության, վերլուծության, քննարկումների և զեկույցների կազմման համար: ԲՈՒՀ-ը պետք է սկսի ինքնագնահատման գործընթացի պլանավորումը նախատեսված հավատարմագրման կամ վերահավատարմագրման ժամկետից առնվազն 8 ամիս առաջ: Ինքնագնահատման գործընթացի ժամանակացույցը մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև արձակուրդները, տոները, համալսարանական և անխուսափելի այլ միջոցառումները:

Ժամանակացույցը ճիշտ կազմելու համար կարելի է կիրառել հետևյալ մոտեցումները՝

- Ժամանակացույցի կազմումը հարկ է սկսել՝ ելնելով հավատարմագրման հանձնաժողովի այցի նախատեսված ժամկետներից: Հիմնականում, հավատարմագրման հանձնաժողովի այցը կազմակերպվում է ՈԱԱԿ-ի կողմից ինքնավերլուծությունն ընդունելու մասին որոշման ընդունման պահից 12 շաբաթվա ընթացքում:
- Նախատեսված գնահատման այցի օրվանից հետընթաց նախատեսել 8 շաբաթ ինքնագնահատման զեկույցի վերջնական տարբերակը ՈԱԱԿ-ի հետ քննարկելու համար:

- Կրկին հետընթաց հաշվարկով նախատեսել 2 շաբաթ ինքնագնահատման զեկույցը համահամալսարանական մակարդակով քննարկելու և վերջնական տարբերակը պատրաստելու համար: Ինքնագնահատման զեկույցը պետք է պատրաստ լինի նախատեսված գնահատման այցից 3 ամիս առաջ:
- Հետընթաց հաշվարկով նախատեսել 4 շաբաթ աշխատանքային խմբերի հաշվետվությունների հիման վրա ինքնագնահատման զեկույցի մեկ կամ մի քանի նախնական տարբերակների մշակման համար:
- Հետընթաց հաշվարկով նախատեսել 6 շաբաթ աշխատանքային խմբերի կազմման և դրանց կողմից տվյալների հավաքման, հաշվետվությունների կազմման համար:

Ինքնագնահատման գործընթացի և հաշվետվության կազմման համար հիմնականում պահանջվում է 10 շաբաթ: Եթե ԲՈՒՀ-ն ունի որոշակի կարիքներ կամ մտահոգություններ կարող է ավելի շատ ժամանակ պահանջվել:

Ստորև բերված է հավատարմագրման ժամնակացույցը, որը կօգնի ինքնագնահատման գործընթացի արդյունավետ պլանավորմանը (**Նկ.2**):

©Երևանի պետական համալսարան, 2013




**Նկ. 2** Հավտարմագրման գործընթացի ժամանակացույց
(ընդամենը՝ 10 ամիս)

ԲՈՒՀ-ում ինքնազնահատման գործընթացը նախաձեռնելու նպատակով ռեկտորի կողմից ստեղծվում է առանցքային խումբ կազմված ԲՈՒՀ-ի առաքելությանը և նպատակներին լավ տիրապետող մասնագետներից, որոնք էլ և սկսում են ինքնազնա-

հատման գործընթացի վաղ պլանավորումը և հանդես գալիս որպես ղեկավար հանձնաժողով:

Ինքնագնահատման գործընթացի արդյունավետ պլանավորում իրականացնելու համար պետք է հաշվի առնել նաև հետևյալ տեղեկատվությունը:

*ԲՈՒՀ-ի առաքելությունը*

- Արդյո՞ք այն արդիական է:
- Արդյո՞ք այն բավարար չափով մանրամասն է՝ ուղղորդելու համար պլանավորման և որոշումներ կայացնելու գործընթացը:
- Ծանոթ են արդյո՞ք ԲՈՒՀ-ի բոլոր աշխատակիցները նախանշված առաքելությանը:

*ԲՈՒՀ-ում տեղի ունեցած վերջին էական փոփոխությունները*

- Ի՞նչ ընթացիկ կամ նախատեսվող խոշոր փոփոխություններ պետք է դիտարկել ինքնագնահատման գործընթացում (օրինակ, ղեկավարության փոփոխություն, նոր ծրագրեր, նոր ստորաբաժանումների ստեղծում և այլն):

*Առկա տվյալներ եւ հաշվետվություններ*

- Հասանելի են արդյո՞ք համալսարանում ապացուցելի ձեռքբերումները:
- Հասանելի են արդյո՞ք ինքնագնահատման զեկույցի համար անհրաժեշտ տվյալները աշխատանքային խմբերի համար:
- Ի՞նչ լրացուցիչ ապացույցներ կպահանջվեն ինքնագնահատման գործընթացում:

*Համալսարանի աշխատակիցների ընդգրկվածությունը և համագործակցությունը*

- Ինչպե՞ս են համալսարանի աշխատակիցները՝ պրոֆեսորդասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական կազմերը, ուսանողները, շրջանավարտները, ընդգրկվելու ինքնագնահատման գործընթացում:

### *3.3. ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՄԲԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ*

Ինքնագնահատման գործընթացն արդյունավետ համակարգելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել համապատասխան ենթակառուցվածք՝ համապատախան գործառույթներով: Ինքնագնահատման գործընթացի համակարգումը ԲՈՒՀ-ում պետք է իրականացվի *ԲՈՒՀ-ի համակարգող խմբի կողմից*, որը նշանակվում է ԲՈՒՀ-ի ռեկտորի կողմից: ԲՈՒՀ-ի *համակարգող խմբի* ղեկավարությամբ ստեղծված աշխատանքային խմբերն ըստ հավատարմագրման չափանիշների ուսումնասիրում են ԲՈՒՀ-ում առկա տեղեկատվությունը և վերլուծական հաշվետվությունները, հավաքում են նոր տեղեկատվություն և ըստ հանձնարարված չափանիշների պատրաստում վերլուծական հաշվետվություններ: ԲՈՒՀ-ի *համակարգող խումբը* լրաշակում է տարբեր աշխատանքային խմբերից ստացված հաշվետվությունները, պատրաստում է ինքնագնահատման զեկույցի նախնական տարբերակը, որը համապատասխան քննարկումներից հետո վերածում է վերջնական զեկույցի (**Նկ.3**):


ԲՈՒՀ-ի համակարգող խումբը կազմակերպում է ինքնագնահատման գործընթացը
Աշխատանքային խմբերը ուսումնասիրում են ինքնագնագնահատման զեկույցի պատրաստման համար անհրաժեշտ տվյալները, մշակում և վերլուծում են դրանք:
Խումբ #1
Խումբ #2
Խումբ #3
Խումբ #4
Խումբ #etc
Համակարգող խումբը մշակում է ինքնագնահատ-ման զեկույցի նախնական տարբերակը
Ինքնագնահատման զեկույցի համահամալսարանական քննարկումներ
Համակարգող խումբը մշակում է ինքնագնահատ-ման զեկույցի վերջնական տարբերակը
ԲՈՒՀ-ը տարածում է ինքնագնահատման զեկույցը

©Երևանի պետական համալսարան, 2013

*ԲՈՒՀ-ի համակարգող խումբ:* ԲՈՒՀ-ի համակարգող խումբը կարևորագույն դեր ունի ինքնագնահատման գործընթացի իրականացման համար: Այն պատասխանատու է ինքնագնահատման ողջ գործընթացի կազմակերպման և ղեկավարման համար: Այն է,

- Հաստատել ինքնագնահատման զեկույցի հիմնախնդիրները:
- Առաջադրել ինքնագնահատման մոդել, որը լավագույնս կարտացոլի այդ հիմնախնդիրները:
- Մշակել ինքնագնահատման նախագիծ:
- Ստեղծել աշխատանքային խմբեր՝ ըստ համապատասխան աշխատանքային նպատակներով և վերահսկել դրանց աշխատանքը:
- Ապահովել, ծրագրված ժամանակացույցը իրականացվի այնպես ինչպես նախատեսված էր:
- Ապահովել ԲՈՒՀ-ում ինքնագնահատման գործընթացի վերաբերյալ իրազեկվածությունը:
- Ապառվել ինքնավերլոծության զեկույցի նախնական տարբերակի համահամալսանական քննարկումները և դրանց արդյունքների հիման վրա վերանայված տարբերակի մշակումը:
- Վերահսկել ինքնագնահատման զեկույցի վերջնական տարբերակի և այլ լրացուցիչ փաստաթղթերի մշակումը և հավատարմագրման հանձնաժողովի այցը:

Այսպիսով, ԲՈՒՀ-ում ինքնագնահատման գործընթացը համակարգող խումբը ստեծդում է մի քանի աշխատանքային խումբ, որոնք ուսումնասիրում են և պատրաստվում հաշվետվություններ ըստ համապատասխան չափանիշների: ԲՈՒՀ-ի համակարգող խմբի և աշխատանքային խմբերի միջև արդյունավետ համագործակցությունը ապահովելու համա գոյություն ունեն տարբեր մոտեցումներ: Այսպես օրինակ, ԲՈՒՀ-ի համակարգող խմբի անդամները կարող են աշխատանքային տարբեր խմբերի խեղավարներ հանդիսանալ, կամ աշխատանքային խմբերում կարդ են նշանակվել ղեավարներ, որվքեր մշտապես կզեկուցեն համակարգող խմբին տարվող աշխատանքների մասին:

Համակարգող խումբը որոշում է աշխատանքնային խմբերի քանակը, չափը, ինչպես նաև այն թեմաները, որոնց ուրջ պետք է մշակվեն վերլուծական հաշվետվությունները:

## *3.4. ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ*

Ինքնագնահատման գործընթացի նպատակն ի վերջո ինքգնագնահատամն զեկույցի պատրաստումն, որը արդարացի և ազնվորեն կներկայացնի ԲՈՒՀ-ը ներկայացնում է հաստատությունը ըստ հավատարմագրման չափանիշների: Զեկույց գրելու գործընթացն ուղղեկցվում է բազմաթիվ նախնական տարբերակների մշակում-ներով, որոնցում արտացոլված են տվյալների հավաքման, անալիզի և վերնայման փուլերը: Ինքնագնահատման նախագիծն այս գործընթացի առաջին փաստաթուղթն է, որին հաջորդում են աշխատանքային խմբերի հաշվետվությունները, նախնական տարբերակների մշակումը և վերջնական տարբերակը:

**Աշխատանքային խմբերի հաշվետվությունները**

Աշխատանքային խմբերը ներկայացնում են ինքնագնահատման գործընթացում իրենց կողմից կատարված ուսումնասիրությունների նախնական հաշվեվությունները: Ղեկավար խումբն ուսումնասիրում է տրված հաշվետվությունները համոզվելու համար, որ բոլոր դրված հարցադրումների շուրջ տարվել է վերլուծական ուսումնասիրություն: Արդյունքում պատրաստվում են այն վերջնական տարբերակները, որոնք ծառայելու են ընդհանուր ինքգնագնահատամն զկույցի կազզմա համար:

**Ինքնագնահատման զեկույցի նախնական տարբերակը**

Աշխատանքային խմբրի հաշվետվությունների և այլ համապատասխան տեղեկա-տվությունների հիման վրա համակարգող խումբը մշակում է ինքնագնահատման զեկույցի նախնական տարբերակը: Ինքնագնահատման զկույցը պետք է լինի հակիրճ (ոչ ավել քան 100 էջ), ընթեռնելի և համալսարանի պրոֆեսորդասապոսական կազմի, վարչական աշխատողների, ուսանողնրի, շրջանավարտների և այլն համար հասանելի:

**Ինքնագնահատման զեկույցի վերաբերյալ կարծիքները, պատասխանները, եւ վերանայումը**

Ինքնագնահատման արդյունավետ կազմակերպման նախապայմաններից է համալսարանի բոլոր ստորաբաժանումների ներգրավվածությունը: Համակագող խումբ պետք է հնրավորություն ընձեռնի բոլոր հնարավոր շահառուներին`վարչական աշխատակազմ, պրոֆեսորդասախոսական կազմ, ուսանողների, շրջանավարտներ անել եզրակացություններ և տալ կարրծիքներ զեկույցի վեաբերյալ: Ուսանողներ, դասախոսներ, հոգաբարձուներ, որոնք ընդգրկված են լինում ինքնագնահատման գործընթացի տարբեր փուլերում, լավ տեղյակ լինելով տարվող աշխատանքին կարող են կատարել արժեքավոր դիտողություններ: Ուշադրությամբ ուսումնասիրելով համահամալսարանական քննարկումների արդյունքում ստացված կարծիքներն ու առաջարկները կնպաստի վերջնական հաշվետվության ամբողջականացմնը և ԲՈՒՀ-ի կողմից դրա ճանաչելիությանը:

**Ինքնագնահատման զեկույցը որպես կենդանի փաստաթուղթ**

Ինքնագնահատման գործընթացը նվիրվածություն և ժամանակային և այլ ռեսուրսների մեծ ներդրումներ պահանջող գործընթաց է: Միաժամանակ այն եզակի հնարավորություն է ընձեռնում անդրադառնալու ԲՈՒՀ-ի առաջընթացին եւ ներկայացնել դրա ապագա ծրագրերը: Ինքնագնահատման փաստաթղթի կարևորության և օգտակարության շարունակելիությունը կախված է իր բովանդակության հստակությունից  եւ առաջարկություններից: ԲՈՒՀ-ը կարող է ապահովել ինքնագնահատման զեկույի շարունական կիրառելիությունը  ձեռնարկելով հետևյալ քայլեր՝

- Պահպանել համակարգող խմբի գործունեությունը,

- Ստեղծելու ժամանակ գծերի հետ հանձնարարությունների նկատմամբ պատասխանատվության իրականացման առաջարկությունները ինքնանպատակ ուսումնասիրման եւ այցելած թիմի

- Մեջ ներառելով առաջարկությունները հաշվի բացահայտ մեղադրանքներով արդեն գոյություն ունեցող հանձնաժողովներում,

- Օգտագործելով ինստիտուցիոնալ հետազոտությունների աշխատակազմին աջակցելու, օգնելու, եւ հետեւելու իրականացման ջանքերը,

- Աշխատանքի դուրս խորհրդատուներին աջակցելու զարգացման հետ բարելավման ռազմավարությունների.

- Մշակել ժամակացույցեր ինքգնագնահատման զեկույցի և գնահատո թիմի այցելության արդյունքում մշակված առաջարկությունները իրականացնելու համար:

- Ներառել առաջարկությունները արդեն իսկ գոյություն ունեցող խմբերի պարտավորությունների շարքում:

-Հրավիրել խորհրդատուներ ԲՈՒՀ-ի ռազմավորությունները զարգացնելու նպատակով:

©Երևանի պետական համալսարան, 2013

# *ԳԼՈՒԽ 4. ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ*

## 4.1. ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ինքնագնահատման զեկույցում ամփոփվում է յուրաքանչյուր ԲՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ապագա ծրագրերը: Այն սահմանում է փորձագետների թիմի այցելության օրակարգը: Որպես «կենդանի» փաստաթուղթ, հստակ ձևակերպված ինքնագնահատման զեկույցը կարող է ծառայել որպես ծրագիր և հղում ԲՈՒՀ-ում ընթացող բոլոր գործընթացների համար:

Ինքնագնահատման զեկույցը գրելիս, աշխատանքային խմբերը նախանշում և համակարգող հանձնաժողովին են ներկայացնում իրենց զեկույցների նախնական տարբերակները: Համակարգող հանձնաժողովը ուսումնասիրում է աշխատանքային խմբերի զեկույցները, որից հետո որոշում է, թե արդյոք ներկայացված զեկույցները բավարար են ինքնագնահաման զեկույցի մշակման համար, թե ոչ: Համակարգող հանձնաժողովը պատրաստում է ինքնագնահատման զեկույցի նախնական տարբերակը՝ հակիրճ ընթեռնելի նախագիծ՝ համահամալսարանական քննարկումներ անցկացնելու և դիտողություններ և/կամ առաջարկություննն դիտարկելու համար: Ինքնանահատման զեկույցի կառուցվածի մեկ օրինակ բերված է նկ *-ում: Նման սխեմայով կազմված ինքնագնահատման զեկույցը, թույլ կտա արտացոլել թե, որքանով է յուրաքանչյուր չափանիշը վերլուծված և արտացոլված զեկույցում, քանի որ փորձագետները գնահատում են, թե որքանով է ԲՈՒՀ-ը համապաստանում առաջադրված չափանշներին:

## *4.2. ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ*

### ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Տիտղոսաթերթում պետք է նշված լինի ԲՈՒՀ-ի անվանումը և հասցեն, ինչպես նաև տեղեկատվություն որ ինքնագնահատումը կցվում է հավատարմագրման դիմում հայտին: Նշել ներկայացման ամսաթիվը:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածություն բաժնում պետք է ներկայացնել `

- Բուհի պատմությունը, ներառյալ ԲՈՒՀ-ի ամփոփ և փաստարկված նկարագրությունը:
- Ժողովրդագրական տեղեկատվություն, որը պետք է ներառի ամփոփ տվյալներ ծառայությունների մատուցման, ուսանողների և աշխատողների կազմի և բազմազանության, ինչպես նաև նախատեսվող գործողությունների մասին:
- Ուսանողների ձեռքբերումներին վերաբերվող տեղեկատվություն՝ կրթական ծրագրերը հաջողությամբ ավարտող ուսանողների, շնորհված կրթական աստիճանների, աշխատանքի տեղավորման մասին թվային տվյալներ և այլն:
- Տեղեկատվություն համալսարանի այլ կենտրոնների, ինչպես նաև հեռահար ուսուցման հնարավորությունների մասին:

### ԶԵԿՈՒՅՑԻ ՀԱԿԻՐՃ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այստեղ անհրաժեշտ է հակիրճ ներկայացնել թե որքանով է ԲՈՒՀ-ը, որպես ամբողջական համակարգ, բավարարում առաջադրված չափանիշներին:

Հակիրճ բովանդակության մեջ պետք է արտացոլված լինեն չափանիշների պահանջներն արտահայտող խնդիրները՝ ինստիտուցիոնալ պարտավորությունները, գնահատումը, պլանավորումը և կատարելագործումը, ուսանողների կրթական վերջնարդյունքները և ԲՈՒՀ-ի ամբողջականությունը:

### ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Տեքստի կամ գծապատկերի ձևով պետք է ներկայացնել թե ինչպես է ԲՈՒՀ-ում իրականացվել ինքնագնահատամն գործընթացը: Այստեղ պետք է ներառվեն նաև կազմված ժամանակացույցը, ինչպես նաև տեղեկատվություն համակարգող հանձնաժողովի, աշխատանքային խմբերի և դրանց ղեկավարների մասին, ովքեր պատասխանատու են ինքնագնահատման գործընթացի կազմակերպման և իրականացման համար:

### ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Յուրաքանչյուր չափանիշ նկարագրելիս պետք է ուղղորդվել հետևյալ կառուցվածքով

- Չափանիշի վերնագիրը և դրա համառոտ բնութագիրը:
- Վերլուծաբար նկարագրել չափանիշն ըստ չափորոշիչների՝ հղում կատարելով համապատասխան փաստաթղթերին:
- Անհրաժեշտության դեպքում տալ համպատասխան հղումներ զեկույցի մյուս չափանիշներին:
- Վերլուծել առկա բացթողումները և ձեռքերումները՝ համապատասխան հղումներով:
- Բացտողումները լրացնելու առաջարկներ և երաշխավորություններ:
- Փաստաթղթերի ցուցակ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփ ներկայացնել ինքգնազնահատման զեկույցում տեղ գտած հիմնական եզրակացությունները և երաշխավորությունները:

**Խմբերը**

## 4.3. ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հավատարմագրման արդյունավետությունը և հաջողությունը պայմանավորված են հաստատության կողմից պատասխանատվության ստանձնումից, ինչպես նաև ներգրավվածությունից և պատասխանատու վերաբերմունքից հավատարմագրման գործընթացի հանդեպ: Հաստատությունը պետք է իրականացնի ինքնավերլուծություն ՈԱԱԿ-ի կողմից սահմանված ժամկետներում և ավարտին ինստիտուցիոնալ թույլ և ուժեղ կողմերի փորձագիտական գնահատում իրականացվի՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան: Հաստատության ինքնավերլուծության նպատակը հաստատության յուրաքանչյուր ասպեկտի գնահատումն է:

Ինքնագնահատման գործընթացի վերջնարդյունքը ինքնավերլուծության զեկույցն (հաշվետվությունը) է, որն անաչառորեն ներկայացնում է ուսումնական հաստատությունը, երաշխավորվում և լայն աջակցություն է ստանում համալսարանական միջավայրի կողմից: Նաև փաստում է ուսումնական հաստատության համապատասխանությունը ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին: Ինքնավերլուծության զեկույց պատրաստելիս ստեղծվում են մի շարք նախագծեր, ինչն ուղեկցվում է տվյալների հավաքագրման, վերլուծության և վերանայման գործընթացներով: Առաջին փաստաթուղթը, որը պատրաստվում է, ինքնավերլուծության զեկույցի նախագիծն է,

որին հաջորդում են արդեն իսկ ստեղծված աշխատանքային խմբերի զեկույցները և ի վերջո ինքնավերլուծության վերջնական զեկույցը (հաշվետվությունը):

*Նախնական զեկույցներ աշխատանքային խմբերից*

Ցանկալի է, որ ինքնագնահատման գործընթացում ժամանակ առ ժամանակ խմբերից պահանջվի ներկայացնել ուրվագծերը և նախնական նմուշները մինչ վերջնական զեկույցի ներկայացումը: Բոլոր փաստաթղթերը պետք է համապատասխանեն այն ձևաչափին և խմբագրական ոճին, որը ներկայացված է ինքնավերլուծության զեկույցի նախագծում:

Համակարգող հանձնաժողովը պետք է վերանայի աշխատանքային խմբերի զեկույցները, որպեսզի ստուգի դրանց համապատասխանությունը չափանիշին և բաղադրիչ չափորոշիչներին: Ապա համակարգող հանձնաժողովը պետք է որոշի, թե արդյոք ինքնագնահատման հարցերին տրվել են համապատասխան պատասխաններ և թե արդյոք աշխատանքային խմբերը բավարար տեղեկություններ և հիմքեր են ներկայացրել ինքնագնահատման զեկույցը գրելը հիմնավորելու համար: Եթե համակարգող հանձնաժողովը գտնում է, որ որևէ թեմա բավարար կերպով ներկայացված չէ կամ պատշաճ ձևով չի ներկայացվել ուսումնական հաստատության համապատասխանությունը պետական հավատարմագրման չափանիշներին, ապա համապատասխան աշխատանքային խմբերը պետք է նշված ժամանակահատվածում վերանայեն թերությունները և բավարարեն համապատասխան պահանջները:

*Ինքնավերլուծության զեկույցի կառուցվածքը*

Ինքնավերլուծության զեկույցը սովորաբար ներառում է աշխատանքային խմբերի զեկույցները: Միևնույն կաղապարն օգտագործվում է նաև փորձագիտական խմբի կողմից՝ իրենց զեկույցի պատրաստման նպատակով: Գոյություն ունեն ինքնավերլուծության զեկույցի պատրաստման տարբեր նմուշ օրինակներ: Տվյալ դեպքում, հիմք է ընդունվել մեկ ընդհանուր մոտեցում, այն է՝ առաջնորդվել ըստ պետական հավատարմագրման չափանիշների հաջորդականության, ինչպես դրանք ներկայացված են ՀՀ կառավարության կողմից հաստատված: Չափանիշները, այնուամենայնիվ, կարող են վերադասավորվել, համակցվել կամ այլ ձևով խմբավորվել, և զեկույցը կարող է կազմվել այնպես, որ արտացոլի ուսումնական հաստատության որոշակի մշակույթը, կառուցվածքը, գործընթացները կամ ընթացիկ հիմնախնդիրները:

Այս դեպքում կարևոր է, որ ինքնագնահատման զեկույցում հստակ ցույց տրվի, թե յուրաքանչյուր բաժնում ներկայացված հիմքերը և վերլուծությունը ինչպես են համապատասխանում չափանիշներից յուրաքանչյուրին, քանի որ իր զեկուցման մեջ

©Երևանի պետական համալսարան, 2013

փորձագիտական խումբը պետք է որոշի և ներկայացնի, թե արդյոք ուսումնական հաստատությունը համապատասխանում է բոլոր չափանիշներին։

*Գրելու գործընթացը*

Ինքնագնահատման հակիրճ, կապակցված և ամբողջական զեկույցն ավելին է, քան պարզապես աշխատանքային խմբերի զեկույցների պարզ հավաքածու։ Եթե համակարգող հանձնաժողովը նախընտրում է, որ աշխատանքային խմբերից յուրաքանչյուրը գրի ինքնագնահատման զեկույցի մեկ գլուխը, ապա անհրաժեշտ է, որ աշխատանքային խմբերի զեկույցները պահպանեն միևնույն ոճը, ձևաչափը և կառուցվածքը։ Վերջնական զեկույցը պետք է խմբագրվի և լինի ճիշտ կազմված, համահունչ և շարունակական։ Այլապես փորձագիտական խումբը կարող է օգտագործել աշխատանքային խմբերի զեկույցները՝ որպես վերլուծություն այն փաստերի, որոնք օգտագործվել են ամբողջ զեկույցը գրելու համար։ Կարևոր է, որպեսզի ինքնագնահատման ժամանակացույցում բավարար ժամանակ նախատեսված լինի գրելու, վերանայելու և վերջնական զեկույցն ամփոփելու համար։ Կառուցվածքային տարրերը պետք է կարգավորվեն և հաստատվեն նախքան ինքնագնահատման վերջնական զեկույցի պատրաստումը։

*Նկարագրություն, վերլուծություն, հիմնավորում, փաստաթղթավորում*

Ինքնագնահատման զեկույցը պետք է օգտակար և հասկանալի գործիքամիջոց հանդիսանա տվյալ ուսումնական հաստատության հետագա զարգացման, ծրագրի և ուսանողի կրթության միջև կապի ամրապնդման համար, ինչպես նաև պետք է համապատասխանի ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին: Այսպիսով, զեկույցում պետք է ներկայացվի, թե որքանով է հաստատությունը կամ ծրագիրը իրականացնում իր առաքելությունը, խնդիրները և նպատակները։

Ըստ էության, ինքնավերլուծությունը պետք է լինի ընթացիկ պլանավորման և գնահատման գործողությունների մի ամբողջություն, այլ ոչ առանձին մի երևույթ, որի մասին հիշում են միայն այն ժամանակ, երբ փորձագիտական խումբ է սպասվում: Ինքնագնահատման զեկույցը նաև հաստատության համար ներկայանալու կարևորագույն միջոց է: Նույնքան և միգուցե ավելի կարևոր է այն, որ սա յուրաքանչյուր հաստատության համար առիթ է քննադատաբար կշռադատելու, թե ինչպես է այն կառավարվում և ինչպես է իրականացվում որակի վերահսկողությունը որոշումների կայացման հիմնական գործընթացներում։ Ուստի, ինքնագնահատման հաշվետվությունը չպետք է նկարագրական լինի, այլ պետք է լինի վերլուծական, գնահատող և ամբողջական: Այն պետք է գնահատի տվյալ հաստատության ուժեղ և թույլ կողմերը, պարզի վտանգները (անբարենպաստ գործոնները) և հնարավորությունները, ինչպես

նաև ցույց տա, թե ինչպես են ռազմավարական մտածողության և որակի կառավարման տարբեր տարրերը միմյանց հետ փոխկապակցված: Բացի այդ, վերլուծությունը պետք է հաշվի առնի ինչպես վերջերս իրականացված, այնպես էլ ապագայում ակնկալվող փոփոխությունները: Գնահատման գործընթացի նպատակը չէ և անհրաժեշտություն էլ չկա գնահատելու հաստատության բոլոր գործընթացները: Բացի այդ, եթե կան գործընթացների գնահատման այլ արդյունքներ, ապա դրանք ևս կարող են օգտագործվել:

Գնահատման գործընթացում կարևորվում են ինքնագնահատման զեկույցի հետևյալ երեք նպատակները.

- Ներկայացնել հակիրճ, բայց վերլուծական և հասկանալի հաշվետվություն, որը կարտացոլի հաստատության պատկերացումը որակի կառավարման և ռազմավարական պլանավորման մասին:

- Վերլուծել հաստատության թույլ և ուժեղ կողմերը, պարզել հնարավորությունները և վտանգները, որոնց այն բախվում է և առաջարկել դրանց լուծմանն ուղղված կոնկրետ գործողություններ:

- Մշակել հայեցակարգ (չափանիշների շրջանակ), որի հիման վրա ՈԱԱԿ-ի և փորձագիտական խմբի կողմից պետք է անցկացվի գնահատում:

Ինչպես արդեն նշվեց, ինքնագնահատման և արտաքին գնահատման փուլերում գնահատման ընդհանուր համատեքստում կարևորվում է, թե որքանով են համապատասխանում հաստատության առաքելությունը և նպատակները:

Ինքնագնահատման կամ ինքնավերլուծական զեկույց պատրաստելիս, այսինքն գնահատման ընթացքում պետք է հաշվի առնել չորս հիմնական հարց, որոնք պետք է ի նկատի ունենալ ինքնագնահատման և արտաքին գնահատման փուլերում (այս սկզբունքով են առաջնորդվում ինքնագնահատման գործընթաց անցկացրած միջազգային ճանաչում վայելող շատ բուհեր): Այդ չորս հարցերն են՝

- Ի՞նչ է փորձում անել հաստատությունը:
- Ինչպե՞ս է փորձում անել հաստատությունը:
- Ի՞նչ հիմքեր ունի հաստատությունը մտածելու, որ այն կաշխատի:
- Ի՞նչ փոփոխություններ է իրականացնում հաստատությունը բարեփոխման ուղղությամբ համար:

Այս ռազմավարական հարցերը սերտորեն կապված են ռազմավարական պլանավորման հայտնի մի մեթոդի, այսպես կոչված SWOT-ի հետ: Այդ մեթոդը, լինելով վերլուծական գործիք, օգտագործվում է ինքնագնահատման զեկույցը պատրաստելիս՝ հաստատության ՈՒԺԵՂ, ԹՈՒՅԼ կողմերը, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և առկա ՎՏԱՆԳՆԵՐԸ (անբարենպաստ գործոնները) որոշելու համար:

Վերոնշյալ հարցերն (շրջափուլը) ուղղորդում են ինքնագնահատման զեկույց պատրաստելիս՝ իրականացվող տվյալների հավաքումն ու վերլուծությունը: Քանի որ այս հարցաշարը ինքնագնահատման զեկույցի պատրաստման հիմքն է (վերջինս էլ իր հերթին ավելի ուշ հիմք է ծառայելու ՌԱԱԿ-ի աշխատանքային խմբի կողմից՝ արտաքին գնահատման իրականացման համար), կարևոր է, որ հարցաշարի բոլոր առանցքային կետերը հաշվի առնվեն ինքնագնահատման աշխատանքային խմբի կողմից: Սակայն, քանի որ յուրաքանչյուր համալսարան գործում է առանձնահատուկ համատեքստում, ապա յուրաքանչյուր ինքնագնահատման խումբ կարող է կազմել այս հարցաշարը նախքան աշխատանքը սկսելը: Եթե որոշ հարցեր էական չեն կամ, եթե որոշակի տեղեկատվություն անհնար է ներկայացնել, պետք է նշվի, թե առանձնապես որ հարցի առնչությամբ:

Շրջափուլը բաժանվում է չորս հիմնական մասի, որոնք արտացոլում են վերոնշյալ չորս հիմնական հարցերը, (այսինքն՝ ի՞նչ է փորձում անել հաստատությունը, ինչպե՞ս է փորձում անել, ի՞նչ հիմքեր ունի մտածելու, որ այն կաշխատի և ինչ փոփոխություններ է իրականացնում բարեփոխման համար): Այս չորս հարցերը պետք է երևան ինքնագնահատման զեկույցի հաշվետվության և ՌԱԱԿ-ի փորձագիտական խմբի կողմից գրվող արտաքին գնահատման հաշվետվության մեջ:

1. Հարցաշարի առաջին կետը նորմերի և արժեքների, այսինքն՝ հաստատության առաքելության և նպատակների քննարկումն է կամ այն թե՝ «Ի՞նչ է ցանկանում անել հաստատությունը»:
2. Այս կետին հաջորդում են առաջին կետում նշված նորմերի և արժեքների իրականցմանն ուղղված կազմակերպչական քայլերը: Այսինքն, հաստատության ռազմավարությունը կամ դիտարկումը, թե՝ «Ինչպես է փորձում հաստատությունն այն անել»:
3. Երրորդ մասում պետք է կատարվի հետևյալ հարցադրումը. որտեղից գիտի հաստատությունը, որ իր գործունեությունը համապատասխանում է համալսարանի նպատակներին, այսինքն այն ուշադրություն է դարձնում հաստատության որակական գործընթացներին կամ հարցադրմանը թե՝ «Ի՞նչ հիմքեր ունի հաստատությունը մտածելու, որ այն կաշխատի»:
4. Հարցաշարի վերջին մասը դիտարկում է փոփոխման կարողությունը ռազմավարական նպատակների համատեքստում: Այն նաև նպատակ է հետապնդում ներգրավել ամբողջ համալսարանը՝ կառավարման գործընթացներում իր թերացումների քննարկմանը կամ պարզել թե՝ «Ի՞նչ փոփոխություններ է իրականացնում հաստատությունը բարեփոխման համար»:

©Երևանի պետական համալսարան, 2013

5. Հինգերորդ, ոչ պարտադիր մասը ենթադրում է որևէ առանձնահատուկ շեշտադրում գնահատման ընթացքում, որը համալսարանի կողմից կընտրվի ավելի մանրակրկիտ դիտարկման ժամանակ:

Այս ձևաչափը հնարավորություն է տալիս պատրաստելու ինքնավերլուծության այնպիսի հաշվետվություն, որն արտացոլում է ուսումնական հաստատության բոլոր գերակա նպատակները: Սրանից հետո անհրաժեշտ է նաև ճիշտ ընտրել ինքնագնահատման զեկույց գրելու ամենահարմար և ռեալ տարբերակը:

ԵՊՀ-ն ինքնագնահատման իր զեկույցը պատրաստելիս առաջնորդվել է ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական չափանիշներով: Ինչպես արդեն նշվեց, ստեղծվել է համակարգող հանձնաժողով և աշխատանքային խմբեր՝ ըստ վերոնշյալ չափանիշների:

Նկատի ունենալով վերը նկարագրված մոտեցումը, ինքնավերլուծության զեկույցը գրելիս պետք է առաջնորդվել նաև այն սկզբունքով, որ պետք է լինի ընդհանրական և մեկ ամբողջություն կազմող փաստաթուղթ: Ինքնավերլուծության վերջնական տարբերակը, չնայած, որ այն կազմված է հավատարմագրման 10 առանձին և տարբեր չափանիշներից և բաղկացած է մի քանի մասից, պետք է արտացոլի տվյալ հաստատության միասնական ամբողջությունը, այլ ոչ թե հանդես գա իբրև համակարգված պատասխաններ չափանիշների և դրանց մաս կազմող չափորոշիչների համար: Զեկույցի բովանդակությունը, բնույթը, կառուցվածքը և օժանդակ փաստաթղթերը պետք է պատմեն «հաստատության պատմությունը»: Ամբողջությունը պետք է ավելին լինի, քան մասերի հանրագումարը: Այն պետք է կազմված լինի հետևյալ բաժիններից՝ բովանդակություն, նկարագրություն, գնահատում և պլանավորում: Ստորև ներկայացվում է, թե ինչ պետք է ներառեն այդ բաժինները:

*Բովանդակություն*

Ինչպես ցանկացած պատմություն, ինքնավերլուծության զեկույցը նույնպես ներառում է հիմնական թեմաներ, օժանդակ մանրամասներ և պատշաճ հավասարակշռություն իր հաստատումներն օժանդակող որակական և քանակական ապացույցների միջև: Համապատասխան ուշադրություն է պետք դարձնել հաստատության պատմությանը, բայց կենտրոնացումը պետք է լինի ներկա իրավիճակի և ապագա ուղղությունների վրա: Հիմնական նյութը կազմված է մի քանի մասից, որոնցից յուրաքանչյուրը չափորոշիչներից մեկին ուղղված եռամաս (երեք մասից կազմված) պատասխան է: Ամբողջական նյութն ավելի արդյունավետ կազմակերպելու համար առաջարկվում է օգտագործել նկարագրում – գնահատում – պլանավորում (նախագծում) վերլուծական շրջանակը: Նկարագրում – գնահատում – պլանավորում (նախագծում) շրջափուլը երեք հարց է բարձրացնում. Ինչ է անում հաստատությունը չափորոշիչը

բավարարելու համար, որքանով է այն բավարարում չափորոշիչը, և ինչ է նախատեսում անել բարելավելու համար: Այս ձևաչափին հետևելը հաստատությանը թույլ է տալիս հստակորեն ցույց տալ, թե այն ինչպես է ինքն իրեն գնահատում այսօր և ինչ պլաններ կազմում ապագայի համար:

*Նկարագրություն*

Սա յուրաքանչյուր չափորոշչին համապատասխան՝ հաստատության ներկա կարգավիճակի ռեալ և օբյեկտիվ ներկայացումն է: Փորձագիտական խմբին և հանձնաժողովին անհրաժեշտ է համապարփակ ընկալում, թե ինչպես է հաստատությունը գործում: Ամենաարդյունավետը կարճ համառոտագրերն են, իսկ ավելի լայնածավալ մանրամասները կարող են տրամադրվել աշխատանքային փաստաթղթերում: Որպեսզի հաստատությունը կամ ծրագիրը ապացուցի իր արդյունավետությունը չափանիշների պահպանման տեսանկյունից՝ այն պետք է մշտապես և կանոնավոր կերպով հավաքի և զարգացնի հաստատության կամ ծրագրի համար կարևոր տվյալները: Սակայն հաստատության և ծրագրի ուսումնասիրությունների կարևորությունը չպետք է գերագնահատվի:

*Վերլուծություն/Գնահատում*

Ինքնավերլուծական զեկույցը պետք է լինի ավելին, քան աշխատանքային խմբերի կողմից պատրաստված առանձին զեկույցների միավորում և վերլուծությունը չպետք է փոխարինվի նկարագրությամբ: Ընդհակառակը, զեկույցում պետք է մանրամասն վերլուծվի հաստատությունը կամ ծրագիրը և գնահատվի, թե որքանով են արդյունավետ իրականացվող քաղաքականությունը, գործընթացները, ընթացակարգերը, ծրագրերը, գործունեությունը, ինչպես նաև ռեսուրսները, կառուցվածքը և որքանով են նրանք համապատասխանում հավատարմագրման չափանիշներին: Այն պետք է պարունակի բավարար ապացույցներ այնպես, որ կարդացողը հասկանա, թե ինչ հիմքի վրա է գնահատումը կատարվել: Այս քննադատական և անաչառ ինքնադատողությունը միակ և ամենակարևոր ներքին գործունեությունն է ողջ ինքնավերլուծության գործընթացում: Այն պահանջում է կենտրոնացում և քննադատական մտածողություն: Ինքնավերլուծական հաշվետվությունն ավելի օգտակար է, երբ այն կենտրոնանում է հաստատության և ծրագրի տվյալների վերլուծության վրա, որոնք էլ իրենց հերթին արտացոլումն են գտնում ծրագրերում և արդյունքում նաև ուսանողների կրթությունում: Հիմնականում, շեշտը պետք է դրվի հաջողությունների գնահատման և բարելավման ենթակա ոլորտների բացահայտման վրա: Քննադատական ինքնագնահատականը ինքնավերլուծության կարևոր ներքին գործընթաց է, որին մեծ ուշադրություն կդարձնեն հավատարմագրման հանձնաժողովը և փորձագետների խումբը: Նրանք այս բաժնում կկարևորեն նաև կատարված դատողությունները, որովհետև դրանք հնարավորություն են տալիս ըմբռնելու իր նպատակներին հասնելու համար հաստատության ռեսուրսների

©Երևանի պետական համալսարան, 2013

ներքին պլանավորումը և կառավարումը: Տրված գնահատականները նշանակալից պատկերացում են տալիս ներքին պլանավորման և հաստատության՝ իր ներքին ռեսուրսներով իր առաքելության և նպատակների իրականացման, իր խնդիրների լուծման, ուսանողի կրթության որակի բարելավման մասին:

Ուսումնական հաստատության ուժեղ կողմերի և հետագա զարգացման կարիք ունեցող ոլորտների գնահատումն ըստ չափանիշների՝ հնարավորություն է տալիս վերլուծելու և գնահատելու գործընթացները, ենթակառուցվածքները, գործունեությունը և ռեսուրսները՝ առաքելությանը, նպատակներին և խնդիրների իրականացմանը հասնելու, ինչպես նաև ուսանողի կրթության որակի՝ հավատարմագրման պետական չափանիշներին համապատասխանեցնելու համար:

*Պլանավորում (նախագծում)*

Քաղաքականության, գործընթացների, ընթացակարգերի, ռեսուրսների, ծրագրերի, գործունեության և տվյալ ոլորտում արդյունքների վերլուծությունից հետո ինքնավերլուծական զեկույցում յուրաքանչյուր չափանիշի համար պետք է նախատեսվի հետագա զարգացման պլան և խորհուրդներ: Խորհուրդները պետք է լինեն հակիրճ և իրատեսական: Այդ խորհուրդները իմաստ կունենան, եթե ծրագրի ամբողջ պլանավորման գործընթացի մաս կազմեն և ղեկավարությունը, համապատասխան վարչական ստորաբաժանումները, ֆակուլտետները և այլ մասնակիցներ պարտավորվեն բարելավել կրթական ծառայությունների որակը:

Հաստատության իրատեսական պարտավորություններն են՝ պահպանել և ավելացնել ուժեղ կողմերը և հատկանշել և բարելավել անհանգստության ենթակա ոլորտները: Հանձնաժողովի ընդհանրական տեսակետին համապատասխան, համաձայն որի՝ ինքնավերլուծությունը սերտորեն կապված է պլանավորման հետ, ենթադրվում է, որ նախագծերը պետք է լինեն հաստատության պլանավորման գործընթացի մի մասը և ներկայացնեն կոնկրետ պարտավորություններ հաջորդ մի քանի տարիների համար: Միայն այս դեպքում է, որ ինքնավերլուծության արդյունքներն իրականացվում են գործնականում: Հետևաբար, հետագա զարգացման և բարելավման խորհուրդները պետք է բխեն վերլուծական զեկույցի ընթացքում ստացված տվյալներից:

*Վերանայում և ամփոփում*

Արդյունավետ ինքնագնահատման նախապայմաններից մեկը ողջ համալսարանական համայնքի ներգրավածությունն է գործընթացի մեջ: Համակարգող հանձնաժողովը պետք է հնարավորություններ ընձեռի համալսարանականներին՝ վերանայելու և համապատասխանաբար հակազդելու ինքնագնահատման ողջ գործընթացում: Ուսանողները, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսումնաօժանդակ և վարչական աշխատակիցները, շրջանավարտները կարող են առավել տեղեկացված և

©Երևանի պետական համալսարան, 2013

արժեքավոր առաջարկություններ անել, եթե ներգրաված լինեն աշխատանքային խմբերի և ինքնավերլուծական զեկույցի վերջնական տարբերակի ստեղծման տարբեր փուլերում:

*Փաստաթղթավորում/ապացուցող փաստաթղթեր*

Արդյունավետ վերջնական ինքնագնահատման զեկույցը պետք է լինի հնարավորինս հստակ և ավարտուն: Այն չպետք է լինի փաստաթղթերի խառնիխուռն կցում, որոնք կարող են վերանայվել տեղում փորձագիտական այցի ժամանակ: Եթե փաստաթղթերը կցվում են զեկույցին, ապա դրանք պետք է համարվեն շատ էական, որպեսզի ամբողջականորեն հասկացվի, թե ինչ է արդեն պարունակվում ինքնագնահատման շարադրանքում և որպեսզի համապատասխանի պետական չափորոշիչներին: Այս դեպքերում ինքնավերլուծության տեքստը պետք է պարունակի համապատասխան մեջբերումներ հավելվածում ներառված նյութերից, որպեսզի ընթերցողը հեշտորեն վերանայի և գտնի դրանք:

## 4.4. ԶԵԿՈՒՅՑԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ԸՍՏ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Այս ենթագլխում երկու չափանիշների և համապատասխան չափորոշիչների ներկայացմամբ պարզաբանվում է, թե ինչպես է պետք վերլուծել մյուս չափանիշները և ինչ է անհրաժեշտ իմանալ և պարզաբանել:

**3. Մասնագիտության կրթական ծրագրերը**

*Չափանիշ 3.* ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

**3.1.** *ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:*

3.1.1. - Ցույց տալ, որ ԵՊՀ մասնագիտությունների անվանացանկը (բակալավրիատ, մագիստրատուրա) համապատասխանում է համալսարանի առաքելությանը (գիտելիքի ստեղծում, փոխանցում և տարածում):

3.1.2. – Կրթական ծրագրերը համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին և այլ ծրագրային կողմնորոշիչներին (բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակ, Եվրոպական շրջանակ ….տե՛ս Վերլուծությունը):

3.1.3. – Կրթական ծրագրերն ունեն հստակ ձևակերպված նպատակ (որակավորման պրոֆիլ) և կրթական վերջնարդյունքներ: Տալ դրանց հիմնավորող փաստաթղթերը:

**3.2.** *ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում ուսանողակենտրոն ուսուցմանը:*

3.2.1. – Ցույց տալ, թե որքանով է ծրագրում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները համապատասխանում ծրագրի կրթական վերջնարդյունքներին, այսինքն հնարավորություն են տալիս ուսանողներին ձեռք բերելու այդ կրթական վերջնարդյունքները:

3.2.2 – Հիմնավորել այդ համապատասխանությունն ապահովող քաղաքականության, կարգերի, մեթոդական ծրագրերի առկայությունը բուհում:

**3.3.** *ՄՈՒՀ-ը ծրագրում է ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:*

3.3.1- Ցույց տալ, թե ինչպես են ծրագրում ընդգրկված գնահատման մեթոդները և ձևերը համապատասխանում ծրագրի կրթական վերջնարդյունքների բնույթին, այսինքն հնարավորություն են տալիս ուսանողներին դրսևորելու (ցուցաբերելու) ծրագրի կրթական վերջնարդյունքներով նախատեսված գիտելիքը, կարողությունները և հմտությունները:

3.3.2. – Ցույց տալ, թե ակադեմիական ազնվությունն ապահովող ինչպիսի քաղաքականություն, կարգեր և նորմեր գոյություն ունեն բուհում:

**3.4.** *ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:*

©Երևանի պետական համալսարան, 2013

3.4.1. – Ցույց տալ, թե ինչպես են ԵՊՀ կրթական ծրագրերը համահունչ նմանատիպ այլ կրթական ծրագրերի հետ, արդյոք դրանց մշակման ընթացքում օգտագործվել են ճանաչված այլ բուհերի ծրագրեր կամ առարկայական կողմնորոշիչներ, որոնք միջազգայնորեն ընդունելի են:

3.4.2.- Շեշտել ECTS կրեդիտների կիրառությունը ծրագրերի աշխատածավալների որոշման մեջ և դրանց փոխանցելիության սկզբունքի կիրառումը համալսարանում:

3.4.3- Ցույց տալ, թե նախորդ երկու հանգամանքներն ինչպես են նպաստում ուսանողների բուհից բուհ միջազգային շարժունությանը (կրեդիտային և որակավորման): Բերել հնարավորինս շատ օրինակներ, ուսանողների միջազգային շարժունության դինամիկան վերջին 5 տարիների համար:

3.4.4. – Ցույց տալ, թե ինչպես է համալսարանը ներգրավված համատեղ և կրկնակի դիպլոմների ծրագրերում՝ օտարերկրյա բուհերի հետ համատեղ: Բերել հնարավորինս շատ օրինակներ:

**3.5.** *ՄՌԻՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:*

3.5.1. – Ցույց տալ, որ բուհում առկա է կրթական ծրագրերի արտոնման, փորձաքննության և հաստատման կարգ, ինչպես է այն գործադրվում և նպաստում կրթական ծրագրերի մշակման որակին:

3.5.2.- Ցույց տալ, որ բուհում առկա է կրթական ծրագրերի դիտանցման (մոնիթորինգ), մշտադիտարկման (արդյունավետ գնահատման) կարգ, ինչպես է այն գործադրվում և ինչպես է նպաստում ծրագրերի շարունակական բարելավմանը:

3.5.3.- Ցույց տալ, որ բուհում առկա է կրթական ծրագրերի պարբերական վերանայման կարգ, ինչպես է այն գործադրվում և ինչպես է նպաստում ծրագրերի ընդհանուր որակի բարձրացմանը:

## ՀԻՄՔԵՐ

1. Կրթական ծրագրի մասնագիրը:
2. Դասավանդման և ուսումնառության ձևերի ու մեթոդների ընտրության ղեկավար ցուցումներ և/կամ մեթոդական նյութեր:

3. Ուսանողների գնահատման կարգ և ընթացակարգեր:
4. – Մասնագիտությունների ցանկը, ծրագրերի մասնագրերը, ծրագրային կողմնորոշիչներ:
5. Գնահատման մեթոդների ընտրության և չափանիշների սահմանման ղեկավար ցուցումներ և/կամ մեթոդական ուղենիշներ:
6. Ակադեմիական ազնվության քաղաքականություն, ընթացակարգեր և առնչվող այլ փաստաթղթեր:
7. Ուսանողների գնահատման քաղաքականության արդյունավետության ապահովման և վերանայման մեխանիզմներ:
8. Դիպլոմի հավելվածի օրինակ:
9. Համատեղ ծրագրերի և դիպլոմների շնորհման վերաբերյալ օտարերկրյա բուհերի հետ կնքված պայմանագրեր:
10. Էրազմուս Մունդուս ծրագրի շրջանակներում ԵՊՀ կոնսորցիում գործընկեր բուհերի ցանկը:
11. Ուսանողների և դասախոսական կազմի շարժունության հնարավորությունները բացահայտող հիմքերը:
12. Տալ բուհերի ցանկը (երկիր, ուսանողների թիվ ըստ տարիների), որոնց հետ ԵՊՀ-ն ունի ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող պայմանագրեր:
13. Կրթական ծրագրերի հաստատման կարգ:
14. Կրթական ծրագրերի ընթացիկ դիտանցման կարգ:
15. Կրթական ծրագրերի պարբերական վերանայման կարգ:
16. Կրթական ծրագրերի մշակման կարգ:
17. Արտաքին և ներքին շահեկիցների կարիքների բացահայտման մեխանիզմներ:

<u>3-րդ չափանիշի վերաբերյալ ներկայացնել համապատասխան բացթողումները, ձեռքբերումները և ապագա պլանները, առաջիկա անելիքները:</u>

## 5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

*Չափանիշ 5.* ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

5.1. *ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:*

5.1.1. – Նկարագրել պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունման (և հեռացման) գործող կարգերը և ընթացակարգերը:

5.1.2. – Նկարագրել ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման (և հեռացման) գործող կարգերը և ընթացակարգերը:

5.1.3. – Ներկայացնել ԵՊՀ կրթական ծրագրերի քանակն ըստ հիմնական ուղղվածության (հումանիտար, բնագիտական) և դրանց սպասարկող կազմի քանակական տվյալներն ըստ տարակարգերի, ուսանող-դասախոս հարաբերակցությունը բնագիտական և հումանիտար թևերում, ինչպես նաև ուսանող-ուսումնաօժանդակ հարաբերակցությունը:

5.1.4. – Ցույց տալ, թե ինչպես է պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի մասնագիտական որակները համապատասխանում կրթական ծրագրերի նպատակներին:

5.2. *ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:*

5.2.1. – Ցույց տալ, որ մասնագիտությունների կրթական ծրագրերն ունեն հստակ ձևակերպված կրթական վերջնարդյունքներ, որոնք հիմք են հանդիսանում ծրագրերը սպասարկող դասախոսական կազմին ներկայացվող պահանջների ձևավորման համար: Հարկավոր է ընդգծել, որ այդ պահանջները ձևավորվում են ֆակուլտետի, ամբիոնի մակարդակում, այլ ոչ թե առանձին ծրագրերի համար: Խորհուրդ է տրվում այս և նախորդ չափորոշիչների վերլուծությունը ներկայացնել միասին:

5.3. *ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար։*

5.3.1. – Ներկայացնել ԵՊՀ-ում գործող պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման կարգը, չափանիշները և ընթացակարգերը, որոնք իրականացվում են կիսամյակային ուսանողական հարցումների ձևով։

5.3.2. – Ներկայացնել այդ հարցումների քանակական տվյալները (հարցումների միջին քանակը կիսամյակում և դրանցում ներգրավված ուսանողների թիվը), հարցումների միջին արդյունքներն ըստ ֆակուլտետների՝ վերջին 3 տարիների (4 կիսամյակների) համար։

5.3.3. – Վերլուծել, թե ինչպես է ազդում դասախոսների գնահատման գործող մեխանիզմը (արդյունքները) նրանց դասավանդման որակի բարձրացման վրա։

5.3.4. – Ներկայացնել, թե ԵՊՀ-ում դասախոսների գնահատման ինչպիսի այլ մեխանիզմներ կան կամ պլանավորվում են ներդնել (դասախոսների ինքնագնահատում, դասախոսի գնահատում գործընկերների և անմիջական ղեկավարի կողմից)։

5.4. *Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ։*

5.4.1. – Ներկայացնել պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման գործող համակարգը (համապատասխան կարգը, ընթացակարգերը, ծրագրերը/թեմաները և պահանջները)։

5.4.2. – Դասախոսների վերապատրաստման միջոցառումների պլանը/ժամանակացույցը առաջիկա տարիների համար (ըստ մեթոդական և մասնագիտական ուղղվածությունների)։

5.4.3. – Ներկայացնել վերապատրաստման արդյունքում ստացված քանակական տվյալները (վերապատրաստված դասախոսների քանակն ըստ առանձին ծրագրերի/թեմաների՝ վերջին երեք տարիների համար)։ Վերլուծել գործընթացի արդյունավետությունը։

*5.5. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը։*

5.5.1.- Ներկայացնել դասախոսական կազմով ապահովվածության մեխանիզմները, որոնք ընդգրկում են դասախոսական հաստիքների պլանավորումը և համապատասխան աշխատանքային պայմանագրերի կնքումը՝ մեկամյա և երկարաժամկետ կտրվածքով:

5.5.2. – Ներկայացնել դասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգը և ընթացակարգերը:

5.5.3. – Համատեղությամբ և ժամավճարային սկզբունքով ներգրավվող դասախոսական կազմի նշանակման ընթացակարգերը:

*5.6. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:*

5.6.1.- Ներկայացնել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը (ակտիվությունը) խթանող մեխանիզմները, ինչպիսիք են՝ ԵՊՀ դասախոսական կազմի տարբերակված հավելավճարի համակարգը, դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, դասալսումները (սկսնակ դասախոսների համար) և այլն:

5.6.2. – Հակիրճ ներկայացնել դասախոսական մի տարակարգից մյուսին անցման պայմանները և մեխանիզմները, որոնք սահմանված են ԵՊՀ համապատասխան կարգով:

5.6.3. – Հակիրճ ներկայացնել ԲՈՀ-ի սահմանած պահանջները և ընթացակարգերը գիտական կոչումների շնորհման վերաբերյալ:

5.6.4. – Նշել ԵՊՀ ասպիրանտուրայի նպատակային լինելու հանգամանքը՝ համաձայն որի ապագա դասախոսները պայմանագրային հիմունքներով ընդունվում են աշխատանքի, իսկ նրանց ուսման տարիներին նրանք նախապատրաստվում են նաև դասախոսական աշխատանքի համար:

*5.7. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:*

5.7.1. – Ներկայացնել ԵՊՀ վարչական աշխատակազմի քանակական ցուցանիշներն ըստ կառուցվածքային ստորաբաժանումների:

5.7.2. – Ներկայացնել ԵՊՀ ուսումնաօժանդակ աշխատակազմի քանակական ցուցանիշներն ըստ ֆակուլտետների և ամբիոնների:

5.7.3. – Հակիրճ ներկայացնել վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմերի աշխատանքի ընդունման (և հեռացման) ընթացակարգերը:

5.7.4. – Ներկայացնել, թե ԵՊՀ-ում վարչական և ուսումնաօժանդակ կազմերի գործունեության որակն ապահովող ինչպիսի մեխանիզմներ և գործիքներ կան (շրջանավարտների և ուսանողական հարցումներ՝ վարչական աշխատակազմի վերաբերյալ, նրանց ատեստավորման ընթացակարգերը և այլն):

5.7.5. – Ներկայացնել վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմերի աշխատանքի արդյունավետությունը բնութագրող հարցումների արդյունքները:

## Հիմքեր

1. Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի աշխատանքի ընդունման կարգերը:
2. Հիմնական դասախոսական կազմի քանակական տվյալներն ըստ տարակարգերի (գիտական կոչումներ) և գիտական աստիճանների:
3. Համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով դասավանդող դասախոսների քանակական տվյալներն ըստ տարակարգերի (գիտական կոչումներ) և գիտական աստիճանների:
4. Դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների կարգը, հարցաթերթիկը և արդյունքների հրապարակված նյութերը:
5. Ըստ առանձին չափանիշների դասախոսի գնահատման արդյունքների ձևաթերթի օրինակ:
6. Դասախոսների վերապատրաստման և որակավորման բարձրացման կարգը:
7. Համապատասխան ծրագիրը և պահանջները:
8. ԵՊՀ գիտական խորհուրդ ներկայացված վերջին հաշվետվությունը:
9. Ուսումնական բեռնվածությունների նորմատիվ փաստաթղթերը:

10. Դասախոսական կազմի տարեկան համալրումը (այդ թվում՝ ասպիրանտուրայից):
11. Դասախոսների հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ/ընդհանուր դասախոսների թիվ):
12. Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը:
13. ԵՊՀ դասախոսական կազմի տարբերակված հավելավճարի կարգը:
14. Դասալսումների համար նախատեսված ժամային նորմերը:
15. ԲՈՀ-ի համապատասխան կարգերը դոցենտի և պրոֆեսորի կոչման շնորհման վերաբերյալ:
16. Ասպիրանտի հետ կնքվող պայմանագրի ձևաթերթը:
17. ԵՊՀ կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը՝ հետազոտողի պատրաստման կրթական ծրագրի համար:
18. ԵՊՀ տարեկան հաշվետվությունը:
19. ԵՊՀ կանոնադրությունը և ստորաբաժանումների (ֆակուլտետների) կանոնա-դրությունները:
20. Ուսումնաօժանդակ կազմի ատեստավորման կարգը և ձևավորման նորմերը:
21. ԵՊՀ շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքների վերաբերյալ տարեկան զեկույցը:

# *ԳԼՈՒԽ 5. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԶԵԿՈՒՅՑ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ*

Ստորև բերված խորհուրդները և երաշխավորությունները կնպաստեն ինքնագնահատման գործընթացի արդյունավետ պլանավորմանը և իրականացմանը:

1. **Նախապատրաստական աշխատանքներ**

Արդյունավետ ինքնագնահատման գործընթացի հիմքում ընկած է վերջինիս կազմակերպումը և շարունակական պլանավորումը: Չնայած նրան, որ համակարգող հանձնաժողովն է իրականացնում ինքնագնահատման գործընթացի արդյունավետ պլանավորումը, մինչ այդ գործընթացն սկսելը ԲՈՒՀ-ի ղեկավարը պետք է հատուկ ուշադրություն դարձնի մի շարք կարևոր խնդիրների: Այն է անհրաժեշտ է՝

- Մշակել գործընթացի կազմակերպչական նպատակներ կամ սպասվող արդյունքները: Եթե առկա են կազմակերպչական հարցերին առընչվող առաջնահերթություններ, ապա դրանք հարկ է հստակեցնել:
- Որոշել ակնկալվող այն փոփոխությունները կամ բարելավումները, որոնք պետք է ընդգրկված լինեն ինքնագնահատման գործընթացում կամ ինքնագանհատման զեկույցում:
- Ընդգծել ԲՈՒՀ-ի այն արժեքները և մշակույթը, որը պետք է արտացոլել ինքնագնահատման գործընթացում:
- Ինքնագնահատման գոծընթացը և համալսարանում ընթացող պլանավորման գործընթացները դարձնել փոխկապված:

Ցանկալի է, որ ինքնագնահատման գործընթացը համակարգող հանձնաժողովը ստեղծելիս ԲՈՒՀ-ի ղեկավարությունը առաջնորդվի առաջադրված նպատակների և խնդիրներ ծավալով և այլ գործոններով, որոնք կարող են պայմանավորել համակարգող խմբում ընդգրկված անդամների թիվը: Որոշ համալսարաններ ստեղծում են բազմաթիվ անդամներից բաղկացած համակարգող խմբը, քանի որ ընգրկվում են վարչական բոլոր ստորաբաժանումները: Ելնելով կուտակված փորձից համակարգող խումբ կազմելիս առաջարկվում է հետևել ստորև բերված խորհուրդներին՝

- որոշել առաջդրված խնդիրների այն ծավալը, որը կարող են հաղթահարել միայն հանձնաժողովի անդամները:
- ստեղծել հնարավորին չափ փոքր համակարգող խումբ, որն իր հերթին կստեղծի տարբեր ենթախմբեր կամ աշխատանքային խմբեր:

©Երևանի պետական համալսարան, 2013

Համակարգող հանձնաժողովը իր գործունեության առաջին փուլում ԲՈՒՀ-ի ղեկավարության հետ համատեղ ստեղծում է ինքնագնահատման գործընթացի նախագիծը: Այսպես, ԵՊՀ-ն իրականացնում է ինքնագնահատման գործընթացը և մշակում է համապատասխան զեկույցը ըստ հավատարմագրման բոլոր չափանիշների:

Ինքնագնահատման գործընթացի ընթացքում ԲՈՒՀ-ը պետք է կարողանա վերհանել և ներկայացնել այնպիսի փաստեր, որոնք վկայում են, որ ԲՈՒՀ-ը համապատասխանում է հավատարմագրման չափանիշներին: Ինքնագնահատման գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար համակարող խումբը իրականացնում է՝

- **Ժամանակացույցի կազմում, որը ներառում է նաև գնահատող խմբի այցի համար նախատեսված ժամանակը:** Եթե ԲՈՒՀ-ի ղեկավարությունն արդեն իսկ նշանակել է փորձագիտական այցի օրը, ապա համակարգող խումբը կազմում է ժամանակացույցը ելնելով նշանակված ժամկետներից:
- **Աշխատանքների և նպատակների հստակեցում:** Միջազգային փորձը ցույց է տալիս, որ պլանավորվող ինքնագնահատման գործընթացների արդյունավետությունը բարձրանում է, երբ ԲՈՒՀ-ի ռեկտորի հրամանով կազմվում է համակարգող խմբի և աշխատանքային խմբերի գործունեության նպատակները և աշխատանքային պարտավորությունները:
- **Ինքնագնահատման գործընթացի բյուջեի հստակեցում:** Այս գործընթացի համար նախատեսվող բյուջեն պետք է լինի իրատեսական, որտեղ հաշվարկվում են բոլոր ուղղակի ծախսերը, հաշվի առնելով անուղղակի ծախսերը: Հաջող իրականացվող ինքնագնահատման գործընթացը ներառում է նաև այնպիսի ֆինանսական ներդրումներ, ինչպիսիք են ինքնագնահատման գործընթացում ընդգրկված մասնագետների համապատախան սեմինարների և հանդիպումների մասնակցությունը, աշխատավարձը և այլն:

**2. Ընտրել և ներգրավել համապատասխան մասնագետներ**

**ԲՈՒՀ-ի ռեկտորի կողմից ստեղծված համակարգող հանձնաժողովը, պետք է ընտրի նաև ինքնագնահատման գործընթացի համակարգողներ, որոնք պետք է**

- Ունեն որոշակի փորձ բուհի հավատարմագրման գործընթացում,
- Ունակ են հասկանալու ԲՈՒՀ-ի գործունեությունը,
- Ճանաչված են և վստահված,

**Ինքնագնահատման գործընթացի համակարգողները մի կողմից պետք է ունենան գրեթե նույն հմտությունները ինչ համակարգող հանձնաժողովը, սակայն նրանք պետք է**

**լինեն նաև ճկուն, ունենան ղեկավարելու, գործընթացները կառավարելու և թիմային աշխատանքի հմտություններ:**

3. Ստեղծել և կիրառել արդյունավետ կառույցներ, գործընթացներ և մեթոդներ

Համակարգող հանձնաժողովը նախապես պետք է իրականացնի գործընթացների պլանավորման աշխատանքներ, մասնավորապես՝

- Ստեղծել այնպիսի կառույցներ և գործընթացներ, որոնք ներառում են մասնակիցների լայն շրջանակ՝ որոշակի աշխատանքներ կատարող ենթախմբեր և փոքր աշխատանքային խմբեր:
- Մշակել մոտեցումներ տվյալների հավաքման, մաշկման, ինչպես նաև աշխատանքային խմբերի և նրանց անդամների միջև կայուն համագործակցության ապահովման նպատակով:
- Մշակել համահամալսարանական մակարադակով ընթացքող ինքնագնահատման գործընթացի արդյունավետ համակարգման մեխանիզմ:

  Սովորաբար համակարգող հանձնաժողովը հանդես է գալիս, որպես ենթախմբերի և աշխատանքային խմբերի գործունեությունը համակարգող մարմին: Այսպիսով ստեղծվում է համակարգման կենտրոնացված համակարգ, որտեղ մշակվում են աշխատանքային խմբերից ստացվող հաշվետվությունների ձևաթերթերը, դրանցում առկա տեղեկատվության մշակման մոտեցումները և այլն:
- Իրականացնել տվյալների արդյունավետ կառավարում: Համակարգող հանձնաժողովը պետք է համակարգի տվյալների հավաքման գործընթացները: Ստեղծելով առկա տվյալների տեղեկատվական բազա համակարգող հանձնաժողը իրապես կբարձրացնի վերը նշված գործընթացի արդյունավետությունը: Նման տեղեկատվական բազան պետք է խթանի նոր տվյալների ստացումը, որոնց վերլուծությունը կարող է հանգել ԲՈՒՀ-ում նոր հիմքերի և ապացույցերի հայտնաբերմանը:
- Վերահսկել ինքնագնահատման գործընթացի համար նախատեսված բյուջեի արդյունավետ օգտագործումը:
- Ստեղծել աշխատանքային խմբերի կողմից տարվող աշխատանքների վերահսկման համակարգ: Նման համակարգը թույլ կտա համակարգող հանձնաժողովին տեղեկանալ աշխատանքային խմբերի և ինքնագնահատման գործընթացում ներգրավված այլ ենթամիավորների գործունեության արդյունավետության մասին:

4. Պլանավորել զեկույցը մշակելու աշխատանքները

Ինքնագնահատման զեկույցը կազմելիս համակարգող հանձնաժողովը ԲՈՒՀ-ի ղեկավարության հետ համատեղ առաջին հերթին պետք է սահմանի զեկույցի հավանական շահառուներին և ընթերցողներին: Մինչդեռ ակնհայտ է, որ դա հավատարմագրման հանձնաժողովն է, սակայն զեկույցից կարող է օգտվել ինչպես համալսարանը, այնպես էլ արտաքին շահառուները: Նման մոտեցումն ինքնին պայմանավորում է ինքնագնահատման զեկույցի ձևաչափը:

Ինքնագնահատման զեկույցը կազմելու համար տարվող պլանավորման աշխատանքներում համակարգող հանձնաժողովը պետք է որոշի զեկույցը կազմելու եղանակը: Սովորաբար ինքնագնահատման զեկույցը կազմվում է աշխատանքային խմբերի կողմից ըստ հավատարմագրման չափորոշիչների մշակված զեկույցների հիման վրա:

Այս գործընթացը արդյունավետ իրականացնելու համար համակարգող հանձնաժողոը պետք է

- Ընտրի մեկ կամ մի քանի սրբագրիչ և հստակորեն սահմանի նրանց աշխատանքային պարտավորությունները:
- Սահմանի, թե որքանով պետք է աշխատանքային խմբերի կողմից մշակված զեկույցները համապատասխանեն ինքնագնահտաման վերջնական զեկույցի պահանջներին: Բոլոր աշխատանքային խմբերի կողմից պատրաստված զեկույցների հիման վրա սրբագրիչները մշակում են վերջնական տեքստը:
- Մշակի զեկույցը գրելու, այն վերլուծելու և վերանայելու ժամանակացույց: Ժամանակացույցը պետք է թույլ տա ստեղծել ինքնագնահատման զեկույցի մի քանի նախնական տարբերակներ, որոնք հետագայում պետք է քննարկվեն համակարգող հանձնաժողովի, ԲՈՒՀ-ի ղեկավարության և այլ շահառուների կողմից:
- Մշակի զեկույցում ապացույցների ներկայացման համապատասխան մոտեցում: Համակարգող հանձնաժողովը, այլ ոչ սրբագրիչը, պետք է որոշի թե ինչ ապացույցներ պետք է զետեղված լինեն զեկույցում: Ապացույցների մի մասը կարող է զետեղված լինել ԲՈՒՀ-ի վեբ կայքում, մյուս մասը՝ համակարգող հանձնաժողովի ռեսուրսների բազայում, իսկ որոշ մասն էլ աղյուսակների, գրաֆիկների և նկարների տեսքով կարող է ներկայացվել ինքնագնահատման զեկույցում:

# ԳԼՈՒԽ 6. ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻՆ

*Փորձագիտական այց*

Ինքնագնահատման զեկույցի վերջնական տարբերակի պատրաստումից հետո հաջորդ կարևորագույն փուլը փորձաքննությունն է: Ինչպես նշվեց, փորձաքննության նպատակն է փորձագիտական խմբի միջոցով իրականացնել ՈԱԱԿ-ին դիմած ուսումնական հաստատության, նրա ենթակառույցների, գործընթացների, առանձին կրթական ծրագրերի արտաքին գնահատում և պատրաստել փորձագիտական զեկույց ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովին ներկայացնելու համար: Փորձաքննության չորս հիմնական քայլերից ուսումնական հաստատության համար հատկապես կարևորվում է փորձագիտական այցը, ինչպես նաև նախապատրաստությունը այդ կարևոր ստուգայցին:

Նախքան փորձագիտական այցը նախատեսվում է տվյալ ուսումնական հաստատության ներկայացրած փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն, որի նպատակն է գնահատել հաստատության ինստիտուցիոնալ կարողությունների և մասնագիտության կրթական ծրագրի ինքնավերլուծությունների և ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը հավատարմագրման չափանիշներին և պետական կրթական չափորոշիչներին՝ արդյունավետության տեսանկյունից: Փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո յուրաքանչյուր փորձագետ խմբի ղեկավարին և համակարգողին է ներկայացնում իր անհատական հաշվետվությունը, ինչի հիման վրա կազմվում է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:

*Նախապատրաստական այց*

Նշեցինք, որ ՀՀ պետական հավատարմագրման գործընթացը նպատակամղված է օժանդակելու համալսարանների՝ փոփոխության ենթարկվելու կարողության զարգացմանը: Այդ իսկ պատճառով, այդ այցերը պետք է ընդունել որպես լավ առիթ խմբի փորձաքննությունը համալսարանի օգտին գործածելու համար:

Նախապատրաստական շաբաթվա ընթացքում նախատեսված են համաժամանակյա մի քանի միջոցառումներ.

1. ՈԱԱԿ-ի համակարգողի և փորձագիտական խմբի ղեկավարի հանդիպումը ուսումնական հաստատության ռեկտորի հետ:

2. Հանդիպում ուսումնական հաստատության կոնտակտային անձի և/կամ որակի ապահովման խմբի հետ:

3. Կոնտակտային անձի նախապատրաստական հանդիպումներն անձնակազմի, ուսանողների հետ և այլն: Այս նպատակով ՈԱԱԿ-ի համակարգողը փորձաքննություն անցնող ուսումնական հաստատությանը տրամադրում է անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը փորձաքննության գործընթացի վերաբերյալ, այդ թվում՝ այցի պլանը և ժամանակացույցը:

Ուսումնական հաստատությունը պետք է տեղեկացնի բոլորին, որ այցի շրջանակում փորձագետները կարող են տալ ցանկացած հարց ցանկացած աշխատակցի կամ ուսանողի, և որ պատասխանները մնում են գաղտնի: Հաստատության ստորաբաժանումների ղեկավարները պետք է տեղեկացված լինեն, որ պարտավոր են փորձաքննության շրջանակներում խմբի անդամներին ուսումնասիրության համար տրամադրել ցանկացած տեղեկատվություն և փաստաթուղթ, ինչպես նաև դրանց կրկնօրինակները:

Հավատարմագրվող ուսումնական հաստատության համար նախնական այցը ծառայում է հետևյալ նպատակներին.

- Ավելի լավ հասկանալ հավատարմագրման գործընթացի նպատակն ու ընթացքը. ընդլայնել համալսարանի ռազմավարական զարգացման և կառավարման փոփոխությունները նրա ներքին որակի կազմակերպման հետազոտության միջոցով:
- Սահմանել հիմնական ստուգայցի թեմաները և անել համապատասխան շեշտադրումները: Ինքնաքննադատական մոտեցումը շատ օգտակար է բոլոր շահագրգիռ կողմերի համար, մասնավորապես հավատարմագրվող համալսարանի:
- Համալսարանական հանրության ուշադրությունը հրավիրել գնահատման վրա: Սա կարող է հանգեցնել ավելի լավ մոբիլիզացման և համագործակցության, որն ուղղված է համալսարանով մեկ իրականացվող հետևողական գործընթացին:

Նախապատրաստական այցն ունի չորս հիմնական նպատակ.

- **ՄՈՒՀ-ի հետ համաձայնեցնել փորձագիտական այցի ծրագիրը և ժամանակացույցը.** երաշխավորել, որ այցի ծրագիրը համապատասխանում է փորձագիտական խմբի ակնկալիքներին՝ լինելով իրագործելի փորձաքննության համար տրամադրված ժամանակահատվածում:
- **Քննարկել փորձագիտական խմբին անհրաժեշտ հավելյալ տեղեկատվությունը.** ապահովել, որ այցի ընթացքում ուսումնական հաստատությունը կարողանա տրամադրել փորձագիտական խմբին անհրաժեշտ փաստաթղթերը և հավելյալ տեղեկատվությունը:

- **Ստուգել, թե չկան արդյոք առանձնահատկություններ**, որոնց մասին փորձագիտական խումբը պետք է տեղյակ լինի:
- **Ստուգել ՄՈՒՀ-ի նախապատրաստվածությունը փորձագիտական այցին** (ներառյալ խմբին առաջարկվող աշխատասենյակների, հանդիպումների սրահի, տրամադրվող տեխնիկական միջոցների ուսումնասիրություն և այլն):

Այս դեպքում փորձագիտական խումբը գնահատման զեկույց չի պատրաստում: Նախնական այցը նպաստում է, որ թիմը հասկանա համալսարանին հատուկ բնորոշ գծերը: Այսպիսով, նախնական այցի արդյունքում պետք է վավերացվի համալսարանի ներկա գործունեության նկարագիրը, և գնահատող թիմը պետք է ընդգրկուն պատկերացում կազմի, թե ինչպես է համալսարանը ծավալում իր գործունեությունը (ապակենտրոնացում, համակարգում և այլն): Այս իսկ պատճառով, շատ կարևոր է այն մարդկանց ընտրությունը, ում պետք է հանդիպի փորձագիտական խումբը: Նախապատրաստական այցը սովորաբար տևում է երկու օր:

*Փորձագիտական այց*

Այցն արտաքին գնահատման գործընթացի մի մասն է, երբ փորձագիտական խումբը կատարում է այց մասնագիտական ուսումնական հաստատություն: Փորձագիտական այցի հիմնական նպատակներն են՝ պարզել ինքնավերլուծության մեջ նշված փաստերի և տեղեկատվության հավաստիությունը, ձեռք բերել լրացուցիչ տեղեկատվություն հանդիպումների և հարցումների միջոցով, ուսումնասիրել կրթական գործընթացները և լրացուցիչ փաստաթղթեր, ավելի լավ պատկերացում կազմել փորձաքննության ենթակա ուսումնական հաստատության գործունեության վերաբերյալ: Սովորաբար այցը տևում է 3-7 օր՝ կախված փորձաքննության ենթակա ուսումնական հաստատության ծավալից և առանձնահատկություններից, ինչպես նաև հավատարմագրման տեսակից:

*Փորձագիտական այցի ընթացքում նախատեսված հանդիպումներ*

1. *Ժամանակացույցով սահմանված հանդիպումներ*

Հանդիպման այս տեսակը կարևորվում է այնքանով, որ տվյալ ուսումնական հաստատության կոնտակտային անձը փորձագիտական խմբի ղեկավարի և ՈԱԱԿ-ի համակարգողին է տրամադրում հնարավոր մասնակիցների ցանկը և նրանց տվյալները: Փորձագիտական խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատահական սկզբունքով ընտրում են հանդիպման, հարցազրույցի կամ ֆոկուս խմբի մասնակիցներին՝ մտապահելով ներկայացուցչականության ապահովման խնդիրը: Խմբի ղեկավարը հանդիպումը վարում է՝ հետևելով նախապես պատրաստված հարցերին:

Պարզաբանումների անհրաժեշտության դեպքում փորձագիտական խմբի ղեկավարի թույլտվությամբ կարող են տրվել նաև չնախատեսված հարցեր:

### *2. Հանդիպումներ ուսումնական հաստատության ստորաբաժանումներում*

Ուսումնական հաստատության ստորաբաժանումների աշխատակիցների հետ հանդիպումների նպատակն է պարզաբանել փաստաթղթերի նախնական ուսումնասիրության ընթացքում վերհանված խնդիրները: Խմբի անդամներն իրենք կարող են ընտրել հարցման մասնակիցներին: Այն կարող է լինել հարցազրույց անձնակազմի որևէ անդամի, ուսանողի, վարչական աշխատակցի կամ այս շահակիցների խմբերի հետ:

### *3. Փակ հանդիպումներ*

Փակ հանդիպումները նախատեսված են միայն փորձագիտական խմբի անդամների համար ու նպատակաուղղված են ամփոփելու հիմնական արդյունքները, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ձեռք բերելու համընդհանուր ընկալում ու համաձայնություն, սկսելու վերջնական հաշվետվության պատրաստման աշխատանքները:

Ինչպես արդեն նշվել է այս հանդիպումներին հաջորդում են փորձագիտական զեկույցի պատրաստում, ՈԱԱԿ-ի համապատասխան եզրակացությունը և որոշման ընդունումը:

©Երևանի պետական համալսարան, 2013

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ

- **Գնահատում** - բուհի կամ ծրագրի որակի համակարգված և քննախույզ վերլուծության գործընթաց, որը հանգում է բուհի կամ ծրագրի վերաբերյալ եզրակացությունների և/կամ երաշխավորությունների:
- **Ինքնագնահատում** – փաստական տվյալների համակարգված հավաքման, ուսանողների և շրջանավարտների հարցումների, դասախոսների և ուսանողների հետ հարցազրույցների գործընթաց, որի արդյունքներն ամփոփվում են ինքնագնահատման զեկույցում:
- **Արտաքին գնահատում** - գործընթաց, որով հավատարմագրող կազմակերպությունը հավաքում է տվյալներ, տեղեկատվություն և վկայություններ բուհի, նրա առանձին միավորի կամ կրթական ծրագրի մասին՝ նրա որակի վերաբերյալ եզրակացություն կազմելու համար: Այն բաղկացած է երեք իրարահաջորդող փուլերից՝ ինքնագնահատում և համապատասխան զեկույցի կազմում, փորձագետների ստուգայց և գնահատում, գնահատման զեկույցի կազմում:
- **Փորձագիտական գնահատում** – բուհի կամ կրթական ծրագրի որակի և արդյունավետության, կադրային-ռեսուրսային ապահովվածության վերաբերյալ արտաքին փորձագետների կողմից իրականացվող գնահատման գործընթաց:
- **Չափորոշիչ** – պահանջների և պայմանների ակնկալվող մակարդակների վերաբերյալ ձևակերպումներ, որոնց համեմատությամբ պետք է գնահատվի և ձեռք բերվի բուհի կամ կրթական ծրագրի անհրաժեշտ որակը՝ հավատարմագրվելու կամ լիցենզավորվելու համար:
- **Չափանիշ** – մակարդակի էտալոնային կողմնորոշիչ, որը բնութագրում է որոշակի խնդիրների և/կամ չափորոշչի իրագործման աստիճանը:
- **Կրթական չափորոշիչներ** - գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի ու չափի ձևակերպումներ, որոնք տվյալ ծրագրի շրջանակներում պահանջվում են ուսանողից՝ հայցվող որակավորման շնորհման համար:
- **Որակ** – բազմակողմ կատեգորիա, որն առնչվում է ինստիտուցիոնալ առաքելությանն ու նպատակներին, ինչպես նաև ընդունված չափորոշիչներին՝

տվյալ բուհի, ծրագրի կամ դասընթացի շրջանակներում: Կախված օգտագործման նպատակից՝ տարբերում են որակի տարբեր սահմանումներ՝ «որակը որպես գերազանցություն», «որակը որպես համապատասխանություն նպատակին», «որակը որպես բարելավում» և այլն:

- **Որակի ապահովում** - բուհի կամ կրթական ծրագրի որակի գնահատման, վերահսկման, պահպանման և բարելավման շարունակական գործընթաց:
- **Որակի աուդիտ** – որակի գնահատման գործընթաց, որի միջոցով իրավասու արտաքին մարմինը ստուգում է բուհի կամ կրթական ծրագրի որակի ապահովման ներքին ընթացակարգերի առկայությունը, համարժեքությունը նպատակներին և դրանց փաստական իրականացումը:
- **Որակի ներքին ապահովման համակարգ** – կառավարման համակարգ, որը սահմանված ընթացակարգերի և մեխանիզմների օգնությամբ իրագործում է բուհի որակի ապահովման քաղաքականությունն ու խնդիրները:
- **Որակի բարելավում** – որակի կառավարման միջոցով որակի շարունակական բարձրացման գործընթաց:
- **Որակի փորձաքննություն** – բուհի կամ կրթական ծրագրի որակի արտաքին գնահատման (ուսումնասիրման) փաստական գործընթաց:
- **Որակի կառավարում** - որակի բարելավման նպատակով բուհի կամ կրթական ծրագրի մակարդակում կանոնավոր իրականացվող միջոցառումների համակցություն:
- **Որակի վերահսկում** – բուհի կամ կրթական ծրագրի որակի ստուգման ներքին կամ արտաքին գործընթաց:
- **Որակի քաղաքականություն** – որակի ապահովման ասպարեզում բուհի ընդհանուր մտադրություններն ու սկզբունքները պաշտոնապես արտահայտող փաստաթուղթ:
- **Որակի մշակույթ** - որակի համընդունելի և ինտեգրացված սկզբունքների համակարգ, որը բնորոշ է բուհի կազմակերպական մշակույթին կամ կառավարման համակարգին:
- **Որակի ապահովման Եվրոպական ստանդարտներ և ուղենիշներ** – Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից մշակված և 2005թ. Բերգենի գագաթաժողովում ընդունված համաեվրոպական պաշտոնական փաստաթուղթ, որը ներառում է համապատասխան չա-

փորոշիչներ և ուղենիշներ՝ բուհերում որակի ներքին ու արտաքին ապահովման, ինչպես նաև որակի ապահովման գործակալությունների համար։

- **Հավատարմագրում** - գործընթաց, որով պետական (կամ հասարակական) հավատարմագրող կառույցը գնահատում է բուհի կամ կրթական ծրագրի որակը՝ նախանշված նվազագույն չափանիշներին կամ չափորոշիչներին դրանց համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու համար։

©Երևանի պետական համալսարան, 2013

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ, «Որակի ներքին ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում.մարտահրավերներ ու հեռանկարներ», Երևան, 2011:

2. Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման ուղեցույց, «Որակի ներքին ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում.մարտահրավերներ ու հեռանկարներ», Երևան, 2011:

3. “Guides to the Institutional Self-Study for Programmes of Education in Veterinary Medicine”, CAAM-5.1—2007

4. “Self-Study Guide”, Association for Biblical Higher Education Commission on Accreditation, 2012

5. “Self Study Manual”, a Puclication of the Accrediting Commission for Community and Junior Colleges Western Association of Schools and Colleges, 2006

6. “Accreditation Handbook”, Northwest Commission on Colleges and Universities NWCCU, 2003

7. “Member Handbook: Accreditation and Self-Study Guide”, Council for Standards in Human Service Education, 2011

8. “Institutional Accreditation Manual for Self-Study Universities”, National Assessment and Accreditation Council, 2007

9. “Self-Study Guide”, Accreditation Commission for Acupuncture and Oriental Medicine, 2008

10. “Guide to the Institutional Self-Study for Programs of Medical Education Leading to the M.D. Degree”, Liaison Committee on Medical Education, Committee on Accreditation of Canadian Medical Schools, 2009-2010

11. “Self-Study Guide”, Commission on Institutions of Higher Education, 2008

12. “University Guidelines for Completion of Self-Evaluation Report” Australian and New Zealand Podiatry Accreditation Council Inc., 2010

©Երևանի պետական համալսարան, 2013

# ԲԱԺԻՆ II. ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

©Երևանի պետական համալսարան, 2013

# 1. Ինստիտուցիոնալ հավատարմագրման պետական չափանիշները

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

## 1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

| NN ը/կ | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|
| 1. | Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին: | ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին,<br>բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները,<br>գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր: |

## 2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|
| 2. | ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց | ա. հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, |

| | | |
|---|---|---|
| | գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները: | որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ,<br>բ. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը,<br>գ. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ,<br>դ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա,<br>ե. քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում),<br>զ. ՄՈՒՀ- ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ,<br>է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ: |

©Երևանի պետական համալսարան, 2013

## 3. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|
| 3. | ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը: | ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների,<br>բ. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը,<br>գ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը,<br>դ. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը,<br>ե. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն: |

## 4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|

©Երևանի պետական համալսարան, 2013

| | | |
|---|---|---|
| 4. | ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով: | ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ,<br>բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր,<br>գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար,<br>դ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց,<br>ե. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ,<br>զ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում,<br>է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին,<br>ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ: |

## 5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|
| 5. | ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է | ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և |

©Երևանի պետական համալսարան, 2013

| | | |
|---|---|---|
| | անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով: | ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր,<br>բ. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ,<br>գ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար,<br>դ. պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ,<br>ե. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը,<br>զ. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր,<br>է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար: |

## 6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|
| 6. | ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական | ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն |

©Երևանի պետական համալսարան, 2013

| | | |
|---|---|---|
| | գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ: | արտահայտող ռազմավարություն, բ. ՄՌԻՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՌԻՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները, գ. ՄՌԻՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով, դ. ՄՌԻՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, ե. ՄՌԻՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ: |

## 7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|
| 7. | ՄՌԻՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար: | ա. ՄՌԻՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, բ. ՄՌԻՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար, գ. ՄՌԻՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն, դ. ՄՌԻՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և |

| | | |
|---|---|---|
| | | կայունությանը,<br>ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ,<br>զ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին,<br>է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ: |

## 8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|
| 8. | ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը: | ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ,<br>բ. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը,<br>գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ,<br>դ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ: |

## 9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|
| 9. | Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի | ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր |

©Երևանի պետական համալսարան, 2013

| | | |
|---|---|---|
| | փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը: | ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր,<br>բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց,<br>գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ,<br>դ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար: |

## 10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

| | Չափանիշը | Չափորոշիչը |
|---|---|---|
| 10. | ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը: | ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր,<br>բ. որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ,<br>գ. ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում,<br>դ. որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է,<br>ե. որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար,<br>զ. որակի ապահովման ներքին |

| | | |
|---|---|---|
| | | համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար։ |

©Երևանի պետական համալսարան, 2013

## 2. Ծրագրային հավատարմագրման պետական չափանիշները

### 1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

| NN ը/կ | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|
| 1. | Մասնագիտության կրթական ծրագիրը (այսուհետ՝ ՄԿԾ) համապատասխանում է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի, որակավորման բնութագրի և պետական կրթական չափորոշչի պահանջներին, ինչպես նաև ՄՈՒՀ-ի առաքելությանը: | ա. ՄԿԾ-ի նպատակները և խնդիրները համահունչ են ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին,<br>բ. ՄԿԾ-ն հանդիսանում է ՄՈՒՀ-ի պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս,<br>գ. ՄԿԾ-ն մանրամասն նկարագրված է ըստ շնորհվող որակավորման ուսումնառության ակնկալվող արդյունքների,<br>դ. ՄԿԾ-ն համապատասխանում է ՈԱՇ-ին, մասնագիտական կրթության որակավորումների բնութագրին և մասնագիտության պետական կրթական չափորոշչին,<br>ե. ՄԿԾ-ն բովանդակային առումով հստակ մշակված է և համահունչ նմանատիպ այլ ճանաչված մասնագիտության կրթական ծրագրի հետ և նպաստում է ուսանողների և դասախոսական կազմի շարժունությանը և միջազգայնացմանը,<br>զ. ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսանողների և այլ շահակիցների կարիքները,<br>է. առկա են հստակ ընթացակարգեր ու մեխանիզմներ, որոնք ապահովում |

| | | |
|---|---|---|
| | | են ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման իրականացումը: |

**2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ**

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|
| 2. | ՄԿԾ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմով՝ ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար: | ա. ՄԿԾ-ի համար սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակավորումներին ներկայացվող հստակ պահանջներ և դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր,<br>բ. ՄԿԾ-ի շրջանակներում սահմանվել է դասախոսական կազմի պարբերաբար գնահատման հստակ քաղաքականություն ու ընթացակարգեր, որոնք նպաստում են դասախոսների մասնագիտական կարիքների վերհանմանը և զարգացմանը,<br>գ. ՄԿԾ-ն նպաստում է դասախոսական կազմի կայացմանը և մասնագիտական առաջընթացին,<br>դ. հիմնական դասախոսական կազմն ապահովում է ՄԿԾ-ի կայուն իրականացումը: |

**3. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ**

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|
| 3. | ՄԿԾ-ի շրջանակում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդներն ապահովում են ուսանողների մոտ ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը: | ա. ՄԿԾ-ի շրջանակում հստակ սահմանված են դասավանդման և ուսումնառության մոտեցումները, մեթոդները, որոնք անհրաժեշտ են ուսումնառության ակնկալվող արդյունքները ձևավորելու համար,<br>բ. ՄԿԾ-ն իրականացվում է հաշվի առնելով միջազգային մակարդակում կիրառվող դասավանդման առաջավոր փորձը և մոտեցումները,<br>գ. առկա են դասավանդման և |

©Երևանի պետական համալսարան, 2013

| | | |
|---|---|---|
| | | ուսումնառության գործընթացների գնահատման և բարելավման մեխանիզմներ: |

## 4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|
| 4. | ՄԿԾ-ն ունի ակադեմիական ազնվությանը նպաստող գնահատման համակարգ, որը թույլ է տալիս հավաստել ուսանողի առաջընթացը և ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը և ձեռքբերումը: | ա. ՄԿԾ-ի շրջանակներում կիրառվում է ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը գնահատող հստակ և հուսալի համակարգ, որի չափանիշները հասանելի են դասախոսներին և ուսանողներին,<br>բ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են որակավորումների շնորհման նպատակով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը հավաստող հստակ մեխանիզմներ,<br>գ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են գնահատման համակարգի բարելավման հստակ մեխանիզմներ,<br>դ. ՄԿԾ-ի շրջանակներում հավասար և անաչառ մոտեցում է ցուցաբերվում ուսանողներին հստակ սահմանած քաղաքականության և ընթացակարգերի միջոցով՝ հաշվի առնելով նրանց պարտականությունները և բողոքները,<br>ե. ՄԿԾ-ի շրջանակներում խրախուսվում է ուսանողի ուսումնագիտական ինքնուրույնությունը և պայքարը գրագողության դեմ: |

## 5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|
| 5. | ՄԿԾ-ի շրջանակում ապահովվում է կապը հետազոտական ու ստեղծագործական գործունեության և | ա. ՄԿԾ-ի շրջանակում առկա են երկարաժամկետ ռազմավարություն, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և |

| | | |
|---|---|---|
| | ուսումնառության միջև: | հավակնությունները,<br>բ. ՄԿԾ-ն հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին,<br>գ. ՄԿԾ-ի շրջանակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը,<br>դ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են հետազոտական ու ստեղծագործական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու և բարելավելու հստակ մեխանիզմներ: |

### 6. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|
| 6. | ՄԿԾ-ն նպաստում է որակյալ կրթություն իրականացնելուն՝ ձևավորելով ուսումնառության համար բարենպաստ միջավայր: | ա. ՄԿԾ-ի իրականացման համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը,<br>բ. ուսանողներին տրամադրվում են ծրագրի սահմաններում ուսումնառությանը նպաստող օգտակար ու մատչելի տեղեկատվություն և խորհրդատվություն,<br>գ. ՄԿԾ-ն ապահովված է իր բովանդակությանը համապատասխան ուսումնամեթոդական անհրաժեշտ բազայով: |

### 7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|---|---|---|
| 7. | ՄԿԾ-ի շրջանակում առկա է որակի ներքին համակարգ, որն ապահովում է ՄԿԾ-ի որակի կայունությունը և | ա. որակի ապահովման ներքին համակարգը մշակված է և գործում է հասարակության կարիքներին և ուսանողների պահանջներին հետևելու, ինչպես նաև իր գործունեությունը գնահատելու համար, |

| | | |
|---|---|---|
| | շարունակական զարգացումը: | բ. ՄԿԾ-ի շրջանակում առկա են որակի ներքին ապահովման արդյունավետ քաղաքականություն և ընթացակարգ (ընթացակարգեր),<br>գ. ՄԿԾ-ի շրջանակում հետադարձ կապի մեխանիզմներով հավաքագրվում է իրականացվող գործընթացների մասին հավաստի տեղեկատվություն, որը վերլուծվում է ծրագրի նպատակների և գործընթացների բարելավման համար,<br>դ. ՄԿԾ-ի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ներքին ապահովման գործընթացներում,<br>ե. ՄԿԾ-ի շրջանակում իրականացվում է օրինակելի փորձի տարածում: |

©Երևանի պետական համալսարան, 2013

# 3. Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման կարգը

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում միջին և բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Ուսումնական հաստատություն) պետական հավատարմագրման կարգը՝ անկախ դրանց գերատեսչական ենթա-կայությունից և կազմակերպաիրավական ձևից:

2. Պետական հավատարմագրումն իրականացվում է ներքոհիշյալ գործընթացներով.

1) Ենթակառուցվածքային (*Ինստիտուցիոնալ*) հավատարմագրում,

2) Ըստ մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրում (այսուհետ՝

Ծրագրային հավատարմագրում):

3. Ենթակառուցվածքային հավատարմագրումը պարբերաբար կրկնվող (շրջափուլային) պարտադիր գործընթաց է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր Ուսումնական հաստատությունների համար:

4. Ծրագրային հավատարմագրումն իրականացվում է կամավորության սկզբունքով՝ միայն ենթակառուցվածքային հավատարմագրման դրական արդյունքի դեպքում:

5. Ուսումնական հաստատության մասնաճյուղերը ենթակառուցվածքային հավատարմ-ագրում և Ծրագրային հավատարմագրում անցնում են ընդհանուր հիմունքներով՝ մասնաճյուղ ունեցող Ուսումնական հաստատության հայտի հիման վրա, մայր ուսումնական հաստատության կազմում: Մասնաճյուղի համար պետական հավա-տարմագիր տրվում է մասնաճյուղ ունեցող Ուսումնական հաստատությանը:

6. Ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքային և Ծրագրային հավա-տարմագրման գործընթացները կազմակերպում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ):

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ

7. Ենթակառուցվածքային հավատարմագրում անցնելու համար Ուսումնական

հաստատությունը պետք է՝

1) ներկայացնի դիմում-հայտ՝ ըստ ՈԱԱԿ-ի մշակած և հոգաբարձուների խորհրդի

©Երևանի պետական համալսարան, 2013

կողմից հաստատված համապատասխան ձևաթղթի,

2) ունենա կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա,

3) լրացնի ՈԱԱԿ-ի էլեկտրոնային համապատասխան հարցաշարը:

8. Ենթակառուցվածքային հավատարմագրման գործընթացն իրականացվում է 3 հաջորդական փուլերով՝

1) *Առաջին փուլ*՝ ենթակառուցվածքային կարողությունների ներքին գնահատում

Ուսումնական հաստատության կողմից՝ ըստ ՈԱԱԿ-ի սահմանած և հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված համապատասխան ձևաչափի (այսուհետ՝ Ինքնավերլուծություն):

2) *Երկրորդ փուլ*՝ Ուսումնական հաստատության Ինքնավերլուծության, կրթական և որակի ապահովման գործընթացների իրականացման արտաքին գնահատում փորձագիտական խմբի կողմից՝ օրենքով սահմանված ուսումնական հաստատության տեսակին ներկայացվող պահանջներին, մասնագիտությունների կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչներին և *ՀՀ* կառավարության սահմանած ենթա-կառուցվածքային հավատարմագրման չափորոշիչներին

համապատասխան (այսուհետ՝ Փորձաքննություն):

3) *Երրորդ փուլ*՝ Ինքնավերլուծության և փորձաքննության արդյունքների հիման վրա

ՈԱԱԿ-ի Հավատարմագրման Խորհրդի, որի ձևավորման և գործունեության ընթա-ցակարգը և կազմը հաստատվում է ՈԱԱԿ հոգաբարձուների խորհրդի կողմից, դրական կամ բացասական եզրակացության մասին որոշման կայացում:

9. Դիմում-հայտի ու ուսումնական հաստատության ինքնավերլուծության ընդունումը, փորձաքննությունը և որոշման կայացումն իրականացվում են սույն կարգի պահանջներին համաձայն:

10. Ենթակառուցվածքային հավատարմագրման արդյունքները գրանցվում են Հավա-տարմագրման Պետական Գրանցամատյանում:

11. ՈԱԱԿ-ի Հավատարմագրման խորհրդի կայացված որոշումն ուղարկվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ Նախարա-րություն) հաստատմանը: Նախարարությունն այն ստանալուց հետո 3-օրյա ժամկե-տում, իրականացնում է ներկայացված տվյալների ուսումնասիրություն /սույն կարգով նախատեսված պահանջների ապահովման վերաբերյալ/ և որոշում է կայացնում պետական հավատարմագրման մասին, որի հիման վրա ուսումնական հաստա-տությանը ենթակառուցվածքային հավատարմագրման դեպքում տրվում է պետական հավատարմագրման վկայական, որի մասին ՈԱԱԿ-ի կողմից համապատասխան գրառում է կատարվում Հավատարմագրման Պետական Գրանցամատյանում:

©Երևանի պետական համալսարան, 2013

12. Ենթակառուցվածքային հավատարմագրումն ուժի մեջ է ոչ ավելի, քան 6 տարվա ընթացքում:

13. Բացասական որոշման դեպքում ուսումնական հաստատությունը կարող է 2 տարի հետո նորից անցնել ենթակառուցվածքային հավատարմագրում՝ սահմանված նույն ընթացակարգով:

## III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ

14. Ծրագրային հավատարմագրում անցնելու համար ուսումնական հաստատությունը պետք է.

1) Ներկայացնի դիմում-հայտ՝ ըստ ՈԱԱԿ-ի մշակած և հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված համապատասխան ձևաթղթի,

2) Ունենա կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա,

3) լրացնի ՈԱԱԿ-ի էլեկտրոնային համապատասխան հարցաշարը,

4) ներկայացնի պետական հավատարմագրման վկայականը:

15. Ծրագրային հավատարմագրման գործընթացն իրականացվում է 3 հաջորդական փուլերով՝

1) *Առաջին փուլ*՝ մասնագիտության կրթական ծրագրի, ուսումնական գործունեության ներքին գնահատում ուսումնական հաստատության կողմից՝ ինքնավերլուծություն, ըստ ՈԱԱԿ-ի մշակած և հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված համապատասխան ձևաչափի:

2) *Երկրորդ* փուլ՝ ուսումնական հաստատության ինքնավերլուծության, ուսումնական գործունեության արտաքին գնահատում փորձագիտական խմբի կողմից՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչներին և ՀՀ կառավարության սահմանած Ծրագրային հավատարմագրման

չափորոշիչներին համապատասխան:

3) *Երրորդ փուլ* փուլ՝ ինքնավերլուծության և փորձաքննության արդյունքների հիման վրա ՈԱԱԿ-ի Հավատարմագրման Խորհրդի դրական կամ բացասական որոշման կայացում:

16. Դիմում-հայտի ու ուսումնական հաստատության ինքնավերլուծության ընդունումը, փորձաքննությունը և որոշման կայացումը իրականացվում են սույն կարգի պահանջներին համաձայն:

17. Ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրերը գրանցվում են Հավատարմագրման Պետական Գրանցամատյանում:

18. Մասնագիտության կրթական ծրագիրը համարվում է հավատարմագրված Հավատարմագրման Պետական Գրանցամատյանում կրթական ծրագրի գրանցվելու պահից:

19. Ուսումնական հաստատությունն իրավունք ունի Ծրագրային հավատարմագրման համար դիմել Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում գրանցված կազմակերպություններին: ՈԱԱԿ-ը պետք է նախօրոք տեղեկացվի գործընթացի նախաձեռնման մասին: Ծրագրային հավատարմագրման արդյունքները գրանցվում են Հավատարմագրման Պետական Գրանցամատյանում:

20. ՈԱԱԿ-ը Ծրագրային հավատարմագրման մասին ընդունված որոշումը հրապարակում է զանգվածային լրատվության միջոցներով:

21. Ծրագրային հավատարմագրման մասին ՈԱԱԿ-ի Հավատարմագրման Խորհրդի որոշման հրապարակումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում այն ներկայացվում է Նախարարություն՝ հաստատման: Նախարարությունը այն ստանալուց հետո 3-օրյա ժամկետում, իրականացնում է ներկայացված տվյալների ուսումնասիրություն /սույն կարգով նախատեսված պահանջների ապահովման վերաբերյալ/ և որոշում է կայացնում ծրագրային հավատարմագրման մասին, որի հիման վրա ուսումնական հաստատությանը տրվում է պետական հավատարմագրման վկայականի ներդիրներ, որի մասին ՈԱԱԿ-ի կողմից համապատասխան գրառում է կատարվում Հավատարմագրման Պետական Գրանցամատյանում:

22. Ծրագրային հավատարմագրումն ուժի մեջ է ոչ ավելի, քան 5 տարվա ընթացքում:

23. Վկայականի և նրա ներդիրի ձևաթղթերը հաստատում է Նախարարությունը: ՈԱԱԿ-ը ապահովում է վկայականի և նրա ներդիր(ներ)ի տպագրությունը, հաշվառումը և պահպանումը: Վկայականում նշվում է գրանցման համարը, տրման ամսաթիվը և գործողության ժամկետը, ուսումնական հաստատության տարատեսակը, ուսումնական հաստատության լրիվ անվանումը, հաստատության և մասնաճյուղերի գտնվելու վայրը: Վկայականի ներդիր(ներ)ում նշվում են ուսումնական հաստատության և սույն կարգով սահմանված դեպքում նաև մասնաճյուղերի և դրանց հավատարմագրված մասնա-գիտությունները՝ ըստ կրթական ծրագրերի, ներդիրի գործողության ժամկետը: Ներդիր(ներ)ը վավեր է միայն վկայականի առկայության դեպքում:

24. Ուսումնական հաստատությունը պարտավոր է ուսանողներին տեղեկացնել Ծրագրային հավատարմագրման արդյունքների մասին:

25. Ենթակառուցվածքային և Ծրագրային հավատարմագրման մասին որոշումները կարող են բողոքարկվել դատարանում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրու-թյամբ սահմանված կարգով:

26. Պետական հավատարմագրման վկայական տալու, ինչպես նաև այդ վկայականում փոփոխություն կատարելու դեպքում գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափերով:

27. Պետական հավատարմագրման վկայականը չի թույլատրվում օտարել, գրավ դնել կամ փոխանցել մեկ այլ անձի:

## IV.ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԻ և ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ և ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

28. Դիմում-հայտերը կարող են ներկայացվել ՈԱԱԿ ամբողջ տարվա ընթացքում:

29. ՈԱԱԿ-ը դիմում-հայտն ընդունելու կամ մերժելու հարցը քննարկում և այդ մասին դիմողին գրավոր ծանուցում է ոչ ուշ, քան դիմումը ստանալուց մեկ ամսվա ընթացքում: ՈԱԱԿ-ը մերժում է դիմում-հայտը, եթե՝

1) Ուսումնական հաստատությունը չունի կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա,

2) ներկայացված փաստաթղթերի փաթեթը թերի է և պարունակում են ոչ հավաստի տեղեկություններ,

3) ուսումնական հաստատության գործունեությունը կասեցված է:

30. ՈԱԱԿ-ը ենթակառուցվածքային կամ Ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացնում է դիմում-հայտն ընդունելուց հետո 1 տարվա ընթացքում:

31. Դիմում-հայտի ընդունումից հետո 1 շաբաթվա ընթացքում դիմողի և ՈԱԱԿ-ի միջև՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կնքվում է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր: Պայմանագրում հստակ նշվում են գործընթացի մեկնարկի ամսաթիվը և ժամանակացույցը:

32. Գործընթացի մեկնարկից հետո, 10 շաբաթվա ընթացքում, ուսումնական հաստատությունը պարտավոր է ՈԱԱԿ ներկայացնել ինքնավերլուծություն:

33. Ինքնավերլուծությունը ներկայացվում է հայերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև էլեկտրոնային տարբերակով:

34. Ինքնավերլուծության հայերեն և անգլերեն տեքստերի միջև հակասությունների դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը:

35. Ինքնավերլուծությանը կից ներկայացվում է ձևաչափով պահանջվող հիմնավորող փաստաթղթերի փաթեթը:

36. Ինքնավերլուծությունը ստանալուց հետո 4 շաբաթվա ընթացքում ՈԱԱԿ-ը որոշում է կայացնում Ինքնավերլուծությունն ընդունելու կամ վերադարձնելու մասին:

37. ՈԱԱԿ-ը Ինքնավերլուծությունը վերադարձնում է, եթե՝

1) այն չի համապատասխանում ՈԱԱԿ-ի մշակած միասնական ձևաչափին,

2) առկա են բովանդակային, տեխնիկական, կառուցվածքային կամ այլ թերություններ,

3) ինքնավերլուծության մեջ արտացոլված տվյալներն ոչ հավաստի են:

38. Նշված թերությունները վերացնելու համար ՈԱԱԿ-ը սահմանում է մեկամսյա ժամկետ:

39. Ինքնավերլուծությունում առկա թերությունները սահմանված ժամկետում վերացնելու և կրկին ներկայացնելու դեպքում ՈԱԱԿ-ը կարող է նոր որոշում կայացնել Ինքնավերլուծությունն ընդունելու կամ մերժելու մասին:

40. Ինքնավերլուծությունը ընդունելու մասին որոշումը կայացնելու պահից երկշաբաթյա ժամկետում ՈԱԱԿ-ը ուսումնական հաստատությանը գրավոր ներկայացնում է Փորձագիտական խմբի կազմը: Փորձագիտական խմբի ձևավորման կարգը հաստատվում է ՈԱԱԿ հոգաբարձուների խորհրդի կողմից:

41. 2 շաբաթվա ընթացքում ՈԱԱԿ-ը Ուսումնական հաստատության հետ համաձայնեցնում է Փորձագիտական խմբի կազմը:

42. Փորձագիտական խմբի կազմի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում ուսումնական հաստատության հետ կնքված պայմանագիրը լուծվում է:

43. Փորձագետների խմբի վերջնական կազմը հաստատվում է ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով: Փորձագետների հետ կնքվում են վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրեր:

44. ՈԱԱԿ-ի կողմից Փորձագիտական խմբի կազմը հաստատելու օրվանից 8 շաբաթվա ընթացքում Փորձագիտական խումբն այց է կատարում Ուսումնական հաստատություն (այսուհետ՝ Փորձագիտական այց):

45. Փորձագիտական այցի ժամանակացույցը, պայմանները, ընթացակարգը և տևողությունը սահմանվում են Ուսումնական հաստատության և ՈԱԱԿ-ի փոխադարձ համաձայնությամբ:

46. Փորձագիտական այցը կարող է տևել 2-5 օր:

47. Փորձագիտական այցից հետո անհրաժեշտության դեպքում ՈԱԱԿ-ը իրավունք ունի պահանջել լրացուցիչ փաստաթղթեր:

48. Փորձագիտական այցի ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում փորձագիտական խումբը պատրաստում և ՈԱԱԿ է ներկայացնում փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:

49. ՈԱԱԿ-ը փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը ստանալու օրվանից երկու շաբաթվա ընթացքում այն ուղարկում է Ուսումնական հաստատություն:

50. Ուսումնական հաստատությունը կարող է զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ իր դիտողություններն ու առարկությունները երկշաբաթյա ժամկետում ներկայացնել ՈԱԱԿ: Առարկություններ ու դիտողություններ չունենալու դեպքում հավաստում է զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ իր համաձայնությունը:

51. Փորձագիտական այցի ավարտից հետո 6 շաբաթվա ընթացքում Փորձագետների խումբը վերջնական զեկույցը ներկայացնում է ՈԱԱԿ:

52. Հիմք ընդունելով Ուսումնական հաստատության Ինքնավերլուծությունը, փորձագետների զեկույցը և Ուսումնական հաստատության հավաստիացումը, ՈԱԱԿ-ը կազմում է վերջնական եզրակացության նախագիծը և ներկայացնում Հավատարմագրման Խորհրդին որոշում կայացնելու համար:

53. Հավատարմագրման եզրակացության օրինակելի ձևը սահմանում է ՈԱԱԿ-ը:

54. Փորձագիտական այցի ավարտից հետո 8 շաբաթվա ընթացքում ՈԱԱԿ-ը պաշտոնական համացանցային կայքէջում հրապարակում է Ուսումնական հաստատության ենթակառուցվածքային և Ծրագրային հավատարմագրման արդյունքների մասին եզրակացությունները և Հավատարմագրման Խորհրդի որոշումները:

## V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

55. Ենթակառուցվածքային հավատարմագրման եզրակացության և Ծրագրային հավատարմագրման ժամկետի ավարտից առնվազն մեկ տարի առաջ Ուսումնական

հաստատությունը կարող է դիմել Ենթակառուցվածքային հավատարմագրման և Ծրագրային հավատարմագրման նոր գործընթացներ սկսելու համար:

56. Ենթակառուցվածքային և Ծրագրային հավատարմագրման գործընթացների իրականացման համար նախատեսված փորձաքննության, գործուղման և այլ ծախսերը,

անկախ գործընթացի արդյունքից, պայմանագրային կարգով հատուցում է Ուսումնական հաստատությունը՝ ՈԱԱԿ հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված և ՈԱԱԿ-ի կողմից հրապարակված սակագների համաձայն: Ծախսերի համար նախատեսվող գումարը Ուսումնական հաստատությունները պետք է փոխանցեն ՈԱԱԿ-ի հաշվարկային հաշվին:

57. Պետական հավատարմագրումը ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝

1) հավատարմագրի վավերականության ժամկետը լրացել է,

2) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցվել է Ուսումնական հաստատության գործունեությունը,

3) լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել:

58. ՌԱԱԿ-ը պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը հրապարակում է և կատարում համապատասխան գրառում Հավատարմագրման Պետական Գրանցամատյանում:

59. Ուսումնական հաստատությունն Ենթակառուցվածքային հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պարտավոր է իր ստացած պետական հավատարմագրման վկայականը վերադարձնել Նախարարություն:

60. Պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատարանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

61. Ուսումնական հաստատությունը պետական հավատարմագրման վկայականը կորցնելու դեպքում դիմում է Նախարարություն, որը 15-օրյա ժամկետում տալիս է <<Կրկնօրինակ>> նշագրմամբ պետական հավատարմագրման նոր վկայական, որի համար գանձվում է պետական տուրք՝ <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափերով:

62. Սույն կարգի բաղկացուցիչ մասն են համարվում.

1) Ենթակառուցվածքային և Ծրագրային հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափերը,

2) Փորձաքննության անցկացման ձեռնարկը:

©Երևանի պետական համալսարան, 2013

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

©Երևանի պետական համալսարան, 2013

### *Հավելված 1.* ԵՊՀ-ում ուսանողների գնահատման վերաբերյալ դասախոսների և ուսանողների հարցման հարցաթերթ

## ՀԱՐՑԱՇԱՐ

## ԵՊՀ- ՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ

*Սիրելի՛ ուսանող, քո անկեղծ և օբյեկտիվ պատասխաններն ու կարծիքները կօգնեն մեզ բարելավելու գնահատման գործընթացը ԵՊՀ-ում: Հարցումն անանուն է, իսկ ստացված արդյունքները հասանելի կլինեն ԵՊՀ կայքէջում:*

**Խնդրում ենք նշել, թե որքանով եք համաձայն ԵՊՀ-ում ուսանողների գնահատման մասին հետևյալ պնդումներին:**

<u>Հնարավոր պատասխաններ.</u>

0 = կիրառելի չէ
1 = կտրականապես համաձայն չեմ
2 = համաձայն չեմ
3 = չունեմ հստակ պատասխան
4 = համաձայն եմ մասամբ
5 = լիովին համաձայն եմ

***Կրթ. աստիճանը*** բակալավր ☐ մագիստրոս ☐

***Ֆակուլտետ*** ---------------------------------------------

***Ամբիոն*** ---------------------------------------------

***Մասնագիտություն*** ---------------------------------------------

### Գնահատման չափանիշները

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Գնահատման պահանջները (չափանիշները) նախապես հայտնի էին և լիովին հասկանալի | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |
| Գնահատման ընթացքում դասախոսները պահպանում էին սահմանված գնահատման չափանիշները | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |

### Գնահատման ձևերն ու մեթոդները

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Գնահատման մեթոդները հնարավորություն են տալիս դրսևորելու ձեռք բերած գիտելիքները | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |
| Ընթացիկ (գրավոր) քննությունները հնարավորություն են ընձեռում լիարժեք դրսևորելու իմ գիտելիքները | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |

©Երևանի պետական համալսարան, 2013

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Եզրափակիչ (բանավոր) քննությունները հնարավորություն են ընձեռում լիարժեք դրսևորելու իմ գիտելիքները | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |
| Բազմակի պատասխաններով թեստերը հնարավորություն են ընձեռում լիարժեք դրսևորելու իմ գիտելիքները | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |

## Գնահատման արժանահավատությունը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Քննություններին իմ ցուցաբերած արդյունքները լիովին արտացոլում են իմ գիտելիքների իրական մակարդակը | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |

## Գնահատման հետադարձ կապը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Գնահատման արդյունքների վերաբերյալ յուրաքանչյուր անգամ դասախոսից ստանում եմ կարծիք կամ խորհուրդ | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |
| Գնահատականների բողոքարկման կարգն արդյունավետ է | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |

*Խնդրում ենք շրջել էջը*

Նշել ուսանողների գնահատման գործընթացի 3 ամենադրական կողմերը

1.

2.

3.

---

Նշել  ուսանողների գնահատման  գործընթացի 3 ամենաբացասական կողմերը

1.

2.

3.

---

Լրացուցիչ մեկնաբանություններ և առաջարկություններ

1.

2.

3.

©Երևանի պետական համալսարան, 2013

©Երևանի պետական համալսարան, 2013

# ՀԱՐՑԱՇԱՐ

## ԵՊՀ- ՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ

*Հարգելի՛ գործընկեր, քո անկեղծ և օբյեկտիվ պատասխաններն ու կարծիքները կօգնեն մեզ բարելավելու գնահատման գործընթացը ԵՊՀ-ում: Հարցումն անանուն է, իսկ ստացված արդյունքները հասանելի կլինեն ԵՊՀ կայքէջում:*

**Խնդրում ենք նշել, թե որքանով եք համաձայն ԵՊՀ-ում ուսանողների գնահատման մասին հետևյալ պնդումներին:**

Հնարավոր պատասխաններ.

0 = կիրառելի չէ
1 = կտրականապես համաձայն չեմ
2 = համաձայն չեմ
3 = չունեմ հստակ պատասխան
4 = համաձայն եմ մասամբ
5 = լիովին համաձայն եմ

*Ֆակուլտետ* ---------------------------------------------

*Ամբիոն* ---------------------------------------------

### Գնահատման ձևերն ու մեթոդները

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Կիրառվող գնահատման մեթոդները հնարավորություն են տալիս չափելու դասընթացի կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը ուսանողի կողմից | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 2. | Ընթացիկ (գրավոր) քննությունները հնարավորություն են ընձեռում ուսանողներին լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 3. | Եզրափակիչ (բանավոր) քննությունները հնարավորություն են ընձեռում ուսանողներին լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 4. | Բազմակի պատասխաններով թեստերն ուսանողներին հնարավորություն են ընձեռում լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |

### Գնահատման արժանահավատությունը

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5. | Գնահատման կիրառվող մեթոդներն ու չափանիշները հնարավորություն են ընձեռում լիարժեք չափելու ուսանողի ձեռքբերած գիտելիքները | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |

### Գնահատման արդյունքների օգտագործումը

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6. | Ուսանողների գնահատման արդյունքներն օգտագործվում են դասավանդման և ուսումնառության գործընթացները բարելավելու համար | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |

### Գնահատման հետադարձ կապը

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 7. | Գնահատման արդյունքների վերաբերյալ յուրաքանչյուր անգամ ուսանողին հայտնում եմ կարծիք կամ տալիս խորհուրդ | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |

©Երևանի պետական համալսարան, 2013

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | Գնահատականների բողոքարկման կարգն արդյունավետ է | **0** | **1** | **2** | **3** | **4** | **5** |

Նշել ուսանողների գնահատման գործընթացի 3 ամենադրական կողմերը

1.

2.

3.

Նշել ուսանողների գնահատման գործընթացի 3 ամենաբացասական կողմերը

1.

2.

3.

Լրացուցիչ մեկնաբանություններ և առաջարկություններ

1.

2.

3.

©Երևանի պետական համալսարան, 2013

## *Հավելված 2. ԵՊՀ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման հարցաթերթ*



©Երևանի պետական համալսարան, 2013

## *Հավելված 3.* ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման



ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման

ՀԱՐՑԱԹԵՐԹ – 2012

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Նշեք Ձեր ֆակուլտետը (կենտրոնը)՝

1.2. Սեռը: ար, իգ

1.3. Ուսուցման ո՞ր համակարգում եք սովորել: Առկա, Հեռակա

1.4. Կրթական ո՞ր աստիճանն եք ավարտել: Բակ., Մագ.

1.5. Կրթական ծրագիրը

| [0] | [0] | [1] | [2] | [3] | [4] | [0] | [1] | [2] | [3] | [4] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [1] | [5] | [6] | [7] | [8] | [9] | [5] | [6] | [7] | [8] | [9] |

1.6. Պատրաստվում ե՞ք շարունակել Ձեր ուսումը: Այո, Ոչ

1.7. Ձեր ուսումնառության ամփոփիչ միջին գնահատականը: 3.0-3.5 (8-10), 3.6-4.0 (11-13), 4.1-4.5 (14-16), 4.6-5.0 (17-20)

1.8. Հայտնի է՞ արդյոք որտեղ եք աշխատելու: Այո, Ոչ

1.9. Իսկ այժմ Դուք աշխատում ե՞ք: Աշխատում եմ մասնագիտությամբ, Աշխատում եմ ոչ մասնագիտությամբ, Չեմ աշխատում

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ</u>

[1], [2], [3], [4], [5], որտեղ [2]-ը ամենացածր գնահատականն է (անբավարար), [3]-ը՝ բավարար, [4]-ը՝ լավ, [5]-ը՝ ամենաբարձր (գերազանց), [1]-ը՝ դժվարանում եմ պատասխանել

2. Ձեր բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից

2.1. Ուսումնառությունը Համալսարանում որքանո՞վ է նպաստում մասնագիտական կարողությունների ձևավորմանը [1] [2] [3] [4] [5]

2.2. Ուսումնառությունը Համալսարանում որքանո՞վ է տալիս տեսական գիտելիքներ [1] [2] [3] [4] [5]

2.3. Ուսումնառությունը Համալսարանում որքանո՞վ է տալիս գործնական հմտություններ [1] [2] [3] [4] [5]

2.4. Ուսումնառությունը Համալսարանում որքանո՞վ է ապահովում օտար լեզուների իմացություն [1] [2] [3] [4] [5]

2.5. Որքանո՞վ էին ընդհանուր առմամբ օգտակար մատուցվող դասընթացները [1] [2] [3] [4] [5]

2.6. Ինչպե՞ս եք գնահատում պրակտիկաների օգտակարությունը [1] [2] [3] [4] [5]

2.7. Ձեր գիտելիքները որքանո՞վ է օբյեկտիվ գնահատվում [1] [2] [3] [4] [5]

